

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ISSN 1829 – 0523

АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМ . Х.АБОВЯНА

ARMENIAN STATE PEDAGOGICAL
UNIVERSITY AFTER
KH. ABOVYAN

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ

SCIENTIFIC NEWS

N 1-2 (26-27)

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН 2016 YEREVAN

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Միրզախանյան Ռ. Կ.* – Խմբագրական խորհրդի նախագահ
Բաբախանյան Ա. Վ. – Գլխավոր խմբագիր
Հովակիմյան Ս.Ս – Պատասխանատու քարտուղար

Բրուտյան Գ. Ա.	—	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Բաղդասարյան Գ. Ե.	—	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Դավթյան Մ. Ա.	—	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Դոլուխանյան Ա. Գ.	—	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ղազարյան Է. Մ.	—	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Ղուկասյան Ա.Ա.	—	պրոֆեսոր
Շահինյան Ա. Ա.	—	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Գևորգյան Ս., Երեմյան Ա., Վարդանյան Կ., Պետրոսյան Հ., Դանիելյան Կ.,
Խուդոյան Ս., Գալստյան Ա., Թանգամյան Տ., Դեմիրխանյան Գ.,
Եղիազարյան Ա., Ազարյան Ռ., Թադևոսյան Գ., Հարությունյան Հ.,
Հոբոսյան Ն., Հարությունյան Գ., Յավուրյան Շ., Սարգիսյան Ի.

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(Հումանիտար գիտություններ), № 1-2 (26-27), 2016

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Գիտական տեղեկագիր № 1-2 (26-27), Երևան, 2016թ.: 182 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռ. Կ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ /1921-1925թթ./.....5

Ա. Գ. ՄԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....28

Ս. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻՍՅԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....35

Ն. Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX Դ. 70-80-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.....44

Ա. Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ, Ռ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....54

Ռ. Գ. ՄԿՐՏՉՅԱՆ ԿՈՆՑԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ.....64

Ա. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ
ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՀՈԳԵՎԻՃԱԿԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏ-
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ.....76

Դ. Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԱՍԲՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԵՆՑ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ.....83

Ա. Լ. ՏՈՆՈՅԱՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ
ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ.....93

Դ. Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ
ԼՐԱԳՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ.....103

Վ. Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆՁԱՆՅ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....112

Գ.Ս.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Ս.Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՅԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԻՆ.....122

Ն.Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԿԱՆԽԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....132

Տ. Զ. ՄԱԼՈՒՄՅԱՆ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՋԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....139

Գ.Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆԻ ԹՎԱԿԱԶՄԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ.....147

Ա. Վ. ՄԱՀԱԿՅԱՆ, Է. Հ. ՔԱՄԱԼՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ.....155

Ի.Ա.ՇԱՀՐԱՄԱՆՈՎԱ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՏԵՂԸ ՌՈՒՍԱՅ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....161

Գ.Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ա.Ա.ԱԶԱՄՕՂԼՅԱՆ ՄԱՀԱՅՈՒՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ.....167

Դ.Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿՈՄԻՏԱՄԻ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....173

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 7.036 : 94 (47+57)

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ /1921-1925թթ./
Ռ. Կ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: mirzakhanyan.ruben@aspu.am

Հոդվածում ներկայացվում է Խորհրդային Հայաստանի (1921-1925թթ.) քաղաքական համակարգի ազդեցությունը մշակույթի տարբեր ոլորտների ներկայացուցիչների ակտիվ և արգասաբեր գործունեության վրա: Բազում հայ տաղանդավոր արվեստագետներ և մտավորականներ իրենց ավանդն են ունեցել խորհրդահայ մշակույթի ձևավորման գործում, ինչը վկայում է, որ նրանց գերազույն նպատակը եղել է ազգային մշակույթի զարգացումը:

Այս առումով հետաքրքիր դիտարկումների միջոցով որոշակիանում է ազգային մշակույթի, մասնավորապես՝ կերպարվեստի և երաժշտության զարգացման դինամիկան: Բազմաթիվ փաստերի և օրինակների վկայակոչումով ակնհայտ է դառնում այն ճշմարտությունը, որ Խորհրդային Հայաստանում այդ ժամանակաշրջանում արվեստի այնպիսի ուղղությունների նկատմամբ, ինչպիսիք են կերպարվեստն ու երաժշտությունը, մեծապես զգացվում էր պետական հովանավորությունը:

***Բանալի բառեր.** կերպարվեստ, երաժշտություն, ազգային մշակույթ, արվեստագետ, Խորհրդային Հայաստան:*

Ներկայացված է խմբագրություն 2.02.2016 թ.

1921–25 թթ. դեռևս խստորեն արգելք չէր դրվում նախկինում իրենց կարողություններն ի գործ դրած մշակույթի տարբեր ոլորտների ներկայացուցիչների գործունեության վրա: Ինքնաֆինանսավորմամբ շարունակում էին գործել տարբեր մշակութային խմբակներ: Գտնում ենք, որ նման իրավիճակը պայմանավորված էր նախ՝ ՆԷՊ– ով, (սոր տնտեսական քաղաքականություն), որը ենթադրում էր տնտեսական, ինչպես նաև այլ ոլորտներում սահմանափակ մասնավոր

գործունեություն, երկրորդ՝ Լենինի մահվանից հետո իշխանության համար ծավալված պայքարով, որը տևեց մինչև 1920-ական թթ. վերջը, երբ երկիրը հետզհետե թևակոխեց անհատի պաշտամունքի ժամանակաշրջանը: 1921–25 թթ. Խորհրդային Միությունը համեմատաբար ազատական էր, ավելի լոյալ նախկին քաղաքական այլախոհների նկատմամբ: Խորհրդային Հայաստանի մշակույթի և գիտության զարգացմանը ներքաշվեցին բազում գործիչներ, որոնք նախկինում կրողն էին այլ քաղաքական հայացքների: Բայց նման իրավիճակը կարճատև էր:

Հայ կերպարվեստը մինչև Հայաստանի խորհրդայնացումը հիմնականում զարգացում էր ապրում երկրից դուրս: Ազգային կերպարվեստի զարգացման կենտրոններ էին Մոսկվան, Պետերբուրգը, Կ. Պոլիսը, Փարիզը, Թիֆլիսը: Արևելահայ մշակույթի հիմնական կենտրոնը Թիֆլիսն էր, որտեղ կար հայկական թատրոն, գործում էին հրատարակչություններ, լույս էին տեսնում հայկական թերթեր: Այստեղ էին ստեղծագործում հայ մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ՝ գրողներ, երաժիշտներ, նկարիչներ, դերասաններ: Օրինաչափ էր, որ հենց Թիֆլիսում է 1916 թ. մայիսի 1-ին ստեղծվում «Հայ կերպարվեստագետների միությունը»¹: Այս կազմակերպության ստեղծման անմիջական նախաձեռնողներն էին Վ. Սուրենյանցը, Մ. Սարյանը, Ե. Թադևոսյանը, Փ. Թերլեմեզյանը, Ս. Խաչատուրյանը, Գ. Լևոնյանը, Գ. Շարբաբյանը և ուրիշներ: Միությանն անդամագրվում են նաև քանդակագործներ, ճարտարապետներ: Միության աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում Հ. Թումանյանը, Ալ. Շիրվանզադեն, հայ մտավորականության այլ ներկայացուցիչներ: Միության առաջին կազմակերպչական ժողովը նախագահում էր Ալ. Շիրվանզադեն, իսկ Հ. Թումանյանը հանդես է գալիս ողջունի խոսքով: Հիմնական զեկուցողը Վ. Սուրենյանցն էր: Միության նախագահ է ընտրվում Եղիշե Թադևոսյանը: Ինչպես նշում է Վահան Հարությունյանը. «Հ. Ա. Միության թեկուզ լոկ հիմնադրման փաստն ինքնին վկայում է այդ շրջանի հայկական կերպարվեստի հասունությունը, ներկայացուցիչների արդեն ակնառու քանակը և նրանց պատրաստակամությունը՝ անկախ գործունեության վայրից ու գեղարվեստական համոզմունքներից՝ ծառայելու հարազատ ժողովրդի կուլտուրային»²:

Չնայած այն հանգամանքին, որ այս միությունը ստեղծվել էր դժվարին ժամանակաշրջանում, ուներ սահմանափակ միջոցներ, սակայն,

¹ Артур Авакян, Из истории художественной жизни Армении, Ереван 2002, стр.15-16.

² Վահան Հարությունյան, Հայ կերպարվեստագետների անդրանիկ միավորումը, տե՛ս «Սովետական արվեստ», 1956, թիվ 1, էջ 26:

կազմակերպում է չորս ցուցահանդեսներ, համախմբում զգալի թվով հայ արվեստագետների, «օժանդակում նրանց՝ Հայաստանի (իսկ հետագայում՝ Սովետական Հայաստանի) հետ կապվելու, իրենց ստեղծագործություններում հայկական թեմաներ պատկերելու գործին»³:

Այս միությանը ժամանակին մեղադրել են «կուլտուր - ազգային ավտոնոմիայով» տարվելու մեջ, որի «հիմնական նպատակը ազգերն իրարից բաժանել – հեռացնելն է, նրանց մեջ, վերջին հաշվով, բուրժուա - նացիոնալիստական անտագոնիզմ սերմանելը»⁴:

Ակնհայտ է, որ նման մեղադրանքները ժամանակի համար բնորոշ անհեթեթությունների թվին են պատկանում. **ազգային մշակույթի զարգացումը, մանավանդ հայ արվեստագետների պարագայում, երբեք չի դրսևորվել այլազգիների նկատմամբ ատելության սերմանումով:**

Նույն Վահան Հարությունյանը, ով ուսումնասիրել է 1920-25 թթ. խորհրդային կերպարվեստը, գրում է. «Հ. Ա. Միությունը քաղաքական և իդեական որևէ համընդհանուր պլատֆորմ չունեի, ստեղծագործական մեթոդի հարցերում հանդուրժում էր բոլոր ուղղությունները, խոշոր նշանակություն էր տալիս «հայկական ոճի» **տարածմանը, ինչը Միության շատ անդամներից ոմանք հասկանում էին որպես կոչ՝ ժամանակակից արվեստը վերադարձնել անցյալի գեղարվեստական ձևերին: Ընդամին, «հայկական ոճ» տերմինի տակ Միության գրեթե բոլոր անդամները ճանաչում էին սոսկ հին հայկական կամ ժամանակակից արվեստի ձևերը:** Այդ բոլորը խոսում են այն մասին, որ Հ. Ա. Միությունը ապոլիտիկ կազմակերպություն էր և, վերջին հաշվով, օբյեկտիվորեն կանգնած էր բուրժուական իդեոլոգիայի դիրքերում: Եվ դա այդպես էր: Սակայն այդ դեռևս չի նշանակում, որ Հ. Ա. Միությունը իր կազմով, իր ողջ նպատակներով ու ֆունկցիաներով հանդիսանում էր կուլտուր - ազգային ավտոնոմիայի տիպիկ արտահայտություն»⁵ (Ընդգծումը մերն է - Ռ. Մ.):

Ընդգծված պարբերությունից պարզ է, որ այս միությունը մեղադրվել է կուլտուր - ազգային ավտոնոմիայով տարվելու մեջ այն պարզ պատճառով, որ հեռու է եղել ստեղծագործական այն մեթոդաբանությունից, որը հռչակվեց որպես սոցիալիստական ռեալիզմ:

Միանգամայն այլ էին խորհրդային արվեստի ձևավորման չափանիշները: Միության անդամներն ընդհանուր ոչինչ չունեն «իր ազգի կեղևի մեջ պարփակված, միայն իր ազգային կուլտուրան ճանաչող

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 27:

⁵Տե՛ս Վահան Հարությունյան, Սովետահայ կերպարվեստը 1920–1925 թվականներին, դիսերտացիոն աշխատանք արվեստագիտության թեկնածուի աստիճանի համար, Երևան, 1958:

կուլտուր - ազգային ավտոնոմիայի հետ»⁶: Եվ սա այն պարզ պատճառով նաև, որ միությունը սերտ հարաբերությունների մեջ էր գտնվում անդրկովկասյան այլ մշակութային հաստատությունների հետ, ցուցահանդեսներում տեղ էին գտնում Վ. Պոլենովի, Մ. Վրուբելի, Ա. Գուլովինի, Վ. Բորիսով – Մուսատովի, Մ. Տոխաչևի և այլոց ստեղծագործությունները:

Միության անդամներից շատերը հետագայում իրենց ավանդն ունեցան խորհրդահայ մշակույթի ձևավորման գործում, որը մեկ անգամ ևս վկայում է, որ նրանց համար գերագույն նպատակը եղել է ազգային մշակույթի զարգացումը, քանի որ խորհրդահայ մշակույթը կազմում է մեր ազգային մշակույթի կարևորագույն և բարձր զարգացման աստիճանի հասած փուլերից մեկը: Եվ այս միության գործունեությանը մեր անդրադարձը պայմանավորված է հենց այս հանգամանքով:

«Հայ Կերպարվեստագետների միությունը» եղել է ապաքաղաքական կազմակերպություն, որում ներգրավված արվեստագետները ստեղծագործել են ժանրերի բազմազանությամբ:

Ավելացնենք, որ այս միության գործունեությանը, հասկանալի պատճառներով, ավելի ծայրահեղ գնահատականներ է տրվել 1930-ական թթ.–ին: Այսպես, Գաբրիել Գյուրջյանը իր մի ընդարձակ հոդվածում⁷ բավական մռայլ գույներով է ներկայացնում մինչխորհրդային հայ կերպարվեստը և վերոհիշյալ միության գործունեությունը: Ըստ նրա՝ «Մինչև նոյեմբերը բուրժուազիան ճիգեր է թափել ստեղծելու իր վոճը՝ արվեստի բոլոր ճյուղերում»: Դրանցից ճարտարապետության մեջ տարվում էին հին ճարտարապետական ոճերի վերականգնման աշխատանքներ, իսկ «Կերպարվեստի բնագավառում Վ. Սուրենյանցի տիպի նկարիչները մի կողմից կրոնական բովանդակություն ունեցող յեկեղեցական նկարչության տրադիցիաներն էլին շարունակում, մյուս կողմից հայ ազգայնական ոգով լուսաբանված հայ պատմական նկարչություն ստեղծելու փորձեր էին անում»⁸:

Հայ կերպարվեստին նա բնորոշ է համարում նաև «Տաճկահայաստանի սարսափների պատկերումը՝ շովինիստական մեկնաբանությամբ, ռետրոսպեկտիվ ժամանակագրությամբ, ազգային հերոսաբանությունը», մելամաղձությամբ տոգորված պեյզաժները, որոնցում Անիի ավերակներն էին կամ կիսավեր եկեղեցիները» (Ֆեթվաջյան և այլն):

⁶ Նույն տեղում, էջ 26:

⁷ Գաբրիել Գյուրջյան, Խորհրդային Հայաստանի կերպարվեստի անցած ուղին, տե՛ս «Խորհրդային արվեստ», 1934, թիւ 10, էջ 9 – 15:

⁸ Նույն տեղում, էջ 9:

Ակամայից հարց է առաջանում՝ կերպարվեստի այս տարատեսակներն ի՞նչ կապ ունենին հայ բուրժուազիայի հետ: Բնականաբար՝ ոչ մի: Բայց բոլշևիկյան գաղափարախոսությունն այդպես էր գտնում:

Գ. Գյուրջյանն առանձնացնում է նրանց, ովքեր «հասարակական – քաղաքական կյանքից խուսափելով», իրենց արվեստի համար թեմա էին ընտրել «Կովկասի և արևելյան բնության գեղեցկությունը»: Եվ նա դա համարել է վահան՝ «հասարակական ցավոտ խնդիրներից խույս տալու համար»⁹:

Կերպարվեստի այս կամ այն ճյուղի նախընտրելիությունը պայմանավորված է ոչ թե ցանկություններով, այլ դրանում ինքնադրսևորվելու կարողությամբ: Հակառակ, ժամանակի ընթացքում չէին առանձնանա արվեստի տարբեր ուղղությունները՝ իրենց ռահվիրաներով: Այստեղից էլ՝ ինչպես կարելի է մեղադրել պեյզաժիստներին՝ «սոցիալական ցնցող անցուդարձները» իրենց արվեստում չարտացոլելու մեջ: Այնուհետև Գյուրջյանը գրում է, որ Թիֆլիսի հայ արվեստագետների միության 1917 թ. ցուցահանդեսի 268 գործերից 159–ը կամ 59 տոկոսը եղել են նատյուրմորտներ «առանց ոչ մի հատիկ հեղափոխական գործի» և «ցուցահանդեսի զգալի մի մասը կազմում էին ռետրոսպեկտիվ (հետահայաց) ռոմանտիկական, ազգայնական և միստիկական թեմատիկա ունեցող գործեր»¹⁰: Նույն մեղադրանքն է Գ. Գյուրջյանը ներկայացնում ընկերության 1919 թ. կազմակերպած ցուցահանդեսին, որի 258 գործերից ոչ մեկի թեմատիկան հեղափոխական չէր: Իշխողը դարձյալ հետահայացային, ռոմանտիկական և միստիկական թեմատիկան էր: Փաստորեն Գ. Գյուրջյանն իր այս հոդվածում այնպիսի կերպարվեստի ստեղծման կողմնակից էր իրեն դրսևորում, որը կարող ենք կոչել «ծրագրված», և որը պետք է ներկայացնեք հեղափոխական, սոցիալիստական, ժողովրդական, հակաբուրժուական թեմաներ:

Գ. Գյուրջյանի մոտեցումները կերպարվեստագետների միության նկարիչների գործերի վերաբերյալ չի կիսում Վ. Հարությունյանը: Նա գրում է, որ Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ ամիսներից այս միությունը «սերտ կապեր է հաստատում Սովետական Հայաստանի հետ՝ կանգնելով նրա ջերմ պաշտպանի դիրքերում»¹¹:

1921 թ. փետրվարի 29–ին Թիֆլիսում ապրող հայ մտավորականության տարբեր ներկայացուցիչներ ստեղծում են հասարակական – մշակութային մի կազմակերպություն՝ Հայ արվեստի

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Վահան Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 28:

տունը (Հայարտուն), որն ուներ չորս բաժիններ՝ գրականության (ղեկավար՝ Դ. Դեմիրճյան), երաժշտության (ղեկավար՝ Ռ. Մելիքյան), դրամատիկական (ղեկավար Ս. Քապանակյան) և նկարչության (ղեկավար՝ Գ. Շարբաբյան), որին փաստորեն միանում է Հայ կերպարվեստագետների կամ նկարիչների միությունը: Գ. Շարբաբյանի ջանքերով ստեղծվում է նկարչական ստուդիա, որտեղ վարպետություն են ձեռք բերում բազմաթիվ երիտասարդ նկարիչներ, հատկապես բնանկարի բնագավառում: 1925 թ. ստուդիան արդեն ուներ 40 աշակերտներ¹²:

1921 թ. մարտին Հայաստանի կառավարությունը Թիֆլիսում հայտարարում է ՀԽՍՀ դրամանիշների էսքիզների մրցանակաբաշխության մրցույթ: Ապրիլի 15-ին ժյուրիի որոշմամբ առաջին մրցանակն ստանում է Վրթանես Հախիկյանը, երկրորդը՝ ճարտարապետ Գաբրիել Տեր – Միքայելյանը (Տեր – Միքելովը)¹³:

Մրցանակաբաշխությունից շատ չանցած՝ 1921 թ. հուլիսի 19-ին, ՀԽՍՀ կազմավորումից հետո առաջին անգամ, «Հայ կերպարվեստագետների միությունը» Երևանում բացում է իր հինգերորդ ցուցահանդեսը: Այն բացվում է Ստ. Շահումյանի անվան բանվորական ակումբում: Ցուցահանդեսի հետ կապված Գ. Գյուրջյանը գրում է. «Հայաստանի խորհրդայնացումից հետո, 21 թվին Ցերևանում բացված առաջին ցուցահանդեսը, վորին գլխավորապես Թիֆլիսի հայ նկարիչներն էյին մասնակցում թեմատիկայի տեսակետից վոչնչով չի տարբերվում նախորդներից: 21 – 22 թվերին կերպարվեստի թեմատիկայում մասնակի բացառություն էյին մի քանի նկարիչների կողմից «Արմկավրոստրա»-ի համար կատարված քաղաքական ծաղրանկարները և շարժ-պլակատները»¹⁴:

Գ. Գյուրջյանն արտահայտվում էր այն տեսանկյունից, որ **հայ նկարչությունը, ինչպես արվեստի մյուս բնագավառները, դեռևս չէր որդեգրել այն գաղափարախոսական ուղին, որով պետք է զարգանար նոր քաղաքական իրողությունների պայմաններում:** Նա չէր գնահատում այն ստեղծագործությունները, որոնք չեն բխում խորհրդային սոցիալիզմի գաղափարախոսությունից:

Ցուցահանդեսի բացման օրը միության նախագահ Եղիշե Թադևոսյանն իր ելույթում մասնավորապես հետևյալն է նշում. «Մեր ուժերը տրամադրելով Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որին շնորհակալական խոսք ունենք ասելու հայ նկարիչներս այսպիսի

¹² Տես Ռաֆայել Շիշմանյան, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 219:

¹³ Арутюн Авакян, Из истории художественной жизни Армении, Ереван, 2002 ст. 14 – 15, նաև՝ Վահան Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 28:

¹⁴ Գաբրիել Գյուրջյան, նշվ. հոդվածը, էջ 10:

ծանր օրերին մեր կառավարության կողմից ցույց տված լայն աջակցության և քաջալերանքի համար»¹⁵:

Փաստորեն Եղիշե Թադևոսյանն արտահայտվում է իրենց ուժերը խորհրդային Հայաստանի կերպարվեստի զարգացմանն ի նպաստ դնելու օգտին, որը բխում էր նաև կառավարության դրական վերաբերմունքից և մասնավորապես Ալ. Մյասնիկյանի՝ հայ արվեստի ներկայացուցիչներին մայր հայրենիքում համախմբելու ջանքերից: Այս ցուցահանդեսում չեն ընդգրկվում հայ կերպարվեստի այնպիսի անվանի ներկայացուցիչների գործերը, ինչպիսիք են՝ Մ. Սարյանը, Վ. Սուրենյանը, քանդակագործներ Մ. Միքայելյանը, Հ. Գյուրջյանը և ուրիշներ, ըստ Վ. Հարությունյանի՝ տեխնիկական պատճառներով: Բայց դրա փոխարեն ցուցահանդեսում հանդես են գալիս արվեստագետներ, որոնցից հատկապես հիշարժան են Գ. Բաշինջաղյանը և Էդգար Շահինը: Նույն Վ. Հարությունյանի վկայությամբ՝ այս ցուցահանդեսը նախորդից տարբերվում էր կազմով և ոչ թե բովանդակությամբ. «Նույն պեյզաժներն ու նատյուրմորտները, սիմվոլիզմով տոգորված սենտիմենտալ երազանքները, նույն ռճավորումները՝ մեծ մասամբ հին հայկական մանրանկարչության, նույն արևելյան տեսիլները, հարեմները, մզկիթներն ու վանքերի ավերակները, նույն շուկաների տեսարանները, նահապետական խնջույքներն ու կրոնական տոնակատարությունները»¹⁶:

Ըստ նրա՝ դարձյալ բացակայում էին խորհրդային թեմաները, որի պատճառների մասին արդեն խոսեցինք: Գնահատելի գործերից էին Գ. Բաշինջաղյանի պեյզաժները, Հմ. Հակոբյանի դիմանկարները, նատյուրմորտներն ու պեյզաժները, Փ. Թերլեմեզյանի «Լոռեցի տղան» և «Կոմիտաս վարդապետը», Վ. Խոջաբեկյանի կենցաղային մատիտանկարները, Է. Շահինի օֆորտները: Աչքի էին ընկնում նաև Ե. Թադևոսյանի «Արարատը», «Եզդի կինը», Դ. Օքրոյանցի «Դերվիշը», Ս. Առաքելյանի «Ցորենն են չորացնում» էտյուդը և այլն:

«Հայ Արվեստագետների Միության ցուցահանդեսի նշանակությունը ոչ մի կերպ չի կարելի թերագնահատել: Ցուցահանդեսը հայ նկարիչների առաջին ցուցադրումն էր Սովետական Հայաստանում. ավելի սերտ ու անմիջական դարձրեց Հայաստանից դուրս գտնվող հայ արվեստագետների կապը Սովետական Հայաստանի հետ, հող պատրաստեց նրանցից շատերի Երևան տեղափոխվելու համար, վերջապես, ցուցահանդեսը բովանդակ հայ ժողովրդին մի իրական ապացույց ևս տվեց ազգային արվեստի բարգավաճման համար

¹⁵ «Խորհրդային Հայաստան», 22 հուլիսի, 1921, թիվ 133:

¹⁶ Վահան Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 29:

Սովետական Հայաստանում ստեղծվող հնարավորությունների մասին...»¹⁷:

Անժխտելի իրողություն է, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը լուրջ ջանքեր էր գործադրում ոչ միայն հայ կերպարվեստը, այլև մշակույթի մյուս ճյուղերը մայր հայրենիքում զարգացնելու համար: Սրանով պետք է պայմանավորել նաև այն, որ «Հայ արվեստագետների միության» 6-րդ ցուցահանդեսը հենց Խորհրդային Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ նույն թվականի նոյեմբերին բացվում է Կ. Պոլսում, «Հայաստանի արվեստագետների միության 6-րդ պատկերահանդես» խորագրով, որն արդեն նշանակում է, որ այս միությունը ներկայացնում էր Խորհրդային Հայաստանը: Նրա կազմակերպիչներն էին Գ. Շաբբաբյանը և Ս. Խաչատուրյանը: Ցուցահանդեսին հիմնականում ներկայացված էին նախորդ ցուցահանդեսի գործերը, բայց այստեղ դրանց թվին ավելացել էին որոշ արտասահմանյան նկարիչների գործեր՝ հայ աշխատավորների կենցաղից: Դրանց մեջ էին տաղանդավոր կենցաղագիր Սերովբե Քյուրքչյանի 15 աշխատանքները («Օրվա հոգսը», «Փոքրիկ խոհարարուհին», «Ձեռագործ անող հայուհին» և այլն)¹⁸:

«Հայարտուն» կազմակերպության ստեղծումը փաստորեն ազդարարեց «Հայ արվեստագետների միության» վախճանի սկիզբը, որի շատ անդամներ մաս էին կազմում նկարիչների սեկցիայի, իսկ մյուսները՝ Հայաստանի կերպարվեստի աշխատավորների ընկերության: Այսպիսով, առաջին «Հայ արվեստագետների միությունը» հայ կերպարվեստի ներկայացուցիչների առաջին միավորումն էր, որն իր մեջ ներառում էր կերպարվեստի տարբեր ուղղությունների ներկայացուցիչների:

Երկրորդ. անկախ նրա գոյության կամ գործունեության մասին տարաբնույթ գնահատականներից, այն մեծ դեր է ունեցել հայ կերպարվեստագետներին համախմբելու, կերպարվեստը զարգացնելու գործում:

Երրորդ. նրա շատ անդամներ, կապվելով Խորհրդային Հայաստանի հետ, իրենց ավանդն են ունեցել խորհրդահայ կերպարվեստի կենտրոնների ձևավորման գործում:

1921 թ. օգոստոսին Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունում Հայաստանի պետական թանգարանի ստեղծման մասին, որն ուներ պատմության, հնագիտության, ազգագրության, մշակույթի և հեղափոխական շարժման պատմության բաժիններ: Այստեղի նկարչական հավաքածուի հիմքում ընկած էին «Հայ արվեստագետների

¹⁷ Նույն տեղում, էջ 30:

¹⁸ Նույն տեղում:

միության»՝ Երևանում կազմակերպած 3-րդ ցուցահանդեսից նմուշներ, ինչպես նաև ստեղծագործություններ նախկին արվեստի թանգարանից, որը կազմավորվել էր Հայաստանի Հայլուսզլխավարին կից, խորհրդային կարգերի հաստատումից հետո: Պետական թանգարանի դիրեկտոր է նշանակվում Մ. Սարյանը, իսկ նկարչության բաժնի վարիչ՝ Վ. Հախիկյանը: Բավական երկար ժամանակ այս բաժինը չի գործել և փաստորեն կատարել է պահեստի դեր և այս պատճառով էլ այցելուները բացասական տպավորություն են ստացել¹⁹: 1924 թ. օգոստոսին եռօրյա այցով Հայաստան ժամանած ՌԻՏՍՆ լուսժողովում Ա. Բ. Լունաչարսկին նույնիսկ հայտարարում է, որ այդպիսի թանգարանները իրենց մոտ խորհրդային առաջին տարիներին փակել են²⁰:

1921 – 22 թթ. բաժինը համալրվում է 18-19-րդ դարերի ռուս նկարիչների ոչ մեծ հավաքածուով, որը պատկանում էր Լազարյանների ընտանիքին: Գեղանկարներ են բերվում Նոր Նախիջևանի գավառական թանգարանից, Էրմիտաժից, Մոսկվայի և Լենինգրադի պետական թանգարաններից: Նկարիչ Ս. Խաչատուրյանին հաջողվում է փրկել Կարինի Սանասարյան վարժարանի հավաքածուի մի մասը, այդ թվում և Ստեփանոս Ներսեյանի «Պիկնիկ Կուրի ավիին» կտավը՝ նոր ժամանկների հայ գեղանկարչական ժանրի առաջին գործը²¹:

1925 թ. գեղանկարչության համառոտ տեղեկությունների ցուցակում արդեն կային 400 անուն գործեր, որոնք ներկայացնում էին եվրոպական՝ իտալական, նիդերլանդական, ֆլամանդական, իսպանական, ֆրանսիական, գերմանական, ինչպես նաև ռուսական և հայկական գեղանկարչության և քանդակագործության վարպետներին²²:

Հայ կերպարվեստի հետագա զարգացմանը իր նպաստն է բերում Երևանի Պետական նկարչատեխնիկական դպրոցի բացումը 1921 թվականին, որը 1941 թ. կոչվում է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան: 1921 հոկտեմբերի 27-ին նկարչատեխնիկական դպրոցը բացվում է 50 սովորողներով: Դիրեկտոր է նշանակվում Ե. Թադևոսյանը, իսկ որպես առաջին դասավանդողներ հրավիրվում են Վ. Հախիկյանն ու Ս. Առաքելյանը: Բայց քանի որ Ե. Թադևոսյանը չի կարողանում Հայաստան գալ, դիրեկտոր է նշանակվում գեղանկարիչ Հովհ. Տեր – Թադևոսյանը, որը Հայաստան է գալիս Սամարղանդից: 1922 թ. վերջերին կամ 1923 թ. սկզբներին վերջինիս փոխարինում է Ս. Առաքելյանը, իսկ 1924-ին դիրեկտոր է դառնում Վ. Գաֆեջյանը: Դպրոցը կանոնավոր կերպով սկսում է աշխատել 1922 թ. փետրվարից: Այն իրենից

¹⁹ Драмплиян П. Г. Государственная картинная галерея Армении, Москва, 1982, ст. 7.

²⁰ Նույն տեղում:

²¹ Артур Авакян, Из истории художественной жизни Армении, Ереван, 2002 ст. 18.

²² Նույն տեղում:

ներկայացնում էր միջնակարգ կրթական հաստատություն, ուր ստանում էին ընդհանուր և գեղանկարչական կրթություն: Մինչև 1924 թ. դասերն ընթանում էին առանց հստակ ծրագրերի: Հատուկ հանձնաժողովը ճարտարապետ Ալ. Թամանյանի գլխավորությամբ ծրագիր է մշակում՝ դպրոցը եռաստիճան դարձնելու՝ ցածր, միջին և բարձր դասարաններով, բայց այն չի իրականանում: Դպրոցում երբեմն բացվում էին ցուցահանդեսներ:

1920-ական թթ. սկզբներին արդեն Հայաստանում էին հաստատվել հայ մշակույթի, այդ թվում, բնականաբար, նաև կերպարվեստի բազում ներկայացուցիչներ: Այդ գործում մեծ ավանդ ունեն Ալ. Մյասնիկյանը: Իրավացի է արձանագրված. «Երբ Մյասնիկյանը եկավ, կովկասահայ մտավորականության ընտրանին գտնվում էր Թիֆլիսում և այլուր: Միշտ այդպես էր եղել: Նա այդ վիճակը չհանդուրժեց ու Հայաստան բերեց Հովհաննես Թումանյանին, Մարտիրոս Սարյանին, Ալեքսանդր Սպենդիարյանին, Լեոյին, Ռոմանոս Մելիքյանին, օրվա հարց էր Ավետիք Իսահակյանի վերադարձը... Բերում էր նրանց, ում գրածները ժողովրդի շուրթերին էին, նկարները՝ աչքերի առջև, որ ժողովուրդը չգնար Հայաստանից, որ ժողովուրդը վերադառնար Հայաստան»²³:

Աշխարհասփյուռ հայ կերպարվեստագետներից 1920-ական թթ. սկզբին Հայաստանում էր Մարտիրոս Սարյանը (1921 թ.-ից): «Հայ կերպարվեստագետների միության» կազմակերպած 5-րդ ցուցահանդեսից հետո Հայաստանում հաստատվեց Վրթանես Հախիկյանը: 1922 թ. Նոր Նախիջևանից Հայաստան է գալիս Ստեփան Աղաջանյանը, Պենզայից՝ Գաբրիել Գյուրջյանը: 1923 թ. Իրանից Հայաստան է ժամանում Հակոբ Կոջոյանը: Հայաստանում էին հաստատվել Տաճատ Խաչվանքյանը, Վաղարշակ Մելիք – Հակոբյանը, Մեղրակ Առաքելյանը, նկարչուհի Անուշ Սահինյանը (Վաղարշապատ), դիմանկարիչ Ենոք Նազարյանը (Ալեքսանդրապոլ) և բազում ուրիշներ: Նկարիչների մի ոչ մեծ խումբ աշխատում էր Ալեքսանդրապոլում (Ս. Ալթունյանը, Յու. Վերժբիցկայան, Ե. Պատկանյանը, Ալիկ և Արշալույս Սաֆարյանները և ուրիշներ), որտեղ էլ 1923 թ. կազմակերպում են խորհրդային իշխանության տարիների իրենց առաջին ցուցահանդեսը:

Խորհրդահայ մշակութային կյանքի նշանակալի իրադարձություններից էր «Հայարտան» օրինակով «Արվեստաշեն» միության ստեղծման փորձը, որի գլխավոր նախաձեռնողն էր Մ. Սարյանը: Նախաձեռնող խումբը Մ. Սարյանի գլխավորությամբ ներկայացնում է ստեղծվելիք միության կանոնադրությունը 1922 թ. դեկտեմբերի 1-ին: Դրա տակ ստորագրել են Մ. Սարյանը, Յ.

²³ Տիգրան Դերիկյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 2008, էջ 53:

Խանգադյանը, Ստ. Զորյանը, Մ. Գևորգյանը, Տ. Նալբանդյանը, Ռոմանոս Մելիքյանը, Լ. Քալանթարը, Կ. Զարյանը և ուրիշներ²⁴:

Նախաձեռնող խմբի կազմից ենթադրվում է, որ այս միությունը իրենից ներկայացնելու էր մի մարմին, որի կազմում ընդգրկվելու էին մշակույթի գրեթե բոլոր ուղղությունների ներկայացուցիչները:

Կանոնադրությունը կցվել է Խորհրդային Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսարին ուղղված գրությանը, որի տակ ստորագրել են նույն անձինք:

«Ներկայացնելով Յերևանում աշխատող արվեստի մշակների՝ «Արվեստաշեն» կուլտուրական միության կանոնադրությունը, նախաձեռնող խմբակը խնդրում է Ձեզ նրա քննության և հաստատության հարցը դնել Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների խորհրդի առաջ և՛ ի պարգաբանումն իր կազմակերպության հիմքերի՝ անհրաժեշտ է համարում Ձեր ուշադրությունը հրավիրել այն խոշոր բացի վրա, որից այսօր զգալիօրեն տուժել է մեր յերկրի գեղարվեստական կուլտուրան»²⁵:

Ինչպես համոզվում ենք՝ նախաձեռնող խմբակին մտահոգում էր խորհրդահայ մշակույթի զարգացման խնդիրը: Այնուհետև նրանք գրում են, որ հայ մշակույթի ներկայացուցիչները կամ իրենց իսկ արտահայտությամբ՝ «գեղարվեստագետները» նախկինում ցրված են եղել և առանձին-առանձին են իջել մշակույթի ասպարեզ, մինչդեռ Հայաստանի պայմանները, մանավանդ խորհրդային շրջանում, առաջադրում են գեղարվեստական աշխատանքի համագործակցության սկզբունք, «վորի կիրառման միջոցով միայն կարող է բեղմնավոր արտահայտություն և արգասավոր թափ ստանալ գեղարվեստական կուլտուրայի աշխատավորների եռանդը»²⁶:

Այսպիսով, խմբակը փաստորեն առաջադրում էր մշակութային բոլոր գործիչների համագործակցության հարցը, որի դեպքում էր միայն հնարավոր այդ բնագավառի արգասաբերությունը: Իսկ այդ համագործակցությունը ստեղծել նրանք առաջարկում էին մշակույթի ներկայացուցիչների «Արվեստաշեն» միության մեջ ներգրավելով, որը հետևելով Ռուսաստանում գոյություն ունեցող նման կազմակերպությունների փորձին և օրինակին՝ «Կոչված է հավաքական աշխատանքի շուրջը հայտնաբերել իր բոլոր անդամների ստեղծագործական կարողությունները, հնարավորություններ տալ նրանց աշխատանքներին պլանաչափ ընթացք տրամադրելու և ապա՝ իր ուժերը ի սպասս դնելով արվեստի բոլոր ճյուղերին՝ հանրության և լայն

²⁴ ՀԱՍ, ֆ. 112, ց. 1, գ. 58, թ. 3 – 6:

²⁵ Նույն տեղում, թ. 3:

²⁶ Նույն տեղում:

մասսաների սեփականությունն դարձնել այն ամենը, ինչ ձեռք կբերվի նմանօրինակ աշխատանքի միջոցով և նրա շնորհիվ»²⁷:

Դիմումի այս մասից երևում է խորհրդային զաղափարախոսության ազդեցությունը, մանավանդ՝ արվեստն աշխատավոր մասսաների սեփականությունը դարձնելու կոչից:

Հեղինակները կառավարությանն առաջարկում են միության համար տրամադրել շենք և ապա՝ որոշակի գումար՝ աշխատանքները սկսելու և իր գոյությունն ամրապնդելու համար:

Վերջում նրանք նպատակահարմար են համարում իրենց ներկայացուցչի մասնակցությունը Ժողկոմխորհի այն նիստին, որում կքննարկվի իրենց դիմումը:

Բավական հետաքրքիր է դիմումին կցված կանոնադրությունը: Այն բաղկացած է 15 կետերից:

Երկրորդ կետում նշվում էր. «Արվեստաշենի» նպատակն է՝ զարգացնել, ազնվացնել և ժողովրդականացնել արվեստը՝ համաձայն նոր կյանքի նոր պայմանների»: Այն համարվում էր «աշխատանք՝ արվեստով զբաղվելու, ամբիոն՝ արվեստ տարածելու, խորհրդակցություն՝ արվեստի խնդիրները լուծելու և վայր՝ արվեստի մշակների մշտական հանդիպումների համար»²⁸:

Վերոհիշյալ նպատակն իրագործելու համար 3-րդ կետում «Արվեստաշենն» իր առջև դնում է հետևյալ խնդիրները՝

1. Համախմբել և կազմակերպել արվեստի կարող ուժերին՝ ստեղծելով նրանց համար պայմաններ արդյունավետ աշխատանքի համար:

2. Թե՛ իր անդամների և թե՛ աշխատավորական «լայն մասսաների համար» կազմակերպել դասախոսություններ, ընթերցումներ, ասուլիսներ, համերգներ, ցուցահանդեսներ և այլ հավաքույթներ, կատարել հրատարակություններ, կազմակերպել գրադարաններ, ընթերցարաններ, թանգարաններ, պատկերասրահներ և այլն:

3. Իր ուժերը տրամադրել պետական, կառավարական, գիտական և այլ հիմնարկներին՝ օգնելով լուծել մշակույթի բնագավառում նրանց առաջադրած ծրագրերը և այլն²⁹:

4-րդ կետով սահմանվում է միությանն անդամակցելու պայմանը, համաձայն որի՝ նրա անդամ կարող է լինել ամեն մի արվեստագետ, որը արվեստի որևէ ճյուղում իրեն դրսևորել էր՝ նկատելի արժեքներ ստեղծելով և իր աշխատանքով:

6-րդ կետում նշվում է, որ միությունն ունի չորս գլխավոր ճյուղեր՝ գրական, երաժշտական, կերպարվեստի և թատերական: Յուրաքանչյուր

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, թ. 4:

²⁹ Նույն տեղում:

բաժին կազմակերպված է համարվում, եթե ունի առնվազն ութ անդամ: Բաժնի անդամներն իրենց միջից ընտրում են 3 հոգուց բաղկացած նախագահություն, որը վարում է բոլոր գործերը:

7-րդ կետով սահմանվում է գործադիր մարմինը, որը խորհուրդն էր՝ բաղկացած ինը անդամներից, որոնցից 4-ը բաժինների ղեկավարներն էին, իսկ մնացած հինգը ընտրվում էին ընդհանուր ժողովի կողմից: Խորհուրդը վարում էր բոլոր կազմակերպչական գործերը՝ առաջնորդվելով ընդհանուր ժողովի հրահանգներով:

«Արվեստաշենի» գերագույն մարմինը ընդհանուր ժողովն էր, որը ընդունում էր միության գործունեության ծրագիրը և բյուջեն, մատնանշում նրա գործունեության ուղղությունները, ընտրում էր խորհուրդը ոչ ավել, քան մեկ տարի ժամանակով:

Այնուհետև կանոնադրության մեջ մատնանշվում էին այն նյութական միջոցների աղբյուրները, որոնցով պետք է միությունը ապահովեր իր գործունեությունը³⁰:

Այսպիսով, «Արվեստաշեն» միությունն իր համար կարևորագույն նպատակ է համարել համախմբել հայ մշակույթի գործիչներին ստեղծագործական ընդհանուր տանիքի տակ, նպաստել նրա առանձին ճյուղերի զարգացմանը, մշակույթը հասանելի դարձնել ժողովրդական լայն մասսաներին: Սակայն, այս միությունը չի կայացել:

Կառավարությունը չի հասատատել ներկայացված կանոնադրությունը: Հակառակ դեպքում նրա հետագա գործունեության մասին տեղեկություններ կպահպանվեին: Ա. Ավագյանը, որը մի ուսումնասիրություն է նվիրել Հայաստանի կերպարվեստի պատմությանը, նույնպես բավարարվում է այս միության մասին հիշատակելով և ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդում, թե ինչ ընթացք է տրվել նախաձեռնող խմբի դիմումին, որը հաստատում է մեր եզրակացությունը³¹:

Գեղարվեստական մշակույթի տարբեր ներկայացուցիչներին միավորելու փորձերից էր 1923 թ. Մարտին, այսպես կոչված, «Երկխոսությունների ակումբի» ստեղծումը, որի նախաձեռնող խմբի անդամներից էին Կ. Հալաբյանը, Տ. Հախիկյանը, Մ. Մանվելյանը, Մ. Սարյանը, Վ. Թոթովենցը և Ե. Չարենցը: Բայց այս ակումբը ևս մի քանի դասախոսությունների կազմակերպումից հետո այլևս չի գործում:

Մենք արդեն հիշատակել ենք «Հայաստանի կերպարվեստի աշխատավորների ընկերության» մասին, որն ստեղծվել է 1923 թ. դեկտեմբերին: Ստեղծմանը մասնակցել են Ալ. Թամանյանը, Մ. Սարյանը,

³⁰ Նույն տեղում, թ. 5 – 6:

³¹ Артур Авакян, Из истории художественной жизни Армении, Ереван, 2002, ст. 49.

Վ. Հախիկյանը, Ս. Առաքելյանը, Ս. Աղաջանյանը, Վ. Մելիք - Հակոբյանը, Գ. Գյուրջյանը, Գ. Հովսեփյանը և Հ. Կոջոյանը:

1924 թ. փետրվարի 24-ին տեղի է ունենում ընկերության առաջին լիազումար նիստը, որն ընտրում է ղեկավար խորհուրդ հետևյալ կազմով՝ Ալ. Թամանյան (նախագահ), Մ. Մարյան (նախագահի տեղակալ), Վ. Հախիկյան (գանձապահ), Գ. Գյուրջյան (մշակութային հանձնաժողովի նախագահ) և Գ. Հովսեփյան (քարտուղար): Ընկերության մեջ են մտնում նաև ճարտարապետներ Թ. Թորամանյանը և Ն. Բունիաթյանը, Գ. Բրուտյանը, Ա. Մահինյանը և Տարագրոսը, գրականագետ Գ. Լևոնյանը, հնագետ Ա. Քալանթարը: Ավելի ուշ ընկերությանն անդամակցում են գեղանկարիչ Վ. Գայֆեջյանը, քանդակագործ Արա Սահակյանը, նկարիչ – նախագծող Մ. Արուքյանը:

Գ. Գյուրջյանն այս ընկերության մասին գրում է. «Մա առաջին կազմակերպությունն էր, վորն իր շուրջը համախմբեց կերպարվեստի հետ առնչություն ունեցող գործիչներին: Բայց այդ ընկերությունը սոցորված էր նախահոկտեմբերյան հայ արվեստի ոգով, նրա կանոնադրության գլխավոր կետը կազմում էր ազգային ոճի զարգացումը: Ընկերության անդամներից մի մասն այդ զարգացումը հասկանում էր համարյա հին վոճերի վերականգնման վոգով, իսկ փոքրամասնությունը, վոր այլ կերպ էր ըմբռնում այդ խնդիրը, պոզիցիոն դիրք էր բռնել, և հետագայում հեռացավ ու կազմեց Հեղափոխական Արվեստագետների Ֆիլիալ (AXP)³²»:

Նույն Գյուրջյանը դեռևս 1924 թ. տպագրած մեկ այլ հոդվածում փաստորեն ճշտորեն բացահայտում է այն խնդիրը, թե ինչու ոչ արդյունավետ ավարտ են ունենում այս կազմակերպությունները: Նա մասնավորապես գրում է. «Այստրվա մեր հայ նկարիչների և կերպարվեստագետների առջև կանգնած է վոճի պրոբլեմը. նոր կուլտուրայի պայմաններում մենք ծարավի յենք այնպիսի մի դպրոցի, վորը հենվելով մեր ժողովրդական պարզ և խորունկ արվեստի նմուշների վրա և ուսումնասիրելով մեր հին վոճերը, կարող կլինի կերտել և ստեղծել մեր օրերին ու նրանց շնչին համպատասխան այստրվա նոր արվեստ»³³:

Գ. Գյուրջյանը գտնում է, որ իսկապես չկա այն նոր դպրոցը, խորհրդային կամ խորհրդահայ կերպարվեստի դպրոցը, որը կմատնանջի այն ուղին, որով կընթանա այդ կերպարվեստը: Նա գտնում էր, որ «Ընկերությունն արվեստի քաղաքացիական – ծառայողական դերի

³² Գաբրիել Գյուրջյան, Խորհրդային կերպարվեստի անցած ուղին, «Խորհրդային արվեստ», 1934, թիւ 10, էջ 10:

³³ Գ. Գյուրջյան, Կերպարվեստագետների ընկերությունը, «Վերելք», 1924, թիւ 1, էջ 63:

պաշտպան ե հանդիսանում»³⁴, այս առումով դառնալով ընդդիմադիր նրա շատ այլ անդամների նկատմամբ:

Գաբրիել Գյուրջյանը փորձում էր օրվա պահանջներից լուսաբանել կերպարվեստագետների տարաձայնությունները, պատճառները ձևավորվող խորհրդային ամբողջատիրական քաղաքական հանգամանքների պայմաններում: Նա գտնում էր. «Աշխարհի զանազան մասերից Խորհրդային Հայաստան հավաքված արվեստագետներն օտար էին իրար, զանազան դպրոցներում կրթություն առած, վորպես տարբեր տրադիցիաների, քաղաքական համոզմունքների ներկայացուցիչներ, և արտահայտվում էին գեղարվեստական տարբեր բարբառներով, վորտեղ դեռևս չկար իրար միավորող հողը»³⁵:

Ընկերությունը չունեի զարգացման միասնական հայեցակետ:

1924 թ. ապրիլ – մայիս ամիսներին բացվում է հիշյալ ընկերության առաջին ցուցահանդեսը, ուր ներկայացված էին 27 վարպետների 300 աշխատանքներ՝ վերաբերող գեղանկարչությանը, քանդակագործությանը և գրաֆիկային: Դրանց մեկ չորրորդը Թիֆլիսի «Հայարտան» նկարիչների գործերն էին՝ Լ. Ասլամազյանի, Ի. Կարյանովի, Մ. Խունունցի, Մ. Կիրակոսյանի, Մ. Մարգարյանի, Ե. Թադևոսյանի և այլն:

Ցուցահանդեսի 300 գործերից 213–ը կամ 71 տոկոսը կազմում էր պեյզաժը կամ բնանկարը: Նորը Հայաստանի լեռնային պեյզաժը ներկայացնող գործերն էին (Մ. Աղաջանյան, Մ. Առաքելյան, Գ. Գյուրջյան, Մ. Սարյան, Վ. Գայֆեջյան): Այստեղ նկարիչները «ցանկացել են տալ Հայաստանի պեյզաժն իր առանձնահատկություններով, տարբեր այլ երկրների նման ժանրից»³⁶:

Պեյզաժներում բավական տեղ էին զբաղեցնում գյուղական թեմաները: Ներկայացված էր պատերազմից հետո վերականգնվող գյուղը:

Ցուցահանդեսում աչքի էին ընկնում նաև Մ. Սարյանի մի քանի դիմանկարները (Ռ. Մելիքյանի, Վ. Փափազյանի, Ա. Ոսկանյանի և այլն):

Ընդհանուր առմամբ, պետք է շեշտել, որ սոցիալիստական շինարարության թեմայով գործեր գրեթե չկային, և հայ գեղանկարչությունը որոնումների մեջ էր: Սա է ընդունված տեսակետը 1920-ական թթ. հայ կերպարվեստի մասին: Բայց իրականում այս ժամանակահատվածում ստեղծվում էին գործեր, որոնք այսօրվա իրականության մեջ պետք է գնահատվեն մեծ և արժեքավոր: Օրինակ՝

³⁴ Գաբրիել Գյուրջյան, Խորհրդային կերպարվեստի անցած ուղին, «Խորհրդային արվեստ», 1934 թիվ 10, էջ 10:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

Ժամանակին Մ. Սարյանի մասին նույնիսկ գրվել են այսպիսի տողեր. «Ներկայումս նա գտնվում է մեծ տարուբերման մեջ: Յերբեմն նա մոտենում է ռեալիզմին, հափշտակում առարկայական մոմենտներ, բայց վերջ ի վերջո կուլ գնում իր տարերային յենթակայականությանը: Ըստ յերևույթին նրա համար չափազանց ծանր է և դժվարին սեփական «ներքին» բնության վերամշակումը, յենթակայապաշտության հաղթահարումը: Նրա համար ստեղծվել է կրիզիս. նա ձգտում է ասել, վերջացնել իր խոսքը, բայց խորտակվում է, վորովհետև նրա խոսքը ներկայումս եպոխա չի ստեղծում, այդ ըստ եության նոր խոսք չի, նա չի հիմնադրում նոր ուղղություն, նրա ուղիները չեն գնում Ժամանակի ուղիների հետ...»³⁷:

Ակնհայտ է, որ եթե «ուղիները» չէին համընկնում սոցիալիստական գաղափարախոսությանը, ապա ամեննին չի նշանակում, թե այդ ուղիների որդեգիրները չէին կայանում:

Եթե անկախ խորհրդային սոցիալիզմի գաղափարախոսության պարտադրանքների հետ հաճախակի անհամատեղելիությամբ հանդերձ, հայկական գեղանկարչությունը զարգանում էր, ապրում, ապա նույնը չի կարելի ասել քանդակագործության մասին: Խորհրդային Հայաստանում մշակութային այս ոլորտի զարգացման հիմքերը բացակայում էին, ինչպես նաև այն հանգամանքը, որ քանդակագործներ Հայաստանում պարզապես չկային:

Դեռևս 1918 թ. հուլիսի 30-ին ՌԽՖՍՀ Ժողկոմխորհը հրատարակում է դեկրետ «Այն անձանց ցուցակի մասին, որոնց հուշարձանները պետք է կանգնեցվեն Մոսկվայում և ՌԽՖՍՀ այլ քաղաքներում»³⁸: Մինչև այդ, նույն թվականի ապրիլի 12-ին դեկրետ էր հրապարակվել ցարի և իր ծառայակիցների հուշարձանները հանելու և Հոկտեմբերյան հեղափոխությանը նվիրված հուշարձանների նախագծի մասին³⁹:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, բնականաբար, պետք է այս դեկրետներն այնտեղ էլ իրականացվեին, որն, ինչպես նշեցինք, դյուրին խնդիր չէր: Հայաստանի առաջին հանրապետության շրջանում կառավարությունը որոշում էր կայացրել ազգային - ազատագրական

³⁷ Գ. Վանանդեցի, Ի. Մարտիրոս Սարյան, Ի. Եղիշե Չարենց, նրանց ստեղծագործությունների հասարակական արժեքը, Յերեվան, 1926, էջ 18:

³⁸ А. В. Луначарский, Ленин о монументальной пропаганде, Борьба за пелизм в изобразительном искусстве 20 –х годов, Материалы, документы, воспоминания, Москва, 1962, ст. 90.

³⁹ Агитационно – массовое искусство. Оформление празднеств. Материалы и документы, кн. 1, Москва, 1984, ст. 43.

պայքարի գործիչների հուշարձանները կառուցելու մասին, որը չիրականացավ:

Երկրում ստեղծագործում էին քիչ թվով քանդակագործներ, որոնցից պետք է առանձնացնել Թիֆլիսում ապրող Միքայել Միքայելյանին, Հակոբ Գյուրջյանին, որը 1921 թ. հաստատվել էր Փարիզում և չէր մասնակցում Հայաստանի գեղարվեստական կյանքին⁴⁰:

1920–ական թթ. սկզբին Վ. Մելիք - Հակոբյանը և Կ. Հալաբյանը, մասնակցում էին Խորհրդային Հայաստանում մոնումենտալ արվեստի ավելի շատ քարոզին, քան ստեղծմանը: Կ. Հալաբյանը զբաղեցում էր վարչական պաշտոններ և քիչ ժամանակ ուներ ստեղծագործական գործունեություն ծավալելու համար:

Այնուամենայնիվ, Երևանում և Ալեքսանդրապոլում Կ. Հալաբյանը ստեղծում է Մարքսի, Ստ. Շահումյանի և Ստ. Ալավերդյանի դիմաքանդակները, Վ. Մելիք–Հակոբյանը՝ Լենինի և Ստ. Ալավերդյանի կիսանդրիները, որոնք 1922 թ. նոյեմբերի 29–ին տեղադրվում են Կոմունարների այգում: Հուշարձանների բացման արարողություններն ուղեկցվում էին միտինգներով, որոնց մասնակցում էին կուսակցական ղեկավար գործիչներ:

1922 թ. հունիսի 24–ին մամուլը հրապարակում է Ժողկոմխորհի հայտարարությունը Երևանում կառուցվելիք հուշարձանների ստեղծման մրցույթի մասին⁴¹:

Մրցույթը վերաբերում էր Մարքսի, Լենինի, Շահումյանի, քաղաքացիական կռիվների հերոսների, ինչպես նաև Մ. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի և Վ. Տերյանի արձանների ստեղծմանը: Նախագծերի ներկայացման վերջնական ժամկետ էր նշվում 1922 թ. դեկտեմբերի 1–ը, բայց նշված ժամկետներում նախագծեր չեն ներկայացվում:

Այնուամենայնիվ, 1923 թ. նոյեմբերի 7–ին Վաղարշապատում բացվում է Վ. Մելիք–Հակոբյանի հեղինակած քաղաքացիական կռիվների 15 հերոս – կոմունիստների հուշարձանը:

1924 թ. հունվարի 26–ին, Լենինի հիշատակը հավերժացնելու նպատակով որոշում է ընդունվում Երևանի հրապարակը անվանակոչել նրա անունով, իսկ հաջորդ օրը հրապարակում տեղի ունեցած սգո միտինգի ժամանակ Ա. Թամանյանը հայտարարում է, որ այնտեղ պետք է տեղադրվի առաջնորդի հուշարձանը:

ԽՍՀՄ կազմավորումից առաջ և նրանից հետո դեռևս բոլշևիկյան վերին օղակներում չէր ավարտվել պայքարն իշխանության համար, որն ավելի սրվեց Լենինի մահից հետո: Այդ պայքարի ընթացքում տարբեր

⁴⁰ Артур Авакян, Из истории художественной жизни Армении, Ереван, 2002, ст. 31.

⁴¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, հունիսի 24:

բուլճնիիկներ առաջ էին քաշում խորհրդային սոցիալիզմի կառուցման տարբեր մարտավարական ուղղություններ, անշուշտ, չհրաժարվելով կառավարման բռնապետական մեթոդներից: Իշխանության համար պայքարում Ստալինի վերջնական հաղթանակից հետո արդեն վերևից թելադրվեցին այն ուղղությունները, որոնցով պետք է զարգանային ոչ միայն տնտեսությունը, այլև մյուս բնագավառները, այդ թվում և՛ մշակույթը: Ահա այս ամենով պետք է պայմանավորել մշակույթի մեջ իշխող ինչ – որ տեղ անորոշ վիճակը, նույնիսկ ինքնաֆինանսավորվող խմբերի կամ միությունների գործունեությունը 1920-ական թթ. սկզբներին:

Ինչպես նշել ենք, 1920 թ. դեկտեմբերի 3-ին Երևանում տեղի է ունենում արվեստի աշխատողների առաջին ժողովը, որի որոշմամբ ստեղծվում է «Գեղաշխ» միությունը («Խորհրդային Հայաստանի գեղարվեստի աշխատավորների միություն»): Այն ուներ նաև երաժշտական սեկցիա: Նույն թվականի դեկտեմբերի 17-ին տեղի է ունենում միության երաժշտական սեկցիայի անդամների առաջին ընդհանուր ժողովը, որտեղ սեկցիայի նախագահ է ընտրվում Ս. Բարխուդարյանը, իսկ քարտուղար՝ Շ. Տալյանը: Ժողովը որոշում է սեկցիայում կազմակերպել հետևյալ բաժինները՝ 1. երգի, երգչախմբի, նվագախմբի, 2. օպերայի, օպերետային բալետի, 3. արևելյան գործիքների նվագախմբի և 4. խառը գործիքների նվագախմբի⁴²:

«Գեղաշխ» միությանը կից կազմակերպվում են քառաձայն երգեցիկ խառը խումբ և լարային նվագախումբ:

1921 թ. փետրվարյան դեպքերից հետո, երբ Հայաստան է ժամանում Ալ. Մյասնիկյանը, որոշակի քայլեր են կատարվում երաժշտական կյանքի կազմակերպման և աշխուժացման համար: Բավական է նշել նրա ջանքերը իր հայրենակից Ռոմանոս Մելիքյանին Հայաստան բերելու ուղղությամբ: Մ. Մարյանի միջոցով Մյասնիկյանը առաջարկել է վերջինիս երաժշտություն գրել Չարենցի «Կավկաս թամաշայի» համար, որին ի պատասխան Ռ. Մելիքյանը գրել է.

«Միրելի Ալեքսան,

Մարտիրոսը հայտնեց, որ դու ցանկություն ես հայտնել Չարենցի «Կավկասը» երաժշտականացրած տեսնել և որ ուզում ես գործը հանձն առնեմ ես: Կարդացի գիրքը, կարելի է երաժշտական օրիգինալ հյուսվածք պատրաստել: Միայն կուզենայի իմանալ արդյո՞ք ամբողջապես երաժշտություն, թե՞՞ էպիգոդիկ մոմենտներ և մեկ էլ ամենաուշը ե՞րբ պետք է ներկայացվի: Բարի եղիր մի երկտողով հայտնել ինձ:

Քո Ռո. Մելիքյան»⁴³:

⁴² «Коммунист», 22 декабря, N 14.

⁴³ Ա. Ն. Մնացականյան, Ալեքսանդր Մյասնիկյան (Ալ. Մարտունի), Երևան, 1955, էջ 233, նաև՝ Ս. Ս. Ամիրյան, Ալեքսանդր Մյասնիկյան, էջ 523 – 524:

Սակայն այս ծրագիրը չի իրականանում, և Չարենցի գործը չի դառնում երաժշտական կատակերգություն: Այն բեմականացվում է միայն 1925 թ. Արմեն Արմենյանի կողմից՝ լույս տեսնելուց երկու տարի հետո, բայց ոչ որպես երաժշտական կոմեդիա⁴⁴:

Ինչպես մշակույթի այլ բնագավառների, այնպես էլ երաժշտության համար մինչև 1920-ական թթ. սկիզբը դեռևս կենտրոնատեղի էր հանդիսանում Թիֆլիսը: Այստեղ էին գործում հայ երաժշտական արվեստի բազմաթիվ ներկայացուցիչներ: Այստեղ էր սկզբնական շրջանում գործում նաև Ռ. Մելիքյանը, որի երգերը 1921 թ. մարտի 17-ին կատարվում են Թիֆլիսի կամերային թատրոնում, հայ պոեզիայի երեկոյի երաժշտական բաժնում⁴⁵:

«Հայարտան» կազմակերպությանը կից 1921 թ. մարտի 29-ին ստեղծվում է «Հայ երաժշտության աշխատավորների միությունը»: Նրա ղեկավարն էր Ռ. Մելիքյանը⁴⁶: Հասկանալի է, որ «աշխատավոր» բառն արդեն գալիս էր բոլշևիկյան արվեստի նկատմամբ որդեգրած ժողովրդականացման սկզբունքներից:

Այս միության առաջին համերգը կայանում է ապրիլի 7-ին Թիֆլիսում՝ Սպիրիդոն Մելիքյանի գլխավորությամբ, Բ. Ամիրջանի, Գ. Բոյաջյանի, Սպ. Մելիքյանի, Գ. Ղազարյանի, Ա. Տեր - Աբրահամյանի և Գ. Էլբակյանի մասնակցությամբ: Ապրիլի 7-ին «Հայկուլտ» թատրոնում կազմակերպվում է մանկական ցերեկույթ, կատարվում են խմբերգեր, մեներգեր, «Հաղթված բազե» և «Ծաղիկների երգը» մանկական օպերաները: Մանկական ցերեկույթ է կազմակերպվում նաև ապրիլի 17-ին⁴⁷:

1921 թ. մայիսի 20-ին ՀԽՍՀ լուսժողկոմի հրավերով Երևան են գալիս Ռոմանոս Մելիքյանը և երգչուհի Արուս Բաբայանը, իսկ նույն ամսի 29-ին Հայաստանի դպրոցներում որպես երաժշտական հրահանգիչներ աշխատելու համար դարձյալ Թիֆլիսից Երևան են գալիս Սպիրիդոն Մելիքյանը և Ազատ Մանուկյանը⁴⁸:

Մելիքյանը մի քանի ամիս անց ստանձնում է Երևանի երաժշտական ստուդիայի ղիբեկտորի պաշտոնը:

Հայաստանում այս շրջանում բացվում են երաժշտական ակումբներ, սրահներ, ստուդիաներ: Այսպես, հուլիսի 1-ին Ալեքսանդրապոլում կոմպոզիտոր Ն. Տիգրանյանի գլխավորությամբ

⁴⁴ Բաբկեն Հարությունյան, Հայ սովետական թատրոնը, էջ 31:

⁴⁵ «Կարմիր աստղ», 17 մարտի, 1921, N 15:

⁴⁶ Նույն տեղում, 31 մարտի, 1921, N 26:

⁴⁷ Նույն տեղում, 7 ապրիլի, 1921, N 32:

⁴⁸ Տե՛ս ԳԱԹ, երաժշտական բաժին, Ռ. Մելիքյանի ֆ., N 56, Սպ. Մելիքյանի ֆ., N 57:

լուսբաժնին կից կազմակերպվում է 10 հոգուց բաղկացած երաժշտական սեկցիա, Դիլիջանի ակումբում բացվում են դաշնամուրի դասընթացներ⁴⁹:

1921 թ. հոկտեմբերին տեղի է ունենում Երևանի երաժշտական ստուդիայի ընդունելություն՝ երգի, ջութակի, դաշնամուրի, խմբական երգեցողության, մասսայական ռեկլամացիայի, երաժշտության տեսության, երաժշտության կուլտուրայի պատմության և էսթետիկայի դասարաններում⁵⁰:

Իսկ ստուդիայի հանդիսավոր բացումը տեղի է ունենում 1922 թ. դեկտեմբերին: Ելույթ են ունենում Պ. Մակինցյանը, Տ. Հախումյանը, Սպ. Մելիքյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Իսկանդեր-Ալիխանյանը, ստուդիայի դիրեկտոր Ռ. Մելիքյանը: Բացմանը հաջորդում է համերգը, որին մասնակցում են Լ. Միրզա-Ավագյանը, Հ. Մադաթյանը, Ա. Բաբայանը և ուրիշներ: Որպես նվագակցողներ են հանդես գալիս Ռ. Մելիքյանը և Ա. Հակոբյանը⁵¹:

1921 թ. վերջերից Հայաստանում էին հաստատվել հայ երաժշտական արվեստի բազում նշանավոր ներկայացուցիչներ, որոնք իրենց կարևորագույն ներդրումն էին ունենում մշակույթի այդ ոլորտի զարգացման գործում:

Նրանք միաժամանակ ամեն ինչ անում էին հայ և համաշխարհային երաժշտության մեծերին քարոզելու համար: Այսպես, 1922 թ. փետրվարի 5-ին տեղի է ունենում Երևանի երաժշտական ստուդիայի ակադեմիական երեկոն: Ելույթ են ունենում երգչուհի և դաշնակահար Ա. Հակոբյանը: Ներկայացվում են Մ. Եկմալյանի, Կոմիտասի, Ա. Մանուկյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Գ. Գեղարիկի և Ռ. Մելիքյանի ստեղծագործությունները⁵²:

Նույն ամսի 19-ին դարձյալ Երևանի երաժշտական ստուդիայում տեղի է ունենում ակադեմիական երեկո, որի ընթացքում ներկայացվում են Բախի ստեղծագործությունները⁵³:

1922 թ. մարտին ստուդիայում տեղի է ունենում երաժշտական երեկո, որի ընթացքում երգչուհի Ա. Բաբայանը և դաշնակահար Ա. Հակոբյանը ներկայացնում են արևմուտքի ժողովուրդների երգերը⁵⁴, ապրիլին տեղի է ունենում երաժշտական երեկո՝ նվիրված Շոպենի

⁴⁹ «Խորհրդային Հայաստան», 11 հունիսի 1921, N 103, 3 հուլիսի, 1921, N 117:

⁵⁰ Նույն տեղում, 23 դեկտեմբերի, 1921, N 203, տե՛ս Մ. Միրզոյան, Երևանի երաժշտական ստուդիայի բացման առթիվ:

⁵¹ Նույն տեղում, 24 դեկտեմբերի, 1921, N 255, տե՛ս Տ. Հախումյան, Կուլտուրական տոն:

⁵² Նույն տեղում, 5 փետրվարի, 1922, N 28:

⁵³ ԳԱԹ, երաժշտական բաժին, Ռ. Մելիքյանի ֆ., N 56:

⁵⁴ «Կարմիր աստղ», 17 մարտի, 1922, N 60:

ստեղծագործություններին⁵⁵, մայիսի 14-ին տեղի է ունենում երեկո՝ նվիրված Բեթհովենին, ուր ելույթ են ունենում Ա. Մնացականյանը, Ա. Բաբայանը և Լ. Միրզա Ավագյանը⁵⁶:

Այսպիսի երեկոներ կազմակերպվում են գրեթե բոլոր ամիսներին, բայց մենք ամենը չենք թվարկում, որովհետև մեր նպատակը երաժշտական կյանքի տարեգրությունը ներկայացնելը չէ: Միայն հարկ է ավելացնել, որ 1922 թ. դեկտեմբերին Երևանի երաժշտական ստուդիայի տարեդարձի առթիվ պետական թատրոնում տեղի է ունենում մեծ համերգ, որի ծրագրում ներկայացվում են Բախի, Հենդելի, Գլյուկի, Ռամոնի, Սկարլատիի, Ստրադելլայի, Պունիանիի և Պերգոլեզիի⁵⁷ ստեղծագործությունները: «Խորհրդային Հայաստան» թերթի հղված համարում Հ. Նարը (Տ. Հախումյան) հռոզված է տպագրում, ուր այս համերգը համարում է «Առաջին պատմական համերգը»:

Համերգներ կազմակերպվում էին ոչ միայն Երևանում, այլև հանրապետության այլ քաղաքներում, որոնցում մինչև 1925 թ. ներառյալ նույնպես ստեղծվում են երաժշտական ստուդիաներ, իսկ դրանց բացակայության դեպքում դրանք կազմակերպվում են ակումբներում: Տեղերում երաժշտական արվեստին զարկ տալու նպատակով Լոռի, Ջանգեզուր, Ալեքսանդրապոլ, Դիլիջան, Ղարաքիլիսա և այլ վայրեր էին մեկնում Երևանի երաժշտական ստուդիայի ուսանողները, որոնք նաև հավաքում էին ժողովրդական երգեր և հեքիաթներ, կազմակերպում էին երգեցիկ խմբեր:

1923 թ. հուլիսի 13-ին հրապարակվում է ՀԽՍՀ լուսժողովի որոշումը՝ Երևանի երաժշտական ստուդիան որպես պետական կոնսերվատորիա վերակազմելու մասին⁵⁸: Այս որոշումից հետո աստիճանաբար կոնսերվատորիան վեր է ածվում երաժշտական արվեստի դարբնոցի:

Նման դարբնոցներ հիմնվում էին նաև տեղերում: Այսպես, 1924 թ. հունիսի 17-ին տեղի է ունենում Լենինականի օպերա - օպերետային թատրոնի բացումը՝ Շ. Գունոյի «Ֆաուստ» օպերայով: Թատրոնի կազմակերպիչն ու ղեկավարն էր Շարա Տալանը⁵⁹:

⁵⁵ Նույն տեղում, 9 ապրիլի, 1922, N 82:

⁵⁶ ԳԱԹ, երաժշտական բաժին, Ռ. Մելիքյանի ֆ., N 56:

⁵⁷ «Խորհրդային Հայաստան», 24 դեկտեմբերի, 1922, N 287:

⁵⁸ М. Мурадян, Армянская советская музыкальная культура, Ереван, 1957, стр. 13.

⁵⁹ «Բանվոր», 19 հունիսի, 1924, N 210, տե՛ս Արման, Հայ գեղարվեստի հաղթանակի տոնը - առաջին անգամ «Ֆաուստի» հայերեն բեմադրումը Լենինականում:

Ընդհանուր առմամբ, երբ մենք ծանոթանում ենք հայ երաժշտական արվեստի պատմությանը թե՛ 1920 – 25 թթ. և թե՛ դրանից հետո, գալիս ենք մեկ եզրակացության՝ այն զարգանում է ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև նրա սահամաններից դուրս՝ Թիֆլիսում, Բաքվում, Ստեփանակերտում, ուր Ռ. Մելիքյանի նախաձեռնությամբ 1925 թ. դեկտեմբերին բացվում է Երաժշտական տեխնիկում:

Իհարկե, մշակույթի այլ ոլորտների համեմատությամբ երաժշտական արվեստի զարգացման հնարավորություններն ավելի շատ էին, որովհետև այդ զարգացման մեթոդոլոգիան ավելի շատ իրեն կարող էր դրսևորել ստեղծագործությունների վերնագրային ձևակերպումներում, տեքստերի բովանդակության մեջ, քան թե սոսկ երաժշտության:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հրատարակվել են ուսումնասիրություններ, որոնցում ներկայացվել են երաժշտական արվեստի համաշխարհային և հայ նշանավոր դեմքերի կյանքն ու գործը, ինչպես նաև հրատարակվել են երգեր և երաժշտական օջախների պատմությունը ներկայացնող հոդվածներ: Եղել են նաև հոդվածներ, որոնցում բնութագրվել են հայկական երաժշտության անցյալը և ներկան:

Խորհրդահայ իշխանությունները ձեռնարկեցին որոշակի քայլեր ՀԽՍՀ-ն հայ երգարվեստի կենտրոն դարձնելու ուղղությամբ, որը բերեց աստիճանական հաջողությունների:

Ակնհայտ է, որ հայ երաժշտության երախտավորները աստիճանաբար իրենց հանգրվանը գտնում էին մայր հայրենիքում, որը հետզհետե վերածվում էր հայ երգի և երաժշտության կենտրոնավայրի:

Ստեղծվեցին երաժշտական բազմաթիվ օջախներ, որոնցում իրենց ներդրումն ունեցան և՛ Հայաստանի իշխանությունները, և՛ երաժշտական արվեստի հայ երախտավորները:

1920–25 թթ. հայ երաժշտական կյանքն ընթանում էր համաշխարհային և հայ երգարվեստի մեծերի ստեղծագործությունների քարոզչությամբ, որն ինքնին գնահատելի էր:

Խորհրդահայ երաժշտական արվեստը մյուս ճյուղերի համեմատ ավելի ընդգրկուն զարգացման ընթացք էր որդեգրել, որովհետև նրա վրա համեմատաբար քիչ ճնշում էր գործադրվում օրվա իշխանությունների կողմից:

РЕЗЮМЕ
ИЗОБРАЗИТЕЛЬНОЕ ИСКУССТВО И МУЗЫКА В СОВЕТСКОЙ
АРМЕНИИ (1921-1925)
Р.К. МИРЗАХАНЯН

В статье рассматривается влияние политической системы Советской Армении (1921-1925) на активность и плодотворность деятельности представителей разных сфер культуры. Рассматриваемый период ознаменовался также национальными подходами в художественном творчестве.

В связи с этим, статья содержит интересные наблюдения, которые способствуют наиболее точному восприятию динамики развития национальной культуры данного периода, а именно, в сферах изобразительного искусства и музыки. Многочисленные факты и примеры свидетельствуют, что в этот период в Советской Армении художественные жанры и течения, в частности, в изобразительном искусстве и в музыке, несмотря на их несовместимость с принуждениями советской социалистической идеологией, расцвели благодаря государственному содействию.

SUMMARY
VISUAL ARTS AND MUSIC IN SOVIET ARMENIA (1921-1925)
R.K. MIRZAKHANYAN

The paper dwells on the influence of the political system of Soviet Armenia (1921-1925) on the dynamic and prolific activities of the representatives of different spheres of culture. The artistic creativity of that period also contained explicit national approaches.

In this regard, the article comprises inquiring observations that contribute to the precise understanding of the dynamics of the development of national culture, more precisely, that of visual arts and music. The numerous facts and examples involved evidence that in that very period in Soviet Armenia such artistic genres and movements as those in visual arts and music – despite their incompatibility with the ideological compulsion of soviet socialist ideology – progressively blossomed under the State patronage.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 94(47+57):32.001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Գ. ՄԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ, Երևան, Նալբանդյան 130

e-mail: arman.g.sargsyan@mail.ru

Հոդվածում փորձ է արված ապացուցելու, որ Խորհրդային Հայաստանի քաղաքական համակարգի ամբողջատիրական լինելու հանգամանքն ամենևին չի ենթադրում, որ նրանում առհասարակ բացառված են եղել ժողովրդավարական տարրերը: Այդ քաղաքական համակարգը, որը ԽՍՀՄ նույն համակարգի փոքր տարբերակն էր, ամբողջովին մերժում էր քաղաքական այլախոհությունը և մարդկանց ազատ խոսքի իրավունքը, բայց խրախուսում էր իրավունքների այն տարատեսակները, որոնք կապված էին սոցիալական ապահովության, մարդու նյութական կացության բարելավման և հավասար կեցության հասնելու ձգտումների հետ:

***Բանալի բառեր.** ՀԽՍՀ, քաղաքական համակարգ, Սահմանադրություն, քաղաքական այլախոհություն, ժողովրդավարություն, տոտալիտարիզմ, այլընտրանքային գաղափարախոսություն, տնտեսական համակարգ, քաղաքական իրավունքներ, սահմանադրական ամրագրումներ:*

Ներկայացված է խմբագրություն 10.11.2015 թ.

Հայաստանի առաջին հանրապետությունը կարողացավ գոյատևել շուրջ երկու տարի: Ժամանակաշրջան, որը լի էր մաքառումներով. պետականաշինություն, ներքին և արտաքին թշնամու դեմ պայքար, սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս գալու փորձեր և այլն: Արդյունքում, չկարողանալով դիմակայել մարտահրավերներին, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանյան համաձայնագրով այն խորհրդայնացավ [1]: Այնուհետև 1921 թ. փետրվարի 18-ին բռնկված Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո, երբ ողջ Հայաստանում կրկին հաստատվեցին խորհրդային կարգեր, մինչև 1991 թ. սեպտեմբերի 21-ը հայ ժողովուրդն ապրեց մի հասարակարգում, որի

դրական և բացասական կողմերը ցայսօր լուրջ հաշվեկշռի չեն ենթարկվել: Ուզենք, թե չուզենք՝ այդ 70 տարիները մեր ժողովրդի պատմության անբաղդատելի մասն են կազմում, և սխալ են բոլոր նրանք, ովքեր ծայրահեղ բացասաբար են տրամադրված այդ հանրապետության գոյության նկատմամբ, չեն ուզում այդ կիսանկախ պետության քաղաքական համակարգի ամբողջատիրական լինելու հանգամանքի կողքին նկատել նաև այն ժողովրդավարական տարրերը, որոնք առկա էին նրանում և որոնք, բացառությամբ քաղաքական ոլորտից, իշխում էին մարդու իրավունքների մյուս բնագավառների վրա:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը հաստատվեց միակուսակցական համակարգ [2]: Այն համարվում էր տոտալիտար վարչակարգ ունեցած ԽՍՀՄ-ի փոքրիկ բաղադրամասը: Հայտնի է, որ տոտալիտար կամ ամբողջատիրական համակարգերին բնորոշ են քաղաքական այլախոհության նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը, ազատ խոսքի, ցույցերի, երթերի արգելումը և այլն: Հարկավ, եթե Խորհրդային Միության քաղաքական համակարգին այս ամենը բնորոշ էր, ապա հակառակն անհնար էր Խորհրդային Հայաստանում: Բայց այսօր արդեն չափազանց կարևոր է այն հայեցակետի հիմնավորումը, որ եթե ինչ-որ երկրի տոտալիտար վարչակարգում մերժելի է քաղաքական այլախոհությունը, ապա՝ դրանից ամեննին չի հետևում, թե այնտեղ կարող են ոտնահարված լինել մարդու իրավունքներն առհասարակ: Եթե մարդու քաղաքական իրավունքները ոտնահարված են, և իշխող քաղաքական ուժի կամ կուսակցության նկատմամբ քաղաքական այլընտրանքային դիրքորոշումները՝ բացասված, բայց դրա կողքին կարող են խրախուսվել մարդու կրթության, աշխատանքի, հանգստի, խղճի կամ դավանանքի ազատության իրավունքները, ուրեմն նման քաղաքական համակարգ ունեցող պետությունները թերևս չի կարելի համարել լիարժեք ամբողջատիրական:

Ճշմարիտ է, որ խորհրդային համակարգում ամեն ինչ թելադրվում էր վերևից, պլանավորվում էին ոչ միայն տնտեսական, այլև մշակութային, առողջապահական, գիտական և այլ զարգացման ոլորտները [3], բայց պատմական ճշմարտության առջև մեղք կգործենք, եթե պնդենք, որ այդ քաղաքական համակարգն ամբողջովին զերծ էր ժողովրդավարական տարրերից: Բացի այդ, կարծում ենք, որ ժողովրդավարություն հասկացությունն ունեցել է և ունի տարբեր ընկալումներ: Այդ ընկալումները կարելի է ներկայացնել հետևյալ տարաբաժանումներով:

Առաջին. ժողովրդավարություն, ուր կարևորվում են մարդու ազատ խոսքի, ցույցերի, երթերի, ընտրելու և ընտրվելու իրավունքները: Սա ենթադրում է մի քաղաքական համակարգ, ուր մերժելի չէ քաղաքական այլախոհությունը:

Երկրորդ. ժողովրդավարություն, ուր առկա է մեկ քաղաքական կազմակերպության կամ ուժի գերակայությունը մյուսների հանդեպ, և դրանք հանդուրժելի են այնքանով, որքանով վտանգ չեն սպառնում այդ ուժին, որը նշանակում է քաղաքական այլախոհության մերժում, եթե այդ ուժերը դնում են իշխանության հասնելու խնդիր: Ուրեմն, այստեղ կարող է խոսք գնալ մասնակի ժողովրդավարության մասին:

Երրորդ. ժողովրդավարություն, որը վերաբերում է այնպիսի քաղաքական համակարգերին, որոնցում այլընտրանքային քաղաքական գաղափարախոսությունների մերժելիությունը չի ենթադրում առհասարակ ժխտողականություն ժողովրդավարական արժեքների նկատմամբ:

Խորհրդային Միության և, բնականաբար, նաև Խորհրդային Հայաստանի քաղաքական համակարգի համար բնորոշիչ կարելի է համարել այս երրորդ ձևակերպումը: **Խորհրդային քաղաքական համակարգը տոտալիտար էր քաղաքական այլախոհության նկատմամբ ունեցած անվերապահորեն ժխտողական վերաբերմունքի տեսանկյունից: Բայց դրանով հանդերձ՝ մարդու սոցիալական պաշտպանվածության տեսանկյունից սահմանադրական ամրագրումները լիովին կիրառելի էին:**

Խորհրդային համակարգի փլուզումից անցել են երկու տասնյակից ավելի տարիներ, նրա բռնատիրական որակավորումները տարածվել են բոլոր բնագավառների վրա, բայց **քաղաքագիտության այբուբենը պահանջում է քաղաքական համակարգերի բնորոշման լիարժեքություն և ոչ թե միայն քաղաքական ընդդիմության ժխտողականությամբ քաղաքական համակարգերի տարատեսակների բնորոշում:**

Խորհրդային Հայաստանն ունեցել է երեք Սահմանադրություն, որոնցից առաջինն ընդունվել է 1922 թ.-ին [4], երկրորդը՝ 1937 թ.-ին [5] և երրորդը՝ 1978 թ.-ին [6]: Հասկանալի է, որ դրանք Խորհրդային Ռուսաստանի և ԽՍՀՄ Սահմանադրությունների կրկնօրինակներն էին՝ մի փոքր տեղայնացված: Ուրեմն դրանց գնահատականը համարժեք է ԽՍՀՄ Սահմանադրությունների գնահատմանը: **Սահմանադրությունը պետության քաղաքական համակարգի հիմքն է, բայց այնտեղ տեսականորեն մատնանշվածը հաճախ ուղիղ համեմատական չէ գործնականում նրա կիրառմանը:** Սա վերաբերում է Խորհրդային

Հայաստանի քաղաքական համակարգին: Փորձենք իրարից զատել տեսականն ու իրականը:

Խորհրդային Հայաստանի քաղաքական և տնտեսական հիմքերի սահմանադրական որակավորումների քննությունից պարզ է դառնում, թե մարդկանց որ իրավունքներն էին միայն տեսականորեն ամրագրված և որոնք տեսականորեն ամրագրված լինելով՝ չէին անտեսվում և կիրառվում էին գործնականում:

Այսպես, ԽՍՀՄ և ՀԽՍՀ Սահմանադրություններով խորհրդային համակարգի կամ հասարակարգի քաղաքական հիմքը կազմում էին աշխատավորների դեպուտատների խորհուրդները: Դրանք ձևավորվում էին ընտրությունների արդյունքում, իսկ բարձրագույն քաղաքական մարմինը սովետների համագումարն էր, որն ընտրում էր Կենտգործկոմ, որը համագումարների միջև ընկած ժամանակահատվածում հանդիսանում էր իշխանության օրենսդիր, գործադիր մարմինը և որը հաշվետու էր համագումարին: Հետագայում Կենտգործկոմը կոչվեց Գերագույն խորհուրդ: Այն ընտրում էր նախագահություն, կազմում էր կառավարություն, որը նախ կոչվում էր ժողկոմխորհուրդ, իսկ հետո՝ Մինիստրների խորհուրդ:

Սահմանադրություններում այս մասին ընթերցելով այն տպավորությունը կարելի է կազմել, որ գոյություն ունեւ օրենսդիր և գործադիր իշխանության ձևավորման միանգամայն ժողովրդավարական համակարգ: Մինչդեռ իրականում օրենսդիր մարմնի ընտրությունները լրիվ կախյալ էին իշխող կուսակցությունից՝ ԽՄԿԿ-ից, իսկ Հայաստանի պարագայում՝ ՀԿԿ-ից: Ստացվում է, որ ընտրությունները կրում էին ձևական բնույթ, և օրենսդիր մարմնի անդամները նախապես մատնանշվում էին կամ նրանց ընտրելը պարտադրվում էր: Փաստորեն քաղաքական իշխանությունը նշանակովի էր, իսկ օրենսդիր մարմինը՝ ձևական, քանզի ամեն ինչ որոշում էր իշխող կուսակցությունը, որի այլընտրանքը չկար: Ընդհանրացնող եզրակացությունը մեկն է՝ **քաղաքական իշխանությունների ձևավորման գործընթացը ՀԽՍՀ-ում բնորոշ էր սոտալիտար վարչակարգերին, և այս առումով նրա քաղաքական համակարգը սոտալիտար էր կամ ամբողջատիրական:**

Այնուամենայնիվ, այս համակարգի մասին լիարժեք ճշմարտությունը որոնելու ճանապարհին անհնար է չգտնել ժողովրդավարական տարրեր ընտրություններով օրենսդիր մարմինների ձևավորման ընթացքում: Կոմկուսը նախապես ճշտած ցուցակներում տեղ էր հատկացնում նաև աշխատավոր դասակարգին, որի ներկայացուցիչները գրեթե միշտ առկա էին օրենսդիր բարձրագույն մարմիններում: Հարկավ, ճիշտ են այն պնդումները, որ նրանց

ներկայությունը ձևական բնույթ էր կրում, բայց նման հարցադրման դեպքում չպետք է մոռանալ, որ առհասարակ ձևական բնույթ էր կրում օրենսդիր մարմնի առկայությունը, որը կուսակցական մարմինների որոշումների հաստատողն էր միայն:

Վերջնական եզրակացությունն այս մասով հետևյալն է՝ Խորհրդային Հայաստանի բարձրագույն քաղաքական մարմինը կոմունիստական կուսակցությունն էր, և իրականում խորհրդային պետության քաղաքական հիմքը՝ ոչ թե աշխատավորների դեպուտատների սովետներն էին, այլ՝ կուսակցության կենտրոնական մարմինը կամ կենտկոմը: Ասվածը նաև նշանակում է, որ **այս հանգամանքում չէին կարող սուկ տեսական բնույթ չկրել սահմանադրական ձևակերպումներն ազատ խոսքի, ցույցերի, երթերի և այլ քաղաքական իրավունքների վերաբերյալ:**

ՀԽՍՀ նման քաղաքական համակարգը ենթադրում էր, որ տնտեսական համակարգի էությունն ամբողջովին կախյալ էր լինելու նրանից: Իրոք, տնտեսական քաղաքականությունը նույնպես պլանավորվում էր վերնից, իսկ երկրի տնտեսական հիմքը սահմանադրությունների համաձայն՝ համարվում էր արտադրության միջոցների համաժողովրդական սեփականությունը: Իրոք այսպես էր, քանի որ դասագրքային ճշմարտություն է, որ ԽՍՀՄ-ում և, բնականաբար, նաև ՀԽՍՀ-ում բացառվում էր մասնավոր սեփականատիրական գործունեությունը [7]: Այսինքն՝ ազատ շուկայական հարաբերություններ չէին գործում, արտադրատեսակները, արտադրատեսակները, արտադրանքի չափերը և գները նախապես պլանավորված էին և վերնից թելադրված [8]:

Կարելի է համարել, որ խորհրդային տնտեսական համակարգի գլխավոր թերությունը միջին կամ մանր սեփականատիրական գործունեության առհասարակ բացառումն էր: **Բայց չի կարելի անտեսել, որ խորհրդային բռնատիրական համակարգի մատնանշած տնտեսական քաղաքականությունը միտված էր սոցիալական պետության ձևավորմանը:** Այստեղից էլ՝ տնտեսական քաղաքականության մեջ ժողովրդի սոցիալական դրության բարելավմանը նպատակաուղղված ջանքերը բավականին գերակշռող էին: Ստացվում է, որ կառավարման բռնատիրական էության պայմաններում ժողովրդի տնտեսական և նյութական հավասարության, ինչպես նաև բաշխման մեխանիզմի արդարության հասնելու պետական ջանքերի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը քաղաքագիտական խղճի դեմ մեղանշել կլինի:

Եվ վերջապես, անհրաժեշտ ենք համարում մատնանշել, որ եթե քաղաքական այլախոհության նկատմամբ վերաբերմունքի առումով տոտալիտարիզմն առկա էր, և այլընտրանքային քաղաքական դիրքորոշումները ոչ միայն անթույլատրելի, այլև խիստ դատապարտելի էին, ապա՝ մարդու աշխատանքի, հանգստի, անվճար կրթության և բուժման առումներով սահմանադրական ամրագրումները լրիվ բնորոշ էին սոցիալական և ժողովրդավարական քաղաքական համակարգերին:

Վերջնական եզրակացությունները հետևյալն են.

Առաջին. Խորհրդային համակարգի ամբողջատիրական լինելու հանգամանքն ամենևին չի ենթադրում, որ նրանում առհասարակ բացառված էին ժողովրդավարական տարրերը:

Երկրորդ. այդ քաղաքական համակարգն ամբողջությամբ մերժում էր այլընտրանքային քաղաքական գաղափարախոսությունները և մարդկանց ազատ խոսքի իրավունքը, բայց խրախուսում էր իրավունքների այն տարատեսակները, որոնք կապված էին սոցիալական ապահովության, մարդու նյութական կացության բարելավման և հավասար կեցության հասնելու ձգտումների հետ:

Այլ հարց է, որ տարբեր պատճառներով այդ ձգտումները հնարավոր չեղավ լիարժեքորեն կյանքի կոչել, սակայն այս հողվածի շրջանակներում դրանց վերլուծությունը մեր բուն նպատակը չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 533-534:
2. Հայոց պատմություն (Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան), հ. 4, գիրք I, Երևան, Զանգակ 97, 2010, էջ 443:
3. Հայոց պատմություն (Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան), հ. 4, գիրք I, Երևան, Զանգակ 97, 2010, էջ 503:
4. Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռոյությունի և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, էջ 566 - 578:
5. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը: (Հիմնական որենքը), Յերևան, Հայկուսհրատ, 1937, 111 էջ:
6. Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը /հիմնական օրենք/, Երևան, 1978, 120 էջ:
7. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՄՀ ԳԱ հրատ., հ. 7, Երևան, 1967, էջ 378:

8. Խորհրդային Հայաստան, ժողովածու, 1920 – 1925 թթ. Երևան, 1925, էջ 105:

РЕЗЮМЕ
О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ
АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ
A. Г. САРГСЯН

В статье предпринята попытка доказать, что тоталитарный характер политической системы Советской Армении ни коим образом не предполагает отсутствие демократических начал. Эта политическая система, будучи моделью той же политической системы СССР, полностью исключала политическое инакомыслие и право на свободу слова, но поощряла те разновидности права, которые относились к социальному обеспечению, улучшению материального благосостояния людей и стремлению достичь социального равенства.

SUMMARY
ABOUT SOME PECULIARITIES OF THE POLITICAL SYSTEM OF
ARMENIAN SOVIET SOCIALIST REPUBLIC
A.G. SARGSYAN

In the article an attempt has been made to prove that totalitarian nature of the political system of Soviet Armenia does not suppose the absence of democratic elements. This political system, being a small model of the same political system of the USSR, completely denied political nonconformity and the right of the freedom of speech, but supported the rights connected with social support, improvement of the material welfare of people and their pursuit to achieve social equality.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 93/94

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
Ս. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի, 17
e-mail: poghosyansamvel@yahoo.com

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անտանտի տերություններն ակտիվորեն քննարկում էին օսմանյան ժառանգության բաժանման հարցը: Դա լուրջ հակասությունների պատճառ դարձավ դաշնակիցների միջև: Իզուր չէ, որ չնայած 1914 թվականից քննարկվում էր օսմանյան տարածքների բաժանման հարցը, եղան բազմաթիվ հայտարարություններ ու խոստումներ, գաղտնի համաձայնագրեր, սակայն այդպես էլ վերջնական եզրահանգման չեկան, և պատերազմից հետո վեճերը շարունակվեցին:

Մեր ուսումնասիրության խնդիրն է՝ լուսաբանել իտալական նկրտումները Կիլիկիայի նկատմամբ, որը բավարար չափով չի ուսումնասիրվել պատմագիտության կողմից:

***Բանալի բառեր.** Առաջին աշխարհամարտ, Կիլիկիա, ֆրանս-իտալական հակասություններ, Իտալիայի հավակնություններ, Լոնդոնի համաձայնագիր, Սեն Ժան դե Մորիենի համաձայնագիր:*

Ներկայացված է խմբագրություն 16.12.2015թ:

Միջերկրականի հյուսիսարևելյան ափին գտնվող Կիլիկիան հարուստ էր հանածոներով, բարձրարժեք մշակաբույսերով, ուներ ռազմավարական կարևոր դիրք. այնտեղով էր անցնում Բեռլին - Բաղդադ երկաթուղին, իսկ նրա նավահանգիստները թույլ էին տալիս վերահսկել Միջերկրականի արևելքի ծովային առևտուրն ու ռազմածովային ճանապարհները: Բնական է, որ նման հարուստ և կարևոր երկրամասի նկատմամբ մեծ էր գաղութային տերությունների ախորժակը:

Մեր ուսումնասիրության մեջ լուսաբանել ենք Կիլիկիայի նկատմամբ Իտալիայի հավակնությունները և դրանց հետևանքով առաջ եկած սուր տարաձայնությունները Անտանտի դաշնակից երկրների միջև: Հետազոտության նպատակն է բացահայտել և ներկայացնել հիմնախնդիրն ամբողջությամբ: Հայ պատմագիտության մեջ այս հարցը գիտական ուսումնասիրության չի ենթարկվել: Օտարալեզու գիտական գրականության մեջ նույնպես գրեթե չեն կատարվել ուսումնասիրություններ թեմայի վերաբերյալ: Բացառություն է Պոլ Հելմրիխի մեծարժեք հոդվածը [8], որտեղ լուսաբանված են Սեն Ժան դե Մորիենի համաձայնագիրը և դրան նախորդող բանակցությունները: Սակայն այդտեղ ևս ամբողջությամբ չեն ուսումնասիրված իտալական նկրտումները:

Հաշվի առնելով թեմայի անբավարար ուսումնասիրվածությունը՝ ներկայացրել ենք այս հետազոտությունը, որպեսզի գիտական շրջանառության մեջ մտնի հայկական Կիլիկիայի նկատմամբ Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած դիվանագիտական պայքարի նաև այս դրվագը:

Պատերազմի սկզբից ևեթ Ֆրանսիան դաշնակիցներին տեղեկացրեց Կիլիկիայի նկատմամբ ունեցած հավակնությունների մասին: Չնայած բրիտանացիները անտարբեր չէին Ալեքսանդրետի նավահանգստի նկատմամբ, սակայն ստիպված էին չբարձրաձայնել այդ մասին՝ ֆրանսիացիներին չնեղացնելու համար: Ռուսաստանը նույնպես որոշակի հույսեր էր փայփայում, որ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի վրայով կարող է դուրս գալ Միջերկրական [1, էջ 144]: Սակայն, երբ բրիտանացիներն ու ֆրանսիացիները հավաստիացումներ տվեցին, որ Կ. Պոլիսն ու նեղուցները անցնելու են Ռուսաստանին, վերջինս դրա դիմաց ճանաչեց Ֆրանսիայի իրավունքները Կիլիկիայում: Այսպիսով՝ 1915 թ. զարնանից Ռուսաստանը և Բրիտանիան փաստացիորեն ճանաչեցին Ֆրանսիայի իրավունքները Կիլիկիայի նկատմամբ:

Անտանտին միանալու դիմաց որոշակի խոստումներ տրվեցին նաև Իտալիային: Վերջինս հավակնություններ էր ցույց տվել միայն Փոքր Ասիայի հարավարևմտյան տարածքների նկատմամբ:

1915 թ. ապրիլի 26-ին ստորագրվեց Լոնդոնի գաղտնի համաձայնագիրը [5, էջ 84 - 85], որը որոշ չափով հստակեցրեց այդ չորս տերությունների հավակնություններն օսմանյան ժառանգության բաժանման հարցում: Ըստ դրա՝

- Ռուսաստանին էին անցնելու Կ. Պոլիսը, նեղուցները և շրջակա որոշ տարածքներ, Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վանը, Բիթլիսը, Էրզրումը, Տրապիզոնը:

- Ֆրանսիան ստանալու էր Սիրիան և Կիլիկիան:

• Մեծ Բրիտանիայի ազդեցության տակ էին անցնում արաբական տարածքները:

Գաղտնի համաձայնագրի 9-րդ հոդվածով Իտալիան Փոքր Ասիայում ստանալու էր Ադալիա նահանգը՝ հարակից տարածքներով:

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիային, իսկ Իտալիան ստանալու էր այդ հայկական երկրամասից արևմուտք ընկած տարածքը: Թվում էր՝ արդեն 1915 թ. գարնանը Անտանտի երկրները ճշգրտել էին օսմանյան տիրույթների ապագան: Սակայն Անտանտի երկրների ախորժակը գնալով ավելի էր մեծանում:

Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, որպեսզի ավելի հստակեցնեն օսմանյան տարածքների սահմանաբաժանումը և հագուրդ տան իրենց գաղութատիրական ախորժակին, 1915 թ. նոյեմբերին սկսեցին գաղտնի բանակցություններ, որոնք վարում էին դիվանագետներ Մարկ Մայքսը և Ժորժ Պիկոն: Նախնական համաձայնության գալուց հետո նրանք նոր պայմանները 1916 թ. մարտին ներկայացրին նաև ռուսական կողմին:

1916 թ. ապրիլի 26-ին Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովի և Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մորիս Պալեոլոգի միջև փոխանակված հուշագրերով ստորագրվեց ռուս - ֆրանսիական համաձայնագիր, որով Ռուսաստանը իր համաձայնությունը հայտնեց Օսմանյան կայսրության բաժանման ֆրանս - բրիտանական նախագծին [2, էջ 391 - 395]: Մայիսի 9-ին և 16-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյի և Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի միջև փոխանակված հուշագրերով ստորագրվեց Մայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը [3, էջ 97]:

Այդ նոր համաձայնությամբ Ֆրանսիային էին անցնելու Լիբանանը, Սիրիայի ծովափնյա շրջանը, Կիլիկիան և Արևմտյան Հայաստանի զգալի մասը՝ Դիարբեքի, Խարբեքի և Սեբաստիայի նահանգները: Ֆրանսիական ազդեցության գոտի էին ճանաչվելու Հալեպի, Մոսուլի, Դեիրի և Դամասկոսի նահանգները:

«Ափի այս հատվածի և ցամաքային մասի ղեկավարումը ֆրանսիական իմպերիալիստներին տվեցին այն, ինչին նրանք ամենից շատ էին ձգտում Մերձավոր Արևելքում, որն է՝ այնպիսի երկրի փաստական տիրապետումը, որի նկատմամբ Ֆրանսիան ուներ տնտեսական և մշակութային հետաքրքրություններ. մետաքսի արտադրության կազմակերպումը Սիրիայում և բամբակի պոտենցիալ արտադրությունը Կիլիկիայում, Արդանայի պղնձի հանքերի սեփականության իրավունքը և Բաղդադի երկաթուղու այն հատվածի ձեռքբերումը, որը ձգվում էր Մոսուլից մինչև Կիլիկիան դարպասները», գրում է Էդուարդ Էրլը [6, էջ 294]:

Փաստորեն՝ Անտանտի երեք տերությունները նոր գաղտնի համաձայնագիր ստորագրեցին՝ առանց այդ մասին տեղյակ պահելու դաշնակից Իտալիային: Ֆրանսիան կարողացավ ապահովել երկու դաշնակիցների համաձայնությունը՝ պատերազմից հետո կարևոր տնտեսական ու ռազմական դիրք ունեցող Կիլիկիային տիրելու խնդրում:

Թուրքիայի բաժանման մասին ռուս-բրիտանական գաղտնի համաձայնագրի գոյության մասին իտալական կողմը դեռևս 1916 թ. մայիսին հարցում էր կատարել բրիտանացիներին: Նրանց մոտ կասկածներ էր առաջացրել այն հանգամանքը, որ Բրիտանիայի վարչապետ Հերբերտ Ասքուիթը ապրիլի 26 (մայիսի 9)-ին հայտարարել էր, որ առաջին անգամ Ռուսաստանի և Բրիտանիայի միջև լիակատար համաձայնություն է տիրում: Սակայն Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ԱԳ նախարարները և Լոնդոնում, Փարիզում, Պետրոգրադում և Հռոմում այդ երկրների դեսպանները երկարատև քննարկումներից հետո որոշեցին գաղտնի պահել Սայքս-Պիկոյի համաձայնագրի գոյությունը և իտալական կողմին համոզեցին, որ թուրքական տարածքների բաժանման հարցում մնում են Լոնդոնի համաձայնագրի շրջանակներում [9, էջ 189 - 197]:

Հուլիսի 4 (17)-ին Փարիզում իտալական դեսպան Տ. Տիտտոնին Ֆրանսիայի վարչապետ և ԱԳ նախարար Արիստիդ Բրիանի հետ հանդիպման ժամանակ մատնանշել էր, որ Իտալիան հետաքրքրված է ոչ միայն Ադալիայով, այլ նաև՝ Սիրիայով և Կիլիկիայով: Վարչապետը պատասխանել էր, որ Ադալիան արդեն դաշնակիցների կողմից տրվել է Իտալիային, իսկ Սիրիան և Կիլիկիան ամբողջությամբ մտնում են Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ [9, էջ 213]:

1916 թ. սեպտեմբերին Իտալիայի արտգործնախարար Սիդնի Սոննինոն տեղեկացավ Սայքս-Պիկոյի համաձայնագրի գոյության մասին: Դա նրան խիստ բարկացրեց, քանի որ դաշնակիցները Իտալիայի թիկունքում գաղտնի համաձայնագիր էին կնքել: Նա Իտալիայում բրիտանական դեսպան Ռոնել Ռոդից պահանջեց բացատրություններ տալ այդ հարցի շուրջ [8, էջ 104]: Բրիտանիայի ԱԳ նախարար Էդուարդ Գրեյը ստիպված էր իրազեկել համաձայնագրի պայմանների մասին: Նա հոկտեմբերի 5-ին Լոնդոնում իտալական դեսպան մարկիզ Գուլիելմո Իմպերիալիին տրամադրեց համաձայնագրի պայմանները [9, էջ 257]:

Հոկտեմբերին Ս. Սոննինոն Անտանտի մյուս երեք տերություններից պահանջեց Լոնդոնում հրավիրել քառակողմ կոնֆերանս և նոր համաձայնագիր կնքել, ուր ներկայացված կլինեն նաև Իտալիայի պահանջներն ու ձգտումները [8, էջ 105]:

Նոյեմբերի 6 (19)-ին Ս. Սոննինոն Անտանտի ԱԳ նախարարներին հուշագրեր ներկայացրեց, ուր ներկայացվում էին իտալական

պահանջները Միջերկրականի ավազանում [9, էջ 253 - 260]: Իտալիան պահանջում էր, Ադալիայից բացի, իրեն հանձնել այդ երկրամասին սահմանակից Ադանայի, Կոնիայի, Այդինի նահանգները և Զմյուռնիան: Դա բացատրում էին տնտեսական, քաղաքական, մշակութային, աշխարհագրական տարբեր գործոններով: Իտալացիները ցանկանում էին վերահսկել Կոնիայից Կիլիկիայով անցնող երկաթուղագիծը, անհրաժեշտ էին համարում ստանալ Մերսինը, քանի որ այն միակ հարմար նավահանգիստն էր, որից կարող էին օգտվել: Այդ ամենը բացատրում էին Միջերկրականի արևելքում Անտանտի դաշնակից երկրներին հավասար իրավունքներ ապահովելու ցանկությամբ: Հուշագրում նշվում էր, որ Ադանայի ու Մերսինի շրջանները Սիրիայի հետ կապված չեն «ոչ աշխարհագրական, ոչ էլ պատմական, էթնիկական, մշակութային և ռազմավարական տեսանկյունից» [9, էջ 255]:

Այդ ընդարձակ պահանջները հակասում էին Մայքս-Պիկոյի համաձայնագրի մի շարք կետերին, հատկապես՝ Ֆրանսիայի և Ռուսաստանի շահերին և լուրջ դժգոհություն առաջացրին վերջիններիս մոտ [9, էջ 260 - 262]:

1917 թ. հունվարի 29 (փետրվարի 11)-ին Մեծ Բրիտանիայի նոր արտգործնախարար Արթուր Բալֆուրը Իտալիայի, Ֆրանսիայի դեսպաններ՝ Գ. Իմպերիալիի, Պոլ Կամբոնի և Ռուսաստանի հավատարմատար Կոստանդին Նաբոկովի հետ Լոնդոնում քննարկեց իտալական պահանջները: Իտալիան, բացի Ադալիայից, ցանկանում էր իր տիրույթներին միացնել նաև Այդինի և Ադանայի նահանգները՝ վերահսկողության տակ վերցնել Կոնիա-Ադանա-Մերսին երկաթուղին, իսկ Կիլիկիայի հյուսիսային մասը պատրաստ էր թողնել Ֆրանսիային [8, էջ 104 - 106]: Դրանով Իտալիան ձգտում էր պատժել Ֆրանսիային իր թիկունքում կնքած գաղտնի համաձայնագրի համար, միաժամանակ իր տիրույթների մեջ ներառել Փոքր Ասիայի Միջերկրականին հարող ամբողջ տարածքը, վերահսկողության տակ վերցնել Միջերկրականի արևելքի ամբողջ հյուսիսային հատվածը և Կիլիկիայով անցնող երկաթուղին:

Գ. Իմպերիալին հայտարարեց, որ պետք է բավարարվեն Իտալիայի ներկայացրած ձգտումները: Պ. Կամբոնը հակադարձեց, որ Ադանան ու Մերսինը կապված են Սիրիայի հետ և մինչև Անամուռ ընկած տարածքը պետք է անցնի Ֆրանսիային, իսկ Կոնիայից դեպի ծով ամենահարմար ելքը Ադալիան է: Ա. Բալֆուրն առաջարկեց իտալական ձգտումները բավարարել Փոքր Ասիայի մյուս հատվածներում, որպեսզի խուսափեին ֆրանսիական շահերը ոտնահարելուց: Իսկ Կ. Նաբոկովը պահանջում էր, որպեսզի ապագա թուրքական պետությանը բավարար տարածք թողնեն կենսունակությունը պահելու համար և դեմ էր

Զմյուռնիան Իտալիային հանձնելուն: Ի վերջո, որոշվեց Կ. Պոլսում նախկին բրիտանական դեսպան Լուի Մալլետին հանձնարարել կազմելու բոլորի համար ընդունելի նախագիծ [9, էջ 285 - 286]:

Ինչպես տեսանք, Կիլիկիան Լոնդոնի և Սայքս-Պիկոյի համաձայնագրերով պետք է անցնեք Ֆրանսիային, հետևաբար՝ իտալական ձգտումները հակասության մեջ էին մտնում նախորդ պայմանագրերի հետ: Փաստորեն՝ Կիլիկիան լուրջ կռվախնձոր դարձավ ֆրանս-իտալական հարաբերություններում:

Հունվարի 30 (փետրվարի 12)-ին Լոնդոնում գումարվեց երկրորդ նիստը: Ա. Բալֆուրը իտալական դեսպան մարկիզ Գուլիելմո Իմպերիալիին հիշեցրեց, որ Իտալիան Լոնդոնի համաձայնագրով պարտավորվել է հարգել դաշնակիցների պայմանավորվածությունները և առաջարկեց ստանալ Այդինը, իսկ Կիլիկիայում ճանաչել Ֆրանսիայի իրավունքները: Մակայն դեսպանը կտրականապես առարկեց ցանկացած որոշման դեմ, որն Ադանան և Մերսինի նավահանգիստը չէր ներառի իտալական ազդեցության գոտու մեջ: Դրանով լոնդոնյան բանակցությունները մտան փակուղի և փաստորեն կանգնեցին ձախողման վտանգի առաջ [8, էջ 107]:

Փետրվարի 3 (16)-ին բրիտանական ԱԳՆ կողմից Գ. Իմպերիալիին տրամադրվեց հուշագիր, ուր համեմատության մեջ մանրամասն ներկայացվում էին Իտալիային առաջարկվող Կոնիայի, Ադալիայի, Այդինի, Բրուսայի տարածքների և ֆրանսիական ազդեցության տակ անցնող երկրամասերի բնակչությունը, բարեբերությունը, բնական ռեսուրսները, տեղական հարստությունները, երկաթուղիները, ճանապարհները, նավահանգիստները, առևտուրը և ցույց էր տրվում, որ դրանք հավասարազոր են իրար [9, էջ 293 - 296]: Այսպիսով՝ փորձ էր արվում համոզելու իտալացիներին, որ նրանք անտեսված չեն և տնտեսապես շահավետ բաժին են ստանալու «օսմանյան ժառանգությունից»:

Այս ընթացքում Ռուսաստանում տապալվեց ցարական իշխանությունը և մարտի 1 (14)-ին ձևավորվեց Ժամանակավոր կառավարությունը, իսկ Ֆրանսիայում մարտի 6 (19)-ին նոր կառավարություն ձևավորեց Ալեքսանդր Ռիբոն: Ռուսական նոր ԱԳ նախարար Պավել Միլյուկովը մարտի 8 (21)-ին տեղեկացրեց Լոնդոնում, Փարիզում, Հռոմում և Տոկիոյում ռուսական դեսպաններին, որ Ժամանակավոր կառավարությունը հավատարիմ է դաշնակիցների հետ նախկինում կնքված բոլոր համաձայնագրերին և պահանջեց, որպեսզի Անտանտի երկրները նույնպես հավաստեն իրենց պատրաստակամությունը պահպանելու Ռուսաստանի հետ կնքած պայմանագրերը [9, էջ 308 - 309]:

Ստեղծվել էր քաղաքական նոր իրադրություն, և Անտանտի երկրներին անհրաժեշտ էր հնարավորինս արագ լուծել ներքին տարաձայնությունները:

1917 թ. ապրիլի 19-ին Սեն ժան դե Մորիենում կայացած հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի վարչապետներ Դեյվիդ Լլոյդ Ջորջը և Ա. Ռիբոն համաձայնության եկան Ս. Մոնինոյի հետ, որով պատերազմից հետո Իտալիային պետք է անցնեին Փոքր Ասիայի հարավ-արևմտյան տարածքները՝ Իզմիրի, Այդինի և Ադալիայի շրջանները՝ մինչև Ադանայի նահանգի սահմանը: Վերջինս անցնելու էր Ֆրանսիային: Ա. Ռիբոն նույնիսկ համաձայնեց Իտալիային թողնել Ադանայի նահանգի Մերսինից արևմուտք ընկած տարածքները, չնայած Սայքս-Պիկոյի համաձայնագրով դրանք անցնելու էին Ֆրանսիային [8, էջ 108]: Ալեքսանդրետում, Հայֆայում, Աքրայում Իտալիան ունենալու էր այն իրավունքներն ու արտոնությունները, որոնք Ֆրանսիան և Բրիտանիան փոխադարձաբար ապահովել էին իրենց համար: Մերսինը ճանաչվելու էր պորտո-ֆրանկո, իսկ այնտեղից իտալական ապրանքների համար ազատ երկաթուղային տրանզիտ էր ապահովվելու Ադանայի նահանգով դեպի Իտալիայի ազդեցության գոտի: Կիլիկիայի բոլոր նավահանգիստներում իտալական նավերի ու ապրանքների համար խոչընդոտներ չէին լինելու [9, էջ 348 - 349]:

Հետագա ամիսներին քննարկվեց Սեն ժան դե Մորիենի համաձայնագրի հաստատման հարցը: Բանակցությունները եռակողմ էին, քանի որ Ռուսաստանում հակապատերազմական տրամադրություններն էին իշխող դարձել, իսկ ժամանակավոր կառավարությունը հայտարարել էր առանց բռնազավթումների հաշտություն կնքելու պատրաստակամության մասին:

Փաստորեն՝ եթե մեկ տարի առաջ Իտալիային էին դուրս թողել բանակցությունից և նրա թիկունքում գաղտնի համաձայնագիր էին կնքել, որը բավական լուրջ անախորժություններ ստեղծեց դաշնակիցների միջև, ապա այժմ նույնը կրկնում էին Ռուսաստանի հետ: Ռուսական կողմը երկար ժամանակ ապարդյուն փորձում էր տեղեկանալ առանց իրեն տեղի ունեցած համաձայնության պայմանների մասին:

Բնականաբար, ռուսական կողմը չափազանց դժգոհ մնաց, քանի որ առանց իր կարծիքը հարցնելու դաշնակիցները նոր համաձայնություն էին կնքել [9, էջ 99 - 100, 322]:

Սեն ժան դե Մորիենի համաձայնագիրը երեք տերությունների կողմից հաստատվեց 1917 թ. օգոստոսի 18-սեպտեմբերի 26-ը փոխանակված հուշագրերով [7, էջ 184]:

Անտանտի տերությունների միջև կայացած համաձայնությամբ պատերազմից հետո «օսմանյան ժառանգությունից» Իտալիային էր

անցնելու «Կանաչ» գոտին՝ Իզմիրի և Կոնիայի նահանգների մեծագույն մասը: Իտալական ազդեցության տարածք էր ճանաչվում «C» գոտին՝ Իզմիրի հյուսիսային և Բուրսայի հարավային շրջանները:

Մ. Անդերսոնն այդ գործարքի մասին նշում է, որ «Ըստ էության սա մի փորձ էր Կիլիկիայից շեղելու իտալական ծավալապաշտությունը, որտեղ այն սուր կերպով բխվում էր Ֆրանսիայի շահերին և բավարարելու այն Արևմտյան Փոքր Ասիայում» [4, էջ 344]:

Փաստորեն՝ Կիլիկիայի հարցը բարձրացնելով և ընդարձակ պահանջներ ներկայացնելով, Իտալիան ի վերջո կարողացավ դաշնակիցների համոզել, որպեսզի Փոքր Ասիայի հարավի և արևմուտքի զգալի մասի վրա ճանաչեն իր իրավունքները:

Այսպիսով, ռազմավարական և տնտեսական կարևոր դիրք ունեցող Կիլիկիան Առաջին աշխարհամարտի տարիներին իր վրա էր սևեռել Անտանտի երկրների ուշադրությունը: Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը ավելի հեշտությամբ հրաժարվեցին Կիլիկիայից հոգուտ Ֆրանսիայի: Առավել բուռն բանավեճ այդ հայկական երկրամասի շուրջ ծավալեց Իտալիան: Մակայն դաշնակիցները կարողացան նրան համոզել Կիլիկիայի փոխարեն տարածքային ավելի ընդարձակ ձեռքբերումներ ունենալ Փոքր Ասիայի արևմտյան հատվածում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. - 1921 թ.), Երևան, 2005:
2. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ջ.Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:
3. Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917թթ., Երևան, 2002:
4. Anderson M.S., The Eastern Question 1774-1923. A study in International Relations, London, 1966.
5. Documents on British Foreign Policy 1919-1939. Edited by Woodward and Rohan Butler. First series, vol. I, London, 1947.
6. Earle Edward M., Turkey, the Great Powers and the Bagdad Railway, New York, 1966.
7. Graham M. F., Goldstein E., Langhorne R., Guide to international relations and diplomacy, London, 2002.
8. Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation of the 1917 St. Jean de Maurienne Agreement, "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 48, No. 2, June, 1976, pp. 99-139.

9. Раздел Азиатской Турции по секретным документам б. министерства иностранных дел. Под редакцией Е.А.Адамова, Москва, 1924.

РЕЗЮМЕ
ИТАЛЬЯНСКИЕ ПРЕТЕНЗИИ В КИЛИКИИ ВО ВРЕМЯ
ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ
С.А.ПОГОСЯН

Киликия имеет стратегическое и экономическое важное положение, поэтому привлек внимание государств Антанты в годы Первой мировой войны. Великобритания и Россия более легко отказались от Киликии в пользу Франции. Наиболее жаркие споры вокруг региона начал Италия. Тем не менее, союзники смогли убедить его и вместо Киликии, он получил больше земель в западной части Малой Азии.

SUMMARY
THE ITALIAN CLAIMS OVER CILICIA DURING FIRST WORLD WAR
S.A.POGHOSYAN

Cilicia has strategic and economic important position, so he drew the attention of the Entente states during the First World War. Britain and Russia more easily abandoned from Cilicia in favor of France. The most heated debate around the region began Italy. However, the Allies were able to convince him and instead of Cilicia, he received more lands in the western part of Asia Minor.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 02(091)(479.25)

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX Դ. 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
Ն.Ս.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան մեծի 17
e-mail: narusik62@mail.ru

Հոդվածում ցույց են տրված գրադարանային – մատենագիտական գործունեության զարգացման ընթացքը և ընդհանուր օրինաչափությունները Հայաստանում: Շրջանառության մեջ են դրվել նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող վիճակագրական հարուստ տվյալներ, որոնք գրադարանագիտական և մատենագիտական տեսանկյունից ունեն արդիական կարևոր նշանակություն:

***Բանալի բառեր.** գրադարանային – մատենագիտական գործունեություն, գրադարան, գրադարանավար, գրքային ֆոնդեր, տեղեկատվական ֆոնդեր, զարգացում, գրադարանների կենտրոնական համակարգ (ԳԿՀ):*

Ներկայացված է խմբագրություն 12.12.2015 թ.

Ինչպես Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում, XX Դ. 70-80-ական թվականներին գրադարանային գործի և մատենագիտության զարգացումը ձեռք էր բերել ավելի կարևոր նշանակություն: Առաջ էին քաշվել գրադարանային գործի և մատենագիտության պատմության ուսումնասիրման, գրադարանային ցանցերի ընդլայնման ու ֆոնդերի համալրման, ընթերցանության սպասարկման, ընդհանուր և ճյուղային (հայագիտական) բնույթի մատենագիտությունների հրատարակման, ինչպես նաև մասնագետների պատրաստման հարցերը, որոնք նախկինում գտնվելով մասնագետների ուշադրության կենտրոնում [15, 16, 20], սակայն գիտակազմակերպական տեսանկյունից պահանջում էին նոր լուծումներ:

Այդպիսով, անցյալ դարի 70-ական թթ. ԽՍՀՄ-ում, ներառյալ Հայաստանում, սկիզբ է դրվում գրադարանային գործի զարգացման նոր փուլի [15, 20], որը սահմանված էր ԽՍԿԿ կենտկոմի 1974 թ. մայիսի 8-ին ընդունված «Աշխատավորության կոմունիստական դաստիարակության և գիտատեխնիկական գործում գրադարանների դերի բարձրացման մասին» որոշմամբ: Վիճակագրական տվյալներով՝ 1960 -1974 թթ., երկրում բացվել էր մոտ 40000 նոր գրադարան՝ հաստիքային աշխատողներով, գրքային ֆոնդերն աճել էին ավելի քան 1,5 մլրդ օրինակով, գրադարանների թիվը ավելացել էր 1,5 անգամ, իսկ ընթերցողների թիվը աճել էր ավելի քան 60 միլիոնով: 1974 թ. երկրում կար 360 հազար գրադարան, այդ թվում՝ 128 հազար հանրային և մոտ 60 հազար գիտական ու մասնագիտական: Գրադարաններն ունեցել են 3,7 մլրդ գիրք և յուրաքանչյուր տարի սպասարկել են ավելի քան 180 մլն ընթերցողների:

Վերոնշյալ որոշմամբ խնդիր էր դրվել գրադարանների նոր՝ միասնական կենտրոնական համակարգի (ԳԿՀ) ստեղծման, ինչը ոչ միայն կառուցվածքային, այլև որակական խոր փոփոխություններ էր առաջացնում աշխատանքի բովանդակության մեջ, ապահովում գրադարանների հասարակական դերի բարձրացման, գիտության և տեխնիկայի նվաճումների տարածման, տեղեկատվական աշխատանքի ընդլայնման գործում: Հետապնդվում էր նաև հետևյալ նպատակը՝ ապահովել տարբեր գերատեսչությունների գրադարանների կենտրոնացված համակարգերի փոխգործունեությունը և կոորդինացումը համալրման, մատենագիտական – տեղեկատվական աշխատանքի բնագավառում: Միութենական բոլոր հանրապետություններում կազմվել և հաստատվել էին 1974 - 1980 թթ. ընթացքում գրադարանները կենտրոնացնելու պլաններ, որոնց իրականացմանը նպաստեց 1975 թ. փետրվարի 3-ին ԽՍՀՄ մշակույթի նախարարության հաստատած «Պետական մասսայական գրադարանների կենտրոնացման կանոնադրությունը», որով որոշվում էին այդ վերակառուցման հիմնական սկզբունքները: Այդ ժամանակ արդեն գործում էր պետական մասսայական գրադարանների ավելի քան 400 կենտրոնացված համակարգ:

Սկսվել էր նաև արհմիութենական գրադարանների կենտրոնացումը: Հարկ է նշել, որ 1981 թ. Հայաստանում գործել է 108 արհմիութենական գրադարան, որոնց գրքային ֆոնդը կազմել է ավելի քան 96200 միավոր, ընթերցողների թիվը՝ ավելի քան 85000, գրքատածքը՝ մոտ 1 մլն 200000: Միայն Երևան քաղաքում գործել է 60 գրադարան, որոնց գրքային ֆոնդը կազմել է 548000 միավոր, ընթերցողների թիվը՝ 51.744, գրքատածքը՝ 790.000: Հարկ է նշել նաև, որ ԳՀԿ ընդհանուր

աշխատանքները կազմակերպելու համար լույս էին տեսել մի շարք ձեռնարկներ [6]:

Հետազոտությունների արդյունքում մենք հանգեցինք այն եզրակացության, որ չնայած կատարված աշխատանքներին՝ Հայաստանում գրադարանային - մատենագիտական գործունեության զարգացման մեջ առկա են եղել լուրջ թերություններ ու բացթողումներ՝ կապված գրքային ֆոնդերի համալրման, հաշվառման, ստուգման, պահպանման և սպասարկման հարցերի հետ: Այդ ուղղությամբ հետևողական աշխատանք հանդես բերելու համար կարևոր նշանակություն ունեցան ՀՀԿ ԿԿ 1978 թ. սեպտեմբերի 19-ի «Հանրապետության գրադարանների և թանգարանների գրքային ֆոնդերի, ձեռագրային և արխիվային նյութերի պահպանման և օգտագործման բարելավման մասին» որոշումը, ինչպես նաև ՀՍՍՀ մշակույթի նախարարության 1979 թ. օգոստոսի 30-ի՝ «Հանրապետության պետական մասսայական գրադարանների գրքային ֆոնդերի հաշվառման և պահպանման նկատմամբ հսկողությունը ուժեղացնելու մասին» թիվ 308 հրամանը: Իսկ նույն թվականի օգոստոսի 30-ի թիվ 356 հրամանով Հայաստանի մասսայական գրադարանների ֆոնդերի ստուգման ժամկետները սահմանվել են հետևյալ կարգով. քաղաքային և շրջանային ԳԿՀ-ի համար՝ 10 և 7 տարին մեկ անգամ, քաղաքային մասնաճյուղ - գրադարաններին՝ 5, գյուղական մասնաճյուղ գրադարաններին՝ 3 և մանկական մասնաճյուղ - գրադարաններին ու մանկական բաժիններին՝ 4 տարին մեկ անգամ:

Այո, գրադարանային-տեղեկատվական ֆոնդերը հասարակության հարստությունն են և, մեր կարծիքով, ազգային այդ արժեքները պետք է պահպանել նույնպիսի սրտացավությամբ ու հոգատարությամբ, ինչպես կպահպանվի ազգային մշակութային ժառանգության յուրաքանչյուր արժեք:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կարևոր նշանակություն են ունեցել նաև գրադարանային - մատենագիտական դասակարգման նոր աղյուսակների և գրացուցակների կազմումն ու կիրառումը, որոնցում տեղ գտած դասակարգման անհաջող կառուցվածքի, անճշտությունների և ազգային առանձնահատկությունները հաշվի չառնելու առնչությամբ ժամանակին քննադատաբար հանդես են եկել Ռ. Չիլինգարյանը և Ռ.Իշխանյանը [18]:

Գրադարանային - մատենագիտական զարգացման գործում ժամանակի պահանջով կարևորվել է նաև աշխատանքների պլանավորումը [21], որով մեթոդական ցուցումներ են տրվել գրադարանային ֆոնդերի համալրման, գրականության

մասայականացման, ընթերցողների սպասարկման և այլ հարցերի վերաբերյալ:

Հաշվի առնելով գրադարանների և գրադարանային ֆոնդերի զարգացման կարևորությունը՝ Թ. Աղայանը և Ժ. Եգանյանը իրենց հեղինակած գրքում [3] արտացոլել են նախկին Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի գրքերն ու պարբերական հրատարակությունները, հոդվածների համառոտ պատմությունը և մանավանդ՝ գրադարանի ամբողջ ունեցվածքի վիճակագրական վերլուծությունը՝ ըստ գրական բովանդակության, հրատարակչությունների ժամանակագրության և լեզվական հատկանիշների: Նույն գրադարանի հրատարակությամբ 1980 թ. լույս է տեսնում Երևանի գիտական գրադարանների տեղեկատու-ուղեցույց [8], որին նվիրված գրախոսականում Ա. Հարությունյանը նշում է. «Ուղեցույցը շահեկան նյութ է պարունակում ոչ միայն մատենագիտական միջոցներին լավատեղյակ ընթերցողների համար... թե իրեն հետաքրքրող ցանկը կամ քարտարանը որ գրադարանում կարելի է ձեռք բերել, այլև ինֆորմացիոն անփոխարինելի աղբյուր է ընթերցողի համար, նաև զուտ որպես մատենագիտական աղբյուրների ուղեցույց» [13]:

Տեսամեթոդական տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցան Հ. Կոստիկյանի և Գ. Մկրտչյանի կազմած ձեռնարկները [14, 4], որոնք հիմնականում նախատեսված էին բարձրագույն հաստատության «Գրադարանային - մատենագիտական բաժնի» ուսանողների համար:

80-ական թվականներին ավելի են ընդլայնվում գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման սահմանները: 1981 թ. Հայաստանում գործել է 3200 գրադարան՝ 65 միլիոն օրինակ գրքային ֆոնդով, բոլոր գրադարաններից օգտվողների թիվը կազմել է 1 միլիոն 860 հազար մարդ, որոնց ընթերցանության համար տրվել է 46 միլիոն օրինակ գրականություն:

Ըստ «ԽՍՀՄ տնտեսական և սոցիալական զարգացման 1981 -1985 թթ. և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների»՝ նախատեսվել էր գրադարանային-մատենագիտական գործի հետագա զարգացման համար ապահովել հետևյալ հիմնական խնդիրները՝ բարձրացնել գրքի և գրադարանի հասարակական - դաստիարակչական դերը, ընթերցանության մեջ ներգրավել երկրի բնակչությանը, շարունակել գրադարանների կենտրոնացման աշխատանքները, կոորդինացնել գիտական և մասնագիտական գրադարանների գրքային ֆոնդերի համալրման աշխատանքները, ուշադրություն դարձնել գրադարանները նյութատեխնիկական բազայով ամրապնդելու հարցին, կատարելագործել ոլորտի ղեկավարման համակարգը, հրատարակել գրադարանագիտական-մատենագիտական

բնույթի ուսումնասիրություններ ու հանձնարարական ձեռնարկներ, պատրաստել բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետներ՝ հետևելով ըստ անհրաժեշտության նրանց տեղաբաշխմանը:

Առաջադիր խնդիրների լուծմանը զուգընթաց ուշադրություն էր դարձվում նաև գրադարանային խորհուրդների դերին՝ կոորդինացման և ինտեգրացման ճանապարհով գրադարանային-մատենագիտական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

ԽՍՀՄ ստանդարտների պետական կոմիտեի 1981 թ. մայիսի 14-ի թիվ 2369 որոշմամբ ուժի մեջ է մտնում «Միջգրադարանային արձեմենտի պետական միասնական համակարգի 7.31-81 պետական ստանդարտը»: Պետք է նշել, որ միջգրադարանային արձեմենտի (ՄԳԱ) պետական միասնական համակարգի պետական ստանդարտը (ՊԱՍ) կոչված էր ապահովելու բոլոր գրադարանների, գիտատեխնիկական ինֆորմացիայի մարմինների ֆոնդերի և մատենագիտական - տեղեկատվական որոնումների տեղեկատու աղբյուրների նյութերի փոխադարձ օգտագործումը: ՄԳԱ-ի հիման վրա գրադարանների իրականացրած հիմնական խնդիրներից են.

- իրենց ֆոնդերում եղած գրականության բնօրինակներով կամ պատճեններով լիովին բավարարել արձեմենտի պահանջները,

- ստացված պատվերների կատարման համար մատենագիտական որոնումներ կատարել ֆոնդերում և տեղեկատու այլ աղբյուրներում

- վերահսկողություն սահմանել տպագիր երկերի ու գրավոր այլ նյութերի պատվերների կատարման և օգտագործման ժամկետների պահպանման նկատմամբ:

ՄԳԱ-ով սպասարկված գրականության օգտագործման համար ժամկետ է նշանակված. ստացման օրից հաշված՝ գրքերին՝ 30 օր, պարբերականներին՝ 15 օր, պատճեններին՝ 45 օր: Ինչպես նշել է Ա.Օհանյանը. «Աբոնենտ - գրադարանները պարտավոր են խստորեն պահպանել պատվիրված գրականության օգտագործման ժամկետները» [22]:

Սկրունքային նշանակություն են ունեցել գրքի ճանաչման ու ընթերցանության զարգացման նպատակով ընթերցողների ուսումնասիրումը և այդ ուղղությամբ հետազոտական աշխատանքների ծավալումը: Հետազոտության արդյունքներով բացահայտվում են տարբեր տարիքի ու սեռի ընթերցողների պահանջների ու ճաշակի առանձնահատկությունները, գրադարանավար-մատենագետի անելիքները, տվյալ գործունեության զարգացման մեջ նրա մանկավարժահոգեբանական եզրակացությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվել, այսպես կոչված, ընթերցողների «շերտավորված սպասարկմանը»: Անդրադառնալով այս հարցին հատկապես բուհական գրադարաններում՝ Ռ. Չիլինգարյանը նշել է սպասարկման երեք տարբերակներ՝ ըստ խմբերի (այսինքն՝ կուրսերի), ըստ գիտության ճյուղերի և ըստ գրականության տեսակի [19]: Անկախ հեղինակի մոտեցումից՝ նման սպասարկումը ընդունելի է նաև այսօր:

Ժամանակի կարևոր խնդիրներից մեկն էլ, որը մտահոգել է թե՛ գրադարանավարներին և թե՛ գրողներին, վերաբերել է գրքի հրատարակչական քաղաքականությանը՝ կապված գրքերի գեղարվեստական ձևավորման և մասնավորապես՝ մանկապատանեկան լավագույն գրականության հրատարակման հետ, որոնց պահանջը միշտ է զգացվել: Այդ առումով հետաքրքիր մեկնաբանում է տրված գրող Սաղաթել Հարությունյանի հոդվածում [13]: Ի դեպ, հայ մանկապատանեկան գրականության լավագույն հրատարակությունների շարքին է դասվում 1984 - 1987 թթ. հրատարակված «Ինչ է, ով է» քառահատոր մանկական հանրագիտարանը:

Գրադարանային - մատենագիտական գործունեության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ մեծ նշանակություն ունեցավ «ԽՍՀՄ-ում գրադարանային գործի մասին կանոնադրությունը»՝ հաստատված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից 1984 թ. մարտի 13-ին [24]: Ըստ էության, այդ փաստաթղթով բացվելու են գրադարանային գործի նոր հորիզոններ: Նախ՝ այն ուղղված էր միասնական ֆոնդի ստեղծմանը, իսկ ֆոնդերը բարձր որակի գրքերով համալրելու նպատակով գրադարանները պետք է ակտիվորեն ազդեն հրատարակչական արտադրանքի կազմի և տպաքանակի վրա: Սույն կանոնադրությամբ նախատեսվում են նաև քայլեր գրականության կենտրոնացված մշակման, միասնական տեղեկատվական-մատենագիտական ու գիտահետազոտական աշխատանքների իրականացման, գրադարանների նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ: Գրադարանները պարտավոր են նաև ընթերցողների համար ապահովել ֆոնդերից օգտվելու հնարավորություն, ուսումնասիրել և լիովին բավարարել ընթերցողների պահանջները, կատարելագործել գրադարանային - մատենագիտական աշխատանքները, նախապատվություն տալ բարձրագույն գրադարանային - մատենագիտական կրթությամբ մասնագետներին, ընդլայնել գրադարանային - տեղեկատվական միջազգային կապերը, զարգացնել համագործակցությունը, նպաստել գիտատեխնիկական ինֆորմացիայի տարածմանը և այլն:

Ըստ Գ. Աղախանյանի բերած տվյալների՝ Հայաստանում բոլոր տիպի գրադարանների թիվը 1985 թ. կազմել է 3143, ընթերցողների թիվը՝ ավելի քան 2447000, գրքատածքը՝ ավելի քան 76422000: Նախատեսվել է 1986 – 1990 թթ. և մինչև 2005 թ. ընկած ժամանակաշրջանում ավարտել բնակչության գրադարանային սպասարկման միասնական ֆոնդի ստեղծման աշխատանքները: Մինչև 2005 թ. բոլոր գրադարանները պետք է ապահովվեն բարեկարգ շենքերով, ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանների համար կկառուցվեն 300 հազարից մինչև 500 հազար գրքային ֆոնդի տարողության 18 նոր շենքեր: Մինչև 2005 թ. գրադարանային ընթերցանության ոլորտում ընդգրկված կլինի բնակչության 95 - 100%-ը: Ըստ Գ. Աղախանյանի՝ ընթերցողների թիվը կկազմի 3 մլն 191000 մարդ, իսկ գրքատածքը կհասնի 127 մլն 600000 օրինակի [1]:

Հետաքրքիր է նշել, որ միայն վերջին 10 տարում Հայաստանի բնակչության թիվը տատանվում է մոտ 3 մլն-ի սահմաններում, էլ ուր մնաց, որ ընթերցողների թիվը տվյալ ժամանակաշրջանում պետք է կազմեր նշված թվից ավելի:

Նախանշելով գրադարանային գործի վերակառուցման ուղիները [2], սակայն, Գ. Աղախանյանը շրջանցել է 1987 թ. մայիսին հաստատված ԽՍՀՄ Կուլտուրայի նախարարությանը կից գրադարանային պետական միջգերատեսչական հանձնաժողովի որոշումը՝ «ԽՍՀՄ-ում գրադարանների մատենագիտական աշխատանքի մասին կանոնադրությունը» [23], համաձայն որի՝ մատենագիտական գործունեություն պետք է իրականացնեն բոլոր գրադարաններն առանց բացառության՝ անկախ նրանց տեսակային առանձնահատկություններից, ինչպես նաև գործունեության ձևից ու բովանդակությունից: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- հաշվի առնել գրադարանների մատենագիտական գործունեության կենտրոնացման սկզբունքները,

- աշխատանքի պլանավորման հատուկ կազմակերպում՝ հատկապես մատենագիտական տարատեսակ արտադրանքի նախապատրաստման ու հրատարակման բնագավառում,

- գրադարանների մատենագիտական գործունեության կոորդինացում և կոոպերացում բոլոր մակարդակներում՝ ճյուղային և միջճյուղային, գերատեսչական և միջգերատեսչական, տարածաշրջանային և համամիութենական,

- գրադարանների մատենագիտական գործունեության տեխնիկական սարքավորման բարձրացում՝ ավտոմատացման, համակարգչայնացման, պոլիգրաֆիական բազայի ամրապնդման և այլ միջոցների ներդրման հիման վրա:

Այսօր դժվար է պատկերացնել, թե զարգացման ինչպիսի աստիճանի հասած կլինե՞ր գրադարանային - մատենագիտական գործունեությունը Հայաստանում, եթե չլինե՞ր երկրաշարժը (1988 թ.), եթե ԽՍՀՄ-ի փլուզման (1991 թ.) և հայ - ադրբեջանական պատերազմի հետևանքով Հայաստանը չհայտնվե՞ր սոցիալ - տնտեսական ծանր կացության մեջ...

Վիճակագրական տվյալներով միայն երկրաշարժի գոտում 744 գրադարաններից տուժել է 372-ը, որից 123-ը՝ մասնակի, 101-ը հիմնովին ավերվել է, իսկ 148-ը հայտնվել վթարային վիճակում [25]:

Սակայն պատմական անցյալի և ներկայի զարգացման փուլերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հողվածում քննարկված հարցերը միտված են եղել ապագային, որոնց անդրադառնալն, անշուշտ, բխում է անցյալի մասին իմացական պահանջներից և ունեն գրադարանագիտական ու մատենագիտական կարևոր նշանակություն:

Այսպիսով, մենք հանգեցինք այն եզրակացության, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում խորհրդային իշխանության կողմից մեծ ուշադրություն էր դարձվում գրադարանային և մատենագիտական գործի զարգացմանն ու կատարելագործմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղախանյան Գ., Գրադարանային գործի զարգացման հիմնական ուղղությունները հանրապետությունում 1986 - 1990 թթ. և մինչև 2005 թ. ընկած ժամանակաշրջանում //Կուլտուր - լուսավորական աշխատանք: 1985, թիվ 5, էջ 10 - 12:
2. Աղախանյան Գ., Գրադարանային գործի վերակառուցման հիմնական ուղիները //1988, թիվ 1, էջ 1- 4:
3. Աղայան Թ., Եգանյան ժ., ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի գրքային ունեցվածքի զարգացման հեռանկարները: -Եր., Հայաստան, 1979.- 221 էջ:
4. Աշխատանք ընթերցողի հետ: Ուսումնասօժանդակ ձեռն. կուլտ. ֆակ. գրադ. բաժնի ուսանողների համար /Կազմող՝ Գ. Գ. Մկրտչյան:- Եր., 1979.- 111 էջ:
5. Գրադարանների ԿՀ - ի աշխատողների պաշտոնական պարտականությունների օրինակելի հրահանգներ (ռուս, թարգմ.) /Խմբագիր՝ Գ. Աղախանյան:- Եր., 1978, - 55 էջ:
6. Գրադարանների կենտրոնացված համակարգի աշխատանքի տեխնիկան:- Եր., 1978,- 106 էջ:
7. Գրքային ունեցվածքի համալրման կազմակերպումը ԳՀԿ-ում: Եր.,1981- 20 էջ:

8. Երևանի գիտական գրադարանների տեղեկատու /Ինֆորմացիոն ֆոնդերի ուղեցույց/ Կազմողներ Մ. Ա. Աբգարյան, Մ. Հ. Բաբայան և ուրիշներ: Խմբ. Մ. Հ. Բաբայան:- Եր., 1980.- 135 էջ:
9. Իշխանյան Ռ., Գրադարանային հոգսեր և սփոփանքներ //Կուլտուր - լուսավորական աշխատանք, 1977, թիվ 5, էջ 30 - 34:
10. Իշխանյան Ռ. Ա., Հայ մատենագիտության պատմություն: Պր. Գ. Հայ մատենագիտությունը խորհրդային ժամանակաշրջանում: Եր., 1966- 311 էջ:
11. Կոստիկյան Հ. Կ., Սովետահայ մատենագիտության զարգացման ուղիները:- 1966- 212 էջ:
12. Հարությունյան Ս., Ամրապնդել գրադարանի և գրահրատարակչության կապը //Կուլտուր - լուսավորական աշխատանք: 1982, թիվ 4, էջ 13 - 14:
13. Հարությունյան Ա., Երևանի մատենագիտական դեմքը //Կուլտուր-լուսավորական աշխատանք:- 1981- № 3, էջ 16 - 18 (էջ 17):
14. Մատենագիտություն (ընդհանուր դասընթաց): Ուսումնամեթ. ձեռնարկ գրադարանային բաժնի ուսանողների համար /Կազմող Հ. Կ. Կոստիկյան:- Եր., 1978.- 108 էջ:
15. Միտրոֆանովա Ս., Կենտրոնացումը որպես գրադարանային գործի զարգացման նոր փուլ:- 1976, թիվ 5, էջ 26 - 32:
16. Մկրտչյան Գ. Գ., Գրադարանային գործը Հայաստանում, 1920 - 1965 թթ. (պատմական ուրվագիծ):- Եր., 1965- 179 էջ:
17. Մկրտչյան Գ. Գ., Մասսայական գրադարանների գրքային ֆոնդերի կոմպլեկտավորումը:- Եր., 1968-125 էջ:
18. Չիլինգարյան Ռ., Դասակարգման նոր ձեռնարկի առթիվ //Բանբեր Երևանի համալսարանի:- 1974, թիվ 2 (14), էջ 262 - 265:
19. Չիլինգարյան Ռ., Ընթերցողների շերտավորված սպասարկումը բուհական գրադարաններում //Կուլտուր - լուսավորական աշխատանք:- 1982, թիվ 8, էջ 14 - 17:
20. Սերով Վ. Վ., ՍՍՀՄ-ում գրադարանային շինարարության նոր փուլ //Կուլտուր - լուսավորական աշխատանք:- 1976, թիվ 6, էջ 7 - 14:
21. Միլվանյան Հ. Հ., Գրադարանի աշխատանքի պլանավորումը: Մեթոդական ցուցումներ: -Եր., 1979 թ.,- 59 էջ:
22. Օհանյան Ա., Միջգրադարանային արձևաձևերի համակարգի կատարելագործման մտահոգությամբ //Կուլտուր -լուսավորական աշխատանք:- 1981, թիվ 8, էջ 9 - 13, (էջ 11):
23. Библиографическая работа в библиотеке: организация и методика /Под ред. О. П. Коршунова.-М.: КИ, 1990, с. 5 - 6:

24. Руководящие материалы по библиотечному делу: Справочник /Под ред. В. С. Лесохиной.- М.: КП, 1988, с. 9 - 20, (228 с.).
25. Сукиасян Г. А. Библиотеки Армении в экстремальных ситуациях //Библиотечная ассамблея Евразии.-М.: РГБ, 1994.- Вып. 3.- с. 50 - 51.
26. Шапиро А. Л. Библиография истории СССР. Учеб. пос. для госунив-ов, пед. инст-ов и унив-ов культуры.-М.: ВШ, 1968.- 287 с.

РЕЗЮМЕ

БИБЛИОТЕЧНО-БИБЛИОГРАФИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ В АРМЕНИИ 70-80-Е ГОДЫ XX-ОГО ВЕКА

Н.С. ДАНИЕЛЯН

В статье приведены общие закономерности и процесс развития библиотечно-библиографической деятельности в Армении. В обращении представлены также некоторые ценные статистические данные рассматриваемого периода, которые с точки зрения библиотечно-библиографической деятельности имеют актуальное значение.

SUMMARY

THE LIBRARY-BIBLIOGRAPHIC ACTIVITY IN ARMENIA IN 70—80-ES OF THE 20-TH CENTURY

N.S.DANIELYAN

The process of the library-bibliographic activity development and the general regularities in Armenia are shown in the article. Some statistical valuable datum concerning the above mentioned period are presented which have modern important significance from the library and bibliographic point of view.

АНАЛИЗ ПСИХОЛИГИЧЕСКОЙ ХАРАКТЕРИСТИКИ ЛИЧНОСТИ
УЧАСТНИКОВ КАРАБАХСКОЙ ВОЙНЫ
А.А.ГАМБАРЯН, Р.А.ПОГОСЯН

Армянский государственный педагогический университет им.Х.Абовяна,
0010, Ереван, пр.Тигран Меци 17
e-mail: bakh_anna@yahoo.com

Травма (стресс), стрессовые ситуации являются актуальной проблемой по нескольким причинам. Прежде всего, это воздействие научно-технического прогресса и стремительное развитие современной цивилизации, повышающие риск и вероятность возникновения глобальных катастроф. Во-вторых, это высокий уровень физического и психического травматизма и последующих травматических расстройств, приводящих к определенным трудностям в диагностике, и реабилитации пострадавших. В-третьих, несмотря на существующие многочисленные исследования в этой области, еще не существует четких теоретических концепций, определяющих подходы к изучению психологических и биологических механизмов развития ПТСР.

Ключевые слова: травма, личность, война, стрессовая ситуация, личностный фактор.

Поступила в редакцию 6.10.2015 г.

Посттравматические стрессовые расстройства имеют несомненную актуальность для Армении и армянского общества, прошедших путь сложных общественно-политических трансформаций, имеющих в недавнем анамнезе, как общенациональные стрессы: катастрофическое Спитакское землетрясение 1988 года, национально-освободительная война в Арцахе, тяжелейший энергетический и экономический кризис, так и стрессы местного значения, расстрел парламента в октябре 1999 г., события 1-го марта, авиакатастрофа в Сочи. Чередующиеся друг за другом экстремальные ситуации (землетрясение, война, социально-политические перетурбации, экономический коллапс, энергетический кризис, блокада и

т.д.), вовлекающие большие массы людей, негативно сказываются на психическом и соматическом здоровье населения, вызывая продолжительные состояния психоэмоционального стресса.

Травма (стресс), стрессовые ситуации являются актуальной проблемой по нескольким причинам. Прежде всего, это воздействие научно-технического прогресса и стремительное развитие современной цивилизации, повышающие риск и вероятность возникновения глобальных катастроф. Во-вторых, это высокий уровень физического и психического травматизма и последующих травматических расстройств, приводящих к определенным трудностям в диагностике, и реабилитации пострадавших. В-третьих, несмотря на существующие многочисленные исследования в этой области, еще не существует четких теоретических концепций, определяющих подходы к изучению психологических и биологических механизмов развития ПТСР. Чередующиеся друг за другом экстремальные ситуации приводят к ухудшению психического здоровья населения, формированию различных по степени выраженности и форме стрессовых и постстрессовых расстройств, значительному изменению уровня невротизации, общей тревожности, к состоянию фрустрации и потери смысла жизни.

Клинические проявления ПТСР, а также личность пациентов с ПТСР, за долгие годы динамики болезни претерпевают значительные и формальные изменения. Наш опыт и наблюдения показывают: 1) у бывших участников войны в определенных условиях боевая травма перерастает в моральную травму; 2) ПТСР из социально-психологического феномена трансформируется в клинический феномен; 3) ПТСР сочетается одновременно или последовательно с какой-либо соматической или психической патологией.

В литературе, посвященной ПТСР, значительное место отводится обсуждению личностных изменений вследствие взаимодействия травмы и трансформированной ею личности, в результате чего в структуре личности обнаруживаются особенности, не свойственные человеку до переживания травматического события. Данная проблема актуальна тем, что исследуется воздействие неординарного стрессового события, которое, в свою очередь положило начало процессу дезадаптации с патологическими формами переживания неординарных стрессов и кризисов с маргинальным поведением, деструктивностью по отношению к себе и среде. В.А. Остапенко отмечает также, что важным фактором процесса становления Я-идентичности являются деформированность личностной структуры, дезадаптированность и дезинтегрированность. J. G. Gunderson, изучив проблему взаимосвязи травмы и личности, утверждает, что лица с

пограничными расстройствами личности являются наиболее уязвимым контингентом для развития ПТСР. Иными словами, личностные особенности и расстройства, существовавшие до воздействия травмы (стрессора), могут выступать в качестве факторов риска для развития ПТСР и играть определенную патогенетическую роль в его развитии. Кроме того, в литературе есть указания на то, что травма может явиться причиной стойких изменений в характере. Об этом свидетельствует большое количество работ, посвященных исследованию воздействия стрессора на формирование пограничных личностных расстройств. Некоторые исследователи утверждают, что лица с пограничными личностными расстройствами имеют высокую частоту травматизации в детстве. Вместе с тем, остается открытым вопрос о взаимодействии психической травмы и личности. Совокупный анализ травмы, симптомов ПТСР и особенностей личностных расстройств, проведенный S. R. Axelrod, выявляет наличие между ними не линейных взаимосвязей. О причинно-следственной роли травмы в стойких изменениях характера пишет в своих работах J. L. Herman. Автор утверждает, что выявленные при ПТСР пограничные расстройства непосредственно связаны со стрессорами. С другой стороны, J. Paris, не отрицая роль травмы в развитии ПТСР, считает фактор личностных особенностей необходимым условием для его развития. По мнению автора, необходимым условием развития расстройства являются личностные особенности, формирующие когнитивные обработки стрессовых событий, которые, вместе с тем, подвергаются влиянию раннего жизненного опыта. Как показали исследования В.А. Кожевниковой, рост степени выраженности симптомов ПТСР приводит к более глубоким нарушениям эмоционально-личностной сферы личности. Иными словами, по мнению автора, в основе патологических трансформаций личности и поведения лежат качественные изменения, возникающие в эмоциональной, ценностно-смысловой, мотивационной сферах, в сфере защитных механизмов и копинг-стратегий, а также сфере социального взаимодействия. На основании анализа результатов исследования 112 больных автор выделила постстрессовый патопсихологический симптомокомплекс, основным составляющим, которого являлись формирование и постепенное усиление черт подозрительности и отгороженности, своеобразие и ригидность поведенческих и эмоциональных реакций; узость диапазона и стереотипность механизмов психологической защиты; неадекватность и ригидность копинг-стратегий; значимая диссоциация ценностно-смысловой сферы; ограниченность микросоциальных связей и социальной поддержки; обеднение мотивационной сферы и пессимистическая оценка

собственного будущего. По мнению L. Gardozo, посттравматический психологический симптомокомплекс включает также и такие симптомы, как чувство ненависти, мести, агрессии против тех людей, которые несли ответственность за события травматического стресса. Многие авторы подтверждают, что после перенесенной психической травмы, возможно развитие хронического изменения личности. По мнению одних авторов изменения личности рассматриваются как вариант динамики ПТСР. В литературе, посвященной изучению воздействия локальных войн, значительное место отводится личностным изменениям, в основе которых лежат изменения так называемого «смыслового ядра личности. Другие исследователи высказывают мнение о коморбидности состояния.

Как показали исследования Е.А. Фау, переживания последствий критической ситуации (потрясения), могут быть различны (позитивные и негативные) и зависят от адаптационно-компенсаторных механизмов. Установлено, что потрясения, являясь особо значимыми событиями для человека, приводят к трансформации мировоззренческих и духовных установок с последующими изменениями на когнитивном, эмоциональном и поведенческом уровнях организации личности. В этом случае, как утверждает Миско Е.А., переживания психотравмирующей ситуации, проявляются феноменом укороченной жизненной перспектив. Исследование, проведенное Т.М. Харламовой, при изучении личностных детерминант посттравматического стрессового расстройства у ветеранов боевых действий показывает, что воздействие травмирующих событий приводит к затруднению адаптаций к мирной жизни. Разрушение прежних ценностей, идеалов, мировосприятия, представлений о себе и своем месте в мире, способствуют выстраиванию у экс-комбатантов невротических защитных механизмов. Кроме того, в своих исследованиях многие авторы указывают, что невротизм, действуя наподобие фильтра, заставляет избирать негативные события окружающей среды.

Следует указать, что проблема личности с точки зрения патогенетического и клинического феномена в контексте боевого ПТСР, рассматривается на трех уровнях:

- 1) претравматические личностные особенности или расстройства (преморбидная личность),
- 2) интратравматические личностные расстройства (личностно обусловленные реакции на травматический стресс).
- 3) посттравматические расстройства личности (комбатантная акцентуация, хронические изменения личности и др.).

Подавляющее большинство обследованных пациентов имели свои семьи: в группе с ПТСР 35 набл. (77.8%), в группе без ПТСР - 32 набл.

(76.2%), в контрольной группе в браке состоял 31 обследуемый (83.8%). Во всех группах оказались холостыми примерно одинаковое количество обследованных: в группе с ПТСР 5 пациентов (11.1%), в группе без ПТСР пациентов 6 (14.3%) и в контрольной группе – 4 респондента (10.8%). Вместе с тем выявлялись различия между группами по такому параметру, как «разведенные»: в группе с ПТСР состояли в разводе 4 пациентов (8.9%) и еще 1 (2.2%) состоял в повторном браке; в группе без ПТСР в разводе состоял 1 (2.4%) и 3 пациентов (7.1%) состояли в повторном браке. В контрольной группе лишь 2 респондента (5.4%) состояли в повторном браке. Как показывает простое сравнение выделенных групп, ветераны войны как с ПТСР, так и с редуцированными симптомами ПТСР чаще разводились, несмотря на то, что все же большинство из них сохраняло свои семьи. Однако, несмотря на то, что официально многие пациенты имели семьи, боевая психическая травма, как и последующее ее развитие и воздействие на личность, приводили к определенным изменениям мироощущения и миропонимания, что сказывались на внутрисемейных взаимоотношениях пациентов. Иными словами, формировался своего рода порочный круг, т.е. психическое состояние пациентов отрицательно воздействовало на межличностные отношения в семье. Это приводило к развитию чувства одиночества, отгороженности, нарастанию социальной изоляции. При целенаправленном опросе выявилось, что в группе с ПТСР 20 пациентов (44.4%) расценивали взаимоотношения в семье как ровные; 7 (15.6%) считали их «не спокойными»; 6 пациентов (13.3%) – напряженными и 12 (26.7%) отмечали постоянные скандалы. То есть больше половины обследованных пациентов (55.6%) в группе с ПТСР отмечали трудности в семейных взаимоотношениях. Среди наиболее актуальных причин конфликтности, пациенты отмечали социально-экономические трудности, неприятие со стороны общества. В группе без ПТСР 21 пациент (50.0%) оценивал отношения между членами семьи как ровные, 2 пациента (4.8%) оценивали, как беспокойные, 9 пациентов (21.4%) – как напряженные и 10 пациентов (23.8%) отмечали постоянные скандалы. Наиболее позитивные взаимоотношения в семье отмечались в контрольной (здоровой) группе: 26 обследованных (70.3%) расценивали отношения с членами семьи как ровные, 8 (21.6%) – беспокойные, 3 пациента (8.1%) считали их напряженными. Многие нерешенные социально-психологические проблемы, связанные с семьей и бытом (экзистенциальные проблемы), страх перед неопределенным будущим, не всегда желанная оценка со стороны общества и близких приводила к формированию враждебного отношения к окружающим их людям, нарастанию социальной отгороженности.

Согласно данным Г.А. Фастовцова, личностный фактор в развитии ПТСР не исчерпывается только довоенными патохарактерологическими особенностями. В условиях боевого стресса происходит личностная трансформация, способствующая адаптации в условиях боевой обстановки. Синдромообразующим фактором поведенческих расстройств и агрессивности в дальнейшем является перестройка ценностно-смысловой сферы, регресс высших свойств личности, снижение уровня социальных и духовных потребностей. В той или иной форме чувство одиночества испытывал 31 (68.9%) пациент группы с ПТСР. Состояние полного одиночества отмечали 2-е (4.4%), иногда испытывали одиночество 14 пациентов (31.1%), постоянно испытывали одиночество 6 пациентов (13.3%), страдали от подобного ощущения 9 пациентов (20%). «Одинокими не считали себя 14 пациентов (31.1%). В группе без ПТСР состояние полного одиночества не отмечалось ни у кого, чувство одиночества иногда испытывали 11 пациентов (26.2%), постоянно чувствовали себя одинокими 4 пациента (9.5%), одиночество причиняло страдания 5 пациентам (11.9%). Не считали себя «одинокими 20 пациентов (47.6%). Наибольшее количество не считающих себя одинокими, было выявлено в группе контроля (27 набл., 72.9%), состояние полного одиночества испытывал 1 респондент (2.7%), 9 обследованных (24.3%) иногда испытывали одиночество. Постоянное чувство одиночества и страдание от одиночества в группе контроля не было выявлено.

Психическая травма, влияя на эмоциональное отношение к будущему, вызывала у пациентов чувство неопределенности, безразличия, разочарования, безысходности. Как утверждает Е.А. Миско одно из последствий переживания психотравмирующей ситуации, относящееся к числу симптомов ПТСР, является феномен укорочения жизненной перспективы. В ходе наших исследований выяснилось, что в группе с ПТСР 10 пациентов (22.2%) отмечали чувство неопределенности в отношении будущего, безразличие отмечали 4 пациента (8.9%), надеялись на изменения в течение жизни трое (6.7%), были оптимистичны также 3 пациента (6.7%). Все же большинство из них (25 пациентов, 55.5%) были крайне негативно настроены в отношении будущего (будущего нет). Пациенты же без ПТСР, по сравнению с первой группой, были менее безрадостны: чувство неопределенности в отношении будущего отмечали 8 пациентов (19.1%), безразличие – 4 (9.5%), надеялись на изменения в течение жизни – 12 (28.6%) «были полностью оптимистичны 2 (4.8%), полностью отрицали будущее (будущего нет) 16 (38.1%). Сравнительно оптимистичные данные продемонстрировала контрольная группа: чувство неопределенности в отношении будущего отмечали 5 обследованных

(13.5%), безразличие – 1 (2.7%) «надеялись на изменения в течение жизни 19 (51.4%) «были полностью оптимистичны 11 (29.7%), отмечал, что «будущего нет всего 1 исследуемый (2.7%). Таким образом, феномен «укорочения жизненной перспективы чаще наблюдался у пациентов с ПТСР (p=0.002).

Таблица 1. Феномен укорочения жизненной перспективы

Феномен укорочения жизненной перспективы	Группа контроля		Группа с ПТСР		Группа без ПТСР		P
	абс	%	абс	%	абс	%	
Негативное отношение	1	2.70	25	55.55	16	38.10	0.002
Неопределенность в отношении к будущему	5	13.52	10	22.22	8	19.05	
Безразличие	1	2.70	4	8.89	4	9.52	
Надеется на изменения	19	51.35	3	6.67	12	28.57	
Оптимистично настроены	11	29.73	3	6.67	2	4.76	
Всего	37	100.00	45	100.00	42	100.00	

Согласно Л.И. Исмаиловой, отрицательный перенос «боевых моделей поведения личности в условия мирной жизни негативно влияет на формирование адаптационных возможностей социального взаимодействия человека с окружающей средой, мешает ему нормально существовать спустя много лет после несения службы в горячих точках. Это подтверждают и данные наших исследований. В частности, что в группе с ПТСР большинство пациентов (38 набл., 84.5%) отмечало трудности в межличностных отношениях; примерно столько же пациентов, испытывающих трудности в межличностных отношениях, было среди пациентов без ПТСР – 34 пациентов (80.9%). Не могли входить в контакт с окружающими 6 пациентов (13.3%) группы с ПТСР и всего 1 пациент (2.4 %) из группы без ПТСР. Не испытывал никаких трудностей в общении только 1 пациент (2.2%) из группы с ПТСР и 7 пациентов 16.7 % из группы без ПТСР. В группе контроля «с трудом входили в контакт 9 обследуемых (24.3%), не мог входить в контакт с окружающими 1 обследуемый (2.7%) и «не испытывали никаких трудностей в общении 27 пациентов (72.9%).

Таблица 2. Соотношение пациентов с межличностными конфликтами по отдельным группам.

Межличностные конфликты	Группа контроля		Группа с ПТСР		Группа без ПТСР		P
	абс	%	абс	%	абс	%	
не испытывал трудностей во взаимоотношениях	27	72.98	1	2.22	7	16.67	0.009
не может войти в контакт	1	2.70	6	13.33	1	2.38	
входит с трудом	9	24.32	38	84.45	34	80.95	
Всего	37	100.00	45	100.00	42	100.00	

Можно предположить, что в сознании ветеранов деструктивная действительность войны противопоставлялась действительности мирных условий. Со временем пережившие боевую травму ветераны становились замкнутыми, подозрительными, проявляли немотивированные вспышки агрессии с деструктивными и аутодеструктивными тенденциями уничтожения, отчужденности, постепенно ограничивая свои контакты кругом боевых товарищей, ограничением социальных контактов частично или полностью доходящей до социальной изоляции.

ЛИТЕРАТУРА

1. Исмаилова О.М. Психофизиологический статус раненых, пациентов с бытовой травмой, психосоматических больных и его значение для оптимизации процесса восстановительного лечения // Автореф. дисс... канд. мед. наук, Москва, 2007.
2. Кожевнікова В.А. Особливості особистості та поведінкові зміни у осіб, що пережили екстремальні події. – Дис... канд. психол. наук. – Х., 2006. – 186 с.
3. Миско Е.А. Представления о жизненной перспективе у лиц, переживших травматический стресс // Современная психология: состояния и перспектива / Тезисы доклада на юбил. научн. конф. ИП РАН 28-29 янв 2002 – М.: Институт психологии РАН, 2002. – Т.1. –286 с.
4. Остапенко А.В. Клинико-психологические характеристики личности участников локальных войн и их защитно-совладающего

- поведения: – Автореф. дис... канд. мед. психол. наук – СПб, 2007.– 16 с.
5. Фастовцов Г.А. Криминальная агрессия комбатантов с ПТСР (клинический и судебно-психиатрический аспекты). – Автореф дисс... док. мед. наук. – Москва, 2010.
 6. Фау Е.А. Сравнительный анализ психологических и психосоматических характеристик людей, переживших кризисные ситуации: – Дис... канд. психол. наук: – СПб, 2004. – 260 с.
 7. Харламова Т.М. Личностные детерминанты посттравматического стрессового расстройства ветеранов боевых действий // Научный журнал "Современные наукоемкие технологии". – 2007, N 11. – С. 67.
 8. Axelrod S.R., Morgan C.A. III, Southwick S.M. Symptoms of Posttraumatic Stress Disorder and Borderline Personality Disorder in Veterans of Operation Desert Storm // Am J Psychiatry, 2005; 162: 270-275.
 9. Cardozo L., Kaiser B., Gotway R., Agani F. Mental health, social functioning, and feelings of hatred and revenge of Kosovar Albanians one year after the war in Kosovo // Journal Gunderson J.G., Sabo A.N. The phenomenological and conceptual interface between borderline personality disorder and PTSD // Am J Psychiatry, 1993;150:19-27. of Traumatic Stress, 2003; 16: 351-60.
 10. Gunderson J.G., Sabo A.N. The phenomenological and conceptual interface between borderline personality disorder and PTSD // Am J Psychiatry, 1993;150:19-27.
 11. Herman J., Perry J.C., van der Kolk B.A. Childhood trauma in borderline personality disorder // Am J Psychiatry, 1989;146: 490-5.
 12. Paris J., Zweig-Frank H., Guzder J. Risk factors for borderline personality disorder in male outpatients // J Nerv Ment Dis, 1994;182:375-80.

ԱՍՓՈՓՈՒՄ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՁԻ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Ա. Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ, Ռ. Ա. ՊՈԴՈՍՅԱՆ

Տրավման (սթրես), սթրեսային իրավիճակները համարվում են արդիական խնդիրներ մի քանի պատճառներով: Առաջին հերթին, դա գիտական առաջընթացի և ժամանակակից քաղաքակրթության արագ զարգացման ազդեցություն է, որ բարձրացնում է գլոբալ աղետների վտանգը և հավանականությունը: Երկրորդը, բարձր մակարդակի ֆիզիկական և հոգեկան վնասվածքը և հետագա տրավմատիկ խանգարումներն են՝ հանգեցնելով ախտորոշման և ապաքինման դժվարությունների: Երրորդը, չնայած այս ոլորտում առկա բազմաթիվ հետազոտությունների՝ դեռ չկան հստակ տեսական հայեցակարգեր, որոնք սահմանում են հոգեբանական և կենսաբանական մեխանիզմների զարգացումը՝ ՀՏՄ:

SUMMARY
ANALYSIS OF PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF THE
PERSONALITY OF KARABAKH WAR PARTICIPANTS.
GHAMBARYAN A.A., POGOSYAN R.A.

Trauma (stress), stress situations are the actual problem according to many reasons. First of all it is the influence scientific-technical progress and rapid development of modern civilization, increasing the risk and possibility of the arising of global catastrophes. Secondly it is the high level of physical and psychological traumatism and the following traumatic disorders, bringing to the certain difficulties in diagnostics and rehabilitation of the suffered people. Thirdly despite the existence of numerous investigations in this sphere there are no exact theoretical concepts determining the steps to the study of psychological and biological mechanisms of PTSD development.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 316 : 159.9 : 343.1

ԿՈՆՖԼԻԿՏԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՔՆՆՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ
Ռ. Գ. ՄԿՐՏՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: spunews@mail.ru

*Հոդվածում վերլուծվում են քննիչի գործունեության ընթացքում կոնֆլիկտների առաջացման պատճառները: Մանրամասն դիտարկվում են կոնֆլիկտների պատճառները և նրանց ազդեցությունը մասնագիտական գործունեության, ինչպես նաև քննիչի անձնային բնութագրի վրա:
Հեղինակը ներկայացնում է հետազոտության մեթոդիկաների արդյունքների, ինչպես նաև կոնֆլիկտայնության և էմոցիանալ այրման միջև արտահայտված համահարաբերակցական կապերը:*

Բանալի բառեր. *Հոգեբանական կոնֆլիկտ, իրավակիրառական, քննչական, միջանձնային փոխհարաբերություններ, հուզական այրում, անձնային մակարդակ, դերային մակարդակ, կազմակերպչական մակարդակ:*

Ներկայացված է խմբագրություն 17.12.2015 թ.:

Ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ արդի պայմաններում կոնֆլիկտը հասարակության մեջ հաճախակի դրսևորվող և նրան ամենաբնորոշ երևույթներից մեկն է: Հետևաբար, վերջինիս վերաբերող հետազոտություններն էլ խիստ արդիական են: Կոնֆլիկտների առաջացման և արդյունավետ հաղթահարման հիմնախնդիրները հետաքրքրում են բոլոր այն մասնագետներին, ովքեր իրենց գործունեությամբ առնչվում են մարդկային փոխհարաբերություններին՝ հոգեբաններ, մանկավարժներ, սոցիոլոգներ, սոցիալական աշխատողներ, քաղաքական գործիչներ, ղեկավարներ և այլն: Մեզ համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հոգեբանական կոնֆլիկտները իրավակիրառական և մասնավորապես քննչական գործունեության ոլորտում: Հակազդեցության պայմաններում քննչական հաղորդակցման իրավիճակները նույնպես հաճախ անվանում են

կոնֆլիկտային իրավիճակներ: Կոնֆլիկտը որպես հոգեբանական հասկացություն հակադարձ ուղղվածություն ունեցող, անհամատեղելի միտումների բախումն է առանձին անհատների գիտակցության մեջ, անձանց կամ խմբերի միջանձնային փոխհարաբերություններում՝ կապված սուր բացասական հուզական ապրումներով [7, էջ 152]: Կոնֆլիկտների գոյությունը հնարավոր է կողմերի երկարատև հակազդեցության առկայության պայմաններում: Անկասկած, քննիչի և քննության մասնակիցների միջև չկա խորը կոնֆլիկտայնություն: Քննիչի խնդիրն է՝ հաղթահարել նույնիսկ ժամանակավորապես առաջացող կոնֆլիկտային իրավիճակները և հասնել նախաքննության նպատակին, կազմել կատարված իրադարձության ճշգրիտ պատկերը: Կայուն կոնֆլիկտների առաջացումը հնարավոր է, եթե կողմերն ունեն հավասար հնարավորություններ [7, էջ 23]: Քննիչի կարևորագույն խնդիրներից մեկը կոնֆլիկտային իրադրությանը սթափ գնահատական տալն է, ինչին կարող է նպաստել այդ իրադրության համակարգային վերլուծությունը: Գործիմաց քննիչի համար բնութագրական է նուրբ հոգեբանական ներգործությունը հարցաքննվողի անձի վրա [1, էջ 220]: Քննչական գործունեության ընթացքում քննիչի մոտ կարող են առաջանալ ինչպես արտաքին «բաց», այնպես էլ ներքին «փակ» կոնֆլիկտներ, հակասություններ, որոնք հասնում են սրության այն աստիճանին, որ ակնհայտ բացահայտվում ու բախվում են հակադիր դիրքեր, տեսակետներ, դրդապատճառներ ու համոզմունքներ:

Որպես ներքին կամ «փակ» կոնֆլիկտ է դիտարկվում, օրինակ, դրդապատճառների պայքարը՝ անձնային կոնֆլիկտները բարոյական զգացումների (օրինակ՝ հանցագործությունների նկատմամբ ատելության զգացումը) և դատողությունների միջև, մասնագիտական պատասխանատվության և սուբյեկտիվ անձնային ցանկությունների, մղումների ու հնարավորությունների միջև, որոնք դերային կոնֆլիկտներ են [2, էջ 26]: Արտաքին «բաց» կոնֆլիկտները հիմնականում դրսևորվում են քննիչի և անբարեխիղճ վկաների, տուժողների կամ էլ մեղադրյալների միջև: Այս պարագայում բնական է, որ քննիչը սահմանափակված է մեթոդների և միջոցների ընտրության մեջ, օրենքի և մասնագիտական պատասխանատվության շրջանակներում, իսկ հակադիր կողմի գործողությունները փաստացի ոչնչով չեն սահմանափակվում: Թե՛ ներքին և թե՛ արտաքին կոնֆլիկտները քննչական գործունեության լարվածությունը կարող են հասցնել ծայրահեղ աստիճանի [2, էջ 30]:

Ինչպես ցանկացած մասնագիտական գործունեություն, քննչական գործունեությունը ընդհանուր առմամբ նպաստում է մասնագիտական որոշակի որակների զարգացմանն ու ամրապնդմանը: Միևնույն ժամանակ վերջինիս հոգեբանական յուրահատկությունները կարող են

հանգեցնել անձնային որոշ անցանկալի փոփոխությունների, որոնք բացասաբար են անդրադառնում քննիչի մասնագիտական գործունեության վրա [6]: Մասնավորապես՝ կարող է դրսևորվել այրման համախտանիշը [3, էջ 223]:

Քննիչի չկանոնակարգված աշխատանքային օրը, ընկճախտածին գործոնները (ժամանակի պակաս, ֆիզիկական և տեղեկատվական գերբեռնվածություն) կարող են հանգեցնել քրեական գործերի նախաքննության գործընթացում շտապողականության, անուշադրության, անհետևողականության, հետևաբար և՛ ամբողջ գործընթացի արդյունավետ ընթացքի աղավաղման: Օրինախախտների հետ մշտական շփումը կարող է հանգեցնել քննիչի մոտ անվստահության առաջացման ու կասկածամտության և ձևավորման [4]: Մասնագիտական աղավաղման սուբյեկտիվ նախադրյալների մեջ հատուկ տեղ է գրավում քննիչի բարոյական արժեհամակարգի ձևավորվածության մակարդակը: Քննչական գործունեության ընթացքում բարդ գրուցակիցների հետ հաղորդակցումը հաճախ առաջացնում է կոպտություն, գրգռվածություն, հուզական պայթյուններ, իսկ բարձր բարոյական որակները օգնում են արդյունավետ պայքարել այդ աղավաղումների դեմ:

Մասնագիտական գործունեության ընթացքում զարգանում է քննիչի գործիմացությունը, հաստատականությունն ու վստահությունը սեփական գործողություններում: Սակայն ինքնաքննադատական և ինքնակառավարման ընդունակությունների ցածր մակարդակը նպաստում է սեփական ուժերի, մասնագիտական փորձի գերազնահատմանը և որպես արդյունք ձևավորում մեծամտություն, էսակենտրոնություն, ինչն էլ հանգեցնում է լճացման և մասնագիտական աճի կանգին [5]:

Մասնագիտական գործունեության աղավաղումն առավել հաճախ դրսևորվում է հուզական այրմամբ: Վերջինս դրսևորվում է անընդհատ աճող հուզական հյուծվածությամբ՝ մարդկանց հետ հաղորդակցման ոլորտում առաջացնելով մի շարք անձնային փոփոխություններ [10]: Վ. Բոյկոն հուզական այրումը բնորոշում է որպես մարդու հոգեկան ինքնապաշտպանական մեխանիզմ, որը մասնակիորեն կամ ամբողջովին բացառում է հույզերը՝ ի պատասխան վնասակար ներգործությունների: Ըստ նրա՝ «այրումը» մասնակիորեն գործառութային կարծրատիպ է, քանի որ թույլ է տալիս խնայողաբար օգտագործել համապատասխան ռեսուրսները, սակայն միևնույն ժամանակ բացասաբար է ազդում մասնագիտական պարտականությունների կատարման և շրջապատի հետ փոխհարաբերությունների վրա [11]:

Ըստ Օ. Վ. Լազարևայի՝ հուզական այրման սինդրոմը իրենից ներկայացնում է այնպիսի անձանց մասնագիտական աղավաղման

տեսակ, ովքեր իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ ստիպված են նեղ հաղորդակցական կապեր հաստատել մարդկանց հետ: Այրումը բացասաբար է անդրադառնում անձի զարգացման բոլոր կողմերի վրա՝ իջեցնելով նրա մասնագիտական գործունեության արդյունավետությունը և նվազեցնելով բավարարվածության մակարդակը [8]: Հուզական այրման նախանշաններն են՝ հյուծումը (անտարբերություն, արգելակվածություն, եռանդի բացակայություն), օտարացումը (հասարակական մեկուսացում, բացասական դիրքորոշում, հոռետեսություն), սեփական գործունեության անարդյունավետության զգացում (բացասական ինքնաընկալում, մասնագիտական անլիարժեքության զգացում) [8]: Առանձնացվում են հետևյալ գործոնները, որոնք դասակարգվում են երեք հիմնական մակարդակներով և գերակայում են հուզական այրման սինդրոմում, դրանք են՝ անձնայինը, դերայինը և կազմակերպչականը:

Անձնային մակարդակին բնորոշ հուզական այրման ախտանշաններն են՝ տրամադրության անկում, ընկճվածություն, հուզական կառավարման ցածր մակարդակ, քողարկված վախեր, տագնապայնություն, բարձր լարվածություն և այլն: Աֆեկտիվ ախտանշաններն են՝ անօգնականությունը, իմաստի, հավատի, հույսի կորուստը, խոցելիությանը, թուլությանը, անպիտանելիության և մեղքի զգացումը, ցրվածությունը, մոռացկոտությունը, կարծրացած մտածողությունը, անվճռականությունը, երազկոտությունը, ինքնասպան լինելու ցանկությունը և այլն: Իմացական-ֆիզիոլոգիական ախտանշաններն են՝ գլխացավերը, գերհոգնածությունը, նյարդային ջղաձգությունները, մկանային ցավերը, սեռական անկարողությունը, անքնությունը, քաշի կտրուկ փոփոխությունները, ախորժակի կորուստը, շնչառության խանգարումները, մարմնական թուլությունը, խուլեստերինի բարձր ցուցանիշը և այլն: Վարքային-ֆիզիկական ախտանիշերն են՝ գերակտիվությունը, թերակտիվությունը, վնասակար սովորությունների չարաշահումը (ալկոհոլ, թմրանյութեր, թունանյութեր, ծխախոտ), հոռետեսությունը, հիասթափվածությունը, ձանձրույթը, բարոյագրկումը [9, էջ 191-192]:

Դերային մակարդակին բնորոշ ախտանիշերն են՝ գերզգայնությունը, անտարբերությունը, նյարդայնությունը և այլն: Աֆեկտիվ ախտանշաններն են՝ դաժանությունը, անմարդկայնությունը, չարակամությունը, անհարգալից վերաբերմունքը, կասկածամտությունը, կաղապարված և սահմանափակ հարաբերությունները և այլն: Իմացական ախտանշաններն են՝ դաժանությունը, բռնության դրսևորումները, ագրեսիվ վարքը, պարբերական բնույթ կրող ներանձնային, միջանձնային և ընտանեկան կոնֆլիկտները, հումորի

զգացումի բացակայությունը, անհուսությունը և այլն: Վարքային ախտանիշերն են՝ անհուսությունը, խառնաշփոթությունը, նախանձի դրսևորումները [9, էջ 192-193]:

Կազմակերպչական մակարդակին բնորոշ ախտանիշերն են՝ ծավալվող մասնագիտական գործունեությունից անբավարարվածության զգացումը: Աֆեկտիվ ախտանշաններն են՝ ցինիկությունը, թերարժեքության բարդույթը, անվստահ գործողությունները և այլն: Իմացական ախտանշաններն են՝ աննպատակ գոյությունը, աշխատունակության նվազումը, պարբերաբար հետաձգվող գործերը, ժամանակի անիմաստ վատնումը և այլն: Վարքային ախտանիշերն են՝ աշխատանքի նկատմամբ մակերեսային վերաբերմունքը, հաճախակի և անհարգի բացակայությունները, կազմակերպչական որևէ գործունեություն ծավալելու անկարողությունը, շտապողականությունը կամ դանդաղկոտությունը [9, էջ 193-194]:

Քննչական գործունեության ոլորտում դրսևորվող կոնֆլիկտների պատճառականության հետազոտության համար կիրառել ենք կոնֆլիկտի իրադրային հետադարձ վերլուծության, Ա. Անցուպովի «մոդուլային սոցիոփորձարկման, Կ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման, Վ. Վ. Բոյկոյի «Հուզական այրման մակարդակի ախտորոշման», Ռ. Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման», «Կոնֆլիկտակայունության արտահայտիչ ախտորոշման», Տ. Լիրիի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշման» մեթոդները, տեխնիկաներն ու տեխնոլոգիաները:

Բոլոր մեթոդիկաների արդյունքում ստացված ցուցանիշները, բացառությամբ որոշ անկախ գործոնների և հատկանիշների (դրանք փոխկապակցված են և ուղղված են անձի անհատական առանձնահատկությունների և վարքային դրսևորումների մասին որոշակի պատկերացումների ձևավորմանը), մենք փորձել ենք խմբավորել ըստ արտահայտվածության աստիճանի՝ թույլ, միջին և բարձր: Դա մեզ հնարավորություն է տվել կապ հաստատել երեք խումբ սվյալների միջև /Աղյուսակ 1/:

Աղյուսակ 1

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների արդյունքները և դրանց համահարաբերակցությունը (%)

Խ	Ռ.Քեթթելի մեթոդ			Վ.Բոյկոյի մեթոդ		Տ.Լիրիի մեթոդ	66
	L	Զգուշավորություն	51.65	Տազնապայնություն	37.50	Վարչա հրամայա	

	O	Տազնապայ նություն	45	Անհատական հուզական ընտրականության հակազդում	35.83	կանու թյուն	
	Q4	Լարվածու թյուն	51.67	Հուլյերի ինայողության ոլորտի ընդլայնում	72.50	Եսասիրու թյուն	48.33
				Մասնագիտական պարտակա նությունների թերի կատարում	31.6		
Բ միջին արտահայտված %	MD	Ինքնարժև ում	69.16	Հուզական օտարում	48.34	Ագրեսիվու թյուն	38.33
	A	Շփվողակա նություն	63.33				
	E	Զիջողակա նություն	54.16				
	F	Զսպվածություն	61.67			Կասկածա մտություն	43.33
	H	Իսիգախություն	67.50				
	I	Զգայունություն	75.83				
	M	Գործնականու թյուն	70	Հոգեվնասված քային իրավիճակ ների ապրում	25.84		
	N	Ուղղամտու թյուն	68.33				
	Q1	Պահպանողակ անություն	69.16				
	Q2	Զիջողականու թյուն	64.17				
	Q3	Ինքնավերա հսկում	56.67				
Գ ցածր արտահայտված%	B	Ինտելեկտ	46.66	Մեփական անձից անբավարարվա ծություն	58.33	Հնազանդո վթյուն	43.33
	C	Հուզակայունու թյուն	54.16	Ինքնամիտփու թյուն.	65	Կախյալու թյուն	60
	G	Կանոնակարգ վածություն	50.84	Բարոյահուզա կան չկողմնորոշվածու թյուն	44.16	Ընկերասի րություն	54.16
				Հուզական դեֆիցիտ	51.67	Ալտրուիզմ	55.83


			Ընկճվածություն	51.68		
			Հոգեամատիկ խանգարումներ	51.66		

Հետազոտության արդյունքների ընդհանրական պատկերը հնարավորություն ընձեռեց մեզ առանձնացնել այն հիմնական գործոններն ու հատկանիշները, որոնք կարող են միջանձնային կոնֆլիկտի պատճառ դառնալ:

Մենք փորձել ենք նաև գտնել այն համահարաբերակցական կապերը, որոնք առկա են կոնֆլիկտների պատճառականության շղթայում /Գծապատկեր 1/:

Գծապատկեր 1

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների արդյունքների միջև համահարաբերակցական կապը




Հետազոտության արդյունքների համահարաբերակցությունը ակնհայտ է դարձնում այն փաստը, որ մեր կողմից առանձնացված առավել առանցքային գործոնների և կոնֆլիկտայնության միջև կա դրական համահարաբերակցական կապ: Հատկապես ուժեղ են

արտահայտված բարձր կոնֆլիկտայնություն և տագնապայնություն՝ $r=0.71$, բարձր կոնֆլիկտայնություն և ագրեսիվություն՝ $r=0.69$, բարձր կոնֆլիկտայնություն և լարվածություն՝ $r=0.65$, բարձր կոնֆլիկտայնություն և վարչահրամայականություն՝ $r=0.63$ կապերը: Չափավոր արտահայտվածություն ունեն բարձր կոնֆլիկտայնություն և հուզական անկայնություն՝ $r=0.57$, բարձր կոնֆլիկտայնություն և ինտելեկտ՝ $r=0.60$, բարձր կոնֆլիկտայնություն և անպատասխանատվություն՝ $r = 0.55$, բարձր կոնֆլիկտայնություն և զգուշավորություն՝ $r= 0.35$ կապերը:

Կոնֆլիկտայնության և հուզական այրման համահարաբերակցական կապերը պարզել ենք Սպիրմենի հարաբերակցական վերլուծության գործակիցը կիրառելու արդյունքում: Քանի որ հուզական այրման ախտորոշման նպատակով մեր կողմից կիրառված Վ. Բոյկոյի տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ախտորոշել հուզական այրման երեք առանձին փուլերի՝ լարվածության, դիմադրողականության և հյուծման դրսևորման առանձնահատկություններն ու ձևավորվածության աստիճանը, ուստի կոնֆլիկտայնության հետ համահարաբերակցական կապերը պարզել ենք վերոհիշյալ երեք փուլերի հետ առանձին-առանձին /Գծապատկեր 2/:

Հուզական այրման և կոնֆլիկտայնության միջև համահարաբերակցական կապերը



Այսպիսով, կոնֆլիկտայնության և հուզական այրման երեք փուլերի միջև էլ կան ուժեղ արտահայտված նշանակալի կապեր: Հատկապես ուժեղ է արտահայտված կոնֆլիկտայնություն և լարվածության փուլ կապը՝ $p=0.75$, այն չափազանց նշանակալի է:

Կոնֆլիկտների առկայությունը և դրսևորման առանձնահատկությունները բացահայտելու նպատակով մեր կողմից կիրառված մեթոդների արդյունքներով արձանագրվում է կոնֆլիկտայնության բավականին բարձր մակարդակ: Կոնֆլիկտային իրավիճակների վերլուծությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ կոնֆլիկտների մեծամասնությունը պատկանում են ուղղահայաց տեսակին՝ «ղեկավար-ենթակա» (35.88%), սրանց հետևում են արդեն հորիզոնական ծագում ունեցող կոնֆլիկտները (22.64%): Կիրառված մեթոդներից ստացված տվյալները թույլ են տալիս նաև փաստել, որ կոնֆլիկտային իրավիճակների մեծամասնությունն ունեն թաքնված բնույթ և չեն հասնում կոնֆլիկտային փոխհարաբերությունների մակարդակին՝ պայմանավորված որոշ անձնային գործոններով, կոնֆլիկտային վարքի հակվածության մակարդակով: Հետազոտվողների

23.35%-ը ժխտում է կոլեկտիվում կոնֆլիկտների առկայության հանգամանքը, իսկ 34.16%-ը պարզապես խուսափում է տեղեկություն տրամադրել կոնֆլիկտների առկայության կամ դրսևորման բնույթի վերաբերյալ:

Այսպիսով, քննչական գործունեության սուբյեկտների միջանձնային կոնֆլիկտների դրսևորման առանձնահատկությունների տեսական և փորձարարական հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կոնֆլիկտները պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Մեր հետազոտության շրջանակներում հատկապես շեշտադրվել է կոնֆլիկտների՝ անձնային գործոններով պայմանավորվածությունը: Հետազոտության արդյունքների վերլուծությունը հավաստում է, որ անձնային այնպիսի գործոնների արտահայտվածության բարձր մակարդակը, ինչպիսիք են՝ տազնապայնությունը, լարվածությունը, ագրեսիվությունը, կասկածամտությունը, նախապայման են հանդիսանում կոնֆլիկտային իրադրության առաջացման համար: Մյուս կողմից՝ հուզական կայունության, բարոյահուզական կողմնորոշվածության արտահայտվածության ցածր մակարդակը և անհամարժեք հուզական ընտրողական հակազդումներն էլ ավելի են նպաստում կոնֆլիկտի ապակառուցողական զարգացմանը:

Քննչական գործունեության մեջ կոնֆլիկտների առաջացման հավանականությունը բարձրացնում է զարգացման ինտենսիվ միտումներ ունեցող այրման սինդրոմը: Վերջինս, դրսևորվելով որպես մասնագիտական ծանրաբեռնվածության հետևանք, խիստ դժվարեցնում է արդյունավետ գործունեություն իրականացնելու գործընթացը, սկսվում է լարվածությունից, հույզերի խնայման ոլորտի ընդլայնումից, ուղեկցվում՝ հոգեբանական օտարացմամբ և հասնում մինչև մասնագիտական պարտականությունների կատարման մեջ թերացման՝ ավարտվելով հոգեսոմատիկ խանգարումներով: Հուզական այրման հետևանքով առաջացած աշխատունակության կտրուկ նվազումը, մասնագիտական պարտականությունների կատարման թերացումն ու աշխատանքի որակի անկումը, անպատասխանատվությունը, սեփական անձից անբավարարվածությունը, հոգեբանական օտարումը, ինքնամփոփությունը և հոգեսոմատիկ խանգարումները կտրուկ նվազեցնում են կոնֆլիկտակայունության մակարդակը:

Մեր կողմից իրականացրած հետազոտության արդյունքների վերլուծությունը վկայում է, որ քննչական գործունեության մեջ առաջացող և զարգացող կոնֆլիկտները կարող են լինել թաքնված և ակնհայտ բնույթի: Թաքնված բնույթի մասին վկայող գործոններից են կոնֆլիկտների մասին տեղեկություն տալու խուսափումը,

աշխատակազմում կամ առհասարակ իրենց միջանձնային փոխհարաբերություններում կոնֆլիկտների առկայության բացառումը, ինչպես ընդհանուր աշխատակազմին, այնպես էլ աշխատակիցներից յուրաքանչյուրին բացառապես դրական գնահատականներ տալը, միջանձնային փոխհարաբերություններում նկատվող անբավարարվածությունը, ինչը շատ հաճախ դրսևորվում է մասնագիտական պարտականությունների կատարման թերացմամբ, բարձր արտահայտված անպատասխանատվության զգացումով, ինքնամփոփությամբ, հնազանդությամբ, ֆրուստրացիայի նկատմամբ զգայունակությամբ, հուզական դեֆիցիտով, հոգեբանական օտարացումով, կոնֆլիկտային իրավիճակներում խուսանավող մարտավարության գերակայությամբ: Ակնհայտ կոնֆլիկտներն իրենց հերթին ուղեկցվում են ընդգծված վարչահրամայականությամբ, անզիջում, խոսքային ագրեսիայով, անհանդուրժողականությամբ, սոմատիկ արձագանքներով: Երկու դեպքում էլ բացասական անդրադարձ է կատարվում միջանձնային փոխհարաբերությունների բնույթի և մասնագիտական գործունեության վրա:

Կոնֆլիկտի բոլոր տեսակների դեպքում էլ դրսևորվում են անձնային ու վարքագծային այնպիսի արձագանքներ, ինչպիսիք են՝ խոսքային ագրեսիան, լարվածությունը, տագնապայնությունը, հուզական անկայունությունը, ֆրուստրացիան, հոռետեսությունը, անզիջումությունը, վարչահրամայականությունը, բացասական դիրքորոշումները, սոմատիկ արձագանքները:

Կոնֆլիկտային իրադրությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քննչական գործունեության ոլորտում առաջացած կոնֆլիկտները միայն շատ քիչ դեպքերում են դրական ազդեցություն ունեցել թե՛ միջանձնային հարաբերությունների բնույթի, թե՛ աշխատանքի որակի վրա:

Այսպիսով, ամփոփելով քննչական գործունեության մեջ առաջացող ու զարգացող կոնֆլիկտների բնույթի ու պատճառականության վերլուծությունը՝ կարող ենք փաստել, որ ոլորտում առկա է մշտական հետազոտությունների և պարբերաբար շտկողական աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:

Գրականություն

1. Արզումանյան Ս. Ջ, Գրին Է. Ա., Իրավաբանական հոգեբանություն, «Զանգակ-97» հրատ., Երևան, - 2004, 432 էջ:
2. Ֆրեյդ Ջ., Հոգեվերլուծության ներածություն, «Զանգակ-97» հրատ., Երևան, - 2002, 472 էջ:

3. Анцулов А.Я. Системная концепция конфликтов // Мир психологии. 2005. - №2 (42). – с.24-34
4. Бодалев А.А. О человеке в экстремальной ситуации// Мир психологии. 2002, N4, с. 127-134.
5. Гуревич. П.С. Психоанализ. Популярная энциклопедия / Сост., науч. ред. П.С. Гуревич. - М.: Олимп; ООО «Фирма «Издательство АСТ», 1998. - 592 с.
6. Еникеев М.И., Черных Э.А. Психология следователя. М., 1988, 26 с.
7. Куницына В.Н., Казаров Н.В., Погошья В.М. Межличностное общение. Учебник для вузов. С-Пб, Питер, 2003, 544 с.
8. Лаврова К., Леви К., Чутко Г. Синдром эмоционального выгорания. Профилактика и управление, МЕД прессинформ, 2014, 256 с.
9. Маклаков А.Г. Личностный адаптационный потенциал: его мобилизация и прогнозирование в экстремальных условиях // Психологический журнал, 2001, т. 22, N1, с.16-24.
10. http://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/Konflikt/02.php
11. <http://works.tarefer.ru/70/100674/index.html>

РЕЗЮМЕ
ПРИЧИНЫ ВОЗНИКНОВЕНИЯ КОНФЛИКТОВ В ПРОЦЕССЕ
СЛЕДОВАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Р. Г. МКРТЧЯН

В статье анализируется проблема возникновения конфликтов в процессе деятельности следователя. Подробно рассматриваются причины конфликтов и их влияние на профессиональную деятельность, а также на личностные характеристики следователя. Автор представляет связь между результатами методик исследования, а также корреляционную связь между конфликтностью и эмоциональным выгоранием.

SUMMARY
THE CAUSES OF CONFLICTS IN THE PROCESS OF INTERROGATE
ACTIVITIES

R.G. MKRTCHYAN

In the current paper the causes of conflicts in the process of interrogate activities are analyzed. The details are given in terms of conflicts and how they influence on the professional and personal levels. The author showed the interconnection between the results of research techniques, also connection between conflicts and emotional burnout.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 159.9 : 340.6

ՄԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՀՈԳԵՎԻՃԱԿԻ
ԱՒՏՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Ա. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Երևան, Իսակովի 24
e-mail: ani.robertovna@gmail.com

Սույն հոդվածում ներկայացվում են դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում սեռական բռնության ենթարկված տուժողների հոգեվիճակի ռետրոսպեկտիվ ուսումնասիրման առանձնահատկությունները, ինչպես նաև փորձագիտական հետազոտություններում նոր մեթոդիկաների կիրառման անհրաժեշտությունը, որոնք կապահովեն փորձագիտական եզրակացությունների առավելագույն հուսալիությունը և հավաստիությունը և հնարավորություն կընձեռեն հնարավորինս ճշգրտորեն ուսումնասիրել փորձաքննվողի՝ հետազոտվող իրավիճակում ունեցած հոգեվիճակի դինամիկան:

Բանալի բառեր. Սեռական բռնություն, ռետրոսպեկտիվ հոգեախտորոշում, դիմադրություն ցույց տալու կարողություն, հոգեվիճակ:

Ներկայացված է խմբագրություն 13.11.2015 թ.

ՀՀ-ում դատահոգեբանական փորձաքննությունների իրականացման պրակտիկայում նկատվում է իրավապահ մարմինների կողմից սեռական բռնության շրջանակներում տուժողի նկատմամբ դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու դեպքերի քանակական ցուցանիշի աճ, որը կարող է պայմանավորված լինել այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ նման հանցագործությունների ավելի հաճախակի կատարումը, դրանց իրավաբանական ընթացք տալու տենդենցի աճը, ինչպես նաև այդպիսի հանցագործությունների շրջանակներում հոգեբանական մասնագիտական ուսումնասիրությունների կարևորության բարձրացումը:

Մեռական բռնությունը հանցագործություն է, որի դեպքում սեռական հարաբերությունը տեղի է ունենում մարդու անօգնական վիճակն օգտագործելով, նրա կամքին հակառակ՝ ուժով, սպառնալիքով կամ խաբեությամբ, ուղղված է մարդու սեռական ազատության կամ մանկահասակների անձեռնմխելիության ապահովման դեմ [1, էջ 225]:

Մեռական բռնության ենթարկված տուժողների դեպքում դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու հիմնական կարևորությունն այն է, որ առաջադրվող հարցադրումների միջոցով գիտականորեն հիմնավորված ճանապարհով հոգեբան-փորձագետի կողմից որոշվում են հետազոտվող իրավիճակում տուժողի դիմադրություն ցույց տալու կարողությունը, ինչը հիմք է հանդիսանում իրավապահ մարմինների կողմից «անօգնական վիճակ» որակելու համար:

Դիմադրություն ցույց տալու կարողության հետազոտության շրջանակներում առաջնային գործոններ են համարվում.

✓ տուժողի կողմից իր նկատմամբ կատարված գործողությունների հասկացումը (ըստ հասկացման մակարդակների՝ կատարված գործողությունների արտաքին կողմը, ներքին բովանդակությունը, բնույթն ու նշանակությունը, սոցիալական կողմը, բարոյաէթիկական կողմը, հասարակական նշանակությունը): Հասկացման տարբեր մակարդակների ուսումնասիրությունն իր յուրահատկություններն ունի անչափահասների և մտավոր զարգացման խնդիրներ կամ մանկավարժական բարձիթողություն ունեցող անձանց մոտ:

✓ տուժողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, որոնք կարող էին էական ազդեցություն ունենալ հետազոտվող իրավիճակում նրա վարքի վրա:

✓ հետազոտվող իրավիճակում տուժողի հոգեվիճակը:

Հարկ է նշել, որ վերոնշյալ կատեգորիաները ուսումնասիրության ենթակա են ինչպես առանձին-առանձին, այնպես էլ որպես փոխկապակցված ամբողջական համակարգ, քանի որ անմիջականորեն կամ ոչ ուղղակի կերպով փոխկապակցված են միմյանց հետ:

Անդրադառնալով դիմադրություն ցույց տալու ընդունակության հետազոտության շրջանակներում տուժողի հասկացման ունակությանը՝ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել փորձաքննվողի տարիքային առանձնահատկություններին և դրանցով պայմանավորված մտավոր զարգացման պայմաններում հասկացման որոշակի մակարդակների սահմանափակումներին: Հասկանալի է, որ 12 տարին չըրացած անձանց դատահոգեբանական փորձաքննության դեպքում հասկացման ունակության ուսումնասիրումը խնդրո առարկա է ոչ թե որպես դիմադրություն ցույց տալու կոմպոնենտ, այլ հետազոտվող

իրավիճակը լիարժեք ընկալելու և համապատասխան տեղեկություններ հաղորդելու կարողության գրավական, քանի որ 12 տարին լրացած չլինելու պարագայում ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով սեռական գործողության ենթարկված անչափահասը համարվում է «անօգնական վիճակում» գտնվող: Այսպես, օրինակ, նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի փորձաքննվողների տարիքային առանձնահատկություններից (տարիքային առանձնահատկություններով պայմանավորված անհասություն), կենսափորձից, բարդ իրադրությունների ամբողջական ըմբռնումների սահմանափակությունից, սեռերի հարաբերությունների մասին անտեղյակությունից՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի տուժողները կարող են ընկալել հետազոտվող իրավիճակի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների միայն արտաքին կողմը (օրինակ՝ տեղը, ժամանակը, իրավախախտողի անձը, կատարված գործողությունների հաջորդականությունը) և չեն կարող հասկանալ այդ իրադրության բովանդակությունը, իրենց նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը: Տարիքային առանձնահատկությունները, դրանցով պայմանավորված բարձր ներշնչվողականությունը, տպավորվողականությունը, կենսափորձը, սեռերի, սեռական հարաբերությունների մասին անտեղյակությունը, երկարատև հիշողության ոչ բավարար զարգացվածությունը սահմանափակում են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները նրանց կողմից լիարժեք ընկալելու և դրանց վերաբերյալ ճշմարիտ ցուցմունքներ տալու նրանց ունակությունը, եթե նույնիսկ նրանց մոտ բացահայտվում է ինտելեկտի ընդհանուր զարգացվածության տարիքին համապատասխան մակարդակ [3, էջ 43-48]: Նշված հանգամանքը կարող է էական ազդեցություն ունենալ նաև հետազոտվող իրավիճակում տուժողի մոտ դրսևորվող հոգեվիճակի առանձնահատկությունների վրա, քանի որ իրավիճակի բնույթն ու նշանակությունը չհասկանալու պայմաններում տուժողի մոտ հոգեվիճակի արտահայտված փոփոխություններ չեն դրսևորվում, իսկ դրսևորման դեպքում առավելապես պայմանավորված են լինում իրավիճակի անսովորությամբ կամ «վատ բան» (բառացիորեն այդպես են բնորոշում կատարվածը) լինելուն ակնատես կամ մասնակից լինելով:

Կարևոր է նաև հաշվի առնել, որ սեռական բռնության ենթարկված անձանց հասկացման կարողության տարբեր մակարդակների ուսումնասիրման դեպքում իմացական գործընթացների զարգացման հետազոտումից զատ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև սեռական ոլորտի մասին նրանց գիտելիքները, կենսափորձը և, իհարկե, անհատական հոգեբանական առանձնահատկությունները, որոնք էական

ազդեցություն են ունենում հետազոտվող իրավիճակում նրանց վարքի վրա: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ նախաքննության ընթացքում հարցաքննությունները և բացատրությունները մեծ ազդեցություն են ունենում սեռական ոլորտի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման հարցում և հարկավոր է առանձնահատուկ ուսումնասիրություն կատարել՝ հստակեցնելու համար, թե երբ է փորձաքննվողը ձեռք բերել այդ գիտելիքները:

Փորձագիտական պրակտիկան ցույց է տալիս, որ այնպիսի հոգեախտաբանական ֆենոմեններ, ինչպիսիք իրավական կարևորություն ունեցող իրավիճակի ողջ ընթացքում սեռական բռնության ենթարկված տուժողի հոգեվիճակի առանձնահատկություններն են, առավել կարևորություն են ստանում, եթե հանդիսանում են հետազոտվող իրավիճակում տուժողի՝ դիմադրություն ցույց տալու կարողության վրա էապես ազդող գործոններ: Հուզական վիճակը, որն առաջանում է հոգետրավմատիկ գործոնի ազդեցությամբ և ուղղորդվում է լարվածության, հուզական գրգռվածության, վախի, ցրվածության և ստեղծված դրությունից անելանելիության զգացումներով, կարող է էական ազդեցություն ունենալ հետազոտվող իրավիճակում անձի վարքի վրա՝ մինչև անգամ զրկելով նրան դիմադրություն ցույց տալու կարողությունից:

Հատկանշական է, որ դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում հոգեվիճակների ուսումնասիրումն ունի որոշակի յուրահատկություններ: Այսպես, դատահոգեբանական փորձաքննության շրջանակներում անցյալում (հնարավոր է նույնիսկ, ամիսներ, տարիներ առաջ) տեղի ունեցած իրավական նշանակություն ունեցող իրավիճակում փորձաքննվողի հոգեկան գործունեության վերաբերյալ բազմակողմանի վերլուծություն կատարվում է հետընթաց (ռետրոսպեկտիվ) կարգով: Բացի այդ, շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ հետազոտվող իրավիճակի ընթացքում հոգեվիճակները կարող են փոփոխվել, և դրանց անցումների ուսումնասիրումը ևս կարևորագույն խնդիր է, ընդ որում՝ փորձաքննվողն ինքը սեփական հոգեվիճակի ներկայացման ու նկարագրման ընթացքում կարող է դժվարանալ գնահատել այն, ինչի պատճառ կարող են հանդիսանալ և՛ ինքնահասկացման առանձնահատկությունները, և՛ սեփական հոգեվիճակը ներկայացնելու իմաստային և խոսքային նկարագրությունների առանձնահատկությունները [4, էջ 25]:

Նշված պայմաններում դատահոգեբանական փորձաքննությունների որակը և գիտական մակարդակը ապահովելու համար պահանջվում է հետազոտության մեթոդների և մեթոդիկաների գրագետ և ճշգրիտ ընտրություն և կիրառում: Դատահոգեբանական

փորձաքննության ընթացքում հիմնական մեթոդներ են հանդիսանում գործի նյութերի ուսումնասիրումը, համադրումը և վերլուծությունը, կլինիկական գրույցը, դիտումը, հարցարանները, թեստերը և այլն: Մեռական բռնության ենթարկված տուժողների նկատմամբ մեր կողմից իրականացված դատահոգեբանական փորձաքննությունների ընթացքում նրանց հոգեվիճակների առանձնահատկությունների ռետրոսպեկտիվ ուսումնասիրման և ախտորոշման նպատակով կիրառվում են Մ. Լյուշերի գունային ընտրությունների մեթոդիկայի միջոցով հոգեվիճակների միջնորդավորված ռետրոսպեկտիվ մեթոդիկան, ապրումների և զգացմունքների սուբյեկտիվ ինքնագնահատման սանդղակը, Ն. Կուրգանսկու՝ հոգեկան ակտիվացման, հետաքրքրության, հուզական տոնուսի, լարվածության և կոմֆորտի գնահատման սանդղակները [2, էջ 305 - 311]: Նշված մեթոդիկաների կիրառումը հնարավորություն է ընձեռում հետազոտվող իրավիճակում փորձաքննվողի ունեցած հոգեվիճակը ուսումնասիրել հնարավորինս տարբերակված, ինչը առանձնահատուկ կարևորություն ունի տուժողի դատահոգեբանական փորձաքննությունների դեպքում հետազոտվող իրավիճակում դիմադրություն ցույց տալու կարողության վրա հոգեվիճակի ազդեցությունն ուսումնասիրելու առումով:

Հարկ է նշել, որ դիմադրություն ցույց տալու կարողության որոշման շրջանակներում հոգեվիճակի ռետրոսպեկտիվ վերլուծության արդյունքում ստացված տվյալները համադրվում և ուսումնասիրվում են անձի ինտելեկտի ընդհանուր զարգացվածության մակարդակի, ինչպես նաև անհատական հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրող մեթոդիկաների արդյունքների հետ, որոնք շեշտադրում են հետազոտման ընթացքում որոշակի առանձնահատկությունների ուսումնասիրման և համեմատական վերլուծության կարևորությունը: Այսպես, օրինակ, դատահոգեբանական փորձաքննության շրջանակներում սեռական բռնության ենթարկված 50 չափահաս, ինտելեկտի ընդհանուր զարգացվածության միջին մակարդակ ունեցող տուժողներից 37-ի մոտ «Սպիլբերգերի և Խանինի տազնապայնության ինքնագնահատման սանդղակ» մեթոդիկայի արդյունքների համաձայն բացահայտվել է անձնային և իրավիճակային տազնապայնության բարձր մակարդակ, իսկ Մ. Լյուշերի գունային ընտրությունների թեստի միջոցով հոգեկան վիճակների միջնորդավորված ռետրոսպեկտիվ ախտորոշման մեթոդիկայի, սուբյեկտիվ ապրումների և զգացմունքների ինքնագնահատման մեթոդիկայի և Ն. Կուրգանսկու «Հոգեվիճակների ինքնագնահատման սանդղակ» մեթոդիկայի արդյունքների համաձայն և՛ սովորական պայմաններում, և՛ հետազոտվող իրավիճակում՝ լարված հոգեվիճակի բարձր ցուցանիշ, ինչը տեղիք է տալիս հետազոտվող

իրավիճակում անձի ունեցած լարվածությունը դիտարկել ոչ միայն որպես կոնկրետ իրավիճակում տուժողի հոգեկան վիճակի դրսևորում, որն առավելապես պայմանավորված է տվյալ իրավիճակի առանձնահատկություններով, այլև որպես անձնային առանձնահատկությունների արտահայտվածություն: Նման դեպքերում առավել կարևոր է դառնում հետազոտվող իրավիճակում տուժողի դիմադրություն ցույց տալու կարողությունը սահմանափակող այլ անձնային առանձնահատկությունների ուսումնասիրումը, որոնք իրենց հերթին անմիջական ազդեցություն կարող են ունենալ հոգեվիճակի դինամիկայի վրա:

Մեռական բնության ենթարկված տուժողի հոգեվիճակի և այլ առանձնահատկությունների վերոնշյալ փոխկապակցվածության պայմաններում մշտապես արդիական է ինչպես անձի համակարգային և բազմակողմանի ուսումնասիրման և գնահատման նոր ուղղությունների և ստրատեգիաների ձևավորումը, այնպես էլ այդ գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ նոր մեթոդիկաների մշակումը և կիրառումը, որոնք թույլ կտան ապահովել փորձագիտական եզրակացությունների որակի առավել բարձր մակարդակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. В.В. Нагаев, Основы судебно-психологической экспертизы: Учеб. пособие для вузов.- 2-е изд., перераб. и доп.- М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2003. – 431 с.
2. В.Ф. Енгальчев, С.С. Шипшин, Психодиагностические методы исследования в судебно-психологической экспертизе: учебное пособие для студентов факультетов психологии высших учебных заведений, издание 2-е, исправленное и дополненное.-Калуга: КГУ им. К.Э. Циолковского, 2013.- 390 с.
3. О.Д. Ситковская, Л.П. Коньшева, Психологическая экспертиза несовершеннолетних в уголовном процессе. Научно-методическое пособие.- М., 2001.- 72 с.
4. С.С. Шипшин, Ретроспективная диагностика психического состояния в судебно-психологической экспертизе: Методическое пособие.- Ростов н/Д., 2000.- 51 с.,

РЕЗЮМЕ
ОСОБЕННОСТИ РЕТРОСПЕКТИВНОЙ ДИАГНОСТИКИ
ПСИХИЧЕСКИХ СОСТОЯНИЙ ПОТЕРПЕВШИХ ПО ФАКТАМ
СЕКСУАЛЬНОГО НАСИЛИЯ В СПЭ

A. P. ВАРДАНЯН

В данной статье рассматриваются особенности ретроспективной диагностики психических состояний потерпевших по фактам сексуального насилия при проведении судебно-психологических экспертиз, рассматривается необходимость применения новых методик при экспертных исследованиях, которые максимально повышают надежность и достоверность экспертных выводов и дают возможность наиболее досконально изучить динамику психических состояний подэкспертного в исследуемой ситуации.

SUMMARY
FEATURES OF RETROSPECTIVE DIAGNOSIS OF MENTAL STATES OF
VICTIMS OF SEXUAL VIOLENCE DURING
FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE (FPE)

A.R. VARDANYAN

In this article we discuss the features of retrospective diagnosis of mental states of the victims on the facts of sexual violence during forensic psychological expertise, as well as the need for application of new techniques in the expert study to maximize the reliability and accuracy of the expert's conclusions and allow more thoroughly examine the dynamics of the mental states of the subject examined in the expertise situation.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 355.58 : 316.6 : 070

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՄԲՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Դ. Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

**Խ.Արթուրյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
*markosyandiana@gmail.com***

Հոդվածում հեղինակն առաջարկում է ապագա լրագրողների մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության մեջ հատուկ և կամընտրական դասընթացների առանձնացում՝ արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ապահովման նպատակով:

Դասընթացների հիմնական նպատակը կլինի ապագա լրագրողներին սոցիալ-հոգեբանական գիտելիքների հաղորդումը, արտակարգ իրավիճակներում աշխատելիս անհրաժեշտ ինքնակարգավորման, ինքնակառավարման, ռիսկերի նվազեցման հմտությունների ձևավորումը:

Բանալի բառեր. *լրագրող, կրթական ծրագիր, սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն:*

Ներկայացված է խմբագրություն 14.12.2015 թ.

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ապահովումը ենթադրում է առաջին հերթին՝ մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության մեջ հատուկ և կամընտրական դասընթացների առանձնացում, որոնց հիմնական նպատակը կլինի ապագա լրագրողներին սոցիալ - հոգեբանական գիտելիքների հաղորդումը, արտակարգ իրավիճակներում աշխատելիս անհրաժեշտ ինքնակարգավորման, ինքնակառավարման, ռիսկերի նվազեցման հմտությունների ձևավորումը:

Արտակարգ իրավիճակներում, բնածին և արհեստածին աղետների գոտում աշխատող, հանրահավաքներ լուսաբանող լրագրողները պետք է քաջատեղյակ լինեն նաև ամբոխի՝ որպես սոցիալական խմբի մասին, հաշվի առնեն նրա առանձնահատկությունները:

Սոցիալական հոգեբանության մեջ ընդունված է բնութագրել ամբոխը որպես յուրահատուկ կենսաբանական օրգանիզմ, որը գործում է իրեն բնորոշ օրինաչափություններով և միշտ չէ, որ դրանք համընկնում են այն կազմող անձանց, անհատների շահերին: Ավելին, այդ օրինաչափություններն ու դրսևորումները շատ հաճախ վտանգում են նաև անձի կյանքը:

Ամբոխին բնորոշ հոգեբանական հատկություններն են՝

- գիտակցական գործոնի անկում ու հուզականի աճ, խուճապի արագընթաց աճ,
- ներշնչվողականության կտրուկ աճ և ինքնուրույն մտածելու ունակության նվազում,
- բազմությունն ընդունակ է ինչպես սարսափելի դաժանության, այնպես էլ ինքնագոհության, այդ թվում նաև՝ անմիջապես առաջնորդի նկատմամբ,
- բազմությունը, հասնելով որևէ բանի, շատ արագ հոգնում է: Խմբերի բաժանված մարդիկ արագ ուշքի են գալիս և փոխում են և՛ վարքագիծը, և՛ տեղի ունեցածի գնահատականը,
- փողոցային (հատկապես՝ սոցիալ-քաղաքական) ամբոխի պայմաններում, անչափ մեծ տեղ են զբաղեցնում այնպիսի գործողություններ, երևույթներ, ինպիսիք են՝ ցուցափեղկին նետված առաջին քարն ու թափված առաջին արյունը: Այսպիսի քայլերի արդյունքում, ամբոխը հանդես է գալիս վտանգի արմատապես այլ աստիճանում, որտեղ բազմության յուրաքանչյուր անդամ, հավաքական անպատասխանատվության ներքո, վերածվում է պոտենցիալ իրավախախտի: Այստեղ դրսևորվում է պատասխանատվության «դիֆուզիա», հոգեբանական վարակ: Անձը կորցնում է կարծես իր դեմքը, գործում է ինչպես մյուսները: Հարկավոր է անմիջապես լքել նմանատիպ բազմությունը, չփորձել նկարահանումներ կատարել, հարցազրույցներ վերցնել, մեջքով շրջվել դեպի ամբոխը,
- ամբոխին անհրաժեշտ է առաջնորդ կամ ատելության առարկա, որոնց նա հաճույքով կհնազանդվի կամ կահաբեկի:

Շատ հաճախ ամբոխն ավելի վտանգավոր բնույթ է ստանում, քան որոշ բնական աղետներ, վթարներ: Հանրահավաքների ժամանակ մարդկանց մեծ բազմությունը, որպես կանոն, կապված է լինում

սոցիալապես նշանակալից իրադարձության հետ, նրանք ունեն ընդհանուր նպատակ, նմանատիպ հույզեր: Հանրահավաքների լուսաբանումը լրագրողների, ՁԼՄ-ների համար կարևոր են, քանի որ դրանք երկրի, պետության, ժողովրդի հասարակական, քաղաքական կյանքում կարևոր իրադարձությունների, խնդիրների շուրջ են կազմակերպվում: Հանրահավաքները լուսաբանող լրագրողները պետք է ոչ միայն իմանան ամբոխի բնութագիրը, այլ նաև ամբոխի գոյության պայմաններում հնարավոր սոցիալ-հոգեբանական երևույթները, օրինակ՝ խուճապը, այդ իրավիճակում աշխատանքը շարունակելու, մասնագիտական պարտականությունները կատարելու, միևնույն ժամանակ՝ իր անձի անվտանգությունը ապահովելու կանոնները, վարքի ձևերը: Ամբոխի խուճապահար փախուստը նմանվում է տարերային աղետի, ավերում է իր ճանապարհին ամեն ինչ, ոտնակոխ է անում: Ուստի լրագրողներին անհրաժեշտ է գնահատել և ընտրել՝ ռեպորտաժը, թե կյանքը: Իհարկե, դա փիլիսոփայական հարցադրում չէ, այլ իրական մտավախություն, քանի որ ռեպորտաժը վարելու ժամանակ լրագրողը կենտրոնանում է հաղորդման նյութի վրա և կարող է չընկալել մոտեցող վտանգը, հայտնվել ամբոխի կենտրոնում: Մակայն գիտակցելով այդ վտանգը՝ միևնույնն է, պետք է կատարի մասնագիտական աշխատանքը, պարտականությունները:

Խուճապի դեպքում ամբոխին բնորոշ հատկանիշներն են.

- Խուճապի դեպքում փախուստը մշտապես նպատակ ունի հեռացնելու անձին իրական վտանգից, ապահովելու նրա անվտանգությունը:
- Խուճապի պայմաններում փախուստի ուղղությունը պատահական չի լինում, մարդիկ հակված են ընտրելու կամ արդեն ծանոթ ճանապարհ, կամ այն ուղղությունը, որով փախչում են մյուսները): Այստեղ ևս գործում է հոգեբանական վարակի երևույթը:
- Խուճապի դեմ դրսևորվող փախուստը վտանգում է յուրաքանչյուր անհատին, քանի որ միմյանց համար նրանք վերածվում են վտանգի աղբյուրի:
- Խուճապի մատնված մարդը, միշտ համոզված է, որ իրադրությունը չափազանց վտանգավոր է, կարող է իրեն փրկելու, պաշտպանելու համար կատարել ամենատարբեր գործողություններ, հանցագործություններ, նույնիսկ վնասել այլ մարդկանց: Դա կարող է տևել այնքան, մինչև որ անձը համոզվում է, որ վտանգավոր իրավիճակից դուրս է եկել:
- Խուճապի դեպքում մարդը դժվարությամբ է կողմնորոշվում, թեև նրա գիտակցական վերահսկողությունը թույլ է, թեև նրա

գործողություններում որոշակի տրամաբանություն լինում է: Անձն այս դեպքում չի փնտրում այլընտրանքային լուծումներ, չի կանխատեսում իր որոշման, գործողությունների հնարավոր հետևանքները, իրադրությունը չափազանց վտանգավոր գնահատելով՝ թեև ոչ ադեկվատ, կարող է դիմել չարդարացված ռիսկի՝ ավելի վտանգելով իրեն [1]:

Այժմ ներկայացնենք խորհուրդներ ամբոխի մեջ աշխատող լրագրողներին:

- Նախ՝ կարևոր է լուսաբանում կատարելիս նախապես ուսումնասիրել իրավիճակը, տարածքը, կանխատեսել հնարավոր զարգացումները և որոշել, թե որտեղից է ճիշտ, անվտանգ հաղորդում վարելը, նկարահանումներ կատարելը: Կարևոր է դա անել նախքան խմբային հուզական վիճակի լարումը, թեժացումը: Իսկ այդ դեպքում ընդհանրապես չպետք է փորձել մտնել թեժացած ամբոխի մեջ, պետք է մնալ եզրերում,
- նպատակահարմար է տեսանկարահանել ոչ թե ամբոխի ներսում, այլ նրանից դուրս, որևէ բարձունքի վրայից, հետևել, որ չլինի մարտկոցների անտեղի վատնում,
- նույնիսկ ամբոխի կազմում հայտնվելու դեպքում չպետք է կորցնել վերահսկողությունը, պետք է նայել չորս կողմը, գնահատել իրավիճակը, ընտրել ամբոխից դուրս գալու ամենաանվտանգ ուղին,
- նշված կանոններին հետևելը ավելի է դժվարանում հեռուստալրագրողների, տեսախցիկներով տեսանկարահանող օպերատորների աշխատանքի դեպքում: Այս դեպքում պետք է հաշվի առնել ոչ միայն նախատեսվող նյութի անհրաժեշտությունն ու կարևորությունը, այլ նաև սեփական անձի անվտանգությունը: Նախապես պետք է պլանավորել ոչ միայն փախուստի ուղիները, այլև տեղ նախատեսել, ուր հնարավոր կլինի տեղափոխել նաև տեսախցիկը, եռոտանի ձողերը, այսինքն՝ անվնաս դուրս բերել ռեպորտաժի պատրաստման համար օգտագործվող տեխնիկան,
- խուճապի առաջացման ընթացքում պետք է պահպանել հանգստությունն ու իրավիճակը սթափ գնահատելու ունակությունը, չենթարկվել հոգեբանական վարակին, մեխանիկորեն չկրկնել շրջապատող մարդկանց վտանգավոր արարքները,
- փորձել իրավիճակին տալ իմացական գնահատական, հույզերն ու զգացմունքները չդարձնել շարժիչ ուժ, գիտակցել, որ ամբոխում ընդգրկված մարդկանց հիմնական մասն առաջնորդվում է հույզերով, ինչը հանգեցրել է այդ իրավիճակին,

- արտակարգ իրավիճակներում, ռազմական գործողությունների շրջանում աշխատող լրագրողները պետք է իմանան հոգեբանական վարակի, ամբոխի կազմում հույզերի դրսևորման մեխանիզմները, որպեսզի առանց քննադատության չտրվի հնչող կոչերին, չմիանա ամբոխի գործողություններին, կարողանա վերահսկել իրեն,
- խորհուրդ է տրվում նաև չհակառակվել, հատկապես խոսքային արտահայտությամբ չներկայացնել սեփական կարծիքը, մտորումները, քանի որ ամբոխի գործողությունները կարող են ուղղվել հենց իրենց: Խորհուրդ է տրվում նաև չհակառակվել, չվիճել,
- կարևոր է ամբոխի մեջ որպես լրագրող տարբերվելը, ինչ-որ ձևով ընդգծել, որ լրագրող ես: Դա չի նշանակում միայն ունենալ բեջ, որտեղ գրված կլինի այդ մասին, այլ նաև հատուկ առանձին հագուստ, ինչը գունային առումով անմիջապես աչքի է ընկնում: Ինչպես յուրաքանչյուր մարդ ամբոխի կազմում, այնպես էլ լրագրողը երաշխավորված չէ բնությունների, ֆիզիկական ներգործության ենթարկվելու հավանականությունից: Օրինակ՝ կարող են դառնալ ինչպես ամբոխի կողմից կիրառվող վայրագությունների գոհ, այնպես էլ ոստիկանության գործողությունների: Վերոնշյալ հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է գոնե երևացող մի տեղ փակցնել PRESS բառը,
- լրագրողը կարող է դառնալ ոչ միայն ամբոխի, այլ հենց ոստիկանության գործողությունների գոհ, եթե սխալ ընտրի իր տեղը, դիրքը ամբոխի մեջ, եթե չտարբերվի նրանից: Պետք է նախապես ուսումնասիրել նաև ոստիկանության, հատուկ ստորաբաժանումների գործողությունների հնարավոր ուղղությունները, կանխատեսել նրանց մարտավարությունը,
- լրագրողները չպետք է շփոթեն իրենց պարտականությունները, մասնագիտական դերը, կարգավիճակը: Պետք է գիտակցել, որ դա պրոֆեսիոնալ աշխատանք է, այլ ոչ թե որպես քաղաքացի մասնակցություն հանրահավաքին,
- լրագրողները նման իրավիճակներում պետք է օգտագործեն օբյեկտիվ ինքնադիտման մեթոդը, այսինքն՝ դիտեն իրենց վարքը, ինչպես դա կանեին ուրիշները, կարծես կողքից գնահատեն այն, վերլուծեն. արդյոք հուզականությունը չէ՞ այդ վարքագծի պատճառը: Առավել ևս, չպետք է թույլ տալ, որ հույզերը բերեն հիստերիայի,
- ամեն կերպ պետք է փորձել չտրվել հույզերին, տիրապետել մարմնին, մտքերին, փորձել շնչառական վարժություններով հանգստանալ, շեղել ուշադրությունը ամբոխից, արտաբերվող

կոչերից: Փորձեք գրուցել ինքներդ ձեզ հետ, հարցեր տվեք ձեզ, սառը ջրով երեսը թրջեք,

- կարելի է դերային խաղերի մեթոդով փորձել դուրս գալ ամբոխից, օրինակ, ձևացնել, թե ուշագնաց եք լինում, սրտխառնոց, ճնշման տատանում կամ բարձրացում ունեք,
- կարևոր է նաև ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցների անվտանգ դուրսբերումը, իսկ եթե դա չի ստացվում, բնականաբար, կարևորը սեփական անձի անվտանգությունն է,
- եթե ձեզ հետ կան հարագատ մարդիկ, առավել ևս պետք է պահպանել հավասարակշռությունը, տիրապետել սեփական գիտակցությանը՝ օգնելու նաև նրանց, դուրս բերելու նրանց ամբոխի միջից, թույլ չտալու, որ նրանք ևս տրվեն հոգեբանական վարակին, ընկնեն ամբոխի ազդեցության տակ,
- կարևոր և օգտակար կլինի ամբոխի մեջ նկատել մարդկանց, ովքեր ձեզ նման են մտածում, դեռ չեն տրվել հիստերիային, տագնապային տրամադրությանը և կարող են սթափվել ձեր կոչից: Հակառակ դեպքում գիտակցական վերահսկողություն ունեցող այդ մարդիկ ևս կարող են տրվել ամբոխի հուզականության ալիքին, կորցնել իրենց վարքի վերահսկողությունը,
- պետք է գիտակցել, որ բնական և տեխնաձին աղետները երբեմն ավելի քիչ զոհերի, տուժածների պատճառ են դառնում, քան դրանց հետևանքով առաջացած խուճապը, հուզական հակազդումների արդյունքում դրսևորվող վարքագիծը, խառնաշփոթը, միմյանց հրելը, վնասելը, խելակորույս այս կամ այն կողմ վազելը, փախչելը: Նման իրավիճակներից խուսափելու համար լրագրողներին խորհուրդ է տրվում հետևել մի շարք կանոնների.
 - Շատ կարևոր է նույնիսկ մեծ հետաքրքրասիրության դեպքում չկանգնել, չմոտենալ վտանգավոր իրադարձությունների տարբեր կետերի,
 - անհրաժեշտ է խուսափել խմբերով հավաքվելուց, չկուտակվել մի վայրում,
 - անհրաժեշտ է անմիջապես դուրս գալ ամբոխի միջից, գտնել անվտանգ մի տեղ, թեև չպետք է հակառակ հոսանքին փախչել, հնարավոր է հանդիպել ազդեցիվ դրսևորումների, բռնությունների, առավել ևս, չի կարելի հակառակվել շարժմանը,
 - խորհուրդ չի տրվում նաև ձեռք տալ, վերցնել անձանոթ, կասկածելի առարկաներ,
 - խորհուրդ է տրվում ընտրողական վարք դրսևորել՝ կախված ամբոխի ձևից, նրանում ընդգրկված անձանց թվաքանակից: Պետք է հաշվի առնել, որ դեկորատիվ ճաղավանդակները, ջրատար

խողովակները, ցուցանակները, առանձին կանգնած լուսամփոփների սյուները, կրպակները, ծառերը, վանդակապատերը կարող են կոնկրետ իրավիճակում մահացու վտանգավոր լինել,

- նման իրավիճակներում աշխատող լրագրողներին անհրաժեշտ են այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ դիտողունակությունը, զարգացած ուշադրությունը, ընտրողականությունը, ինչը կօգնի նրանց տեսնել, նկատել շրջապատում ամեն ինչ, գնահատել հնարավոր վտանգները: Օրինակ՝ չի կարելի մոտենալ այն մարդկանց, ովքեր ձեռքներին ունեն մեծ պայուսակներ, ուսապարկեր, կասկածելիորեն այս ու այն կողմ են գնում,
- լրագրողներին անհրաժեշտ է նաև հետևել իրենց արտաքին ֆիզիկական տեսքին, կառուցվածքին, չպետք է հենվեն ոտքերի մատների վրա, չպետք է ձգվեն, կանգնած կամ քայլելիս ձեռքերը գրպանները դնեն,
- պետք է հնարավորություն ստեղծել ամբոխից դուրս գալու, փախչելու համար: Այստեղ «հնարավորություն» ասելով հասկանում ենք, որ անհրաժեշտ է ազատվել մեծ իրերից, ուսապարկերից, կանանց՝ բարձր կրունկներով կոշիկներից, շարֆերից, երկար ականջօղերից, վզնոցներից: Անհրաժեշտ է նաև հանել տեսախցիկների կամ լուսանկարչական սարքերի վրա ամրացված գոտիները կամ դրանք փաթաթել ձեռքին, մարմնի վրա,
- խորհուրդ է տրվում ոչ մի դեպքում չկքանստել, փորձել ընկած ինչ-որ բան գետնից վերցնել, այլապես հրմշտոցի արոյունքում հնարավոր է վայր ընկնել, վնասվել,
- ընկնելու դեպքում չպետք է հենվել ձեռքերի վրա, հեռացնել մարմնից, որպեսզի չվնասեն, չկոտրեն, անմիջապես պետք է ոտքի կանգնել: Չստացվելու դեպքում պետք է պաշտպանել գլուխը նախաբազուկներով, իսկ ձեռքերի ափերով փակել ծոծրակը, կծկվել, փորձել հնարավորինս քիչ հարվածներ ընդունել [2]:

Բնական և տեխնածին արտակարգ իրավիճակներ կարող են առաջանալ հանկարծակի, անսպասելի, այնպիսի վայրում, որտեղ ընդհանրապես մարդն այդ մասին չի մտածում՝ հանդիսությունների, հանգստի, աշխատանքի վայրում: Իսկ լրագրողի համար այս բոլոր վայրերը, պայմանները կարող են դառնալ աշխատանքի վայր, նույնիսկ արտակարգ պատահարի, իրավիճակի պայմանները: Նման դեպքերում լինում են պայթյուններ, փլուզումներ, ավերածություններ, ուժեղ ձայներ, անձի կամ խմբի կողմից ագրեսիվ գործողություններ, բռնություններ, կրակոցներ, վտանգ ենթադրող կոչեր և այլն: Նման իրավիճակներում

անձն արգելակվում է, չի կողմնորոշվում ինչ անել, սկսում է այս կամ այն կողմ փախչել, հատկապես խմբի հետևից՝ հրելով, նույնիսկ վնասելով դիմացիներին: Այս իրավիճակում սեփական վարքի գիտակցական վերահսկողության մակարդակը թուլանում է:

Լրագրողներին խորհուրդ է տրվում.

- ցանկացած փակ տարածք մտնելիս դիտարկել, թե ինչպես կարելի է այդտեղից դուրս գալ, նույնիսկ պետք է նախատեսել մի քանի տարբերակ: Հոգեբանական այսպիսի օրինաչափությունն կա. վտանգի դեպքում մարդկանց մեծ մասը փորձում է փախչել ներս եկած ճանապարհով: Այս պարագայում խառնաշփոթ, քաշքշուկ է ստեղծվում, մարդիկ հրմշտոցով գնում են դեպի ընդհանուր ելքը, իսկ վթարային ելքերը բավականին ազատ են մնում: Այդ ելքերն անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել,
- հոգեբանական վարակի մեխանիզմը գործում է հատկապես փակ, խիտ տարածություններում առաջացող խուճապի ժամանակ: Դրա արդյունքում էլ ելքին մոտենալիս մարդկանց խմբում հրմշտոցն ավելի ազդեցիկ է դառնում, ճնշումը մեծանում է: Անհրաժեշտ է ելքի մոտ ավելի ուշադիր լինել,
- կարևոր է դիտողունակության որակի առկայությունը, որպեսզի մինչև հրմշտոցի ու ամբոխի խուճապահար հոսքը արդեն իսկ լքել տարածքը,
- այստեղ տեղին է տեխնիկական մանրուք թվացող մեկ խորհուրդն ա. ամբոխի առջևից փախչելու դեպքում անհրաժեշտ է բացել դռան երկրորդ փեղկը, քանի որ հրմշտոցի դեպքում դա կարող է այլևս հնարավոր չլինել,
- միայն հրդեհի դեպքում է, որ անհրաժեշտ է արագորեն դուրս գալ տարածքից, իսկ մնացած այլ դեպքերում կարելի է սպասել մինչև մարդկանց հոծ բազմությունը դուրս գա, քանի որ դեպքերի մեծ մասում իրական վտանգը ավելի քիչ հավանական է, քան խուճապը,
- պետք է շատ զգույշ լինել նաև պատերի, դռների, պատուհանների վրա հնարավոր մեխերից, ամրակներից, կոտրված ապակիներից, բաց վարդակներից, հոսանքալարերից, որոնք կարող են վնասել մարդուն հրմշտոցի ժամանակ,
- խորհուրդ է տրվում քայլել մարդկանց ուսերի վրա կանգնելով, քանի որ այդտեղ ամենաանվտանգն է: Ճիշտ է, զուտ մարդասիրության, բարոյականության տեսանկյունից դա վատ է, բայց լրագրողի անվտանգության, նրա փրկվելու տեսանկյունից դա արդարացի է: Նշված տարբերակը ենթադրում է ամբոխի մի մասից բարձրանալ թե՛ կանգնած, թե՛ սողալով անցնել

մարդկանց շարքերով, հասնել էլքին: Նկարագրված երևույթը արդյունավետ կարող է գործել երեխաների պարագայում: Նշենք նաև, որ երեխաներին պետք է թույլ տալ մասնակցել այդ գործարքներին: Ցածրահասակ լինելու պատճառով երեխային ամբոխի կազմում ընդգրկելը խիստ վտանգավոր է, քանի որ նա կարող է տրորվել ամբոխի կազմում, ինչը ևս ապացուցում է, որ երեխային անհրաժեշտ է պահել գլխավերևում: Պետք է խուսափել պատերից, ապակիներից, միջնապատերից, ցանցերից և այլն: Անգլիայի Շեֆֆիլդ մարզադաշտի ողբերգությունը ցույց տվեց, որ զոհվածների մեծ մասին ամբոխը ճզմել էր արգելակային ցանցերից [3]:

Այսպիսով, արտակարգ իրավիճակներում, մասնավորապես՝ ամբոխի մեջ աշխատող լրագրողների անվտանգության կարևոր երաշխիք է սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը, ինչը ենթադրում է առաջին հերթին՝ սոցիալ-հոգեբանական գիտելիքների առկայություն՝ ամբոխի, ամբոխի հիմնական հատկանիշների, ամբոխի մեջ վարքի անվտանգ միջոցների պահպանման մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նալչաջյան Ա. Սոցիալական հոգեբանություն, Եր., Զանգակ-97, 2004.- 432 էջ.
2. А.Князев. Журналистика конфликта. /Пособие/ Семинар повышения квалификации журналистов, работающих по освещению региональных и локальных конфликтов, Бишкек, 2001 г.
3. <http://evartist.narod.ru/text3/10.htm>

РЕЗЮМЕ
СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ ГОТОВНОСТЬ РАБОТАЮЩИХ В
СОСТАВЕ ТОЛПЫ ЖУРНАЛИСТОВ КАК ГАРАНТИЯ ИХ
БЕЗОПАСНОСТИ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ
Д.Г. МАРКОСЯН

В статье автор предлагает ввести в содержание профессиональных образовательных программ для отделения журналистики специальные и элективные курсы с целью обеспечения социально-психологической готовности журналистов, работающих в чрезвычайных ситуациях. Основной целью подобных курсов является передача будущим журналистам социально-психологических знаний, формирование необходимых навыков и умений саморегуляции, самообладания и снижения рисков при работе в чрезвычайных ситуациях.

SUMMARY
SOCIAL-PSYCHOLOGICAL PREPAREDNESS OF JOURNALISTS AS A
PLEDGE OF SELF-SECURITY WHEN WORKING IN CROWDS IN
EMERGENCY SITUATIONS
D. H. MARKOSYAN

In the article the author proposes separation of special and selective courses in professional educational programmes for future journalists to ensure the social-psychological preparedness of journalists working in emergency situations.

The general aim of the courses shall be the teaching of social-psychological knowledge to future journalists, development of skills of self-control, self-management, and risks' mitigation.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 373.3 : 159.922.7

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԵՐԻ ԱՐԺԵՔՍՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ
Ա. Լ. ՏՈՆՈՅԱՆ

Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: alla.ton@rambler.ru

Աշխատանքում ներկայացված են կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները՝ փորձարարական աշխատանքների արդյունքերի վերլուծության հիման վրա:

Բանալի բառեր. *արժեք, արժեքային կողմնորոշում, արժեքային ներուժ, մանկավարժական փորձարարություն, ձևավորվածություն, ուսուցման գործընթաց, ուսուցչի դաստիարակչական ներգործություն:*

Ներկայացված է խմբագրություն 12.10.2015 թ.

Արժեքների էության բնութագրումը և դասակարգումը այսօր դարձել է փիլիսոփաների, սոցիոլոգների, մանկավարժների, հոգեբանների քննարկման առարկա:

Ինչպես նշում են Վ. Վ. Անիսիմովը, Օ. Գ. Գրոխովսկայան, Ն. Դ. Նիկանդրովը. «Երրորդ հազարամյակի սկզբում գնալով ավելի ակնառու է դառնում մարդու մարդկային ընդհանրությունների և սոցիումների բարոյական և հոգևոր արժեքների անընդմեջ արժեզրկումը: Դրա պատճառը համակարգային ճգնաժամն է, որն ընդգրկել է հասարակության հոգևոր կյանքի կարևորագույն ոլտները՝ մշակույթը, գիտությունը, կրոնը և կրթությունը: Հենց կրթությունը կարող է վերադարձնել մարդկանց կորցրած հավատը, կենցաղի բարձրագույն հոգևոր արժեքները և մարդկային կյանքի իմաստը» [3, էջ 40]:

Կրթության վերաբերյալ ժամանակակից մեթոդաբանական, արժեքանական մոդելները. «Թույլ են տալիս կրթությունը դիտարկել որպես սոցիալ-մանկավարժական երևույթ, որն իր արտացոլումն է գտնում նրա հիմնական գաղափարներում՝ մարդասիրական արժեքների

բազմակողմանիության և հիմնարարության, նպատակների և միջոցների միասնության, ազատության գաղափարների գիտակցում» [1, էջ 54]:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների լիարժեք ձեռքբերմամբ, այլև արժեքային համակարգի ձևավորվածությամբ:

Ինչպես նշում են Վ. Ա. Մլաստենինը և Գ. Ի. Չիժակովան. «Արժեքները համարվում են մարդու գործունեության և վարքի կողմնորոշիչը միայն այն դեպքում, երբ ամբողջականորեն ձևավորված է նրանց արժեքային կողմնորոշիչների գիտակցումը, հարաբերությունները և դիրքորոշումները, որոնք արտացոլում են անձի գործունեության և վարքի մեջ արժեքների ուղղվածությունը, իսկ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում մարդը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և հարաբերություններով» [4, էջ 119]:

Մայրենի և օտար լեզուների, մաթեմատիկայի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումն իրականանում է ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում՝ ըստ ուսումնական ծրագրերով նախատեսված թեմատիկ նյութերի, ընթերցանության համար երաշխավորվող գրականության, գրավոր աշխատանքների համար առաջադրվող բազմապիսի տեքստերի, վարժությունների, առաջադրանքների ու խնդիրների:

Այդ նյութերում արժեքներն առկա են ուղղակի, անուղղակի, միջնորդավորված, այլաբանորեն, և կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների գործընթացում էապես կարևորվում է ուսուցչի դաստիարակչական ներգործությունը:

Ինչպես նշում է Հ. Միքայելյանը. «Դպրոցականի համար ուրախության և դառնության ավելի մեծ աղբյուր, քան հաղթահարված կամ չհաղթահարված նյութը՝ դասը, խնդիրը, վարժությունը, չեն կարող լինել: Թեորեմում արժարժված հատկության, նրա ապացուցման ընկալումը, դժվար խնդրի կամ վարժության լուծումը կարող են բերկրանք պատճառել աշակերտին: Իսկ չլուծված յուրաքանչյուր խնդիր՝ իր հետ դառնության, վշտի ինչ-որ բաժին է բերում: Եվ այստեղ իրավիճակը սրվում է, որովհետև աշակերտի հաջողությունը կամ անհաջողությունը ի ցույց է տրվում ողջ դասարանին, ինչը մեծացնում է ուրախության կամ դառնության չափաբաժինը» [2, էջ 70]:

Ելնելով այս մեթոդաբանական մոտեցումներից՝ մեր փորձարարական հետազոտության նպատակն է՝ ստուգել ուսումնական թեմատիկ նյութի արժեկողմնորոշիչ ազդեցությունը կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետության վրա, ինչպես նաև դասավանդողի

արժեուղորդ գործառույթի բովանդակությունը: Այդ նպատակով առաջադրվել են գիտափորձի խնդիրները՝ ստուգել առանձնացված տեքստերի ներգործության արդյունավետությունը կրտսեր դպրոցականի արժեուղորդի վրա, բացահայտել արժեկողմնորոշիչ առաջադրանքների ազդեցությունը և մեթոդապես հիմնավորել մշակված վարժությունների ու առաջադրանքների համալիրը:

Գիտափորձն իրականացել է Երևանի թիվ 51, 65, 119, 145 դպրոցներում: Գիտափորձին մասնակցել է մոտ 400 աշակերտ՝ ընդգրկվելով ստուգիչ և փորձնական խմբերում, որոնք ձևավորվել են ըստ առաջադիմության հավասար մակարդակների: Հավելենք, որ ձևավորվել են 2-ական խմբեր, որոնցում 1-2 դասարանների աշակերտներն ընդգրկվել են մեկ խմբում, 3-4 դասարանների աշակերտները՝ 2-րդ խմբերում:

Սովորողների արժեքային կողմնորոշումների առկա մակարդակի ձևավորվածությունը բացահայտելու համար մեր կողմից մշակվել են չափանիշներ, մեթոդներ: Չափանիշները մշակելիս հաշվի են առնվել կրտսեր դպրոցականների տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, սոցիալական փորձը, աշխարհընկալումը, հաղորդակցումը, ինչպես նաև մայրենի և օտար լեզուների ուսուցման բովանդակային և գործնական կողմերի արժեքային ներուժը:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ախտորոշման համար թե՛ ստուգիչ, թե՛ փորձնական խմբերում ընդգրկված դպրոցականներին տրվել են թերթիկներ, որոնց վրա գրված են արժեքներ նշանակող հասկացություններ: Մինչ մեթոդիկան կիրառելը գրույց է անցկացվել առաջադրված հասկացությունների իմաստների շուրջ, կատարվել է բացատրական աշխատանք, տրվել են ցուցումներ:

Դպրոցականները պետք է հերթականությամբ դասավորեն թերթիկներն ըստ իրենց նախընտրության՝ առաջնություն տալով այս կամ այն արժեքին. վերջնական արդյունքը պետք է ցույց տա կրտսեր դպրոցականի արժեքային ընկալումը, պատկերացումը, երևույթների, մարդկային հատկանիշների վերաբերյալ տեսակետը: Արժեքներն ընտրելիս աշխատել ենք ընդգրկել դպրոցականի կենսագործունեության, մարդկային հարաբերությունների բոլոր ոլորտները, բարոյական և գեղագիտական պատկերացումներն արտացոլող հասկացություններ: Մեթոդիկան կիրառելիս մեր նպատակն է եղել նաև բացահայտել, թե այս կամ այն արժեքի նախընտրությունն ինչպիսի դրդապատճառներով է թելադրված, գիտակցում են արդյոք տվյալ հասկացության նշանակությունը, աշխատանքը մեխանիկորեն են կատարում, թե՛ խորհում են տրված հասկացությունների վերաբերյալ, առկա է արդյոք խմբային կողմնորոշումը, միջավայրի ազդեցությունը,

ինքնուրույնությունը, երեխաները պատասխանատվությամբ են վերաբերվում աշխատանքին, անկեղծ են արդյոք, հարկ կա՞ լրացուցիչ մեկնաբանությունների և անհրաժեշտ է արդյոք ուսուցչի աջակցող գործառույթը:

Ներկայացնենք մեր կողմից մշակված թերթիկներում ընդգրկված արժեքները: Հավելենք, որ հաշվի առնելով կրտսեր դպրոցականների մտածողության տեսակը, երևակայությունը, զգայունականությունը՝ թերթիկները ներկայացրել ենք տարբեր գույներով և երկրաչափական տարբեր պատկերների ձևով, որպեսզի աշակերտների համար առաջադրանքը գրավիչ լինի և կրի խաղային բնույթ:

- Աշխատասիրություն
- Ազատություն
- Հավասարություն
- Եղբայրություն
- Բարեկամություն
- Սեր
- Մարդասիրություն
- Սեր բնության նկատմամբ
- Սեր հայրենիքի նկատմամբ
- Քաղաքավարություն
- Բարեկիրթ վերաբերմունք դպրոցում, տանը, հասարակական վայրերում
- Պատասխանատվություն
- Խոսքի և գործի միասնություն
- Հավատարմություն, նվիրվածություն
- Հաղորդակցում, միջանձնային շփումների պատրաստակամություն
- Ընթերցասիրություն, սեր դեպի գիրքը
- Համակարգչային խաղեր, վիրտուալ շփումներ
- Հոգատարություն կենդանիների նկատմամբ
- Կայուն գիտելիքներ, տարբեր լեզուներով հաղորդակցում
- Հայրենիքի ճանաչողություն, ազգային խորհրդանիշների իմացություն
- Կարգապահություն, ճշտախոսություն, ազնվություն
- Արվեստի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրություն
- Բարձր առաջադիմություն, լրացուցիչ տեղեկատվության յուրացում
- Համագործակցություն, հանդուրժողականություն

Արդյունքների վերլուծությունը բացահայտում է հետևյալ պատկերը: Թե՛ ստուգիչ, թե՛ փորձնական խմբերում ընդգրկված

աշակերտները, որոշակի շեղումներով, նախապատվությունը տալիս են հաղորդակցական արժեքներին. նրանց համար կարևոր է հաղորդակցվել մայրենի և օտար լեզուներով: Բնականաբար, արժեքների դասակարգման մեջ առաջին շարքերում են վիրտուալ շփումները: Որոշակիորեն նախապատվություն են տրվում սոցիալական արժեքներին՝ բարեկիրթ վերաբերմունք, քաղաքավարություն և այլն: Ընդհանուր առմամբ, իմացական-ճանաչողական արժեքներն առաջնային չեն. ակնհայտորեն դպրոցականները չեն նախընտրում ընթերցանությունը, թեև հակված են լրացուցիչ տեղեկատվության ձեռքբերման էլեկտրոնային տարբեր աղբյուրներից: Սա թույլ է տալիս եզրակացնելու, որ տեղեկատվական տեխնոլոգիաների հարաճուն ներդրումներն էականորեն փոխում են դպրոցականների կենսակերպը՝ միաժամանակ նրանց որոշ չափով մեկուսացնելով, քանի որ այնպիսի արժեքներ, ինչպիսիք են համագործակցությունն ու հանդուրժողականությունը, ցանկի վերջին շարքերում են: Կարևորվում են նաև բարոյական արժեքները՝ հավատարմությունը, նվիրվածությունը, ազնվությունը, ճշտախոսությունը: Հայրենիքի ճանաչողությունը, ազգային խորհդանիշների իմացությունն ու արվեստի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրությունները կրտսեր դպրոցականների արժեքային նախընտրություններում առաջնային չեն:

Կրտսեր դպրոցականների՝ շրջակա սոցիալական միջավայրի հետ շփվելու պահանջմունքը, որը բացահայտվում է տվյալ մեթոդիկայի անցկացման գործընթացում, վկայում է նրանց պահանջմունքների, հետաքրքրությունների, կողմնորոշումների ուղղվածության և հաղորդակցական կարողությունների ձևավորվածության մասին: Դրանում, անտարակույս, մեծ դեր ունեն ընտանիքի դաստիարակչական գործառույթը և ուսումնական հաստատությունը:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների բովանդակության մեջ հաճախ անտեսվում են այնպիսի արժեքներ, որոնք բնութագրում են նրանց համագործակցային կարողությունները և հանդուրժողականության որակները: Դա պայմանավորված է նրանով, որ ուսուցման գործընթացում տակավին խորությամբ չեն ներդրվում համագործակցային ուսումնառությանը նպաստող տեխնոլոգիաներ, որոնք էական ազդեցություն ունեն սովորողների կենսագործունեության և վարքային դրսևորումների վրա: Այստեղից բխում է, որ կրտսեր դպրոցականների՝ տվյալ ոլորտը բնութագրող արժեքների անտեսումը արդիական է դարձնում ուսուցիչների՝ այդ ուղղությամբ տարվող աշխատանքը:

Արժեքների դասակարգման ընթացքում պարզվել է, որ միևնույն

արժեքների կայուն ընտրությունն առկա է տարբեր խմբերում ընդգրկված սովորողների կեսից ավելիի համար: Յուրաքանչյուր խմբում մոտավորապես այդ քանակով ընդգրկվածներ գործնականում բավականաչափ խորությամբ չեն իմաստավորում իրենց նախընտրությունն այս կամ այն արժեքի նկատմամբ՝ արժեքներն ընտրելով առանց խորապես գիտակցելու, իմաստավորելու և հիմնավորելու:

Այնուհանդերձ, այն դիտարկումները, որոնք արվել են ախտորոշիչ գիտափորձի արդյունքների հիման վրա, չեն կարող լիարժեքորեն արտացոլել կրտսեր դպրոցականների արժեքային ըմբռնումները:

Արժեքային կողմնորոշումները հոգևոր բնույթ ունեն և հաճախ իրավիճակային դրսևորումներ են ունենում: Սուկ թվարկման միջոցով հնարավոր չէ խորությամբ ուսումնասիրել երեխաների արժեքային պատկերացումները, հատկապես եթե դրանք գործնականում չեն դրսևորվում և վարքում չեն մարմնավորվում:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումները բացահայտելու համար մենք կիրառեցինք նաև այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ հնարավոր է առավել լիարժեք պատկերացում կազմել նրանց մտագործունեության, խոսքի մշակույթի, երևակայության, ստեղծագործական մտածողության մասին: Մենք ստուգիչ և փորձնական խմբերում առաջարկեցինք հենակետային կամ բանալի բառեր (բառախմբեր)՝ կիրառելով 5-րոպեանոց ազատ շարադրանք մեթոդը (յուրաքանչյուր բառաշարքի շուրջ կապակցված խոսքի կառուցմանը տրվում է հինգ րոպե): Բառախմբերը կազմելիս նախապատվությունը տրվել է այն բառերին, որոնց միջոցով հնարավոր է ստեղծել գեղարվեստական փոքր բնագրեր՝ հուզական հազեցվածությամբ: Միաժամանակ մենք հաշվի ենք առել այդ բառերի ուղղագրական արժեքը, պատկերավոր, բնութագրական կողմը, փոքր տեքստ հյուսելու տեսակետից նպատակահարմարությունը, նաև դաստիարակչական, ուսուցողական, զարգացնող նշանակությունը: Բառախմբերի ընտրության ժամանակ հաշվի է առնվել նաև այն, որ դրանք վերաբերեն տեղեկատվական, իմացական-ճանաչողական, հաղորդակցական, գեղագիտական, սոցիալական, բարոյական արժեքներին, ընդ որում՝ ակնկալվում էր աշակերտների հուզական-գնահատողական վերաբերմունքը:

Այս մեթոդի կիրառման շնորհիվ ընդլայնվում է դիտարկվող արժեքների ցանկը. ի տարբերություն արժեքների ուղղակի դասակարգման՝ այն չի սահմանափակում կրտսեր դպրոցականների արժեքային ընտրության հնարավորությունները, որն ակնհայտ էր մեր կողմից առաջարկված արժեքների դասակարգման պարագայում:

Աշխատանքը կատարելիս կրտսեր դպրոցականներին նաև սեփական մտքերն ու ցանկություններն արտահայտելու ազատություն է տրվել, որը պայմաններ ու հնարավորություններ է ընձեռել անկեղծորեն, առանց արտաքին ներգործության արտահայտելու խոհերը, մտորումները, երևակայությունը, ապրումները, արժեքային պատկերացումները և դրդապատճառները:

Ներկայացնենք մի քանի բառախմբեր.

- սաղարթախիտ, շշուկ, խոնավ բուրմունք, մեղմօրոր երգ, խորհրդավոր լռություն,
- գիրք, ընթերցանություն, խորհրդավոր աշխարհներ, տիեզերք, երազել,
- բարյացակամ, նվիրված ընկեր, հուզիչ պատմություն, անօրինակ արարք, ճանապարհորդություն,
- հայրենի լեռնաշխարհ, բնօրրան, պատմական հուշարձաններ, սրտի թրթիռ, նվիրական վայրեր,
- փիրուզագույն ալիքներ, մեղմ զեփյուռ, ոսկեգօծ, շառաչյուն, քաղցրահնչյուն երգ,
- բարեկիրթ վերաբերմունք, ծերունագարդ, դողդոջուն քայլվածք, հանրօգուտ, երախտագետ,
- ազատ հաղորդակցվել, ջերմագին զրույց, սրտառուչ պատմություն, առօրեական, Ամանորի գիշեր,
- պատկերասրահ, կախարդիչ երանգներ, ցնցող տպավորություն, գեղանկարչություն, վրձնահարված,
- ազգային օրհներգ, եռագույն դրոշ, զինանշան, հպարտություն, հնօրյա,
- հայրենի օջախ, գորովագութ, քնքշագին ժպիտ, ջերմ զրույց, հոգատարություն,
- մայրենի լեզու, շքեզ բառագանձ, այբուբեն, մաշտոցյան սխրանք, քաղցրաբառ,
- մտովի ճանապարհորդություն, համակարգիչ, հեռավոր երկրներ, օտար մշակույթ, երազի թևով,
- գթասիրտ, ցրտաշունչ, անպաշտպան, անօգնական, երախտագետ ժպիտ,
- Երկիր մոլորակ, հաղորդակցվել, համայն մարդկություն, բնսպահականություն, գլոբալ տաքացում,
- լավ կրթություն, լեզուների իմացություն, ապագայի մասնագիտություններ, երևակայություն, ստեղծագործական աշխատանք,
- ուսուցիչ, մրցակցություն, խրախուսանք, գիտելիքի աղբյուր, լեզուների իմացություն,

- հազարամյա պատմություն, խաչքար, քրիստոնեություն, գոյամարտ, ազատամարտիկ, Եռաբլուր:

Այս մեթոդիկայի անցկացումը բացահայտում է կրտսեր դպրոցականների ապրումների բազմազանությունն ու հուզական ոլորտը, որը դրսևորվում է նաև նրանց վարքում: Տրված բառաշարքերի կիրառումը չի սահմանափակում երեխաների՝ տեքստ հյուսելու ընթացքում այլ բառեր, բառակապակցություններ օգտագործելու հնարավորությունը: Մտացված պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցականները առավելապես լիարժեք են պատկերացնում բարոյական և գեղագիտական արժեքները (բնության գեղեցկությունների ընկալում, անձնային հատկանիշներ և այլն), մինչդեռ բավականաչափ ձևավորված չեն ճանաչողական, սոցիալական, հաղորդակցական արժեքները: Ակնհայտ է, որ կրտսեր դպրոցականները բավականաչափ չեն արժևորում միջանձնային հաղորդակցման, լեզուների իմացության, ընթերցանության, համամոլորակային հիմնախնդիրների՝ իրենց հասկացողությանը մատչելի տեղեկատվության ձեռքբերման կարևորությունը:

Տեքստերի որակական վերլուծությունից հետո մենք փորձել ենք ստացված տվյալները ներկայացնել քանակական ցուցանիշների ձևով, այսինքն՝ տոկոսային տվյալներով արտահայտել իմացական-ճանաչողական, հաղորդակցական, գեղագիտական, սոցիալական, բարոյամշակութային և այլ արժեքների արտահայտությունը խոսքում, նոր բառապաշարի պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառումը, դատողական վերաբերմունքը, ինքնուրույնության աստիճանը, խոսքի սահունությունը, կապակցվածությունը, տրամաբանականությունը, ներշնչանքի և համոզմունքի առկայությունը:

Ընդհանուր վերլուծությունները ցույց են տալիս, որ աշակերտների գրեթե 65%-ը սահմանափակվել է սուկ տրված բառերի սահմաններում առանձին նախադասություններ գրելով, 24%-ը տեքստը հարստացրել է գեղարվեստական բառապաշարով, 18%-ը արտահայտել է գնահատողական դատողություններ, 59%-ը սահմանափակվել է սուկ նկարագրություններով՝ չարտահայտելով արժեքային-գնահատողական վերաբերմունք:

Ընդհանուր առմամբ 32% հարցվածների պատասխաններում մտքերը կրկնվում են, միօրինակ են, անհույզ: Քանի որ մենք առաջարկել ենք տեքստերը կառուցել ըստ նախընտրած բառաշարքերի, ուստի ակնհայտ է հետևյալ միտումը. նախընտրություն է տրվել հիմնականում բնանկարներին, այսինքն՝ նկարագրական տարրերին, մինչդեռ դատողական-խոհական թեմատիկան կրտսեր դպրոցականների նախընտրություններում առանձնապես գերակա չէ: Հավելենք, որ 5-ից

ավելի բառաշարքերի շուրջ տեքստեր է հյուսել ստուգիչ խմբերում հարցվածների 18%-ը, փորձնական խմբերում՝ 19%-ը, 4-5 բառաշարքերի շուրջ՝ համապատասխանաբար 22%-ը և 21%-ը, 2-4 բառաշարքերի շուրջ աշխատել է ստուգիչ խմբերում հարցվածների 35%-ը և փորձնական խմբերում՝ 37%-ը, 1-2 բառաշարքերի վերաբերյալ աշխատանք է ներկայացրել համապատասխանաբար 21%-ը և 16%-ը: Ստուգիչ խմբերում 4%-ը և փորձնական խմբերում 7%-ը չի կատարել առաջադրանքը:

Ըստ թեմատիկ արժեքային մոտեցման՝ մենք տվյալները խմբավորեցինք ըստ որոշակի արժեխմբերի, որոնք ներկայացված են համապատասխան աղյուսակով և գծանկարով:

Դիտարկված են ստուգիչ և փորձնական խմբերի արժեքային նախընտրությունները՝ ըստ թեմատիկ արժեխմբերի:

Միաժամանակ բացահայտվեց այն հանգամանքը, որ մայրենի և օտար լեզուների, մաթեմատիկայի յուրացման ընթացքում ձեռք բերվող շատ արժեքներ կենսական հանգամանքների, ուսումնական նյութի, գրքերի, տարբեր տպավորությունների, միջոցառումների, էքսկուրսիաների ազդեցությամբ կարող են փոփոխվել: Ի դեպ, ստուգիչ և փորձնական խմբերում տվյալների նկատելի շեղում չի արձանագրվել:

Այսպիսով՝ անցկացված փորձարարական հետազոտության արդյունքները բնութագրում են կրտսեր դպրոցականների արժեքային պատկերացումները, որոնք ձևավորվում են տարրական դպրոցում մայրենի, օտար լեզուների և մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Ստացված տվյալների հիման վրա մենք բնութագրեցինք կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները:

Այսպիսով՝ նշված բնութագրիչների հիման վրա, ընդհանրացնելով ախտորոշիչ մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված տվյալները, մեր դիտումների, զրույցների, դասալսումների արդյունքները, գիտափորձի հաստատող փուլում սահմանեցինք կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների, ձևավորվածության բարձր, միջին, ցածր մակարդակները ստուգիչ և փորձնական խմբերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Մենագրություն, Եր., Արտագերս, 2007:
2. Միրայելյան Հ. Ս., Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը. -Եր.: Էդիթ Պրինտ, 2011.- 184 էջ:
3. Анисимов В.В., Грохольская О.Г., Никандров Н.Д. Общие основы педагогики: учеб. для вузов.- 2-е изд.- М.: Просвещение, 2007.- 575с.
4. Слостенин В.А., Чжакова Г.И. Введение в педагогическую аксиологию. М., 2003.

РЕЗЮМЕ

ДИАГНОСТИКА ФОРМИРОВАНИЯ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ В ДАННОЙ СИТУАЦИИ

А.Л.ТОНОЯН

В статье рассматриваются результаты диагностики данной ситуации формирования ценностных ориентаций младших школьников в контексте ценностно-ориентированных воздействий академических материалов.

В статье представлено эффективное воздействие раскрытых ценностно-ориентированных текстов, заданий и упражнений на сферу ценностей младших школьников.

SUMMARY

THE CURRENT SITUATION DIAGNOSIS OF THE JUNIOR STUDENTS' VALUE ORIENTATION FORMATION

A.L.TONAYAN

The given article surveys the current situation diagnosis' results of the junior students' value orientation formation in the context of value orienting effect of the academic material.

The productive effect of the revealed value orienting texts, tasks and exercises on the junior students' value field is presented in the result of the experiment.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 355.58 : 159.9.07 : 070

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂԻ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ
Ղ. Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Խ.Արքովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
markosyandiana@gmail.com

Հեղինակը փորձարարական հետազոտություն է անցկացրել ՀՀ տարբեր սահմանամերձ տարածաշրջաններում և Լեռնային Ղարաբաղի տարածքում, արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հետ, ովքեր գործունեություն են ծավալել կամ մասնակից են եղել կոնկրետ իրավիճակների: Հետազոտությունն անցկացվել է երկու փուլով: Հետազոտության մեջ ներգրավվել է արտակարգ իրավիճակներում աշխատող 127 լրագրող և ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջանների 104 բնակիչ:

***Բանալի բառեր.** լրագրող, արտակարգ իրավիճակ, թեստային մարտկոց, անձնային առանձնահատկություններ:*

Ներկայացված է խմբագրություն 14.12.2015 թ.

ՀՀ տարբեր սահմանամերձ տարածաշրջաններում և Լեռնային Ղարաբաղի տարածքում արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների հետ, ովքեր գործունեություն են ծավալել կամ մասնակից են եղել կոնկրետ իրավիճակների, անցկացվել է փորձարարական հետազոտություն: Հետազոտությունն անցկացվել է երկու փուլով: Առաջինը՝ որոշելու արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային որակները, երկրորդ փուլում՝ ախտորոշման ընթացքում, հստակեցրել ենք որակների արտահայտվածության և հոգեբանական պատրաստվածության աստիճանները, կատարել համեմատական վերլուծություն: Հետազոտության մեթոդների ընտրությունը կատարվել է փորձարարական հոգեբանության հիմնարար սկզբունքներին համապատասխան [1]:

Հետազոտության խնդիրը համակողմանիորեն ուսումնասիրելու համար հիմք ենք ընդունել մի քանի սկզբունքներ, որոնք պահպանվել են հետազոտության ընթացքում.

ա) կիրառված մեթոդները, առաջադրանքները չեն ազդել լրագրողների արժանապատվության վրա,

բ) պահպանվել է փոխադարձ հարգանք,

գ) մեթոդները տեղեկատվության առումով վերալրացվել են,

դ) բոլոր փորձարկվողների հետ աշխատանքն իրականացվել է նույն մեթոդով և մեթոդիկայով, որը հնարավորություն է տվել տարբեր մակարդակներում միմյանց հետ համեմատել նույնատիպ տվյալներ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են Ռ. Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF) [2], «Ինքնագնահատման ախտորոշման Չ. Դ. Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկան», Ա. Բասսի և Ա. Դարկի «Ազդեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան» [3], Թեյլորի «Տագնապախոռվողության չափման» մեթոդիկան [4]:

Հետազոտության մեջ ներգրավվել են արտակարգ իրավիճակներում աշխատող 127 լրագրող և ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջանների 104 բնակիչ:

Նախապես խնդիր է դրվել ուսումնասիրել, թե այս հարցվողների թվաքանակը բավական է արդյոք ընդհանուր եզրակացությունների հանգելու համար: Դրա համար օգտվել ենք վիճակագրության մեջ հայտնի ընտրանքի ծավալի որոշման և կրկնակի ընտրանքի համար նախատեսված համապատասխան բանաձևերից, որպեսզի ապացուցենք՝ ընտրանքը բավարարում է վիճակագրության պահանջներին: Բացի դրանից, թեստային համակարգը կիրառվել է մի քանի անգամ, որպեսզի որոշենք հնարավոր շեղումների հավանականությունը և փորձարկվողների պատասխանների հուսալիությունը: Ընդհանուր առմամբ, պարզվել է, որ բոլոր թեստերի պատասխաններում կան որոշակի տարբերություններ, սակայն միջինացված տվյալները էական տարբերություններ չեն արձանագրել: Հետազոտության համար կազմված թեստային մարտկոցը նախատեսվել է արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի հոգեբանական պատրաստության վրա ազդող մի շարք գործոնների բացահայտման համար, որոնց մանրամասն կանդիդատնանք համապատասխան թեստերի նկարագրության և արդյունքների վերլուծության ընթացքում:

Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների բացահայտման համար կիրառվել է Ռ.Քեթթելի մեթոդիկան [2]: Ռ. Քեթթելի մեթոդիկայի կիրառման ընթացքում նախ՝ պարզել ենք տվյալ խմբում առկա գործոնների

արտահայտվածությունը, այնուհետև կազմել ենք յուրաքանչյուր գործոնի միջինացված տվյալը՝ նկատի ունենալով, որ այդ գործոններն ի հայտ են գալիս փոխազդեցության արդյունքում: Այնուհետև համեմատել ենք երևույթի կամ իրադարձության արդյունքում ձևավորած առանձին խմբերը՝ միջինացված տվյալները տալու նպատակով:

Գիտական վարկածի համաձայն՝ ենթադրվել է, որ մեթոդիկայում ներկայացված գործոնները պետք է, որ որոշակիորեն կապված լինեն նաև ագրեսիայի թողած դրսևորումների հետ, ուստի նույն հետազոտվող խմբերում կիրառել ենք Ա. Բասսի և Ա. Դարկի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան: Այս մեթոդիկան թույլ տվեց ընդլայնել մեր պատկերացումները ֆիզիկական ագրեսիայի, անուղղակի ագրեսիայի, նեգատիվիզմի, նյարդայնության, կասկածամտության, վիրավորանքի, մեղքի զգացման վերաբերյալ: Ա. Բասսի և Ա. Դարկի առաջարկած հարցարանը բացահայտում է ագրեսիվության ցուցանիշները և ձևերը:

1. Ֆիզիկական ագրեսիա՝ այլ մարդկանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրում:

2. Խոսքային (վերբալ) ագրեսիա՝ այլ մարդկանց նկատմամբ ունեցած բացասական զգացմունքների արտահայտում բառերի (վեճ, բղավոցներ, ճիչեր, սպառնալիքներ, անեծքներ, հայհոյանք) միջոցով:

3. Անուղղակի ագրեսիա՝ անուղղակի ճանապարհով այլ անձանց հասցեին ուղղված բամբասանքներ, «կծող» կատակներ և զայրույթի անորոշ, անկանոն բռնկումներ:

4. Նեգատիվիզմ՝ ուղղված հեղինակությունների և ղեկավարության դեմ. դրսևորվում է վարքի ընդդիմադիր ձևով, որը պասիվ կամ ոչ գործուն հակադրությունից կարող է վերածվել ակտիվ կամ գործուն գործողությունների՝ ընդդեմ սահմանված պահանջների, կարգի ու օրենքների:

5. Նյարդայնություն (դժգոհություն)՝ մարդու՝ շուտ գրգռվելու, նույնիսկ բռնկվելու հակվածություն, կտրուկ և կոպիտ վարվելու պատրաստականության առկայություն:

6. Կասկածամտություն՝ մարդկանց նկատմամբ անվստահություն և զգույշ վերաբերմունք դրսևորելու հակում, որը բխում է այն համոզմունքից, որ շրջապատի մարդիկ մտադիր են վնաս պատճառել իրեն:

7. Վիրավորանք՝ զայրույթով, անբավարարվածության զգացումով, դժգոհությամբ պայմանավորված նախանձի և ատելության արտահայտում:

8. Ինքնագրեսիա կամ մեղքի զգացում՝ իր և շրջապատի նկատմամբ հատուկ վերաբերմունք և գործողություններ, որոնք բխում են այն

համոզմունքից, որ ինքը վատ մարդ է, վատ է վարվում, վնաս է տալիս, չար է և անխիղճ:

Անցկացման կարգը և ուսումնասիրվող խմբերի թվաքանակը եղել է նույնը: Տեսական վերլուծությունները վկայում են, ինֆորմացիայի ընկալման և փոխանցման գործընթացում կարևոր դեր են խաղում անհատի բնավորության գծերը, նրա հիմնային բնութագրիչները, անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են խառնվածքի, ինքնահաստատման, խոսքի ու գործի արձագանքման առանձնահատկություններով, մեծ ազդեցություն են ունենում նաև անձնային և ռեակտիվ տազնապայանությունը, որոնք աշխարհի, մարդկանց նկատմամբ անձի հիմնային վստահության դրսևորումներն են: Այս գործոնների առկայությունը բացահայտելու համար կիրառվել է Չ. Դ. Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկան:

Թեյլորի «Տազնապայանվորության չափման» մեթոդիկայի հարցարանը բաղկացած է 50 պնդումներից: Կիրառվել է ՀՀ սահմանամերձ՝ ա) Տավուշ – Նոյեմբերյան – Իջևան – Բերդ բ) Վայոց Ձոր – Խաչիկ, գ) Սյունիք – Միսիան և ԼՂՀ՝ ա) Մարտակերտ – Մատաղիս, բ) Քարվաճառ տարածաշրջանների ազգաբնակչության սոցիալ – հարմարման և հոգեկան վիճակների ախտորոշման համար: Մասնակցել է 104 մարդ՝ 64 իգական և 40 արական սեռի ներկայացուցիչներ: Խտացված տվյալների վերլուծությունից հետո կազմակերպել ենք թրեյնինգներ «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ – հոգեբանական պատրաստվածություն» թեմայով, այնուհետև իրականացրել ստուգիչ գիտափորձ: Վերջինիս նպատակն է՝ պարզել արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների բացահայտված անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության դրսևորումների մակարդակը «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն» ծրագրով նախատեսված թրեյնինգային վարժություններից հետո: Այդ նպատակով կազմակերպվել է ռեթեստավորման գործընթաց այն փորձարկվողների հետ, որոնք անցել են պարապմունքներ: Ռեթեստավորման ենք ենթարկել մեր կողմից կիրառված մեթոդներով և մեթոդիկաներով՝ ցանկանալով պարզել որոշ անձնային գործոնների նպատակային փոփոխության առկայությունը մեր համակազմի մոտ: Ստուգիչ գիտափորձի ընթացքը: Ռեթեստավորման նպատակով ընտրվել են նույն խմբերը: Ստորև ներկայացնենք ռեթեստավորման արդյունքներն ըստ Ռ. Քեթթելի մեթոդիկայի [2]՝ առավել ուշադրություն դարձնելով որոշ գործոնների փոփոխություններին: Ռեթեստավորման գործընթացում առավելապես հետևել ենք և վերլուծական մասում անդրադարձել ենք հենց այդ

գործոններին: Աշխատանքի մատչելիության և պարզության համար պահպանել ենք աղյուսակի ներկայացման ձևը՝ հեշտ և համարժեք համեմատություններ կատարելու համար (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ռեթեստավորման արդյունքում գրանցված տվյալներ՝ % (Ռ.Քեթթել)

Արտահայտվածություն	N	Գործոններ	Արձանագրող փուլի արդյունքներ (%)	Ռեթեստավորման փուլի (%)	Գործոններ
ա) Թույլ արտահայտվածության գործոններ	1.	L	7.28	9.08	դյուրահավատություն
	2.	Q4	10.72	11.74	թուլացվածություն անցում լարվածության դաշտ՝ չնչին տարբերությամբ
	3.	Q2	10.88	11.34	զիջողականություն չնչին տարբերությամբ. անցում դեպի անզիջողականություն
բ) Միջին արտահայտվածության գործոններ	4.	N	11.52	13.28	ուղղամտությունից անցում դիվանագիտության
	5.	E	13.08	11.52	գերակշռությունից անցում զիջողականության
	6.	Q1	13.28	11.32	ռադիկալիզմից անցում կոնսերվատիզմի
	7.	O	13.2	16.24	տագնապայնությունից անցում ինքնավստահության
	8.	C	13.52	15.56	հուզական անկայունություն հուզական կայունություն
	9.	M	13.92	16.47	զարգացած երևակայությունից անցում գործնականության
	10.	I	15.04	13.08	զգայունակություն
	11.	G	15.36	16.47	նորմատիվություն
	12.	H	15.44	17.74	խիզախություն
	գ) Ընդգծված արտահայտվածության գործոններ	13.	Q3	17.28	18.30
14.		A	17.92	18.48	շփվողականություն
15.		F	19.52	20.12	արտահայտչականություն
	16.	B	6.24	7.05	ինտելեկտ
	17.	MD	39.76	41.24	ինքնագնահատականի աղեկավատություն

Աղյուսակում 1-ում գետեղված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գործոնների քանակական ցուցանիշները, որոնք

արտահայտվում են որոշակի օրինաչափություններով, փոփոխության են ենթարկվել, այսինքն՝ ընդգծված արտահայտվածության ցուցանիշները քանակապես բարձրացել, փոփոխվել և տատանվել են նաև միջին արտահայտվածությամբ գործոնները, իսկ թույլ արտահայտված ցուցանիշները աճել են, որոշ ցուցանիշներ բարձրացել են միջին ցուցանիշների արդյունքներից:

Հիշյալ տվյալներն առանձնացնում ենք որպես ռեթեստավորման արդյունք, քանի որ այդ փոփոխությունները դրսևորվել են ոչ պատահական ցուցանիշներով, այլ որոշակի օրինաչափություններով: Դրանով հանդերձ՝ ինտելեկտի ցուցանիշների մեջ տեղաշարժը քիչ է, ինչը երևում է նաև աղյուսակի տվյալներից: Այս իմաստով, անցնելով մյուս մեթոդիկաներին, կրկին փորձել ենք ցույց տալ, նկատվող փոփոխությունների օրինաչափ դրսևորումները և արտահայտչաձևերը: Ա. Բասսի և Ա. Դարկի ագրեսիայի տիպի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի ռեթեստավորման արդյունքներից երևում է, որ համանման երևույթ նկատվում է նաև ստորև բերվող աղյուսակի տվյալներում (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Բասսի և Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա» (ռեթեստավորում)

Գործոններ		նախնական տվյալներ (%)	ռեթեստավորման տվյալներ (%)
ա) Թույլ արտահայտված	Նեգատիվիզմ	35.2	15.8
	Վիրավորվածություն	35.2	16.6
	Անուղղակի ագրեսիա	39.6	27.2
	Կասկածամտություն	42	32.2
բ) Միջին արտահայտվածության գործոններ	Ֆիզիկական ագրեսիա	45	20.7
	Նյարդայնություն	48.4	34.16
գ) Ընդգծված արտահայտվածության գործոններ	Մեղքի զգացում	66.6	44.32
	Խոսքային ագրեսիա	68	32.6

Ներկայացնենք նաև Սպիլբերգեր-Խանինի ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկայի ռեթեստավորման տվյալները (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ռեթեստավորման արդյունքում գրանցված տվյալներ` % (Սպիլբերգեր-Խանին)

Արդյունքներ	Ռեակտիվ տազնապայություն (%)	Անձնային տազնապայություն (%)
Արդյունքների միջինացված տվյալներ	73.2	86.8
Ռեթեստավորման միջինացված տվյալներ	60.2	71.4

Գիտափորձի արդյունքները ռեթեստավորում անցած ընտրագանգվածի տվյալները նորից բաժանել ենք արտահայտվածության երեք մասերի՝ ըստ ցուցանիշների, ինչպես արձանագրող փուլում՝ թույլ, միջին և ընդգծված արտահայտվածության, որը հնարավորություն է տվել մեզ համադրելու նույն աստիճանի վերաբերող տվյալները: Գիտափորձի արդյունքների ռեթեստավորման ժամանակ Թեյլորի «Տազնապախոռվության չափման մեթոդիկան» չի կիրառվել:

Ստորև ներկայացնում ենք վերոշարադրյալ մեթոդիկաների միջինացված տոկոսներով արտահայտված ցուցանիշները մեկ աղյուսակով՝ թույլ, միջին և ընդգծված արտահայտվածությամբ (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ռեթեստավորման արդյունքում գրանցված միջինացված տվյալների ընդհանրացված պատկեր (%)

	Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկա» (16-PF)		Ա.Բասսի և Ա.Դարկի «Ազրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»		Ինքնագնահատման ախտորոշման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու. Լ. Խանինի մեթոդիկա	
	գործոն	(%)	ցուցանիշ	(%)	գործոն	(%)
Ա ցածր արտահայտվածություն	L, դյուրահավ.	9.08	Նեգատիվ.	15.8	0	
	Q4, թուլացված	11.74	Վիրավորվ.	16.6		
	Q2, զիջողակ.	11.34	Անուղղակի ազրեսիա	27.2		
			Կասկած.	32.2		

Բ միջին արտահայտվածություն	N, ուղղամտութ.	13.28	Ֆիզիկական ազդեսիա	20.7	Ռեակտիվ դաժնություն/տարածվածություն	86.8
	E, գերակշռութ.	11.52				
	Q1, ռադիկալիզմ	11.32				
	O, տագնապայն.	16.24				
	C, հուզական անկայուն.	15.56	Նյարդայնություն	34.16		
	M, զարգացող երևակայութ.	16.47				
	I, զգայնություն	13.08				
	G, նորմատիվ	16.47				
	G, նորմատիվ	17.74				
Գ ընդգծված արտահայտվածություն	Q3 բարձր ինքնավերահսկող.	18.30	Խոսքային ազդեսիա	32.6	Անձնային տարածվածություն	71.4
	A, շփվողակ.	18.48	Մեղքի զգացում	44.32		
	F արտահայտչ.	20.12				
	B ինտելեկտ	7.05				
	MD ինքնագնահ.	41.24				

Այսպիսով, ամփոփելով ռեթեստավորման արդյունքները՝ եկանք այն եզրահանգման, որ միջանձնային կոնֆլիկտների հիմքում ընկած որոշ գործոններ (թվով 30) դրսևորվել են որոշակի օրինաչափություններով, այսինքն՝ բարձր արտահայտվածությամբ որոշ գործոններ քանակապես նվազել են, իսկ որոշները աճել են, որով էլ արձանագրել ենք արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության ռեթեստավորման արդյունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր., Զանգակ-97, 2002.- 391 էջ.
2. Cattell R. B. The birth of the Society of Multivariate Experimental Psychology. *Journal of the History of the Behavioral Sciences*, 1990, 26, 48-57.
3. <http://www.doctors.am/hy/tests/types-of-aggression>
4. <http://www.doctors.am/hy/tests/Taylor-Manifest-Anxiety-Scale>

РЕЗЮМЕ

ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ УРОВНЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ГОТОВНОСТИ ЖУРНАЛИСТОВ, РАБОТАЮЩИХ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

Д.Г. МАРКОСЯН

Проведено двухэтапное экспериментальное исследование среди журналистов, работавших в чрезвычайных ситуациях и ставших участниками конкретных событий в различных приграничных регионах РА и на территории Нагорного Карабаха. Исследованием были охвачены 127 действующих журналистов и 104 жителя приграничных районов РА и НКР.

SUMMARY

EXPERIMENTAL STUDY OF PSYCHOLOGICAL PREPAREDNESS OF JOURNALISTS WORKING IN EMERGENCY SITUATIONS

D. H. MARKOSYAN

The author conducted an experimental study with journalists working in emergency situations in various borderline regions in the republic of Armenia and in Nagorno Karabakh; these journalists acted or participated in certain situations. The study was held in two phases. 127 journalists and 104 habitants of the RA and NK bordering regions were involved in the study.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 316 : 159.9 : 334.72

ԳՈԾԱՐԱՐ ԱՆՁԱՆՑ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Վ. Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Խ. Արոյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
dr-mkrtumyan@mail.ru

Ուսումնասիրվել են սթրեսածին պայմաններում գործարար անձանց տազնապայլիության և հոգեկան կայունության դրսևորման առանձնահատկությունները: Հետազոտական ճանապարհով բացահայտվել են նաև գործարար անձանց ֆունկցիոնալ հնարավորությունների փոփոխության պատճառական գործոնները, նյարդահոգեկան կայունության բնութագրերի սեռային տարբերությունները:

Բանալի բառեր. անցումային հասարակություն, ֆունկցիոնալ վիճակ, հոգեկան կայունություն, հարմարում և ապահարմարում, պահեստային հնարավորություններ:

Ներկայացված է խմբագրություն 13.10.2015 թ.:

Անցումային հասարակությանը բնորոշ են սոցիալ-տնտեսական, քաղաքական և բազում այլ ոլորտներում տեղի ունեցող բարեփոխումներ: Մակայն միշտ չէ, որ դրանք նպաստավոր են անդրադառնում մարդկանց կենցաղի ու նրանց առողջության վրա: Ապրելակերպի փոփոխության, մարդկանց գործունեության բնագավառում առաջացող դժվարությունների պատճառով նրանց հոգեկան ոլորտում նկատվում են ապահարմարողական հակազդումների հոգեֆիզիոլոգիական համախտանիշներ: Մարդկանց ընդհանուր և հոգեկան առողջության ցուցանիշների անկման պատճառով իջնում է նաև գործունեության արդյունավետության մակարդակը: [1, 2, 3]: Անցումային հասարակությունում այդ դժվարությունների հետ առնչվում են նաև գործարար բնագավառի մարդիկ:

Գործարար անձանց ֆինանսական ու տնտեսական հաջողությունների հիմքում ընկած են գործունեության անբարենպաստ պայմաններում նրանց սթրեսակայունությունը, աշխատունակության բարձր մակարդակը: Ինչպես հայտնի է, սթրեսածին պայմաններում լարված աշխատանքը հանգեցնում է անձի պահեստային հնարավորությունների աստիճանական սպառման[2, 5]: Այդ գործընթացը զուգակցվում է նաև օրգանիզմի մնացած համակարգությունների միջև գործառույթների համագործակցության անհամաձայնության հակազդումներով: Ըստ Պ. Անոխինի ֆունկցիոնալ համակարգության տեսության՝ գործունեության արդյունավետությունը պայմանավորված է անձի հոգեկան համակարգի կառուցվածքում գործող ենթահամակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացվածության աստիճանով: Այսինքն, ըստ հեղինակի՝ նյարդային լարվածության դեպքում հիմնական ծանրաբեռնվածությունը կրող «աշխատանքային» օրգանների հոգեֆիզիոլոգիական հնարավորությունները կախվածություն ունեն իրենց իսկ կառուցվածքում գոյություն ունեցող ենթահամակարգերի ֆունկցիոնալ վիճակով [6, էջ 97]:

Հետազոտությունների միջոցով ուսումնասիրել ենք գործունեության անբարենպաստ պայմաններում հաջողակ գործարարների տազնապալիության, ինչպես նաև նյարդահոգեկան կայունության դրսևորման առանձնահատկություններն ու անհարմարվողականության ռիսկի աստիճանը: Գործիքակազմում ընդգրկվել են Ջ. Թեյլորի անձի ընդհանուր տազնապալիության մակարդակի հետազոտման սանդղակը, ինչպես նաև սթրեսում նյարդահոգեկան կայունության և դեզադապտացիայի ռիսկի որոշման մեթոդը [7, էջ 61]:

Հետազոտության խմբերում ընդգրկվել են Երևանի տարբեր առևտրական կազմակերպությունների 300 գործարար անձինք: Հիմնական հետազոտական խմբում ներառվել են կայուն եկամուտներ ունեցող 90 հաջողակ գործարարներ (45 կին և 45 տղամարդ): Որպես ստուգիչ խումբ՝ անկախ բիզնեսում ունեցած նրանց հաջողությունների՝ ընդհանուր խմբից առանձնացվել են ևս 90 գործարարներ (45 կին և 45 տղամարդ): Հետազոտական գործիքակազմը կիրառվել է ինչպես հիմնական, այնպես էլ ստուգիչ խմբերում: Հետազոտության արդյունքների վիճակագրական տվյալները արտացոլված են 1-4-րդ աղյուսակներում:

Հետազոտվող երկու խմբերի տազնապալիության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական խմբի կանանց և տղամարդկանց տազնապալիության մակարդակը

համեմատած ստուգիչ խմբում ընդգրկվածների՝ բավականին ցածր է (աղյուսակ1):

Հիմնական խմբի հետազոտվողների միջին տազնապալիության ընդհանուր արդյունքների 48%-ի դեպքում ստուգիչ խմբի հետազոտվողների մոտ գրանցվել է 40% (18 մարդ): Միջին տազնապալիության՝ բարձրի միտումով ցուցանիշը ստուգիչ խմբում կազմում է 27% (12 մարդ): Նույն արդյունքն է գրանցվել նաև հիմնական խմբում, որը կազմում է 15% է (7 մարդ): Ստուգիչ խմբում տազնապալիության բարձր մակարդակի ցուցանիշները նույնպես տարբերվում են: Այսպես, ստուգիչ խմբի հետազոտվողների մոտ նկատվում է տազնապալիության շատ բարձրի ձգտման միտումը, որը կազմում է մասնակիցների 56%-ը, իսկ հիմնական խմբում այն անհամեմատ փոքր է՝ ընդամենը 24.4% (11 մարդ):

Աղյուսակ 1

Հետազոտվող խմբերում տազնապալիության մակարդակի ցուցանիշները՝ արտահայտված %-ներով և մարդկանց բացարձակ քանակով:

Հետազոտվող խմբեր	Տազնապալիության մակարդակի ցուցանիշները									
	ցածր		միջին՝ ցածրի միտումով		միջին՝ բարձրի միտումով		բարձր		շատ բարձր	
	0-5 միավոր		6-15 միավոր		16-25 միավոր		26-40 միավոր		41-50 միավոր	
	%	մ/բ/ք	%	մ/բ/ք	%	մ/բ/ք	%	մ/բ/ք	%	մ/բ/ք
Հիմնական	3.3	3	56.7	51	34.4	31	5.6	5	-	-
Ստուգիչ	-	-	26.7	24	21	19	46.7	42	5.6	5

***%- ցուցանիշների արտահայտվածությունը %-ներով մ/բք-մարդկանց բացարձակ քանակությունը

Տազնապալիության ցածր և ցածրի միտումով արդյունքներ են գրանցվել հիմնական խմբում, որը կազմում է 59% (27 մարդ): Նույն ցուցանիշը ստուգիչ խմբի անդամների մոտ 17% է (8 մարդ): Հիմնական խմբում ընդգրկված հետազոտվողների տազնապալիության ցածր արտահայտվածությունը պայմանավորված է նրանց անձնային առանձնահատկություններով, ինչպես նաև նրանց հուզական վիճակների ինքնակարգավորման հնարավորություններով:

Հետազոտվել են նաև հիմնական խմբում ընդգրկված կանանց և տղամարդկանց տագնապալիության առանձնահատկությունները՝ ըստ սեռային տարբերակման: Ինչպես ցույց են տալիս 2-րդ աղյուսակի արդյունքները, հիմնական խմբի հետազոտվող ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց տագնապալիության հետազոտման արդյունքները կենտրոնացած են հիմնականում այդ հոգեվիճակը բնութագրող միջին՝ ցածրի միտումով և միջին՝ բարձրի միտումով սանդղակների վրա (կանանց մոտ՝ 88.9% տղամարդկանց՝ 93.49%՝ 42 մարդ):

Աղյուսակ 2

Հիմնական և ստուգիչ խմբերում կանանց և տղամարդկանց տագնապալիության ցուցանիշները՝ արտահայտված %-ներով և մարդկանց բացարձակ քանակով:

Հետազոտվող խմբեր		Տագնապալիության մակարդակի ցուցանիշները									
		ցածր		միջին՝ ցածրի միտումով		միջին՝ բարձրի միտումով		բարձր		շատ բարձր	
		0-5 միավոր		6-15 միավոր		16-25 միավոր		26-40 միավոր		41-50 միավոր	
		%	մ/բ/ք	%	մ/բ/ք	%	%	մ/բ/ք	%	մ/բ/ք	%
Հիմնական	կանայք	-	-	55.6	25	33.3	15	8.8	4	-	-
	տղամարդիկ	11.1	5	55.6	25	26.7	12	6.7	3	-	-
Ստուգիչ	կանայք	-	-	8.9	4	24.4	11	57.8	27	6.7	3
	տղամարդիկ	-	-	42.2	19	20	9	28.9	13	8.9	4

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հիմնական խմբում տազնապալիության դրսևորման արդյունքների ճնշող մեծամասնությունը և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտ գտնվում է սանդղակի 6-15 միավորի սահմանում, որը համարվում է միջին՝ ցածրի միտումով արդյունք, ապա միանշանակ կարող ենք ասել, որ հաջողակ գործարարների կայուն ֆինանսներն ու եկամուտները պայմանավորված են նաև նրանց հուզական կայունության առանձնահատկություններով, ինչպես նաև դրանց նյարդային գործընթացների ինքնակարգավորման հնարավորություններով: Եզրակացությունը հիմնավորվում է Ջ. Թեյլորի այն գաղափարով, որ տազնապայնությունը հանդիսանում է անձնային հատկություն [7, էջ 65]:

Ստուգիչ խմբի տազնապալիության բարձր մակարդակի ցուցանիշները, որոնք խմբավորված են սանդղակի աջ կողմում (աղյուսակ 2), կանանց մոտ դրսևորվում են 91.1% միջին և 8.9% միջին բարձրի մակարդակներում: Կարծում ենք, որ գործարար կանանց տազնապայնության սանդղակի դեպի բարձր մակարդակին ձգտող այդքան մեծ տոկոս կազմող արդյունքը խոսում է նրանց հուզական անկայունության և սթրեսային պայմաններում գործունեության արդյունավետության պահպանմանն ուղղված հոգեկան լարվածության մասին: Անշուշտ, առանձին հետազոտվողների մոտ նկատվող շատ բարձր տազնապայնությունը պայմանավորված է նաև գործունեության սպեցիֆիկ դժվարությունների հետ:

Աղյուսակ 3-ում արտացոլված սթրեսի պայմաններում գործարար անձանց նյարդահոգեկան կայունության և դեզադապտացիայի ռիսկի հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ստուգիչ խմբի ճնշող մեծամասնության մոտ դիտարկվում է հոգեկան անկայունություն:

Ըստ կիրառված թեստի պահանջների՝ սանդղակների վրա գոյություն ունեն նյարդահոգեկան կայունության գնահատման բալային սահմաններ, որոնք ցույց են տալիս հոգեկան կայունության նորմայի, միջին կայունության և անկայունության մակարդակները (աղյուսակ 3-ում ներկայացված են գործարար անձանց նյարդահոգեկան կայունության գնահատման բալային սահմանները՝ 0-ական մակարդակից մինչև 32 և ավելի):

Ստուգիչ խմբում դրանք արտահայտվում են հետևյալ կերպ. հետազոտվողների 21.1%-ը (19 մարդ) գրանցել է հոգեկան անկայունություն բնութագրող արդյունք, որը համապատասխանում է սանդղակի 18 - 32 միավորների սահմաններին:

Դա նշանակում է, որ այսպիսի անձինք աչքի են ընկնում իրենց հուզական մեծ լարվածությամբ, ինքնակառավարման ցածր

կարողություններով, սթրես - գործոնների նկատմամբ խոցելի են, օժտված են հոգեկան ոլորտի ցածր աշխատունակությամբ և այլն: Ստուգիչ խմբի 71.1%-ը (64 մարդ) ցուցադրել են միջին կայունության մակարդակ (14-17 բալերի սահմանում):

Աղյուսակ 3

Մթերեսի պայմաններում գործարար անձանց նյարդահոգեկան կայունության և դեզադապտացիայի ռիսկի արտահայտվածության արդյունքները՝ արտահայտված %-ներով և մարդկանց բացարձակ քանակով:

Հետազոտվող խմբեր	Նյարդահոգեկան կայունության ցուցանիշները					
	կայունություն		միջին կայունություն		անկայունություն	
	0-13 միավոր		14-17 միավոր		18-32 միավոր	
	%	մ/բ/ք	%	մ/բ/ք	%	մ/բ/ք
Հիմնական	45.5	41	40	36	14.4	13
Ստուգիչ	7.8	7	71.1	64	21.1	19

Եթե հաշվի առնենք, որ այդ ցուցանիշները աճի միտում ունեն դեպի սանդղակի անկայունության մակարդակը, այդ դեպքում ըստ թեստի պահանջների՝ արդյունքը համարվում է հոգեկան անկայունության, հուզական վիճակների անկառավարելիության հակազդումները: Արդյունքների քննարկման համաձայն՝ հետազոտվողների միայն 7.8%-ը (7 մարդ) ունեն նորմայի շրջանակներում դրսևորվող տազնապայնություն:

Հոգեկան կայունության չափման առումով հետաքրքիր տվյալներ են ստացվել հիմնական խմբի հետազոտվողների մոտ: Այսպես, գործարար անձանց 45.5%-ը (41 մարդ) դրսևորել են նորմայի մակարդակում արդյունքներ: 40 % գործարարներ (36 մարդ) ցուցադրել են միջին կայունության մակարդակ: Ինչպես երևում է աղյուսակի արդյունքներից, հիմնական խմբի արդյունքները կենտրոնացած են աղյուսակի ձախ մասում: Դա նշանակում է, որ խմբի ընդհանուր արդյունքների փոփոխության միտումները ուղղված են դեպի հոգեկան

կայունության նորմայի սանդղակը, որի ընդհանուր գումարը կազմում է 85.5% (77 մարդ):

Ուսումնասիրվել են նաև հիմնական և ստուգիչ խմբերի հոգեկան կայունության առանձնահատկությունները՝ ըստ սեռերի գրանցած արդյունքների (աղյուսակ 4): Հետազոտվողների սեռային և տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ նյարդահոգեկան կայունության դրսևորումները արտահայտված են հետևյալ կերպ. հիմնական խմբում կանանց գերակշռող մեծամասնության նյարդահոգեկան կայունությունը կազմում է 45,5% (25 մարդ), միջին՝ բարձրի միտումով՝

Աղյուսակ 3. Հետազոտության տարբեր խմբերում ընդօրկված կանանց և տղամարդկանց նյարդահոգեկան կայունության և դեզադապտացիայի ռիսկի արտահայտվածության արդյունքները՝ %-ներով և մարդկանց բացարձակ քանակով:

Հետազոտվող տարիքային խմբեր		Նյարդահոգեկան կայունության ցուցանիշները					
		կայունություն		միջին կայունություն		անկայունություն	
		0-13 միավոր		14-17 միավոր		18-32 միավոր	
		%	մ/բ/ք	%	մ/բ/ք	%	մ/բ/ք
Հիմնական	կանայք	37.8	17	51.1	23	11.1	5
	տղամարդիկ	53.3	24	28.9	13	17.8	8
Ստուգիչ	կանայք	4.4	2	77.8	35	17.8	8
	տղամարդիկ	11.1	5	64.4	29	24.4	11

(14-17 միավորի սահմանում) նյարդահոգեկան կայունություն ունեն 33.3% կանայք: Միջին՝ ցածրի միտումով արդյունքը, որը կազմում է խմբի մասնակիցների 45%-ը համարվում է բավարար, քանի որ ինչպես քանակական, այնպես էլ տոկոսային արտահայտվածությամբ՝ նվազման միտումով տեղավորվում են սանդղակի կենտրոնական մասում: Հիմնական խմբի տղամարդկանց արդյունքները անհամեմատ բարենպաստ են, քանի որ նրանցից 11.1% (5 մարդ) հանդես են եկել 0-13 միավորի սանդղակում, ինչը հաստատում է, որ հետազոտվողները ունեն

նյարդահոգեկան կայունության բարձր մակարդակ: Հիմնական խմբի տղամարդկանցից այդպիսի բնութագիր ունեն 55.6%-ը (25 մարդ):

Ըստ Լ. Պ. Գրիմակի՝ գործունեության բնագավառում շարունակական հոգեկան լարվածության հետևանքով բացասական ապրումները մարդկանց հոգեկան համակարգում մնում են երկար ժամանակ, որի պատճառով դժվարանում է նրանց նյարդահոգեկան ուժերի հետագա վերականգնման գործընթացը: Միաժամանակ նվազում է անձի հոգեկան կայունությունը, աճում են անհանգստությունը և հուզական անկայունությունը, ի հայտ են գալիս վեգետո-անոթային և մարմնական համակարգերի գործառույթային խանգարումներ, իջնում է օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը [8, էջ 107]: Ինչպես երևում է աղյուսակ 4-ի տվյալների վերլուծությունից, ստուգիչ խմբի կանայք համեմատ հիմնական խմբի կանանց, գրանցել են նյարդահոգեկան անկայունության տվյալներ: Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ, թե՛ ստուգիչ և թե՛ հիմնական խմբերում նյարդահոգեկան անկայունության արտահայտվածությունը գերակշռող է կանանց խմբերում: Դա պայմանավորված է նաև կանանց կենցաղային, սոցիալ-տնտեսական ծանրաբեռնվածությամբ, ինչպես նաև անձնային հուզականությամբ, նրանց տպավորվողականությամբ և սեռին բնորոշ այլ առանձնահատկություններով:

Այսպիսով, ստուգիչ խմբում բարձր տազնապալիության ցուցանիշներն ավելի մեծ տոկոս են կազմում, քան հիմնական խմբում: Տազնապալի, անհանգստության վիճակը երբեմն անվանում են «տազնապալիության, տազնապալի սպասման վիճակ» և գնահատում որպես վտանգի նկատմամբ հուզական հակազդման անձնային հատկություն [5, 6, 10]: Միևնույն ժամանակ, ստուգիչ խմբի կանանց և տղամարդկանց տազնապալիության բարձր մակարդակը հանդիսանում է գործարարների համար ուղեկցվող հուզական ֆոն, որը մշտական լարվածության, անհարմարվողականության ու գործունեության վրա կենտրոնանալու դժվարություններ է ստեղծում: Կարելի է եզրակացնել, որ հիմնական խմբի գործարարների մոտ տազնապալիության ցածր մակարդակի արտահայտվածությունը պայմանավորված է նրանց ներքին ինքնակառավարման, կամային մոբիլիզացման հնարավորություններով: Հիմնական խմբում ընդգրկված անձինք առաջադրանքներում աչքի են ընկնում նաև իրենց ստեղծարարությամբ ու հնարամտությամբ: Գործարար անձանց այդպիսի բնութագրերը վերագրվում են նրանց պահեստային հնարավորությունների մոբիլիզացիոն կարողություններին, որն ըստ թեստի մեկնաբանման՝ համարվում է բարձր հոգեկան աշխատունակություն:

Հետազոտական խմբերում անձնային առանձնահատկությունների ուսումնասիրումը ցույց է տվել, որ կանանց մոտ տագնապալիությունն ու նեյրոտիզմը ավելի բարձր են, բայց նրանց մոտ ավելի լավ է զարգացած նաև տագնապը ճնշելու ընդունակությունը: Հիմնական խմբի կանանց մեծամասնության մոտ նկատվող նյարդահոգեկան անկայունությունը պայմանավորված է նրանց գործունեության առանձնահատկություններով, իրենց բնորոշ առկա և հավանական վտանգների մեծ հավանականությամբ (դրամի արժեզրկվելը, մրցակցության չդիմանալը, սնանկացումը, հաճախակի անհարկի ստուգումները և այլն), որոնք ժամանակի ընթացքում ձևավորում և ձևափոխում են կանանց փխրուն հոգեկան աշխարհը: Նույնը կարելի է ասել նաև տղամարդկանց խմբի վերաբերյալ:

Այսպիսով, խնդրահարույց իրավիճակներում հիմնական խմբում ընդգրկված գործարարների հարմարման գործընթացը ուղիղ կախվածություն ունի նրանց հուզական ոլորտի ինքնակարգավորման հնարավորություններից: Պատասխանատու իրավիճակներում (թեստի պահանջների իրականացման ընթացքում) հիմնական խմբում ընդգրկված գործարար անձինք գործունեության պահանջներին հարմարման նպատակով կարողանում են արդյունավետ կերպով մոբիլիզացնել իրենց պահուստային հնարավորությունները: Հետևապես՝ անցումային հասարակության սթրեսածին պայմաններում արդյունավետ գործարարների հաջողությունների հիմքում ընկած են նրանց հոգեկան հուսալիության ու անբարենպաստ պայմաններում հոգեկան կայունության անձնային առանձնահատկությունների ինքնուրույն կառավարման մեխանիզմները:

ՔՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ս. Ռ., Կառավարման համակարգում ծառայողների միջանձնային հարաբերությունների յուրահատկությունները: Բավրեր Երևանի Համալսարանի, N3/35, 2008թ. էջ 24,-31:
2. Малкина - Пых И.Г. Экстремальные ситуации - М., Питер, 2006, 925 с.
3. Майерс Дэвид – Социальная психология.– СПб.: Питер, 1997. -684 с.
4. Акимов О.Ю. Малый и средний бизнес. Эволюция понятий, рыночная среда, проблемы развития Изд: Финансы и статистика.- Москва, 2003 г.
5. Бодров В.А. Психологический стресс: развитие учения и современное состояние проблемы.– М., Инст. псих-гии. РАН. 1995.-128 с.
6. Анохин П.К. Очерки физиологии функциональных систем:- М. Медицина, 1975, с. 97.

7. Практическая психодиагностика.- Методики и тесты. Учебное пособие. / ред.-сост. Райгородский Д.Я/.– Самара: изд. Дом «БАХРАХ», 1998.– с. 61-67.
8. Гримак Л.П. Резервы человеческой психики.- М.: Полит. литература, 1989. – с. 107.
9. Виткин Дж. Женщина и стресс. – СПб., Питер, 1996. 306 с.
10. Виткин Дж. Мужчина и стресс. – СПб., Питер, 1996, 208 с.

РЕЗЮМЕ
ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ НЕРВНОПСИХИЧЕСКОЙ
УСТОЙЧИВОСТИ БИЗНЕСМЕНОВ
В ТРАНСФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ
В.М. МКРТУМЯН

Обсуждаются проблемы тревожности и психической устойчивости бизнесменов в стрессовых условиях. Экспериментальным путем выявлены эмоциональные компоненты половых различий и функциональные характеристики нервнопсихической устойчивости обеспечивающие результативности деятельности бизнесменов.

SUMMARY
PSYCHOLOGICAL FEATURES OF FUNCTIONAL FEATURES OF THE
BUSINESSMEN, IN THE TRANSFORMATIVE SOCIETY
V.M.MKRTUMYAN

The article discusses the problems of transformative society and also functional systems of supporting the businessmen' productivity.

Through the experiments there are revealed both psycho-psychological features of the businessmen' functional opportunities and the system of factors supporting the businessmen' activity.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 373.3.016 : 51

ԻՆՏԵԳՐԱՑԻԱՆ ՈՐՈՂԵՍ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԻՆ
Գ. Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆՆԵՐ, Ս. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆՆԵՐ

¹ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: gagik_hayrapetyan@yahoo.com

² Զորավար Անդրանիկի անվան թիվ 12 հիմնական դպրոց,
0231, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Արագածի զանգված
e-mail: sara_margaryan@yahoo.com

Հոդվածում քննարկվում է տարրական դպրոցում մաթեմատիկայի դասի շրջանակում ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը՝ կապված աշակերտների ինտելեկտուալ դաստիարակության հետ: Մասնավորապես, ներկայացվում է ուսուցման գործընթացում ինտեգրացիայի նշանակությունը՝ օգտագործելով ինտեգրված ուսուցում հասկացությունը՝ ընդգծելով դրա հիմնական դրույթները և բացահայտելով մաթեմատիկայի դասերին ինտեգրված ուսուցման խնդիրները, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Ներկայացվում է տարրական դպրոցում մաթեմատիկայի ինտեգրված դասի էությունը, առանձնահատկությունները և առավելությունները: Որպես արդյունք մշակվել է «Ամրապնդել 6-ի բազմապատկում, բաժանում» թեմայով ինտեգրված ինովացիոն տեխնոլոգիաներով դաս:

Բանալի բառեր. ինտեգրացիա, ինտեգրված ուսուցում, ինտեգրված դաս, ինտելեկտուալ ակտիվություն, ինտեգրված ինովացիոն տեխնոլոգիաներ, էկոլոգիական մշակույթ:

Ներկայացված է խմբագրություն 21.10.2015 թ.:

Այսօր ուսումնական առարկաների ինտեգրումը և ինտեգրված ուսուցումը նպաստավոր միջոց են դասն արդյունավետ և կյանքի վրա հիմնված դարձնելու համար: Կիրառելով ինտեգրացիան ուսուցման գործընթացում՝ հանրակրթական դպրոցից պահանջվում է կրթել և դաստիարակել ինտելեկտուալ դաստիարակված անձ, որն էլ պետք է համապատասխանի հասարակության արժեհամակարգին: Այդ է պատճառը, որ տարրական դպրոցի մաթեմատիկական կրթության հիմքում «Սովորում եմ սովորել» հիմնադրույթն է:

Ինտեգրացիան ճշգրիտ և հասարակական գիտություն է, գործընթաց, գործողություն, ամբողջականության արդյունք, որն ապահովում է դեպի մաթեմատիկական սովորողների մոտիվացիայի կայացմանը՝ մոդելավորելով մեր իրականությունը:

Ուսուցման համակարգում ինտեգրացիա հասկացությունը կարող է ունենալ երկու նշանակություն.

- որպես ուսուցման նպատակ՝ աշակերտների մոտ ստեղծել ամբողջական պատկերացում շրջապատող միջավայրի մասին,

- որպես ուսուցման միջոց՝ գտնել ընդհանուր հարթակ առարկայական գիտելիքների միջև:

Ինտեգրված ուսուցումը նպատակաուղղված գործընթաց է, կազմակերպված և համակարգված ուսումնաճանաչողական գործունեություն, գիտելիքների յուրացման կարողություններ, էսթետիկական աշխարհայացք, որոնք կնպաստեն աշակերտի ինքնաճանաչողությանը, ինքնագարգացմանը և ինքնագնահատմանը: Ինտեգրված ուսուցման դրույթներն են.

- կողմնորոշվել և նկարագրել ինտեգրացիայի սկզբնաղբյուրի հիմքը, փաստերը և հիմնավորումները,

- հատուկ ուշադրություն դարձնել ինտեգրացիայի վերլուծությանը, բնութագրիչ բնորոշմանը, կազմությանը, հասկացությունների և եզրույթների ապահովմանը,

- բացահայտել գենետիկ հիմքերը, կողմնորոշվել և բնութագրել գործառությանն նկարագրությունը, իրականացնել տեսական համընդհանուր վերլուծություն,

- կողմնորոշվել և քննարկել հիմնական արդյունքները [1]:

Տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ պետք է անցնել ինտեգրված ուսուցմանը, որն էլ կնպաստի անհատի ստեղծագործական, տրամաբանական մտածողության զարգացմանը, գիտելիքների, կարողությունների համակարգը տարբեր բնագավառների գործունեություններից ինտեգրմանը, ուսուցումը համակարգված և փոխկապակցված կազմակերպմանը [2]:

Աշակերտի ինտելեկտուալ ակտիվությունը սկսվում է տարրական դպրոցից և մաթեմատիկայի դասերին ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների (տեղեկատվական և հեռահաղորդակցման) համատեղ կիրառումը նպաստում է բազմակողմանի ակտիվության զարգացմանը, դիտողականությանը, փաստարկների և ներկայացված դատողությունների հիմնավորմանը, ուսումնական խնդիրների լուծմանը: Փաստերի, հասկացությունների համակողմանի դիտարկումը հանգեցնում է ձեռք բերված գիտելիքների ընդհանրացմանը և համակարգմանը [3]: Ուստի, ինտեգրված ուսուցումը պետք է սկսել տարրական դպրոցից:

Տարրական դպրոցում մաթեմատիկայի դասերին ինտեգրված ուսուցման շրջանակում կարևորում ենք հետևյալ խնդիրների լուծումը.

- բարձրացնել մաթեմատիկական գիտելիքների յուրացումը, խորացնել ուսումնական նյութի իրազեկության մակարդակը,

- որոնել եզրույթներ մաթեմատիկայի և մյուս ուսումնական առարկաների միջև, ընդլայնել մտահորիզոնը, զարգացնել ճանաչողական ակտիվությունը բնագիտամաթեմատիկական առարկաներ ուսուցանելիս,

- գտնել առանձնահատուկ ուղիներ՝ գիտելիքները յուրացնելու և կիրառելու:

Մաթեմատիկայի դասերին ինտեգրված ուսուցումը հստակ կազմակերպված դաս է, որի նպատակն է միավորել տարբեր առարկաների գիտելիքները, որն էլ կնպաստի աշակերտի ընդհանուր զարգացվածության մակարդակի և մտահորիզոնի ընդլայնմանը:

Մաթեմատիկայի դասերին տարրական դպրոցում ուսումնական նյութն ուսուցանելիս, քննարկելիս և վերլուծելիս պարզ է դառնում, թե ինչպես են օգնում պատճառահետևանքային կապերը, կիրառված տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները մաթեմատիկական գիտելիքների ավելի արդյունավետ յուրացմանը:

Ինտեգրացիան սովորեցնում է աշակերտներին ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, զարգացնել հետաքրքրությունն ուսուցանվող նյութը յուրացնելիս, բարձրացնել աշակերտների ինտելեկտուալ մակարդակը:

Աշակերտներին շրջապատող աշխարհը տարրական դպրոցում ճանաչվում է նրանց կողմից բազմազանության և միասնության մեջ, իսկ դպրոցական առարկաների արդյունավետ, համատեղ կիրառումը նպաստում է ուսուցման բովանդակության բազմակողմանի ընկալմանը:

Տարրական դպրոցում մաթեմատիկայի ինտեգրված դասն ըստ կառուցվածքի տարբերվում է ավանդական դասերից ուսումնական նյութով՝ կոնկրետ, համակարգված, հակիրճ, տրամաբանորեն փոխկապակցված, ուսումնական հարուստ տեղեկատվությամբ՝ ինտեգրված առարկաների դասի բոլոր փուլերում [4, 5]:

Ինտեգրված դասերի առավելություններն են.

- աշակերտը մի առարկայից անցնում է մի այլ ուսումնական առարկայի՝ միաժամանակ հարստացնելով իր նախնական գիտելիքներն այդ առարկաներից, զարգացնելով ընդհանուր զարգացվածության մակարդակը,

- աշակերտների կողմից իրենց շրջապատող աշխարհը ճանաչվում է բազմակողմանի և միասնական, իսկ դպրոցական ծրագրի առարկաներն առանձին մասեր են այդ միասնության,

- ինտեգրված դասերը զարգացնում են աշակերտների տրամաբանական մտածողությունը, ձևավորում են համեմատելու և եզրակացություններ անելու կարողությունը, կտրուկ բարձրացնում են ճանաչողական հետաքրքրությունը,

- հնարավորություն է տալիս խորությամբ և բազմակողմանի ուսումնասիրել ուսումնական նյութը:

Ինտելեկտը ճանաչողական գործընթաց է, որը ներկայացվում է այնպիսի տարրերի միջոցով, ինչպիսիք են՝ ընկալումը, երևակայությունը, հիշողությունը և մտածողությունը: Ինտելեկտուալ ընդունակությունների զարգացման և դաստիարակման միջոցը համարվում է ուսուցումը (այդ թվում՝ ինտեգրված): Այդ համակարգը ներառում է ուսումնական գործընթացի մշակույթի և ինտելեկտուալ աշխատանքի ձևավորումը և կազմակերպումը: Ուսումնական գործընթացի ճիշտ պատկերացումը հնարավորություն կտա արդյունավետ յուրացնել գիտելիքներ, նպաստել մտավոր զարգացմանը, քննարկել տրամաբանական վերլուծությունների շղթան:

Ինտեգրված դասի արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից՝ դասի թեմայի ճիշտ ընտրությունից, մեթոդներից, առարկաների ընտրությունից և նյութի մատուցումից: Ինտեգրված դասերը.

- փոխում են ինտելեկտուալ գործունեությունը, ապահովում նախատեսված ուսումնական նյութն առաջատար գաղափարների տեսանկյունից, հաստատում փոխադարձ լրացնող, համակարգված ուսուցում, նպաստում էսթետիկական դաստիարակությանը,

- աշակերտներին ընդգրկելով ստեղծագործական գործունեության մեջ (այն կարող է արտահայտվել իրենց ոտանավորների, նկարների, ստեղծագործությունների տեսքով), արտացոլում են նրանց ներաշխարհը, անհատական, սկզբունքային վերաբերմունքները տարբեր երևույթներին և ուսումնական գործընթացներին:

Մաթեմատիկայի ինտեգրված դասերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրա հիմքում ընկած է մաթեմատիկան, և վերջինս համարվում է գլխավորը, իսկ մնացած ինտեգրվող առարկաներն օգնում են ծավալուն ուսումնասիրել, հասկանալ կապերն ու գործընթացները, ինչպես նաև գործնականում կիրառել յուրացված գիտելիքները: Ինտեգրման տեխնոլոգիան օգնում է հասնել ընդհանրացումների, ակտիվացնել, հետաքրքիր դարձնել սովորողների ուսումնաճանաչողական գործընթացը, զարգացնել հաղորդակցական կարողությունը:

Ինտեգրված ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը կնպաստի առ այն, որ ուսուցումը լինի ինտերակտիվ, իսկ հետազոտական աշխատանքներն աշակերտին ունկնդրից կտեղափոխեն ակտիվ ուսումնական գործընթացի՝ բացահայտելով անձանոթը, ինչպես նաև

ուսուցիչը, տարբեր առարկաների գիտելիքների ինտեգրմամբ, կուղղորդի ամբողջովին ընկալել հետազոտվող թեման:

Վերոնշյալ պահանջները ստորև կներկայացվեն գործնականորեն ինտեգրված դասի միջոցով, որտեղ կիրառվել են և՛ ժամանակակից տեխնոլոգիաներ, և՛ միջոցներ:

Դասարան՝ 2-րդ:

Դասի թեման՝ ամրապնդել 6-ի բազմապատկում, բաժանում:

Նպատակները՝ ամրապնդել 6-ի բազմապատկումը, բաժանումը 6-ի, զարգացնել մաթեմատիկական մտածողությունը, դաստիարակել, սիրել և պահպանել բնությունը, ամրապնդել հետազոտական-ստեղծագործական կարողությունները՝ օգտվելով տեղեկատվական միջոցներից:

Կահավորում՝ համակարգիչ, էլեկտրոնային պատկերազարդումներ, իլյուստրացիոն նկարներ, անիմացիոն (շարժապատկերային) մուլտֆիլմ, համացանց, մուլտիմեդիական լուսացրիչ:

Բոլոր սահիկներն (սլայդներն) ունեն էլեկտրոնային պատկերազարդում, մուլտիմեդիական են և ցուցադրվում են էկրանին:

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս. էկրանին պատկերվում է մի փոքրիկ տեսանյութ Հայաստանի բնաշխարհի վերաբերյալ:

Տրանսիացի փիլիսոփա Ժան Ժակ Ռուսսոն համարել է. «Դարձրե՛ք ձեր երեխային ուշադիր բնության երևույթների նկատմամբ: Ձևակերպե՛ք նրա հասկացողությանը մատչելի հարցադրումներ և թո՛ւյլ տվեք, որ նա լուծի դրանք: Թող նա իմանա ոչ թե այն, ինչ դուք ասացիք, այլ այն, ինչ ինքը հասկացավ»:

Երեխանե՛ր, այսօր մեր դասի սկզբունքն է՝

«Սիրե՛նք և պահպանե՛նք բնությունը»:

Ի՛նչ հրաշալի է հայրենի բնաշխարհը: Այսօր, ինտեգրելով մեր գիտելիքները ձեզ շրջապատող հրաշալի բնության և 6-ի բազմապատկման, բաժանման վերաբերյալ, կամրապնդենք մեր իմացությունը, նոր տեղեկությունները, դասի նյութը դյուրին, համոզիչ, հեշտությամբ մտապահելուն:


Սլայդ 1: Բանավոր հաշիվ

Ամրապնդել 6-ի բազմապատկման և բաժանման աղյուսակը:

Պատկերված է ծառի էլեկտրոնային պատկերազարդում, որտեղ բանավոր հաշվի բլից-հարցադրումներն են, որոնց երեխաները պետք է պատասխանեն արագ և ճիշտ:

Երեխանե՛ր, մենք պետք է չվնասենք ծառերը, այլ պետք է տնկենք, աճեցնենք, քանի որ դրանք մատակարարում են թթվածին, որի շնորհիվ էլ մաքուր օդ ենք շնչում:

Համապատասխան գիտելիքների առկայությունը սովորողների մեջ կձևավորի էկոլոգիական մտածելակերպ, որն էլ հիմք կդառնա բնության հետ ճիշտ հարաբերությունների կառուցման, առողջ ապրելակերպի և էկոլոգիական մշակույթի ձևակերպմանը:



Մլայդ 2: Ինքնուրույն աշխատանք

Ուսուցիչն աշակերտներին բաժանում է 3 խմբի, որոնց տրվում են ծածկագրեր ծաղիկների անուններով՝ շուշան, մեխակ, կակաչ: Ծածկագրերի վարժությունների պատասխանների հաջորդականությունը համապատասխանում է ծաղկի անվան տառերի հաջորդականությանը: Ճիշտ կատարելով վարժությունները՝ վերծանում են ծածկագրերը:

Դասագործընթացում կարող են օգտագործել նաև համացանցը որպես լրացուցիչ տեղեկատվական աղբյուր տվյալ ծաղիկների մասին տեղեկությունն ամբողջական ներկայացնելու համար:

Ներմուծվում է մրցություն. ո՛չ միայն արագ և ճիշտ լուծել, այլ պետք է նաև ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն տալ տվյալ ծաղկի մասին:

- Ծաղիկները պարտեզում
- Երփներանգ են ու բազում.
- Նայի՛ր պես-պես գույներին,
- Նրանք սպասում են ձեր հաշվարկին:

Հաշվի՛ր արտահայտության արժեքը.					
1-ին թիվ		2-րդ թիվ		3-րդ թիվ	
5 · 4 + 3 = ...	-	2	4 - 5 = ...	-	մ
					կ

$46 - 2 \cdot 6 = \dots$	- ու	$30 : 6 = \dots$	- ե	$24 : 24 = \dots$	- ա
$24 : 6 + 19 = \dots$	- շ	$5 \cdot 7 - 22 = \dots$	- խ	$3 \cdot 5 = \dots$	- կ
$16 : 16 = \dots$	- ա	$18 : 18 = \dots$	- ա	$36 : 9 \cdot 3 = \dots$	- ա
$2 \cdot 10 + 2 = \dots$	- ն	$6 \cdot 2 + 3 = \dots$	- կ	$3 \cdot 6 + 7 = \dots$	- չ

Մլայդ 3: Խաղ «Գիտունիկները»

Անցկացվում է ավագների մրցույթ (ավագների առաջադրանքները):

1. Կազմել խնդիր՝ զարնանային ծաղիկների վերաբերյալ: Գրի՛ր միայն պայմանը և փոխանցի՛ր ընկերոջը:

2. Գրի՛ր ընկերոջդ կազմած խնդրի պահանջը:

3. Լուծի՛ր խնդիրը:

Վերջում ավագները փոխադարձ գնահատում են: Երգում են «Ծաղիկների երգը»:

Սրգերով պատկերված զամբյուղ է էկրանին.

Աշուն է եկել
Ու շուրջբոլորը
Լցրել հյութալի մրգերով,
Բարիքից բերել
Ու մեր զամբյուղը
Համեղ մրգերով զարդարել:

Դասի այս փուլում երեխաները ոչ միայն ուսումնասիրում են դասի նյութը, այլ նաև ստեղծագործում, որն էլ նպաստում է մաթեմատիկական և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Աշակերտները գրում են անվանակերպեր և հորինում փոքրիկ հեքիաթ ու վերնագրում:

Տանձ տատիս այգում շատ է լինում,
Անուշահամ միրգ է այն շատ,
Նման բնության հրաշքին գունաշատ՝
Ձուլված ոսկուց:
Խակ վիճակով կանաչ գույնի,
Նման է նա երկրագնդի:
Ձեզ միշտ ժպտում է,
Որպես աշնան թագուհի
Բոպե դառնում պերճաշուք:

Հայաստանի մրգերի խորհրդանիշ ծիրանն էլ մաղթում է, որ դասի այս փուլն էլ երեխաները հաղթահարեն բարեհաջող.

Բարի երթ մաղթենք մեր հողին,
Մեր հողի ոսկե մրգերին,

Մեր հողերն առատ պահողին:

Համատեղում են տրամաբանական և ստեղծագործական աշխարհը:

Մշադ 4: Դասարանն ըստ աշակերտների մակարդակների բաժանվում է 3 խմբի (տարամակարդակ):

1-ին խումբ (1-ին մակարդակ)

Լրացրո՛ւ բաց թողնված թիվը և գունավորի՛ր.



2-րդ խումբ (2-րդ մակարդակ)

Երկրորդ շարքի թվերը ստանալու համար ո՞ր թվի վրա պետք է բաժանել (աշակերտները ստեղծագործեն ուտանավորներ՝ ըստ անվանակերպերի):

12	18	24	36	54	42
2	3	4	6	9	7

3-րդ խումբ (3-րդ մակարդակ)

Լրացրո՛ւ օրինաչափությունը (հորինել փոքրիկ հեքիաթ մրգերի վերաբերյալ և վերնագրել): Հեքիաթը հորինում է խումբը՝ համագործակցելով մեկը մյուսի միտքը շարունակելով:
7, 13, 19, 25, 31,

Դասի վերջում ցուցադրվում է «Բույսերի թագավորությունը» անիմացիոն մուլտֆիլմը, որից հետո ոչ միայն պետք է գմայլվել բույսերի գեղեցկությամբ, այլ աշակերտները կքննարկեն դրանց բուժիչ նշանակությունը, պահպանել, խնամել, սիրել և գեղեցկացնել բնությունը:

Տեսլին հանձնարարություն. օգտվելով տեղեկատվական աղբյուրներից՝ նախապատրաստել սլայդ (ապահովելով համապատասխան իլյուստրացիան). կազմել խնդիր կենդանական աշխարհի վերաբերյալ օգտագործելով ինտեգրացիայի տարրերը: Մյուս դասին բարձր է գնահատվում (ընդանուր քննարկման արդյունքում) այն աշակերտը, ով խնդիրը կազմելիս պահպանել է ինտեգրացիայի տարրերը, ճիշտ է կատարել իլյուստրացիան՝ ըստ խնդրի բովանդակության:

Դասն ավարտվում է հետևյալ բանաստեղծությամբ.

Ծագում է արևը,
Զարթնում են բնությունը,
Քնքշաբույր ծաղկանց բույրը:

Ողջունում են անտառ ու դաշտ
Ողջունում է մանուկների զվարթ ծիծաղը:

Այսպիսով, դասին ինտեգրվեցին «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը», «Մայրենի», «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաները, որոնց միջոցով քայլ արվեց տարրական դպրոցում զարգացնելու աշակերտների ինտելեկտուալ դաստիարակությունը և բացահայտվեցին մաթեմատիկայի ինտեգրված դասի էությունը, առանձնահատկությունները և առավելությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Современные образовательные технологии и их роль в развитии личности младших школьников / Сборник материалов научно-практической конференции. Череповец, 12 мая 2010 года. - Вологда, 2011.- 147 с.
2. Горелова Г. Б. Интегрированные уроки в начальной школе / Молодой ученый -2015г. N 1,2, с. 9-11.
3. Комплексная информация образования / авт. сост. О. В. Крючкова. Минск: Красико-Принт. 2006г.– 176 с.
4. Кравченко С.И., Гайдук Т.И. Интегрированный урок как форма активизации познавательной деятельности ученика / С.И. Кравченко, Т.И. Гайдук // Нач. шк. плюс до и после. 2002., №9., с. 42-48.
5. Пучугин С.С. Интеграция учебно-познавательного процесса в начальных классах образовательной системы: Школа 2100 /С.С. Пучугин/ Начальная школа плюс до и после: 2002г., N 2., с. 68-71.

РЕЗЮМЕ

**ИНТЕГРАЦИЯ КАК ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЕ ВОСПИТАНИЕ
В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ НА УРОКАХ МАТЕМАТИКИ
Г.С.АЙРАПЕТЯН, С.М.МАРГАРЯН**

В статье представлена необходимость интегрированного обучения в начальной школе в рамках урока математики, связанная с интеллектуальным воспитанием учеников. В частности, представляется значимость интеграции в процессе обучения, используя понятие интегрированного обучения, подчеркнуты его основные принципы и раскрыты задачи интегрированного обучения на уроках математики, при этом учитывая возрастные особенности. Дана сущность интегрированного урока, его особенности и преимущества. Как результат разработан и представлен интегрированный инновационными технологиями урок-презентация.

SUMMARY
INTEGRATION AS AN INTELLECTUAL EDUCATION
IN PRIMARY SCHOOL DURING MATHEMATICS LESSONS
G.S.HAYRAPETYAN, S.M.MARGARYAN

The article is on the necessity of integrated education within the framework of mathematics lesson in primary school, related to the intellectual education of the pupils. Particularly, there is demonstrated the importance of the integration in the learning process, using the idea of integrated education, highlighting its main principals and disclosing the issues of integrated education during mathematics lessons, taking into consideration age features. The article discusses the nature of integrated lesson, as well as its features and advantages. As a result there was developed and presented lesson-presentation based on integrated innovative technologies.

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

**ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԿԱՆԽԵԼՈՒ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ
ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Ն.Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան,0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail,natarm@mail.ru**

Հոդվածում դիտարկվում են դեռահասների վարքային շեղումների առաջացման որոշ պատճառներ, և դրանց նախականիւելու նպատակով առաջադրված են մեթոդական հանձնարարականներ, որոնք կնպաստեն ինչպես ծնողների դաստիարակչական գործընթացի կազմակերպմանը, այնպես էլ մանկավարժների ուսումնական և մանկավարժահոգեբանական գործունեությանը: Ենթադրվում է, որ դրանց հիման վրա առավելապես կբարելավվեն ինչպես մանկավարժ-աշակերտ, այնպես էլ ծնող-երեխա փոխհարաբերությունները՝ սրանով իսկ որոշակի դրական փոփոխություններ առաջացնելով անչափահասների վարքային դրսևորումներում: Առաջադրվող մեթոդների և մեր դիտարկումների արդյունքների հիման վրա հետևություններ են արվել այն մասին, որ ներկայացվող մեթոդների միջոցով դաստիարակների, ուսուցիչների, մանկավարժների և ծնողների համատեղ աշխատանքի ընթացքում հնարավոր է արմատական փոփոխություններ ներմուծել ինչպես մանկավարժական և դաստիարակչական գործընթացներում, այնպես էլ դեռահասների վարքային շեղումների շտկողական աշխատանքների ոլորտում:

***Բանալի բառեր.** դեռահասներ, վարքային շեղումներ, կանխարգելիչ միջոցառումներ, կրթադաստիարակչական համակարգ, բարոյագիտակցություն, իրավագիտակցություն, անբարենպաստ ընտանիք, հուզազգացմունքային ապրումակցում, դաստիարակություն:*

Ներկայացված է խմբագրություն 10.10.2015 թ.:

Սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների արմատական վերափոխումներ ապրող երկրում հաճախ ստեղծվում են որոշակի ոչ ցանկալի և բացասական երևույթներ, որոնք անմիջականորեն ազդում են կեցության վրա և առաջացնում են այնպիսի փոփոխումներ, ինչպիսիք են՝ երեխաների նկատմամբ պետական - հասարակական սակավ հոգածությունը, անարդյունավետ կրթադաստիարակչական համակարգի գործունեությունը, ինչպես սոցիալական, այնպես էլ մանկավարժական բարձիթողությունը: Լուրջ և անցանկալի փոփոխություններ և

այլափոխումներ են ծագում մեր գիտակցության մեջ՝ առաջացնելով նորափոխումներ և՛ գործունեության մեջ, և՛ վարքի շեղումների նախագուշացման մոդելների նոր կիրառումներում: Նախկինում գոյություն ունեցող պատժիչ, ուղղիչ կանխարգելումը, որը հիմնված էր սոցիալական հսկողության և քրեական պատժի վրա, ներկայումս առավել նպատակահարմար է փոխարինել դեռահասների և պատանիների հասարակական-իրավական, հոգեբանական և մանկավարժական աջակցությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների համակարգով:

Այսօրվա կրթադաստիարակչական համակարգի կառուցվածքի վերափոխումը նպատակ ունի նորովի ձևավորել գիտակցության ինքնատիպությունն ու ազգայնությունը, երեխաների կրթական մակարդակի, ինչպես նաև բարոյագիտակցության և իրավագիտակցության զարգացումը, համամարդկային արժեքների վերախմաստավորումը: Սակայն այս ամենը դեռևս լիարժեք չի գործի և չի կիրառվի մեր կրթօջախներում, մինչդեռ կրթադաստիարակչական ոլորտի յուրաքանչյուր ոք չհամարի իր պարտքը լրջորեն վերակառուցել ճգնաժամի մեջ գտնվող նշված համակարգը: Անհրաժեշտ է վերանայել, բարեփոխել և վերակառուցել կրթության և դաստիարակության ոչ միայն ավանդական մեթոդներն ու մոտեցումները, ծրագրերն ու դասագրքերը, այլև հոգեբանորեն նորովի վերափոխումների նախապատրաստել ծնողներին և մանկավարժներին, որպեսզի նրանք կարողանան ապագա սերունդը դաստիարակել ժամանակին համարժեք նոր մոտեցումներով և սկզբունքներով և ի վիճակի լինեն դեռևս վարքի շեղումների վաղ շրջանում նկատել և կանխել անձի այլափոխումներն ու վարքի սայթաքումները:

Դեռահասների իրավախախտ վարքը կազմավորվում է սկզբնական փուլում նախ՝ ընտանեկան խաթարված երեխա-ծնող, երեխա-ընտանիք հարաբերություններում, երբ այն կրում է լատենտ (գաղտնի) բնույթ և արտահայտվում է երեխայի կամակորոթյամբ, համառությամբ, դժգոհությամբ իր նկատմամբ վերաբերմունքի համար, ծնողների կողմից ներկայացվող պահանջներին՝ ընդդիմությամբ, ապա այն հաջորդ փուլում աստիճանաբար ավելի խորանում է, առավել խոցելի են դառնում նշված հարաբերությունները և հակասությունները, որոնք էլ իրենց հերթին վճռորոշ փոփոխություններ են առաջ բերում երեխայի վարքում:

Նման դեպքերում ծնողների համար անհրաժեշտ է կազմակերպել ընտանեկան խորհրդատվություն՝ միջնանձնային հարաբերությունների վերակառուցման նպատակով, հոգեթերապիա, որի միջոցով կշտկվեն և կվերափոխվեն ընտանիքի անդամների դիրքորոշումները,

վերաբերմունքը երեխայի նկատմամբ: Ինչպես ճիշտ նշում է Ա. Ա. Նալչաջյանը. «Խոսելով երեխայի վրա ընտանիքի դաստիարակչական ազդեցության մասին, չպետք է մոռանանք, որ ծնող-երեխա հարաբերությունները միակողմանի չեն: Ճիշտ է, հիմնականը ծնողների ազդեցությունն է, երեխաներին իրենց գիտելիքները, փորձն ու վարքի ձևերը փոխանցելը, բայց երեխաներն էլ՝ իրենց հերթին ազդում են ծնողների վրա, նպաստում են նրանց զարգացմանը: Ավելին՝ երեխաները պահանջում են, ուղղակիորեն, թե անուղղակիորեն, որպեսզի ծնողներն ու ընտանիքի մյուս անդամները զբաղվեն իրենց ինքնակրթությամբ և ինքնադաստիարակությամբ» [1]:

Մեծ նշանակություն ունեն նաև ընտանիքում տիրող զգացմունքային, վարքագծային և իմացական բաղադրիչները, որոնց միջոցով երեխայի մոտ առաջին հերթին զարգանում է ապրումակցելու հատկությունը, որոշակի իրադրություններում ճիշտ գործողություններ կատարելու ընդունակությունը, օգնության ցուցաբերումը, վերջինիս անհրաժեշտության դեպքում և, ի վերջո, տարաբնույթ երևույթներին զնահատական տալն ու դատողություններ անելը:

Ըստ Ս. Ջ. Արզումանյանի՝ ընտանիքները պայմանականորեն բաժանվում են երկու հիմնական դասի՝ բարենպաստ և անբարենպաստ: Բարենպաստ ընտանիքի բնութագիրը ներառում է իր մեջ սոցիալ-հոգեբանական, բարոյաիրավական, մանկավարժական, տնտեսական և այլ մի շարք գործոնները, որոնք նպաստում են ընտանիքում դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծմանը և երեխայի անձի ճիշտ ձևավորմանը: Նման ընտանիքներին բնորոշ է դրական հուզագրգացմունքային դաշտ, ծնողների պատասխանատվությունն իրենց պարտականությունների նկատմամբ, հոգատար վերաբերմունքը միմյանց և երեխաների հանդեպ, հոգեբանական համատեղելիությունը [2]:

Ընտանիքի անբարենպաստությունը որոշվում է սոցիալ-տնտեսական գործոններով (սակայն ոչ միշտ) և բնութագրվում է բացասական հարաբերություններով, անհարգալից վերաբերմունքով, բարոյական գիտակցության ցածր մակարդակով:

Ներկա պայմաններում բավական կտրուկ փոխվել են հայ ընտանիքների սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական, դաստիարակչական իրավիճակները, որոնցում մեծ տեղ ունեն հասարակական, տնտեսական ճգնաժամը, ժողովրդի կենսամակարդակի կտրուկ անկումը և մի շարք այլ բացասական փոփոխություններ: Բնականաբար, վերջիններն էլ իրենց հերթին անդրադառնում են ինչպես ներընտանեկան հարաբերությունների, այնպես էլ դեռևս հնուց եկած հայկական ընտանիքներին բնորոշ դերակատարումների վրա:

Օրինախախտ անչափահասների ուղղման և վերադաստիարակության գործընթացում առաջնակարգ տեղ է հատկացվում մանկավարժությանը, դաստիարակչական հնարներին և ամենակարևորը՝ մանկավարժական տակտին:

Ըստ մեր նկատառումների՝ հատուկապես է անհրաժեշտությունն այն հարցում, որ ուղղիչ հիմնարկությունների աշխատակիցները և դաստիարակները պարտադիր ունենան մանկավարժական կամ իրավաբանական բարձրագույն կրթություն, քանզի առաջինը նպատակահարմար է հատկապես դաստիարակչական, իսկ մյուսը՝ օրենսդրական խնդիրների և պահանջների իրականացման առումով: Նրանք պարտադիր պետք է տեղյակ լինեն անչափահասների դաստիարակության առաջավոր մեթոդներին ու ձևերին, դեռահասների իրավունքների ու արտոնությունների վերաբերյալ օրենքներին և որոշումներին, պետք է ձգտեն յուրացնել մանկավարժական առաջավոր փորձը, պետք է աշխատեն մասնակցել օրինագանց վարք դրսևորող դեռահասների գործերի քննությանը և դրանց համապատասխան մշակեն անչափահասների օրինախախտումների կանխմանը վերաբերող կոնկրետ միջոցառումներ:

Մեր կողմից իրականացվող ուսումնասիրությունների և դիտումների ընթացքում (Երևան քաղաքի N 4, 162, 18 դպրոցներ և Վարդաշենի հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հանրապետական N 1 կրթահամալիր) համոզվեցինք, որ հանրապետության հատուկ դպրոցների, ուղղիչ հիմնարկությունների և հանրակրթական դպրոցների կապը, ընդհանուր առմամբ, թույլ է: Բնականաբար, ընտանիքի, դպրոցական մանկավարժական կոլեկտիվների և ուղղիչ հիմնարկությունների աշխատանքների միասնական, համաձայնեցված գործունեությունը միայն մեծապես կնպաստի օրինագանց անչափահասների վերադաստիարակությանը, նրանց աշխարհայացքի ճիշտ զարգացմանը:

Լինում են իրադրություններ, երբ երեխա-ձնող, երեխա-դպրոց, երեխա-սոցիալական միջավայր հարաբերությունները բարդանում են և դժվար են կարգավորվում ամենատարբեր հանգամանքների պատճառով [3].

1. ձնողների պատասխանատվության ցածր մակարդակ,
2. ընտանիքի սոցիալական ծանր վիճակ (գործազրկություն, աղքատություն),
3. հասարակական անբարենպաստ միկրոմիջավայր,
4. ուսումնաստիարակչական համակարգի ճգնաժամային վիճակ,

5. միկրոմիջավայրում քրեածին երևույթների (թմրամուլություն, հարբեցողություն, մուրացկանություն, թափառաշրջիկություն) առկայությունը:

Վերը նշված հանգամանքներն ընտանիքում թուլացնում են բարոյահոգեբանական կապերը, ծնում երեխաների նկատմամբ սխալ, անփույթ վերաբերմունք:

Ուսուցիչը պետք է կարողանա գտնել անգամ ամենադժվար երեխայի մոտ անձնային դրական որակներ, և զարգացնել դրանք՝ առավել խորացնելով և արմատավորելով դրական դիրքորոշումները:

Մենք, դիտարկումներ կատարելով և կանխարգելիչ միջոցառումների համակարգն առավել արդյունավետ ապահովելու նպատակով, անհրաժեշտ ենք համարում առավել ուշադրություն դարձնել մանկավարժական, սոցիալ-հոգեբանական, կազմակերպչական և իրավական մի շարք խնդիրների լուծմանը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ.

1. մանկավարժական խնդիրների դասին են պատկանում կրտսեր դպրոցականների, դեռահասների և պատանիների ուսումնադաստիարակչական ծրագրերի վերանայումն ու վերափոխումը, զբաղվածության և ազատ ժամանակի ճիշտ կազմակերպումը:

2. սոցիալ-հոգեբանական խնդիրների շարքին է դասվում՝ դեռահասներին և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական աջակցությունը հոգեբանների, մանկավարժների, սոցիալական աշխատողների կողմից (հոգեբանական ծառայություն, խորհրդատվություն, կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելում և այլն):

3. կազմակերպչական խնդիրներին են պատկանում այնպիսի ծառայությունների և սոցիալական մարմինների ստեղծումը, որոնք կնպաստեն անբարենպաստ ընտանիքներին և օրինազանց և իրավազանց երեխաներին հոգեբանական օգնությամբ, ինչպես նաև կիրականացնեն մասնագիտական խորհրդատվություն:

4. իրավական խնդիրներին են պատկանում իրավական նորմերի և նորովի մեխանիզմների ստեղծումը, որոնք կնպաստեն անչափահաս օրինախախտների իրավունքների պաշտպանությանը և վերաշտկողական համակարգի բարեկարգմանը:

Այսպիսով, իրավախախտ դեռահասների նկատմամբ հոգեբանական նախականիարգելիչ աշխատանքները պետք է կրեն ինչպես ընդհանուր, այնպես էլ անհատական բնույթ: Վերաշտկողական և կանխարգելիչ աշխատանքները պետք է ծավալվեն հատուկ դպրոցում հոգեբանական ծառայության աշխատակիցների և հոգեբանների կողմից օրինախախտ երեխաների ոչ անօրինական վարքի նկատմամբ

հոգեբանական միջոցառումների համալիր սկզբունքներով և նրանց վարքի հնարավոր կանխատեսումներով:

Մեր կողմից կատարած ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռահասների և ընդանրապես անչափահասների անձի բարոյական դեգրադացիան ընտանիքի և ծնողների ոչ ճիշտ ներգործության, նրանց անպատասխանատու վերաբերմունքի արդյունք է ինչպես իրենց պարտականությունների, այնպես էլ երեխաներին ներկայացվող պահանջների նկատմամբ: Սակայն հաշվի ենք առնում նաև նոր տնտեսական հարաբերություններին անցնելու դժվարությունները, կեցության մակարդակի կտրուկ իջեցումն ու աղքատությունը և դրանցից ծնվող մի շարք այլ բացասական երևույթներ:

Մենք կարծում ենք, որ այս կենսակարևոր հիմնախնդրի լուծումը հնարավոր է սոցիալ-հոգեբանական, կրթադաստիարակչական, հատկապես ուղղիչ աշխատանքների ճիշտ կազմակերպմամբ ինչպես դեռահասի անձի, այնպես էլ նրա անբարենպաստ ընտանիքում՝ ընտրելով համարժեք և արդյունավետ մոտեցումներ և մեթոդներ ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտները և անհամաձայնությունները նախականելու և հաղթահարելու նպատակով, հաշվի առնելով դեռահասների անձի սոցիալական ախտահարման աստիճանը, ծնողների և մանկավարժների ներգործությունների նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքը, ընդհանուր զարգացման մակարդակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նալչաջյան Ա., Մկրտչյան Ս., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, Չանգակ-97, 2001:
2. Արզումանյան Ս. Ջ., Անբարենպաստ ընտանիքի սոցիալ-հոգեբանական նկարագիրը, Հոգեբանությունը և կյանքը, 2000, № 2:
3. Ղույունջյան Գ., Գևորգյան Ն., Սարուխանյան Մ., Դալլաքյան Ս., Ընտանիքի իրավական կուլտուրան և երեխաների անվտանգությունը: Միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձոր, 1997, էջ 4:

РЕЗЮМЕ МЕТОДИЧЕСКИЕ РЕКОМЕНДАЦИИ ПО ВОПРОСАМ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ОТКЛОНЯЮЩЕГОСЯ ПОВЕДЕНИЯ ПОДРОСТКОВ ДЛЯ РОДИТЕЛЕЙ И ПЕДАГОГОВ

Н.Э. ГЕВОРГЯН

В статье рассматриваются некоторые причины развития отклоняющегося поведения подростков, представлены некоторые методические рекомендации, направленные на вопросы по предупреждению отклоняющегося поведения несовершеннолетних, которые способствуют как усовершенствованию воспитательной деятельности со стороны родителей, так и учебной и педагогической со стороны педагогов и воспитателей. Предполагается, что на основе данных методик, усовершенствуются как педагог-ученик, так и родитель-подросток взаимоотношения, образуя некоторые положительные изменения в поведении несовершеннолетних подростков.

На основе предлагаемых методик и в результате наших наблюдений сделано заключение о том, что при совместной работе воспитателей, педагогов и родителей возможны кардинальные изменения с помощью предлагаемых методик в сфере как педагогической и воспитательной так и в коррекционной работе проявляемых поведенческих отклонений.

SUMMARY

METHODICAL RECOMMENDATIONS TO PARENTS AND PEDAGOGUES FOR PREVENTING TEENAGERS' BEHAVIORAL DEVIATIONS

N. E. GEVORGYAN

In the article some reasons of development of teenagers' behavioral deviations are observed and in order to prevent those problems there are some methodical tasks which will promote both the process of organizing parents' education and pedagogues' educational and pedagogical-psychological activities. It's supposed that based on these activities, both pedagogue-pupil and parent-child relationships will be mostly improved, at the same time developing positive changes in teenagers' behavior.

Based on the results of the presented methods and our observations, we can conclude that through the presented methods in the work process of tutors, teachers, pedagogues and parents crucial changes can be included both in pedagogical and educational processes and in the sphere of correctional works for teenagers' behavioral deviations.

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՋԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՆՈՒԹՅԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
Տ. Զ. ՄԱԼՈՒՄՅԱՆ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան
Տիգրան Մեծի 36
e-mail: t-malumyan@mail.ru

*Ուսումնասիրվել են «Հուզական կոմպետենտությունը» որպես
ինտեգրատիվ կարողություն, նրա բաղադրիչները և դրսևորման
առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում, ինչպես նաև
նախադրոցականների կողմից հուզական վիճակների գնահատումը՝ ըստ
առանձին չափանիշների: Դիտարկված արդյունքները հնարավորություն կտան
բարձրացնելու դաստիարակչական աշխատանքների որակը
մանկապարտեզներում, ինչպես նաև հիմք կհանդիսանան մշակելու և ներդնելու
ուսուցողական ծրագրեր մանկական պատմվածքների և հերոսների հուզական
վիճակները ճանաչելու և գնահատելու վերաբերյալ:*

*Բանալի բառեր. հուզական վիճակներ, հուզական վիճակների
արտահայտչաձևեր, հուզական կոմպետենտություն:*

Ներկայացված է խմբագրություն 20.10.2015 թ.:

Բացառիկ է հուզական բաղադրիչի դերն ու նշանակությունը
մարդու կենսագործունեության մեջ: Ճանաչողության հուզական կողմը
սկզբնական շրջանում ձևավորվում է դեռևս նախադպրոցական
տարիքում, երբ երեխաների համար մանկական պատմվածքներ,
հեքիաթներ ընթերցելիս կամ կերպարվեստի պարապմունքների
ընթացքում իմացական գործընթացներից զատ երեխաները
աստիճանաբար ձեռք են բերում ուրախության, տխրության, վախի,
զարմանքի և այլ հուզական վիճակների ճանաչման կարողություն:
Հուզական աշխարհի ձևավորմանը և զարգացմանը միտված
փորձարարական ուսումնասիրություններում դեռևս քիչ աշխատանքներ
են տարվում հուզական կոմպետենտության վերաբերյալ: Ուստի այս
խնդիրը տեսափորձարարական իմաստով լրացուցիչ
ուսումնասիրությունների կարիք ունի մանկական
հաստատություններում:

«Հուզական կոմպետենտությունը» համակողմանիորեն ուսումնասիրվել է տարբեր հեղինակների կողմից: Այն զարգացման հոգեբանության բնագավառում ներմուծվել է Կ. Սաարնիի կողմից և դիտարկվել է որպես՝ ա) «Ես»-ի նույնականացում, բ) տվյալ անձի բնավորություն, գ) անձի զարգացման պատմություն [1]: Այնուհետև նույն հեղինակը մեկնաբանում է «Հուզական կոմպետենտությունը» որպես ինտեգրատիվ կարողություն, հետևյալ բաղադրիչներով՝ ա) իր հուզական վիճակը հասկանալու, բ) ուրիշների հույզերը ընկալելու, գ) դիմացինին ապրումակցելու, դ) միջանձնային հարաբերություններում հույզերը գործնականում դրսևորելու, ե) կոնկրետ իրավիճակին հուզականորեն համարժեք պատասխանելու կարողություն:

Ռ. Բաքը «Հուզական կոմպետենտությունը» սահմանում է այլ կերպ. նա ևս գտնում է, որ դա ինտեգրատիվ ընդունակություն է, որը ներառում է այնպիսի բաղադրիչներ ինչպիսին են՝ ա) սեփական ներքին միջավայրի զգացմունքների և ցանկությունների հետ գործելու կարողությունը, բ) սեփական հուզական ապրումների գիտակցման և ընդունման հետ կապված հաղորդակցման ընդունակությունը, գ) դիմացինի ապրումները գնահատող ըմբռնման և ճանաչման գործընթացները [2]:

Առավել ընդհանրական է Դ. Գոուլմանի մոտեցումը, ըստ որի՝ «Հուզական կոմպետենտության» ձևավորման գործընթացում անհրաժեշտ է նկատի ունենալ՝ ա) սեփական հույզերը ճանաչելու, բ) շրջապատող մարդկանց հույզերը հասկանալու և գ) հույզերը գնահատելու ընդունակությունները [3]:

Այս մոտեցումները թերևս բավարար են եզրակացնելու, որ հուզական կոմպետենտությունը հանդես է գալիս որպես ինտեգրատիվ կարողություն, որը նախադպրոցականներին հնարավորություն է տալիս տարբեր իրավիճակներում կայացնելու համարժեք որոշումներ և ծավալելու իմացական գործունեություն՝ արտաքին և ներքին հուզական տեղեկատվության ինտելեկտուալ մեկնաբանման հիման վրա: Փաստորեն՝ հուզական կոմպետենտությունը ներանձնային և միջանձնային հուզական ընդունակությունների համակարգ է, որն օնթոգենետիկական զարգացման ընթացքում, տարաբնույթ ներգործությունների պայմաններում, ոչ միայն բարդանում է, այլև բազմակողմանի դրսևորումներ է ստանում՝ հնարավորություն տալով նախադպրոցականին այս կամ այն չափով կառավարելու սեփական հուզական աշխարհը և կարգավորելու սեփական վարքը, գործողությունները՝ հաղորդակցման մեջ ներգրավված մարդկանց հուզական վիճակը համարժեք ըմբռնելու միջոցով:

Այս տեսանկյունով տեղին է նշել Վ. Ի. Սլեպկովայի մոտեցումը, ըստ որի՝ հուզական կոմպետենտության խնդիրն առավելապես պետք է կապվի նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման յուրահասկությունների հետ՝ նկատի ունենալով, որ նրանք գրեթե ամեն օր ընդլայնում են իրենց պատկերացումները տարաբնույթ երևույթների և մարդկանց վերաբերյալ [4]: Փաստական առումով նախադպրոցականները տարաբնույթ իրավիճակներում ընդլայնում են իրենց հուզական փորձի ծավալը և իմացության սահմանները, որով բարենպաստ պայմաններ են ստեղծվում նրանց համակողմանի զարգացման համար: Այս գաղափարը դիտարկվել է նաև այլ հոգեբանների կողմից [5]: Նրանք մի կողմից՝ հուզական փորձի ընդլայնումը համարում են էական պայման նախադպրոցականների բարդ հոգեկան կառույցների ձևավորման գործընթացում, իսկ մյուս կողմից՝ հուզական փորձի ձեռք բերումը կապում են հույզերում ներառված իմացական և վարքային բաղադրիչների հետ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ այդ բաղադրիչներն ուղղակիորեն մտնում են հուզական կոմպետենտության կառուցվածքի մեջ, որոնց զարգացումը նախադպրոցական տարիքում հիմք է հանդիսանում միջանձնային հարաբերություններում երեխայի կողմից արդյունավետ վարք դրսևորելու և ճանաչողության գործընթացը զարգացնելու համար: Այսպիսով՝ կատարված տեսական ուսումնասիրությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ հուզական կոմպետենտությունը որոշակի կարողություններից կազմված ընդունակություն է, որը հատկապես նախադպրոցականների պարագայում համակողմանի ուսումնասիրության նյութ է և կարող է ծառայել հուզական կոմպետենտության մասին փորձարարական նոր տվյալներ ստանալու համար:

Մեր կողմից դիտարկվել է հուզական կոմպետենտության առավել կարևոր բաղադրիչներից մեկը, որն անվանել ենք «Հաղորդակցման գործընթացում ներառված տարբեր տարիքի անձանց հույզերի ճանաչման ընդունակություն»: Որևէ մեկի հույզերը ճանաչելու կարողությունը ուսումնասիրելու նպատակով կիրառել ենք Գ.Ա. Ուրունտանայի և Յու. Ա. Աֆոնկինայի՝ «Նկարում պատկերված հուզական վիճակների ընկալման» մեթոդիկան [6], որը հոգեբանական և մանկավարժական - մեթոդական առումով տեղայնացվել է մեր գիտափորձում՝ նկատի ունենալով, որ այս հեղինակները քննարկում են հուզական վիճակները միջանձնային հարաբերություններից դուրս, իսկ մենք միաժամանակ ուսումնասիրել ենք հուզական վիճակները ճանաչելու և անվանելու կարողությունները տարբեր իրավիճակներում և միջանձնային հարաբերություններում:

Փորձարարական ուսումնասիրությունը անցկացվել է երկու փուլով. ա) առաջին փուլում պարզել ենք, թե երեխաները կարող են ճանաչել և անվանել հիմնական հույզերը կոնկրետ իրավիճակից դուրս, բ) երկրորդ փուլում ուսումնասիրվել է հույզերի ճանաչման գործընթացը՝ ըստ պատկերված նկարների:

Փորձարարական հետազոտությունը իրականացվել է Վանաձորի թ. 15 և Երևանի Ավան վարչական շրջանի թ. 51 մանկապարտեզներում՝ 5-6 տարեկան 50 նախադպրոցականների հետ՝ պահպանելով անհատական և խմբային աշխատանք կազմակերպելու պայմանները (առանձին սենյակ, բարենպաստ մթնոլորտ, երեխայի տարիքին համապատասխան հասկանալի բացատրություն և այլն):

Ուսումնասիրության ընթացքը: Երեխաներին առաջադրվել է՝ տարբեր հուզական դրսևորումներ (վախ, զայրույթ, զարմանք, ուրախություն) պատկերող տասը նկար: Նկարները հաջորդաբար ներկայացվել են երեխաներին: Նրանք նկարել են տվյալ հուզական վիճակի հատկանիշները և հետո դրանց հիման վրա տվել են համապատասխան հույզի անվանումը: Բացի հուզական առանձին վիճակների վերաբերյալ անհատական աշխատանքից, փորձել ենք բացահայտել, թե երեխաները կարողանում են միջանձնային հարաբերություններում ճանաչել հուզական դրսևորումները: Մեթոդը ներկայացվել է մի շարք պատկերների (գունավոր նկարների) տեսքով, որոնք բաժանվել են երեք խմբի.

ա) մեծահասակների դեմքեր՝ որոշ դեպքերում՝ նաև տարբեր սեռերի ծանոթ մարդկանց,

բ) երկրորդ խմբի նկարները եղել են ավագ նախադպրոցականների նկարներ, դրանց մեջ նույն թվաքանակով պատկերված տղաներ և աղջիկներ,

գ) երրորդ խմբում ներառվել են հասուն մարդկանց՝ տատիկների և պապիկների նկարներ: Նկարները ներկայացվել են ինչպես գունավոր, այնպես էլ սև - սպիտակ գծապատկերներով՝ նկատի ունենալով, որ գույները որոշակի ազդեցություն ունեն թե՛ ընկալման, թե՛ գնահատման գործընթացի վրա:

Հուզական վիճակները գնահատվել են՝ ա) հոնքերի, բ) բերանի, գ) աչքերի բացվածության, դեմքի լարվածության և այլ հատկանիշների հիման վրա, որոնք մանրամասն նկարագրված են հույզերի հոգեբանության մեջ: Որևէ հուզական վիճակի գնահատումն իրականացվել է ըստ արտահայտչամիջոցների հանրագումարային գնահատման արդյունքի: Որոշ դեպքերում երեխաները չեն հասկացել հույզերի (տվյալ հույզի) արտահայտչաձևերը, սակայն նրանք կարողացել


են իրենց բառերով նկարագրել և անվանել հույզերը, որոնց արդյունքում նրանց տված պատասխանները ճիշտ են համարվել:

Առաջին փուլում երեխաները բացատրել են տվյալ հույզին համապատասխան արտահայտչանշանները, այնուհետև անվանել այն: Երկրորդ փուլում երեխաներին առաջադրվել են «երեխա-երեխա», «երեխա-մեծահասակ» փոխհարաբերություններին վերաբերող նկարներ, որոնք արտահայտել են այն հուզական վիճակները, որոնք մտնում են հուզական կոմպետենտության մեջ որպես բաղադրիչ և դիտարկվել են որպես միջանձնային հարաբերություններում դրսևորվող հուզական վիճակը հասկանալու ընդունակություն: Դրանով հնարավորություն է ընձեռնվել պատասխանելու այն հարցին, թե ի վերջո նախադպրոցականները կարողանում են ճանաչել և անվանել հիմնական հույզերը տարբեր իրավիճակներում: Երբ երեխան դժվարացել է, այդ դեպքում հոգեբանը նշել է մի քանի հույզերի անվանումներ (զայրացած, զարմացած, տխուր և այլն)՝ երեխային օգնելու և ընտրության հնարավորություն տալու համար: Բոլոր պատասխանները գրանցվել են համապատասխան թերթիկում, որում հետագա ուսումնասիրությունների ժամանակ երևացել է, թե որ հույզն է ավելի ճանաչելի ավագ նախադպրոցականների կողմից, և նրանք որքանով են միջանձնային հարաբերություններում հասկանում հուզական կոնկրետ դրսևորումը տվյալ իրավիճակում: Գիտափորձի առաջին փուլի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ երեխաները նկարներում ներկայացված հույզերից առավելապես ճանաչել և անվանել են ուրախությունը և տխրությունը, այն դեպքում, երբ վախի հուզական վիճակը ճանաչել և անվանել՝ երեխաների 22 %-ը, զարմանքինը՝ 17%-ը, զայրույթինը՝ 10%-ը: Պարզ է, որ միևնույն երեխան կարող է ճանաչել ուրախության հույզը, իսկ զարմանքինը՝ ոչ:


Ուսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ անկախ նրանից, թե նկարներում պատկերված էին հասակակիցները՝ տարբեր հուզական վիճակներով, թե մեծահասակներ, առանձնապես նշանակություն չի տրվել, և այդ առումով արդյունքների վրա չէր կարող ունենալ էական ազդեցություն: Այն դեպքում, երբ երեխաները ճիշտ են անվանել հույզը, նրանցից պահանջվել է բացատրել, թե կոնկրետ, ո՞ր նշանների հիման վրա են նրանք եզրակացրել այս կամ այն հույզի առկայության մասին: Բերանի նշանը՝ համապատասխան արտահայտչաձևով, առանձնացրել են ուսումնասիրված նախադպրոցականների 60%-ը՝ առանց կոնկրետ բացատրությունների, մինչդեռ հոնքերը նշել է 12 %-ը, սակայն չեն կարողացել բացատրել, թե հոնքերի ո՞ր դիրքն է բնորոշ կոնկրետ այդ հուզական վիճակին, իսկ աչքերի բացվածքի, դեմքի կնճռոտվածության վերաբերյալ երեխաները

չեն կողմնորոշվել: Ստորև ներկայացված դիագրամից որոշակիորեն երևում է տարբեր հուզական վիճակների արտահայտվածությունը՝ ըստ դրանց ճանաչման և անվանման գործընթացների:

Դիագրամ 1. Երեխաների կողմից դիմացինի հուզական վիճակը ճանաչելու և անվանելու կարողության առաջին փուլի փորձարարական արդյունքները



Դիագրամ 2. Երեխաների կողմից իրադրային պատկերներում հուզական վիճակը ճանաչելու և անվանելու կարողության երկրորդ փուլի փորձարարական արդյունքները



Հետազոտության առաջին և երկրորդ փուլերի արդյունքները համեմատելիս ակնհայտ է դառնում, որ ավագ նախադպրոցական տարիքում երեխայի կողմից հուզական վիճակներն առավել ճանաչելի են, քանի որ իրավիճակի իմաստային վերլուծությունն այս կամ այն չափով

նախադպրոցականին հուշում է, թե ինչպիսի հուզական վիճակ է դրսևորում նկարում պատկերված անձը կոնկրետ իրավիճակում:

Այսպիսով՝ վերլուծելով հետազոտության փորձարարական արդյունքները՝ կարելի է նշել, որ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հուզական կոմպետենտության վերը քննարկված բաղադրիչների արտահայտվածության մակարդակը դեռևս ցածր է, երբ հույզը պետք է գնահատվի իրավիճակից դուրս՝ հույզերին բնորոշ տարբերակիչ հատկանիշներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Saarni C. Development of emotional competence. N.Y.: Guilford Press, 1999
2. Buck R. Motivation, emotion and cognition: A developmental interactionist view // Strongman K.T. (ed.). International review of studies on emotion. V.1. Chichester: Wiley, 1991.
3. Гоулман Д. Эмоциональный интеллект / Даниил Гоулман; пер. с англ. А.П. Исаевой.-М.: АСТ: АСТ Москва; Владимир: ВКТ 2009.-478 стр. Андреева И.Н.
4. Слепкова В.И. Развитие эмоциональной компетентности средствами психологического тренинга // Актуальные проблемы кризисной психологии: сб. научн. тр. / Отв. ред. Л.А. Пергаменщик. Минск: НИО, 1999. С.130—137.
5. Calkins S.D., Gill R.A., Johnson M.C., Smith C. Emotional reactivity and emotion regulation strategies as predictors of social behavior with peers during toddlerhood. Social Development 1999, p. 310-341.
6. Г.А. Урунтаева, Ю.А. Афонькина, Практикум по детской психологии: Пособие для студентов педагогических институтов, учащихся педагогических училищ и колледжей, воспитателей детского сада /Под ред. Г.А. Урунтаевой, Владос, 1995.- 291с.

РЕЗЮМЕ

**ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИЗУЧЕНИЕ КОМПОНЕНТОВ
„ЭМОЦИОНАЛЬНОЙ КОМПЕТЕНТНОСТИ” ДЕТЕЙ СТАРШЕГО
ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА**

T.З. МАЛУМЯН

Рассмотрены компоненты эмоциональной компетентности детей дошкольного возраста. В частности, экспериментально исследована способность дошкольников распознавать эмоции по предъявляемым картинкам, как в отдельности, вне конкретной ситуации, так же в контексте межличностных отношений со сверстниками и со взрослыми. Результаты исследования даст возможность разработать и внедрить программу формирования умений дошкольников по распознаванию эмоциональных состояний по отдельным компонентам выражения эмоций, что направит внимание воспитателей на развитие эмоционального мира дошкольника и повысит качество воспитательных работ в дошкольном учреждении.

SUMMARY

**THE EXPERIMENTAL STUDY COMPONENTS OF EMOTIONAL
COMPETENCE OF THE PRESCHOOL-AGE CHILDREN**

T.Z.MALUMYAN

The components of “Emotional competence” children in preschool age are discussed in the article. Particularly, it is reviewed whether children can acknowledge emotions separately, on the photos. Interpersonal relationships with peers and adults are discussed, as well.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 811.19 : 811.222.1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆԻ ԹՎԱԿԱԶՄԱԿԱՆ
ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱՐԴԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
Գ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1
e-mail: garik.grigoryan@hotmail.com

Հողվածում զուգադրական-տիպաբանական քննության են ենթարկվում ժամանակակից հայերենի և պարսկերենի թվակազմական վերջավորությունները, համեմատություն է անցկացվում դրանց ձևաբանական և իմաստաբանական առանձնահատկությունների միջև: Հայերենում թվակազմությունը կատարվում է բացառապես հոգնակերտ վերջավորությունների հավելմամբ: Պարսկերենում թեև առկա է ներքին թեքմամբ հոգնակիակազմություն՝ արաբերենի ազդեցության հետևանքով, սակայն կցական կառույցներն, այնուամենայնիվ, գերակշռում են: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել թվակազմական վերջավորությունների միջոցով այլ՝ ոչ թվային իմաստների արտահայտման հնարավորությանը, հիմքակազմ տարրերի և վերջավորությունների հարաբերություններին:

***Բանալի բառեր.** թիվ, քերականական կարգ, հոգնակիակազմություն, թվակազմական վերջավորություններ, ներքին թեքում:*

Ներկայացված է իմբազրություն 12.12.2015 թ.:

Անվանական քերականական կարգերից գոյականի թվի հիմնական խնդիրը եզակի-հոգնակի հակադրության արտահայտումն է: Սակայն տարբեր լեզուների օրինակով կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ դրա իմաստային ընդգրկումը, ինչպես նաև ենթակարգերը կարող են տարբեր լինել: Հանդիպում են դեպքեր, երբ տվյալ լեզվում առկա են երկակի, եռակի, մոտավոր արժեքի թվի ենթակարգեր [1]:

Այս ամենից զատ գոյություն ունի նաև հավաքական թիվ, որը ցույց է տալիս առարկայի քանակը ոչ թե որպես եզակի կամ հոգնակի (մեկից ավելի), այլ որպես հավաքական ամբողջություն [2]:

Գոյականի թվի քերականական առաջնային գործառույթը գոյականի թվային առկայացման ապահովումն է: Խոսքի մեջ կիրառվելիս այդ գոյականները պետք է որոշակիացվեն, և թվի քերականական կարգի միջոցով արտահայտվող եզակիության կամ հոգնակիության գաղափարը լուծում է հենց այս խնդիրը [3]:

Աշխարհի լեզուների մակերեսային դիտարկումն անգամ թույլ է տալիս նշել, որ բոլոր լեզուներն ունեն թվի քերականական իմաստի արտահայտման միջոցներ՝ հիմնականում գոյականների համար, սակայն դա կարող է վերաբերել նաև բային կամ ածականին:

Տարբեր լեզուներ թվի քերականական իմաստի արտահայտության համար օգտագործում են տարբեր միջոցներ՝ քանակ ցույց տվող բառեր, ներքին թեքում, օժանդակ բառեր, բառի կամ դրա մի մասի կրկնություն, և վերջապես՝ քանակ ցույց տվող վերջավորություններով: Հայերենում և պարսկերենում թվակազմության համար կիրառվում է հենց վերջին ձևը:

Հ. Պետրոսյանը, խոսելով հայերենի թվակարգի մասին, նշում է, որ. «Գոյականի թվակարգի հիմքում ընկած է առարկաների քանակային հարաբերության հատկանիշը: Հայերենում այդ կարգը ներկայանում է երկեզր հարաբերությամբ՝ եզակի և հոգնակի, կան նաև երկակի թվի հետքեր: Այս հակադրության մեջ եզակի թիվը ցույց է տալիս առաջին եզրը՝ այսինքն այն, որ խոսքի առարկան մեկն է: Հոգնակի թիվը ցույց է տալիս նույն հարաբերության երկրորդ եզրը, այսինքն այն, որ խոսքի առարկան մեկից ավելի է» [4]:

Ժամանակակից պարսկերենի թվակարգը ևս ներկայանում է եզակի-հոգնակի հարաբերակցությամբ: Իրանցի բոլոր լեզվաբանները և քերականագետները պաշտպանում են այս տեսակետը, սակայն միաժամանակ իրենց աշխատություններում առանձնացնում են երկակի իմաստ արտահայտող բառերի մի խումբ, որոնք ընդհանուր անվանումով կոչվում են *تشبه/tasnie* [5]:

طرف/taaraf- طرفین/taarafeyn- اطراف/atraf - կողմ - կողմեր (*երկու*)- կողմեր (*շատ*)

Այստեղ, սակայն, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ նշված երևույթը հատուկ է միայն որոշ սահմանափակ թվով, արաբերենից փոխառյալ բառերի, իսկ երկակի թվի ենթակարգն արաբերենում առկա է և լայնորեն կիրառելի: Մակայն այս դեպքում գործ ունենք ոչ այնքան քերականական իմաստների, այլ պարզապես որոշակի երկակի բառաձևերի փոխառության հետ. հետևաբար նշված օրինակները չեն կարող մեզ համար հիմք ծառայել խոսելու պարսկերենում առկա երկակի թվի մասին:

Տարբեր լեզուներում հիմքակազմ տարրերի և թվակերտ վերջավորությունների միջև առկա են տարբեր հարաբերություններ: Որոշ

դեպքերում հիմքակազմ տարրը կարող է համընկնել բառարմատին, իսկ եզակին և հոգնակին յուրաքանչյուրն ստանան իրենց թվակերտ ցուցիչը: Այլ դեպքերում հոգնակիի և եզակիի հիմքակազմ տարրերը կարող են տարբերվել: Հնարավոր են նաև տարբերակներ, երբ եզակիի կամ հոգնակիի հիմքը համընկնեն բառարմատի հետ: Նույնիսկ հնարավոր են դեպքեր, երբ թվակազմական վերջավորությունները համընկնեն միմյանց հետ, իսկ եզակի-հոգնակի տարբերությունն արտահայտվի հիմքակազմ տարրերի մեջ [6]:

Ժամանակակից հայերենը զարգացրել է կցական հոգնակիակազմություն: Հոգնակին եզակիին հակադրվում է համապատասխան հոգնակերտ վերջավորություններով: Նկատելիորեն սակավ են ոչ համակարգային, հնատիպ թվային կազմավորումները: Համակարգային հոգնակիակազմություններում գերակա դիրք ունեն *էր* և *ներ* հոգնակերտները:

Գ. Ջահուկյանի բնորոշմամբ ստացվում են մի կողմում զրո հիմքակազմ տարրով և զրո վերջավորությամբ արտահայտված, մյուս կողմում՝ որոշ հիմքակազմ տարրերով ձևավորված և վերջավորություններ ունեցող թվաձևեր [7]:

Թվի քերականական կարգը հայերենում սերտորեն կապված է մյուս անվանական քերականական կարգերի հետ: Հաշվի առնելով, որ հայերենում գոյականին հատուկ են հոլովի, թվի և առկայացման քերականական կարգերը, որոնք բոլորն էլ արտահայտվում են մասնիկավորմամբ, ապա գոյականների թվակազմությունը քննարկելիս, և մասնավորապես, երբ խոսում ենք հոգնակիակազմական հիմքերի մասին, պետք է զուգահեռաբար անդրադառնանք նաև մյուս քերականական կարգերին: Այդ մասնիկավորումն ունի կայուն կցական կաղապար՝ *հոգնակերտ+հոլովակերտ+հոդ*:

Հ. Պետրոսյանը նշում է. «Ժամանակակից լեզվաբանության ուշագրավ գաղափարներից է նաև այն, որ կառուցվածքային նկարագրությունը պետք է լինի ամբողջական, հետևողական, պարզ. իսկ այդ պահանջները կարող են իրականանալ միայն սիստեմային վերլուծության առկայության դեպքում: Թվակազմության հարցերի քննությունը ևս չի կարող չեղարկվել այս ասպեկտով. թվի կարգն էլ պետք է բնութագրել այն կապերով և հարաբերություններով, որ նա ունի այլ կարգերի հետ» [8]:

Այսպիսով, նկատում ենք, որ հայերենում հոլովական վերջավորությունը զուգորդվում է հիմքի հետ հոգնակերտ վերջավորության միջոցով, այսինքն հոգնակերտը դառնում է հոլովահիմքի տարր: Ինչ վերաբերում է եզակիի թվակազմությանը, ապա

այն քերականական արտահայտություն չունի և եզակիության գաղափարն արտահայտվում է եզակի ուղղականի հոլովահիմքով:

Փաստորեն, ժամանակակից հայերենում եզակի և հոգնակի հոլովահիմքերը չեն համընկնում, չեն համընկնում նաև հոգնակի հիմքն ու հոգնակի հոլովահիմքը: Եզակի ուղղականի ձևը դառնում է հոգնակիակազմության հիմք, իսկ հոգնակի հիմքը՝ հոլովակազմության հիմք:

Գ. Ջահուկյանը նկատում է, որ «տվյալ հանրության մեջ ամենից ավելի կարևոր և հաճախակի գործածվող իմաստները, համապատասխան լեզվակառուցվածքային հնարավորության դեպքում, սովորաբար արտահայտվում են ածանցների միջոցով [7]:

Ժամանակակից հայերենում գոյություն ունի անվանական քերականական վերջնամասնիկների հաջորդականության որոշակի կարգ: Ջահուկյանը առանձնացնում է հետևյալ չորս կաղապարները. 1) *քաղաք(+ներ)+ից+ս))*), 2) *ընկեր(+ոջ)ից+ս))*), 3) *կան(+անց)ից+ս))* 4) *մարդ(+կ)+անց)ից+ս))*): Ընդ որում, ամենակիրառելին առաջին կաղապարն է, մնացած երեքը վերաբերում են միայն որոշակի, սահմանափակ թվով գոյականների:

Ըստ Ջահուկյանի, այդ վերջնամասնիկները կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբի. առաջին կարգի մասնիկներ (իկ-ի խումբ՝ a), երկրորդ կարգի մասնիկներ (անց-ի խումբ՝ b), երրորդ կարգի մասնիկներ (ից-ի խումբ՝ c), չորրորդ կարգի մասնիկներ (ս-ի խումբ՝ d): Ինչ վերաբերում է թվակերտ վերջավորությանը, ապա ըստ Ջահուկյանի ներկայացրած սխեմայի՝ այն չի տեղավորվում նշված խմբերից որևէ մեկի մեջ: Սակայն լրացուցիչ վերլուծությունը թույլ է տալիս, որ այն նույնարժեք է առաջին կարգի վերջավորություններին:

Այսպիսով, ըստ անվանական վերջնամասնիկների հաջորդականության հայերենում կարելի է տարբերակել անվանական հիմքերի չորս խմբեր. 1) առաջին կարգի (a) վերջավորությունների համար հիմք են ծառայում հիմնային բառաձևերը 2) երկրորդ կարգի (b) վերջավորությունների համար հիմք են ծառայում առաջին կարգի (a) վերջավորություններով (նաև զրո վերջավորությամբ) օժտված բառաձևերը 3) երրորդ կարգի (c) վերջավորությունների համար հիմք են ծառայում երկրորդ կարգի (b) վերջավորություններով (նաև զրո վերջավորությամբ) օժտված բառաձևերը 4) չորրորդ կարգի (d) վերջավորությունների համար հիմք են ծառայում երրորդ կարգի (c) վերջավորություններով (նաև զրո վերջավորությամբ) օժտված բառաձևերը:

Ինչպես նկատում ենք, թվային իմաստներն արտահայտվում են առաջին կարգի մասնիկների միջոցով, հետևաբար կարելի է դրանց

անվանել թվանիշ կամ թվակերտ վերջավորություններ, իսկ եթե մի կողմ դնենք զրո վերջավորությունը, ապա նաև՝ հոգնանիշ կամ հոգնակերտ վերջավորություններ:

Ժամանակակից հայերենի հոգնակերտ վերջավորությունները հետևյալն են.

եր- կիրառվում է միավանկ բառահիմքերի հետ (բացի իկ-ի և անց-ի հետ կիրառվող հիմքերը), ինչպես նաև այն բարդությունների հետ, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է, և նրա իմաստը հակադրվում է ամբողջ բարդության իմաստին,

ներ- բազմավանկ հիմքերի հետ,

իկ- մարդ հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի դեպքում,

այք- կին հիմքի և նրանով վերջացող հիմքերի հետ,

ք- ի-ով վերջացող բարդ հիմքերի հետ,

անք- հատուկ անուններով արտահայտված հիմքերի հետ (արխայիկ և խոսակցական-բարբառային ոճերում),

ենք- հատուկ անուններով արտահայտված հիմքերի հետ (խոսակցական ոճում),

ոնք- միավանկ ազգակցական անունների (պապ, տատ), ինչպես նաև ստացական դերանունների հետ:

Ի տարբերություն հայերենի՝ պարսկերենը հոլովի քերականական կարգ չունի, և այն քերականական իմաստները, որոնք հայերենում արտահայտվում են հոլովական վերջավորությունների օգնությամբ, պարսկերենում արտահայտվում են նախդիրների, հետդիրի կամ հատուկ շարահյուսական կառույցի միջոցով: Այլ կերպ ասած, անվանական քերականական իմաստներից պարսկերենում վերջավորությունների միջոցով արտահայտվում է միայն թվի գաղափարը (բացառությամբ *o/ye* անորոշության հոդի): Հայերենի նմանությամբ, եզակին արտահայտվում է զրո հիմքակազմ տարրով և զրո վերջավորությամբ, իսկ հոգնակին՝ այդ հիմքին հոգնակերտ վերջավորությունների հավելմամբ: Դրանից գատ, արաբերենի ազդեցության հետևանքով պարսկերենում լայնորեն կիրառվում է նաև ներքին թեքմամբ հոգնակիի կազմությունը:

Ժամանակակից պարսկերենի հոգնակերտ վերջավորությունները հետևյալն են.

ահ/hā- Ժամանակակից պարսկերենում ամենալայն կիրառությունն ունեցող հոգնակերտ վերջավորությունն է: Կարող է գործածվել գոյականների գերակշիռ մեծամասնության հետ՝ سنگها/*sanghā*- քարեր, ميزها/*mizhā*-սեղաններ, دزیاها/*daryahā*-ծովեր:

Ոճական տեսանկյունից *ահ/hā* մասնիկը չեզոք է. կարող է կիրառվել ինչպես շնչավոր, այնպես էլ անշունչ գոյականների հետ: Կարող է նաև

կիրառվել այլ խոսքի մասերի, օրինակ՝ թվականների հետ. *صدها/sadhā-* հարյուրներ, *هزارها/hezār hā-* հազարներ:

ان/ān- Այս հոգնակերտ վերջավորությունը օգտագործվում է հիմնականում անձ ցույց տվող և շնչավոր գոյականների հետ, օրինակ՝ *زنان/zanān-* կանայք, *شهداء/šahidān-* նահատակներ, *جوانان/javānān-* երիտասարդներ:

Դասական պարսկերենում այս վերջավորությունն ավելի լայն կիրառություն է ունեցել, բացի այդ *ها/hā* մասնիկը գրեթե չի օգտագործվել շնչավոր և անձ ցույց տվող գոյականների հետ: Ժամանակակից պարսկերենում այդ կանոնը գրեթե վերացել է, և *ها/hā* և *ان/ān* վերջավորությունները դարձել են հիմնականում փոխադարձաբար փոխարինելի, և դրանցից մեկի կամ մյուսի ընտրությունը ավելի շատ ոճական նշանակություն ունի: Ինչպես նշեցինք, *ها/hā*-ն ոճաբանորեն չեզոք է, իսկ *ان/ān*-ը ավելի հատուկ է գրական, գրքային արխայիկ ոճին: Ժամանակակից խոսակցական լեզվում այն գործնականում կորցրել է իր կենսունակությունը [5]:

ات/at- Այս հոգնակերտ վերջավորությունն ունի արաբական ծագում: Ընդհանրապես, արաբերենը պարսկերենի վրա հսկայական հետք է թողել ինչպես բառապաշարի, այնպե՛լ էլ քերականության վրա, մասնավորապես՝ թվակազմության: Պարսկերենը կիրառում է ինչպես արաբերենին հատուկ՝ ներքին թեքմամբ հոգնակիի կազմությունը, այնպես էլ օգտագործվում են արաբական ծագման հոգնակերտ վերջավորություններ: *at* վերջավորությունը դրանցից ամենակիրառելին է: Իհարկե, պարսկերենում գոյականի սեռի քերականական կարգ գոյություն չունի, սակայն փոխառյալ արաբական բառերի հետ վերցվել են նաև նրանց հոգնակիակազմական կաղապարները, օրինակ՝ *مقالات/maqale-maqalat/hողված-հողվածներ*, *كلمات/ kalame-kalamat/բառ-բառեր*, *حملات/hamle-hemalat/հարձակում-հարձակումներ*: Այնուամենայնիվ, *at/at* վերջավորությունը կարող է կիրառվել նաև իրանական ծագման բառերի հետ, օրինակ՝ *دهدہات/deh-dehat/գյուղ-գյուղեր*, *دستور-دستورات/dastur-dasturat/ցուցում-ցուցումներ*:

Որոշ բառերի հետ նույնիսկ հնարավոր է *at/at* և *ها/hā* վերջավորությունների զուգահեռ կիրառություն, օրինակ՝ *فلهز/felez/պողպատ-فلهزها/felezhā/ պողպատներ(տեսականեր)- فلهزات/felezat/ պողպատե իրեր, առարկաներ (հավաք. անվանում)*:

ين/in և **ون/un-** Այս հոգնակերտները ևս ունեն արաբական ծագում, սակայն ի տարբերություն նախորդի, դրանք ունեն շատ սահմանափակ կիրառություն և դրվում են *գործիչ, մասնագետ* իմաստն ունեցող որոշ բառերի հետ՝ *معلم/ moa'lem-معلمين/ moalemin/ուսուցիչ-ուսուցիչներ*, *ناظر/nāzer-ناظرين/nāzerin/հսկիչ-հսկիչներ*, *متخصص/motaxases-*

pp. 158-170, 1385.

6. G. G. Corbett, *Number*, Cambridge: Cambridge University Press, 2004, pp. 139-143.
7. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան: Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1974, էջ 173-174.
8. Հ. Զ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում: Երևան: ԵՊՀ Հրատարակ., 1972, էջ 279-280.

SUMMARY

COMPARATIVE ANALYSES OF NUMBER INFLECTIONS IN MODERN ARMENIAN AND PERSIAN

G. G. GRIGORYAN

The article is dedicated to the comparison of number inflections in Modern Armenian and Persian and analyzing their morphological and semantic characteristics. In Armenian number is exclusively expressed through adding inflections to the stem. While in Persian we can see number making through internal modifications of the noun, affixation is the major grammatical tool to express plurality. Capabilities of both languages to express other, non-numerical meanings through number inflections are also discussed.

РЕЗЮМЕ

СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЧИСЛЕННЫХ ОКОНЧАНИЙ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ И ПЕРСИДСКОМ

Г. Г. ГРИГОРЯН

Статья посвящена сопоставлению численных окончаний современного армянского и персидского языка. В армянском аффиксация является единственным грамматическим инструментом образования числа. Хотя в персидском существует множественное число образованное с помощью внутренней флексии, как следствие влияния арабского языка, аффиксация является основным способом выражения числа. В статье также обсуждается возможность выражения неколичественных значений посредством численных окончаний. Показаны грамматические и семантические сходства и различия категории числа двух языков.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 81՝255

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՀԵՏ
ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ա. Վ. ՄԱՀԱԿՅԱՆ, Է. Հ. ՔԱՄԱԼՅԱՆ

Երևանի պետական համալսարան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1
e-mail: sahakyan@hotmail.com

Հոդվածը վերաբերում է որոշակի բնագավառում թարգմանության ժամանակ տեխնիկական տեքստերի հետ ճիշտ աշխատելու համար հիմքային քայլերի բացահայտմանը, որոնք կնպաստեն թարգմանության արդյունքում ստեղծվող տեքստի իմաստաբանական, կառուցվածքային և գործարանական համարժեքությանը թիրախ լեզվի մշակույթում:

Բանալի բառեր. *փոխկապակցվածություն, տրամաբանական շղթա, կանոնակարգող փաստաթուղթ, նորմատիվ փաստաթուղթ:*

Ներկայացված է խմբագրություն 12.11.2015թ.:

Տեխնիկական տեքստերը հատուկ նշանակության տեքստեր են, որոնք գործում են որոշակի համակարգում: Տվյալ համակարգում առկա բոլոր տեքստերը փոխկապակցված են, և ճիշտ մեկնաբանության ու մշակման համար հարկավոր է տեղյակ լինել նաև այլ տեքստերի գոյության մասին: Ահա թե ինչու տեխնիկական տեքստը չի կարող դիտարկվել եզակի օրինակի վրա, քանի որ մեկ համակարգ բովանդակող տարրերը պետք է լինեն միասնական բնույթի, այսինքն տեքստերն անկախ իրենց փոխկապակցվածությունից (մեկը մյուսից բխող, կամ կարգավիճակով հավասար) պետք է լինեն մեկը մյուսին հետևելի, որ չխախտվի տրամաբանական շղթան, որը պայմանավորվում է տերմինաբանական, ոճային, քերականական և կառուցվածքային համապատասխանությամբ:

Թարգմանիչը թարգմանելիս պետք է տեղյակ լինի տվյալ բնագավառի գրականության առկայության մասին, որ, անհրաժեշտության դեպքում, ի վիճակի լինի փնտրել և գտնել

պահանջվող, հավելյալ կամ բացատրական տեղեկությունը: Տվյալ դեպքում թարգմանությունը մեխանիկորեն իրականացվող գործընթացից վերածվում է խորը վերլուծական գործընթացի, ինչն ազդում է վերջնական արդյունքի իմաստային որակի և ներկայացման մակարդակի վրա: Յուրաքանչյուր բնագավառի գրականության ուսումնասիրություն հարկավոր է սկսել տվյալ բնագավառի իրավական դաշտում գործող (առկայության դեպքում) փաստաթղթերից, քանի որ հենց այդ փաստաթղթերում են սահմանվում տերմիններ և հասկացություններ, որոնք պարտադիր են կիրառման համար, և, մինևույն ժամանակ, կոչված են օգնելու թարգմանչին, հատկապես սկսնակ թարգմանչին, անծանոթ բնագավառի ուսումնասիրության գործում:


Երկրորդ քայլը գիտական գրականության ուսումնասիրությունն է: Նշենք, որ բոլոր գրքերը և փաստաթղթերը կարդալու մասին խոսք անգամ չի կարող գնալ, սակայն հարկավոր է իրագեկ լինել դրանց առկայության մասին:

Սույն հոդվածում որպես համակարգ կամ բնագավառ կընդունվի չափագիտությունը՝ իր տարատեսակ տեքստերի դիտարկմամբ:

Չափագիտությունը գիտություն է չափումների և դրանց կիրառման մասին: Այն որպես գիտություն ձևավորվել է 18-րդ դարում, սակայն դրա տարրերը առկա են եղել և զարգացել են մարդկային քաղաքակրթության հետ միասին: Այսօր չափագիտությունն իր կարևորությամբ ներխուժել է թե՛ գիտական, թե՛ արդյունաբերական մի շարք բնագավառներ: Իզուր չեն ռուս գիտնական Մենդելեևի բառերը. «Գիտությունը սկսվում է չափումներից, իսկ ճշգրիտ գիտությունն առանց չափի անիմաստ է»:

Հանդիսանալով լուրջ գիտական և տեխնիկական բնագավառ՝ այդ բնագավառում առկա գրականությունը հարկավոր է խմբավորել և ցույց տալ տվյալ խմբերի շփման եզրերը տեքստերի հետ ճիշտ աշխատելու համար (մեկնաբանություն, թարգմանություն և մշակում):

Չափագիտության բնագավառում առկա գրականությունը, հիմնվելով տեքստերի առաջնային գործառույթի վրա, կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ գիտական, տեխնիկական և օպերատիվ (աշխատանքային):



Նկ. 1. Չափագիտության գրականության դասկարգում

Չափագիտության գիտական գրականությունը ընդգրկում է գիտական աշխատություններ, ուսումնասիրություններ և գիտական հոդվածներ բովանդակող գրքեր, ուսանողների համար նախատեսված ուսուցողական գրքեր, բացատրական բառարաններ և այլն:

Չափագիտության տեխնիկական գրականության շարքում են գտնվում չափագիտության բնագավառին վերաբերող փաստաթղթերը՝ օրենք, ստանդարտներ, հանձնարարականներ, տեխնիկական պայմաններ, մեթոդիկաներ և այլն: Օրինակ՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության կողմից մշակված մի շարք փաստաթղթերից D1 «Elements for law on metrology» փաստաթուղթը:

Օպերատիվ (աշխատանքային) տեքստերը չափագիտության բնագավառում իրականացվող առօրյա տեղեկատվություն փոխանցող տեքստեր են՝ կարգավիճակային, պաշտոնական և ոչ պաշտոնական զեկույցներ, հետազոտությունների արդյունքներ, նամակներ, կայքերում և ամսագրերում զետեղվող նյութեր և այլն:

Հիմնվելով Հաթիմի և Մեյսոնի (1) մոտեցման վրա՝ գիտական և օպերատիվ տեքստերը կարելի է համարել խառնածին բնույթի տեքստեր, որտեղ կարող են լինել Ռեյզի (2) և՛ արտահայտչական, և՛ օպերատիվ տեսակին բնորոշ տարրեր, չնայած որ տվյալ ոլորտի թե՛ գիտական, թե՛ օպերատիվ տեքստերի առաջնային գործառնություն տեղեկություն փոխանցելն է, այսինքն՝ տվյալ տեքստերը տեղեկատվական բնույթի են:

Անդրադառնալով չափագիտության բնագավառում առկա տեխնիկական տեքստերի խմբին՝ այն կարելի է բաժանել երկու ենթախմբի՝ կանոնակարգող և նորմատիվ (ընդհանուր տեխնիկական) փաստաթղթեր:

Կանոնակարգող փաստաթղթերը ներառում են պարտադիր իրավական նորմեր և ընդունվում են կառավարող մարմինների կողմից: ՀՀ տարածքում ներկայումս գործող չափագիտության բնագավառին վերաբերող կանոնակարգող առաջնային փաստաթուղթ կարելի է համարել «Չափումների միասնականության ապահովման» մասին ՀՀ օրենքն առ 08.02.2012 թ.:


Նորմատիվ (ընդհանուր տեխնիկական) փաստաթղթերն են ստանդարտները, Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության (ՕՉՄԿ) փաստաթղթերը, ՕՉՄԿ հանձնարարականները, չափագիտական կանոնները և նորմերը, չափման մեթոդիկաները, ուղեցույցները, տեխնիկական պայմանները, սարքերը բնութագրող փաստաթղթերի փաթեթները:

«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի առ 08.02.2012 թ. հոդված 2-ի համաձայն՝ ստանդարտը «փաստաթուղթ է, որով սահմանվում են գործունեության տարբեր ձևերին կամ դրանց արդյունքներին վերաբերող համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր՝ ուղղված որոշակի բնագավառում լավագույն կարգավորվածության ձեռք բերմանը, որը մշակվում է փոխհամաձայնության հիման վրա և հաստատվում ճանաչված մարմնի կողմից»: Տարբերում են միջազգային, ազգային և տարածաշրջանային (միջպետական և եվրոպական) ստանդարտներ (3):

ՕԶՄԿ հանձնարարականը հանդիսանում է «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության նորմատիվ փաստաթուղթ, որը սահմանում է պահանջներ տարբեր տեսակի չափման միջոցների չափագիտական բնութագրերի նկատմամբ, դրանց ստուգաչափման, ստուգաճշտման մեթոդների միջոցների նկատմամբ, և այլ պահանջներ» (4):

ՕԶՄԿ փաստաթուղթը՝ «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության ընդհանուր բնույթի նորմատիվ փաստաթուղթ, որը նախատեսված է չափագիտական ծառայության գործունեության լավացման համար» (4):

Չափման մեթոդիկան՝ «մեկ կամ մի քանի չափման սկզբունքների և տվյալ չափման մեթոդի համաձայն չափման մանրամասն նկարագիր, որը հիմնված է չափման մոդելի և չափման արդյունք ստանալու համար որևէ հաշվարկի վրա» (5): Նկ. 2-ում կարելի է տեսնել տեխնիկական գրականության ենթաբաժանումը:



Նշենք, որ տվյալ ենթաբաժանումների տեքստերը թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստաբանական տեսանկյունից պետք է լինեն համահունչ և հատկապես չպետք է լինեն իրարամերժ: Որպես կանոն, նմանատիպ փաստաթղթերում խուսափում են հավելյալ կրկնողություններից՝

փոխարենը օգտագործում հղումներ այս կամ այն փաստաթղթին: Օրինակ՝ դիտարկենք ստանդարտների հետ աշխատելու հիմնարար սկզբունքները:

Քանի որ ստանդարտները կարող են լինել միջազգային, տարածաշրջանային և ազգային, ինչպես նշված է նկ. 2-ում, հարկավոր է տարբերել այս կատեգորիաները ստանդարտը ճիշտ մեկնաբանելու համար, քանի որ յուրաքանչյուր կատեգորիայի ստանդարտ մշակվում է տվյալ կատեգորիայում առկա որոշակի չափանիշների համաձայն (միջազգային, տարածաշրջանային, ազգային): Միջազգային ստանդարտները մշակվում են ԻՍՕ միջազգային կազմակերպության կողմից: Որպես տարածաշրջանային ստանդարտ՝ կարող ենք դիտարկել երկու տարածաշրջանի ստանդարտացման կազմակերպությունների մշակած ստանդարտները, որոնք ընդունելի են ՀՀ տարածքում, դրանք են միջպետական (ԳՕՍՏ), ռուսական (ԳՕՍՏՌ) և եվրոպական (ԵՆ) տարածաշրջանային կազմակերպությունների մշակած ստանդարտները: ՀՀ տարածքում ստանդարտների մշակման համար պատասխանատու մարմինը ՀՀ «Ստանդարտների ազգային մարմին» ՓԲԸ-ն է, և իր կողմից մշակված ստանդարտները համարվում են ազգային՝ ՀՍ դասիչով ՀՀ տարածքում:

Յուրաքանչյուր կազմակերպության ստանդարտ մշակվում է տվյալ կազմակերպության սահմանած կարգ ու կանոնի համաձայն, ահա թե ինչու հարկավոր է իմանալ տվյալ կազմակերպության սահմանած սկզբունքները, որոնք շարադրվում են ուղեցույցներում կամ ստանդարտներում: Օրինակ՝ ԻՍՕ և ԻԷԿ միջազգային կազմակերպությունների համատեղ մշակած ստանդարտները մշակվում են միջազգային ստանդարտների կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները բովանդակող «ISO/IEC Directives, Part 3» ուղեցույցի համաձայն: Իսկ ՀՀ ազգային ստանդարտները մշակվում են ՀՍ 1.5-2013 «Ստանդարտների կառուցվածքին, շարադրմանը, ձևավորմանը, բովանդակությանը և նշանագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ» ստանդարտի համաձայն:

Այսպիսով՝ որոշակի համակարգում կոհերենտ տեքստ ստանալու նպատակով (և՛ որպես բնօրինակ, և՛ որպես թարգմանված), այն պետք է դիտարկվի և վերլուծվի տվյալ լեզվի համակարգի ներսում և տվյալ համակարգում սահմանված պայմանականությունների համաձայն, ուստի թարգմանչի կողմից իրականացվող ուսումնասիրությունների առաջին փուլը, որն անհրաժեշտ է գրագետ և համարժեք թարգմանություն անելու համար, տվյալ բնագավառի գրականության ուսումնասիրությունն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hatim B., Mason I., Discourse and the translator London/ New York: Longman, 1990.
2. Reise K., Text types, translation types and translation assessment, translated by A. Chesterman, 1977/89, pp. 105-15
3. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք առ 08.02.2012 թ.:
4. ՀՍ 8.11, Չափազիտություն: Տերմիններ և սահմանումներ, ազգային ստանդարտ, 2006:
5. Սահակյան Ա. Վ., Չափազիտության միջազգային բառարան-Հիմնական և ընդհանուր հասկացություններ և համապատասխան տերմիններ, Վան Արյան, Երևան, 2010, էջ 20:

РЕЗЮМЕ

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ РАБОТЫ С ТЕХНИЧЕСКИМИ ТЕКСТАМИ В СПЕЦИАЛИЗИРОВАННОЙ ОБЛАСТИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПЕРЕВОДА

А. СААКЯН, Э. А. КАМАЛЯН

Данная статья посвящена выявлению основных шагов для правильной работы с техническими текстами в конкретной области, во время перевода, которая обеспечит семантическую, структурную и функциональную эквивалентность текста в культуре перевода.

SUMMARY

WORKING PRINCIPLES WITH TECHNICAL TEXTS IN A SPECIALIZED FIELD FROM THE VIEWPOINT OF TRANSLATION

A. V. SAHAKYAN, E. H. QAMALYAN

This article is devoted to some basic steps for proper work with technical texts in specialized fields when conducting translation, which will contribute to the textual equivalence (semantical, structural and functional) of the translated text in the target culture.

УДК 37.016 : 811.161.1

ТЕРМИНОЛОГИЯ И ЕЕ МЕСТО В СИСТЕМЕ ОБУЧЕНИЯ
РУССКОМУ ЯЗЫКУ
И.А. ШАХРАМАНОВА

Национальный аграрный университет Армении,
г.Ереван 0009 ул.Теряна 74
e-mail kostandyangayane1978@mail.ru

Термин является членом определенной терминологической системы, относящейся к той или иной области науки, техники, производства. Термины в отличии от «обиходных» слов, внутри своего терминологического поля обычно однозначны; одно и тоже слово может быть термином различных областей знаний, это омонимия. Термины существуют не просто в языке, а в составе определенной терминологии. Если в общем языке слово может быть многозначным, то попадая в определенную терминологию, оно приобретает однозначность.

Ключевые слова: *термин, знания, язык, терминология, лексика, информация.*

Поступило в редакцию 10.10.2015 г.

Для правильного представления особенности терминосистемы, сложившейся в той или иной науке, необходимо рассмотреть ее историю и формирование. Научно-техническая революция в современном обществе приводит к повышению значения терминологии разных наук как средства получения и организации научных знаний. Естественный процесс образования терминов приводит к появлению в терминологии языковых тенденций.

Любая терминологическая система отражает систему понятий той или иной области науки. По определению А.А. Реформатского, «терминология как совокупность слов – слуга двух хозяев: системы лексики и системы научных понятий» [1].

Первым, кто включил системность в список требований, предъявляемых к термину, был Д.С. Лотте. В своей работе «Основы построения научно- технической терминологии» он пишет: «Роль термина

нельзя ограничить лишь функцией «наименования». Научная терминология должна представлять собой не простую совокупность слов, а систему слов и словосочетаний, определенным образом между собой связанных, и в этом, пожалуй, заключается одно из основных различий между «просто» терминологией и научной терминологией. Большое распространение имеет взгляд на термин только как на простое наименование какого-либо научно-технического понятия, а между тем термин должен обладать определенными систематизирующими свойствами». Д.С. Лотте сформулировал три требования, которым должна отвечать любая терминология, чтобы считаться полноценной системой [2], а именно:

- 1) терминологическая система должна основываться на системе понятий;
- 2) необходимо выделять терминируемые признаки и понятия, основываясь на классификационных схемах;
- 3) слова должны отражать общность терминируемого понятия с другими и его специфичность.

Исключительно емко определяет термин А.С. Герд, подразумевая под ним «единицу естественного или искусственного языка, существовавшую ранее или созданную специально, обладающую особым терминологическим значением, выраженным либо в словесной форме, либо в том или ином формализованном виде, и достаточно точно и полно отражающую основные, признаки научного понятия, существенные на данном уровне развития науки» [3].

С.В. Гринев-Гриневиц называет термин «особой номинативной лексической единицей специфичного языка, используемой для точного именованя специальных понятий» [4].

Для М.А.Марусенко, термин представляет собой номинативную группу, связанную с искомым научно-техническим понятием, принадлежащую определенной текстовой совокупности и выражающую устойчивый комплекс понятийных признаков [5].

Таким образом, проанализировав определения, представленные в литературе мы пришли к выводу, что **термин** (от лат. *terminus* — предел, граница, конец) — это смысловая языковая единица, образовавшаяся исторически с течением времени или в узком кругу специалистов, характеризующаяся определенной однозначностью и в полной мере отражающая базовые признаки конкретного понятия, существующие на данном этапе развития общества, науки и техники.

Термин, будь то слово или словосочетание, представляет собой один знак, которому соответствует единичное понятие. Обладая сложной внутренней семантической структурой, термин является неделимой, самостоятельной единицей наименования и традиционно характеризуется как обычное слово в особой функции — на том основании, что любое слово может быть употреблено в функции термина. Однако обратное «превращение», когда любой термин может стать словом, не абсолютно, поскольку не всякий термин выражен вербальными средствами (или: только вербальными средствами).

Термины составляют главную специфику лексики научного языка, поскольку являют собой наиболее информативную ее часть. Они делают лексическую составляющую языка науки принципиально отличной от лексики общелитературного языка сразу по нескольким направлениям: функционально (терминам присуща не только номинативная, но и дефинитивная функция); семантически (термины именуют только специальные понятия, содержание каждого из них в определенной мере уникально); по сфере распространения (при известной «доступности» некоторых терминов широкому кругу носителей литературного языка они принадлежат только лексической системе языка науки, т. к. по своей прямой функции служат средством исключительно профессионального общения); по источникам, способам и средствам создания (основываясь в целом на общелитературных источниках, способах и средствах их создания, термины имеют и специализированные ресурсы, которые не находят применения в других разновидностях общелитературного языка).

Общим явлением для языка является широкое включение эпонимов для обозначения различных симптомов и синдромов состояния человека и животного, его болезней. Проникновению медицинских и ветеринарных терминов в общеупотребительный язык способствует также неправомерная пропаганда знаний, когда в популярных статьях вместо описания признаков болезни дается их симптоматика.

Термин является членом определенной терминологической системы, относящейся к той или иной области науки, техники, производства. Термины в отличие от «обиходных» слов, внутри своего терминологического поля обычно однозначны; одно и то же слово может быть термином различных областей знаний, это омонимия. Термины существуют не просто в языке, а в составе определенной терминологии. Если в общем языке слово может быть многозначным, то попадая в

определенную терминологию, оно приобретает однозначность. Термин не нуждается в контексте, как обычное слово, так как он.

- 1) член определенной терминологии,
- 2) может употребляться изолированно.

При развитии какой – либо области науки начинается активное отражение ее достижений средствами массовой информации, переход отдельных терминов из специального употребления в общее. При этом термины теряют научную точность, расширяют сферу своего употребления. Происходит их детерминологизация. Один и тот же термин может входить в разные терминологии данного языка, что представляет собой меж научную терминологическую омонимию, например: морфология- в ветеринарии, медицине, языке; диагностика- в ветеринарии, медицине, агрономии и т.д.

Методика обучения терминологии играет большую роль в системе обучения. Между терминами и не терминами постоянный обмен: слова общего языка, утрачивая некоторые свои свойства, становятся терминами /не переставая быть фактами общего языка: происходящие из названий частей тела, как плечо, колено, лапа, палец, шейка хобот, клык и т.п./, и наоборот, термины входят в общий язык / чувствовать, следить, травить – из охотничьей терминологии, термины даже могут становиться особыми идиоматическими выражениями. Среди терминов бывают слова, существующие только как термины и в пределах одной терминологии /диагноз, летальность, тонус/, а бывают и такие, которые существуют тоже только как термины, но участвуют в разных терминологиях /операция, прогрессия, регрессия /.

Еще в 60-х - 80-х годах XIX века в литературном и разговорном языке появились слова: доза, агония, акклиматизация, бактерия, атрофия, организм, эмбрион, пароксизм, симптом т.е. часто происходит расширение сферы употребления слова, бывшего термином. Так, например: "травма" - "повреждение тканей в организме" как медицинский и ветеринарный термин получает расширенное медицинское и ветеринарное значение, "диагноз" - в медицине и в ветеринарии "определение болезни на основании исследования больного".

Терминология каждой области знания ограничена определенным объемом терминов, так как словесно отражает систему основных ее понятий.

Так как терминология – это в идеале строгая и «умная», т.е. опирающаяся на чисто интеллектуальные стороны слова, часть лексики, то экспрессия ей несвойственна, например жар в общем языке имеет антоним холод, но термин жар- высокая температура в медицине и

ветеринарии. Есть еще одно качество, существенное для терминов- это их международность. Как раз в области политики, науки, медицины, агрономии, ветеринарии осуществляются международные связи и поэтому вопрос о взаимопонимании людей разных наций и языков является очень важным.

Теоретическая значимость заключается в возможности использования результатов теории общего и сопоставительного терминоведения. Результаты этимологического, сематического и структурного анализа интернациональных терминов могут быть учтены в дальнейших исследованиях профессиональной лексики, что предусматривает методика обучения терминологии в соответствии изучаемой науки.

ЛИТЕРАТУРА

1. Реформатский А. А. Термин как член лексической системы языка // Проблемы структурной лингвистики. М., 1968. – С. 122.
2. Лотте Д. С. Основы построения научно-технической терминологии. М.: АН СССР, 1961.
3. Герд А.С. Значение термина и научное знание // Научно-техническая информация. — Сер. 2. — 1991. — № 10. — С. 1—4.
4. Гринев-Гриневиц С.В. Введение в терминоведение // М.: Изд. центр «Академия», 2008. — 304 с.
5. Марусенко М.А. Об основном понятии терминоведения – научно-техническом термине / Научно-техническая информация. Сер. 2. — 1981. — № 8. — С. 1—5.

ԱՄՓՈՓՈՒՄ
ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՏԵՂԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
Ի.Ա.ՇԱՀՐԱՄԱՆՈՎԱ

Տերմինը մասնագիտական բառ կամ բառակապակցություն է, որն ընդունված է որոշակի մասնագիտական ոլորտում և կիրառվում է կոնկրետ դեպքերում: Լեզվի ներկա շրջանի համար տարածված երևույթ է լեզվի համագործածական բառաշերտում բժշկական և անասնաբուժական տերմինների լայն ընդգրկումը: Տերմինը տերմինաբանական որոշակի համակարգի բաղադրիչ է, որն առնչվում է գիտության, տեխնիկայի, արտադրության այս կամ այն բնագավառներին: Տերմինները ոչ թե ուղղակիորեն գոյություն ունեն լեզվում, այլ հանդես են գալիս որոշակի տերմինաբանության կազմում: Եթե լեզվում, ընդհանուր գործածության մեջ բառը կարող է լինել բազմիմաստ, ապա որոշակի տերմինաբանության մեջ այն դառնում է մենիմաստ:

SUMMARY
THE TERMINOLOGY AND ITS PLACE IN THE EDUCATIONAL SYSTEM
ON A RUSSIAN LANGUAGE
I.A.SHAHRAMANOVA

Term is a special word or a word combination, accepted in the special professional sphere and used in the specific conditions. The total phenomenon for the language of this time is the wide insertion of medical and veterinary terms in common used language. Term is a member of the certain terminological system, referred to this or that field of science, technics, industry. Terms exist not simply in the language, but in structure of certain terminology. If in the common language the word can be polysemantic, so including into the certain terminology it acquires monosemantic meaning.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 37.016 : 911 : 004

ՍԱՀԱՑՈՒՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
Գ.Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ա.Ա. ԱԶԱՍՕՂԼՅԱՆ

Խ. Արոյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան մեծի 17
e-mail:armenajam@mail.ru

Հոդվածում հիմնավորվում է սահացուցադրումների և համակարգչային ներկայացումների գործնական օգտագործման արդյունավետությունը աշխարհագրության դասավանդման գործընթացում: Տրվում են գործնական խորհուրդներ սահացուցադրումներ պատրաստելու համար՝ օգտագործելով համակարգչային Microsoft Office ծրագրային փաթեթի PowerPoint, Word, Excel ծրագիրը: Ուսուցիչը, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաները, կարող է ապահովել աշակերտների կողմից ծրագրային նյութի ավելի դյուրին ընկալումը, նպատակային յուրացումը, տարածական աշխարհայացքի ձևավորումը, ինչպես նաև խթանել ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու ցանկությունը:

Բանալի բառեր. սահացուցադրում, համակարգչային ներկայացում, ուսուցում:

Ներկայացված է խմբագրություն 05.10.2015 թ.:

Կրթության հիմնախնդիրների լուծման ժամանակակից առաջնահերթ ուղղությունը պետք է դարձնել ներկայումս առկա, գործնականում մատչելի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների կիրառման մեթոդները: Յուրաքանչյուր առարկայի դասավանդումն իրական արվեստ է, մարդկային գործունեության բարդ ոլորտ: Առարկայի բովանդակային իմացությունը, հետազոտական արդյունքներն ու կարողությունները միշտ չէ, որ կարող են ապահովել ցանկալի արդյունք: Առավել կարևոր է գիտելիքների փոխանցման տեխնոլոգիական համալիրների հիմնարար

տիրապետումն ու մանկավարժական գործունեության կազմակերպումը: Դասավանդման գործընթացի այսօրվա հրամայականն են մտահասու տեխնոլոգիական մոտեցումները, ինչը փորձենք ներկայացնել աշխարհագրության ուսուցման գործընթացում՝ սահացուցադրումների և համակարգչային ներկայացումների օգնությամբ:

Ուսումնական գործընթացում սահացուցադրումները և համակարգչային ներկայացումները ուսուցման ժամանակակից միջոցներ են, որոնք նպաստում են «Աշխարհագրություն» առարկայի ուսուցումը դպրոցում առավել հետաքրքիր, մատչելի և գրավիչ դարձնելուն: Համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը, ուսումնասիրվող աշխարհագրական երևույթների գործողությունների մոդելավորումը, դրանք պատկերային ձևով ներկայացնելու հնարավորությունը ընդլայնում են առարկայի ընկալման մակարդակը: «Աշխարհագրություն» առարկան ուսումնասիրվում է դպրոցում՝ 6-ից մինչև 12-րդ դասարաններում: Ուսուցանվող առարկայի ծավալի մեծության պատճառով սովորողների կողմից յուրացման ենթակա նյութի մի մասը հաճախ դուրս է մնում ծրագրի շրջանակներից: Արդյունքում՝ առարկան ուսումնասիրվում է ոչ լիարժեք: Անցկացված դիտարկումներն ու փորձարարական դասերը հիմնավորում են, որ աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը: Ինչպես հայտնի է, գիտելիքներն ընդլայնելու և խորացնելու համար սկսած 6-րդ դասարանից, սովորողները կարող են օգտագործել նաև լրացուցիչ գրականություն, համացանցի համապատասխան նյութեր: Կարծում ենք՝ դրա լավագույն խթանը կարող է հանդիսանալ ինքնուրույն սահացուցադրություն պատրաստելը: Աշակերտները հետաքրքրությամբ մասնակցում են տվյալ թեմայի վերաբերյալ նոր տվյալների յուրացման գործընթացին: Հետևաբար, դասավանդվող թեմայի նկատմամբ առաջանում է որոշակի հետաքրքրություն: Բացի դրանից, աշակերտների ինքնուրույն ձեռք բերած գիտելիքները մրցակցություն են առաջացնում նրանց միջև՝ խթանելով որոնման, ինքնակրթության գործընթացը:

Համակարգչային ծրագրերի օգնությամբ կարելի է արագ փոփոխել մատուցվող նյութը՝ օգտագործելով նոր քարտեզ, աղյուսակ, սխեմա, հետևաբար, սահիկներով հեշտությամբ ներկայացնել ամբողջ նյութը: Համացանցի օգնությամբ հնարավոր է ցուցադրել օդատիեզերական լուսանկարներ, դիագրամներ, գրաֆիկներ, կլիմայի և այլ փոփոխվող երևույթների պատկերներ, քարտեզներ, սխեմաներ և այլն: Դասապրոցեսում անհրաժեշտության դեպքում հնարավոր է օգտագործել նաև ուսումնական տեսանյութ: Մեր կարծիքով՝ համակարգչային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը աշխարհագրության

դասավանդման գործընթացում հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրանք հազեցած են անհրաժեշտ համակարգչային ծրագրերով և մատուցվող նյութի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությամբ: Այնպես որ, սահացուցադրումների արագ պատրաստման համար անհրաժեշտ է ստեղծել սեփական էլեկտրոնային դասագրքեր:

Ինչպես հաստատում են անցկացվող մշտադիտարկումները և հարցումները, իրենք՝ սովորողները, նախընտրում են ուսումնական ծրագրին համապատասխան նյութի մատուցումը համակարգչային տեխնոլոգիաների միջոցով: Սահացուցադրումները և համակարգչային ներկայացումները հարմար են, քանի որ դրանք կարող են օգտագործվել ինչպես դասի առանձին հատվածներում (ցուցադրել սահմանումներ, տիպային նախագծեր, բնութագրեր, գործնական աշխատանքի նախագծեր, վիճակագրական նյութեր և այլ) այնպես էլ ամբողջ դասի ընթացքում:

Սահացուցադրումների պատրաստման ընթացքում պետք է ընտրել ճիշտ այն նյութը, որն անհրաժեշտ է տվյալ դասին և այն տեղադրել մատուցման հերթականությամբ: *Ծրագիրը թույլ է տալիս կառուցել ցուցադրումներն այնպես, որ անհրաժեշտ տեղեկությունները հայտնվեն ճիշտ այն պահին, երբ ներկայացվում է տվյալ թեմայի համապատասխան մասը:*

Ակնհայտ է, որ ներկայացվող տեխնոլոգիաների կիրառումը խնայում է դասի ժամանակը, պահպանում կարգապահությունը, ակտիվացնում սովորողներին, հետաքրքրություն առաջացնում առարկայի նկատմամբ, ինչպես նաև նպաստում է աշակերտ-ուսուցիչ փոխհամագործակցությանը, բարձրացնում ուսումնական գործընթացի արդյունավետությունը՝ դարձնելով այն ժամանակակից: Միաժամանակ մեծանում է աշխարհագրության գործնական կիրառական նշանակությունը:

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցչի կողմից պատրաստված սահացուցադրումների և համակարգչային ներկայացումների օգտագործումը «աշխարհագրություն» առարկայի դասավանդման գործընթացում նպաստում է այդ առարկայի նկատմամբ դպրոցականների հետաքրքրության զգալի աճին: Այսպիսով, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաները՝ ուսուցիչը՝

- հոգեբանորեն նպաստում է նյութի յուրացման գործընթացին,
- խորացնում է հետաքրքրությունը աշխարհագրության նկատմամբ ,
- նպաստում է տարածական աշխարհայացքի ձևավորմանը,
- բարձրացնում է աշխարհագրության կիրառական նշանակությունը,
- բարձրացնում է նյութի ընկալման արդյունավետության աստիճանը,
- նպաստում է տեսական նյութի ավելի ամբողջական յուրացմանը,

- սովորողներին հնարավորություն է ընդձեռում ինքնուրույն հավաքել տեղեկատվություն, մշակել այն համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ,
- ձևավորվում է սեփական տեսակետը պարզ, հստակ արտահայտելու կարողություն:

Սահացուցադրումների սցենարը նպատակահարմար է համապատասխանեցնել դասի պլանին, որը պետք է սահմանի նաև աշխատանքի նպատակը, սլայդների մոտավոր թիվը, բովանդակությունը և արտացոլումը: Սահացուցադրումների նյութերը կարող են ծառայել որպես հիմնական զեկույցի յուրօրինակ ձև, որը ուղեկցվում է մեկնաբանություններով և հղումներով:

Դասի գործնական հատվածը պատրաստելու համար առավել մատչելի է օգտագործել համակարգչային Microsoft Office ծրագրային փաթեթի PowerPoint ծրագիրը: Նյութերի մշակման համար ցանկալի է օգտագործել նույն փաթեթի Excel, Word ծրագրերը և այլ տպագրական ծրագրեր:

Փորձարկված դասերից ելնելով՝ սահացուցադրումներ պատրաստելիս պետք է ի նկատի ունենալ՝

- դասի նպատակը և խնդիրները,
- չձանրաբեռնել սլայդը շատ տեղեկատվությամբ,
- առավել արդյունավետ է, երբ հիմնական կետերը ցուցադրվում են՝ յուրաքանչյուրը մեկ սլայդում: Պատկերները պետք է լինեն պարզ և հստակ:
- տեքստը պետք է լինի ճշգրիտ, պարզ և հակիրճ: Սլայդում ցանկալի չէ օգտագործել տարբեր տառատեսակների և ավելի քան երկու գույն (վերնագրերի համար, տառաչափը պետք է լինի ոչ պակաս քան 24, իսկ տեղեկությունների համար՝ ոչ պակաս, քան 18):
- ֆոնը, գեղագիտական լուծումները և տառատեսակի գույները պետք է նպաստեն ընթեռնելիությանը:
- ներկայացվող պատկերները պետք է մակագրություններ ունենան, իսկ թեմայի առանցքային տեղեկատվությունը պետք է տեղադրված լինի սլայդի կենտրոնում,
- աղյուսակներ օգտագործելիս անհրաժեշտ է առանձնացնել կամ նշել թեմային համապատասխանող համարները, սյունակները և տողերը,
- համակարգչային շարժապատկերներ օգտագործելիս պետք է զգուշանալ էֆեկտների ավելորդ բազմազանությունից, քանի որ դրանք շեղում են ուշադրությունը սլայդում ներկայացվող բուն նյութից: Ցանկալի է օգտագործել կարճ տեսանյութեր:

Այսօր արդեն ակնհայտ է, որ S2S-ն համալիր միջոց են և կարող են լայնորեն օգտագործվել ոչ միայն աշխարհագրության, այլ նաև

ուսուցանվող այլ առարկաների դասավանդման գործընթացում: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարող ենք փաստել, որ արդի կրթական համակարգին հասցեագրված հայալեզու տեղեկատվական շտեմարանները շատ քիչ են, այդ իսկ պատճառով ուսուցիչների մի մասը սեփական ուժերով կազմում է պարզ, փոքրիկ տեղեկատվական շտեմարաններ՝ իրենց կողմից դասավանդվող առարկաների շրջանակներում օգտագործելու նպատակով:

Ամփոփելով՝ կարող ենք հիմնավորել, որ սահացուցադրումների և համակարգչային ներկայացումների կազմման ժամանակ պետք է հաշվի առնել ցուցադրվող նյութի մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները՝ դիզայներական և էրգոնոմիկ, մեթոդապես ճիշտ լուծումներով: Կախված ցուցադրվող նյութի բովանդակությունից և կառուցվածքից՝ աշակերտների կողմից թեմայի ընկալումը դառնում է ավելի պատկերային և նպաստում հիմնավոր յուրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Таможняя Е.А. Научно-методический журнал «География в школе», М.: «Школа-пресс», № 4, 2004г., с. 46.
2. Новенко Д.В. Научно-методический журнал «География в школе», М.: «Школа-пресс», № 5, 2004г., с. 48.
3. Գալստյան Ս., Երկխոսություն համակարգչի հետ, Microsoft Office 2010, Երևան, 2010թ., էջ 72:
4. Ուսումնական ձեռնարկ «Համակարգչից օգտվելու հմտություններ», Երևան, 2012թ., էջ 21:

РЕЗЮМЕ
ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ СЛАЙДОВ И КОМПЬЮТЕРНЫХ
ПРЕЗЕНТАЦИЙ НА УРОКЕ ГЕОГРАФИИ
Г.М.КАРАПЕТЯН, А.А.АДЖАМОГЛЯН

В статье обосновывается эффективность использования в практике слайдов и компьютерных презентаций на уроках географии. Представлены практические рекомендации по изготовлению слайдов и презентаций с использованием программ PowerPoint, Word, Excel компьютерного пакета Microsoft Office. Используя информационные технологии, учитель обеспечит наиболее оптимальное усвоение изучаемого материала учащимися, формирует их мировоззрение, а так же стимулирует желание учеников к самостоятельной работе.

SUMMARY
THE EFFECTIVENESS OF THE USE OF SLIDES AND COMPUTER
PRESENTATIONS ON THE GEOGRAPHY LESSONS
G.M.KARAPETYAN, A.A.AJAMOGHLYAN

This article Motivated by Slideshow computer presentations and practical efficiency of the geography lesson. Here are given practical advice for preparing Slideshows, by using Microsoft software packages programs - PowerPoint, Word, Excel program. Teacher using Information technologies can provide students with the textbooks for easier understanding. target acquisition, spatial world outlook, as well as a desire to promote self-study.

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1-2 (26-27) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 7.036 : 94 (47+57)

ԿՈՄԻՏԱՍԻ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ղ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: dav92pet@yandex.ru

*Ներկայացված են Կոմիտասի ազգային բացահայտող ոչ թե
երաժշտագիտական վերլուծությունները, այլ մշակութաբանական
հետազոտությունները: Հոդվածում մեկնարանված են հատվածներ Կոմիտասի
ուսումնասիրություններից, հոդվածներից և էլոյթներից: Մեջբերված են
ազգային երգին վերաբերող, արժեքավոր մի շարք ձևակերպումներ: Հոդվածը
միտված է մշակութային ինքնության գիտակցումը կարևորելուն, ազգային
երաժշտության օտարումը կանխարգելելուն և դատապարտելուն:*

Բանալի բառեր. ազգային ինքնություն, ժողովրդական երգ,
երաժշտություն, օտարում:

Ներկայացված է խմբագրություն 12.12.2015թ.

*«Ոչ մեկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելութեանս
մեջ, որուն նուիրականութեանը համոզուած եմ ես բոլոր սրտովս»¹ :*

Կոմիտաս երգահանի, մտավորականի, հոգևորականի, մանկավարժի յուրաքանչյուր նախաձեռնություն մշտապես զուգակցվել է հայ ազգային ինքնությունը պատվախնդրորեն վեր հանող, մատնանշող, բացահայտող առաքելությամբ: Անշուշտ, այդ առաքելությունը մեր երախտագիտական ակնարկով չէ, որ պիտի արժևորվի, բայց, այդուհանդերձ, ստորև բերված կոմիտասյան ուղերձն արդիական է, ժամանակի պահանջ ու թանկագին պատգամ:

*«Ինչ է ազգային երաժշտությունը, ինչն է նիւթ տալիս ազգային
ժողովրդական երգերին: Արդեօք նրա հպարտ լեռները, խոր ձորերը,
դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դէպքերը եւ*

¹ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Բ, Երևան 2007, էջ 198

անցքերը, ժողովրդի ներքին և արտաքին կեանքը»: 1905 թ. ապրիլի 6-ին Կոմիտասն այս հարցադրումով է սկսում ելույթն ու անմիջապես հնչեցնում պատասխանը. «*այո՛, այս բոլորը, բոլորը նիւթ են կազմում ազգային երաժշտութեան, մի խօսքով այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարանքների և մտքի վրայ*»: Թիֆլիսի Հովնանյան դպրոցի լեփ-լեցուն դահլիճում այսկերպ սահմանելով ազգային երաժշտությունը՝ շարունակում է խոսել հայ եկեղեցական ու ժողովրդական երգերի ստեղծման պայմանների, տեսակների, արտաքին ազդեցությունների, ներքին փոխազդեցությունների մասին և ամփոփում կարևոր փաստով, այն է. «*Մեր ժողովրդական և եկեղեցական եղանակները հավասար չափով չեն զարգացած: Առաջինները արտաքին քաղաքական պայմանների ազդեցութեան տակ ճնշուել, սեղմուել, ամփոփուել են, առանց կորցնելու իրանց խորութիւնը և արտահայտիչ ոյժը: Իսկ երկրորդները, եկեղեցու անձեռնմխելի հովանու տակ աճել, ընդլայնուել և զարգացել են*»² : Ընդունելով եկեղեցական երաժշտության առավել զարգացվածությունը, Կոմիտասն երբեք չի ստորադասել աշխարհիկը՝ ժողովրդականը: Վերջինս համարելով մեր ազգի հպարտությունը՝ միակնարկում գրում է. «*Ժողովուրդն ստեղծում է ամեն մի երգ առանց կանխակալ մտածողութեան. մտքին կից, միաժամանակ անարուեստորեն հոսում է և եղանակը*»³ : Այս դիպուկ ձևակերպումից հասկանում ենք, որ ժողովուրդը, դուրս գալով հերոսների գովերգելիս, ողբերգերով մարդկային կորուստները սզալիս կամ շինականը, քաղհանի, հունձքի, գութանի երգ հյուսելիս, չի նպատակադրվել երգարվեստի նմուշ ստեղծել: Ինչ վերաբերում է բնության երգերի մեղեդու բնավորությանն, ապա այն անմիջականորեն պայմանավորված է միջավայրով, և պատահական չէ, որ Կոմիտասը, դրանք ուսումնասիրելիս և դասակարգելիս, առաջնորդվել է պատճառահետևանքային վերլուծություններով. «*...լեռնային տեղերում դուր պիտի հանդիպէք առհասարակ բիրտ, բուռն և ցասկոտ, ըմբոստ և մի խօսքով մարտական եղանակի, որովհետև ինքը բնութիւնը այնտեղ անընդհատ կռուի մեջ է, փոթորիկ, որոտ, կայծակ, հեղեղ և այլն: Իսկ, ընդհակառակը, դաշտավայրերում ապրող ժողովուրդների մեջ հանդիպում էք խաղաղ, մեղմ, փափուկ, քնքուշ եղանակների, որոնք արդիւնք են համապատասխան բնութեան: ...Ապարանի գիւղերում, ուր հունձքը յաճախ ենթարկուած է լինում բնութեան պատուհասներին, գութաներգը տխուր է և մելամաղձիկ: Իսկ օրինակ, Լօռու գութաներգը*

² Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Ա, Երևան 2005, էջ 324

³ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Բ, Երևան 2007, էջ 221

զուարթ է եւ կայտառ»⁴ : Այստեղ տեղին է մեջբերել Կոմիտասի նամակից մի երկտող՝ ուղղված մանկիկ Վահագնին. «Կարդա՛ բնութեան գիրքը, որ կարելի չէ ո՛չ մէկ բանով գրել, ո՛չ մէկ ձայնով արձանագրել, ո՛չ մէկ գոյնով նկարել եւ ո՛չ մէկ գործքով դրոշմել...»⁵ : Բնության այսպիսի ընկալման և կոմպոզիտորական գիտելիքի ներդաշնակ համագործակցությունից է, որ հաճախ ունկնդրին դժվար է տարբերագատել Կոմիտաս երգահանի հեղինակային ստեղծագործություններն, իր իսկ կատարած, ժողորդական երգերի մշակումներից:

1913 թ. աշնանը Կոստանդնուպոլսի «Ազատամարտ» օրաթերթում առաջին անգամ լույս է տեսնում վարդապետի «Հայը ունի ինքնուրոյն երաժշտություն» մեծարժեք աշխատությունը, որին պարբերականի խմբագրությունը կցել էր Լևոն Համբարձումյանի ուղերձը Փարիզից⁶ : Այդտեղ մասնավորապես ասվում է, որ համայնագիտարանի խմբագրությունը ցանկանում է զետեղել բաժին՝ նվիրված հայ երաժշտությանը: Սակայն հիասթափությամբ նաև հայտնում է, որ հայ երաժիշտներից չի գտնվել մեկը, ով հանձն կառներ այդ գործը: Եվ միայն թուրքական երաժշտության ակնարկում է, որ պիտի ծանոթագրվեին որոշ հայ երաժիշտներ:

Ինչպես գրում է Կոմիտասն այս կապակցությամբ՝ համայնագիտարանի խմբագիրների կողմից մեր ազգային երաժշտության անտեսումը հիմնականում կախված է եղել միջոցների ու մասնագետների պակասից: Իսկ այն օտար մասնագետները, որոնք նկատել են մեր երաժշտության ինքնատիպությունը չեն կարողացել ապացուցել երաժշտական օրենքներով: Շաղկապելով հայ երգի ինքնուրույնության ապացուցման խնդրի հետ՝ հիշատակենք նաև մի հայ հեղինակի երաժշտագիտական հրատարակության մասին: Ըստ Կոմիտասի՝ Պ. Լ. Եղիազարյանը, շտապելով, առանց խորը ուսումնասիրությունների, նյութ է հրատարակել, որտեղ օտար եղանակները ներկայացված են որպես հայ ժողովրդական երգ, *«որով եւ անշուշտ սխալ եւ հակառակ կարծիք պէտք է կազմեն մեր բարոյականի եւ մտաւորի, անցեալի եւ ներկայի մասին»⁷ :* Այս տողերում հստակորեն արտահայտված է ն՛ր երաժշտագետի, և՛ պատվախնդիր հայ մտավորականի խորը վրդովմունքը: Արձանագրենք, որ բերված օրինակի և նմանատիպ թյուրիմացությունների պատճառը

⁴ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Ա, Երևան 2005, էջ 329

⁵ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Բ, Երևան 2007, էջ 74

⁶ «Ազատամարտ», օրաթերթ, Կ. Պոլիս 1913, թիվ 1316

⁷ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Ա, Երևան 2005, էջ 136

երաժշտության օտարումն է, օտարամոլությունից բխող խեղաթյուրումը. «...Կ. Պոլսի տիրացուները ամիրաներին դուր գալու եւ նրանց զուարճացնելու համար, սկսել են եկեղեցական եղանակները շարժիների, թիրքերի եւ մանինների ազդեցութեան տակ կլկլացնել, զարդարել. այդպիսով շարականների, մանաւանդ տօնականների վրա պատուաստուել է օտար ոճը եւ պղտորել նրանց հարազատութիւնը»⁸ : Նկատենք, որ վարդապետի նշածը թրքահպատակ Հայաստանի իրականության դրվագներից է, այնինչ անկախ հոգևոր մշակութային պայմաններում ազգային երգի օտարման ցանկացած դրսևորում ոչ թե մշակութային փոխառություն է, այլ ազգային երաժշտության պղծում: «Խեղճ հայ ժողովուրդ. ազգ ես եւ ինքնուրոյն այնքա՛ն, որքան միւսները, այդ ո՛չ որ կարող է հերքել: Ունիս յատուկ լեզու՝ կը խօսիս: Ունիս յատուկ ուղեղ՝ կը դատես: Ունիս յատուկ մարդաբանական կազմ, որով կը զատուիս այլ ազգերէն ու անոնց կազմէն: Սակայն սիրտդ, որ զգացմանդ աղբիւրն է, քուկդ չէ եղել. այլ՝ մի ինչոր Ասորա-Բիզանդական եւ Հրնդկա-Պարսկական է եղել»⁹ : «Ունիս յատուկ լեզու՝ կը խօսիս». հայ երգի ինքնուրույնությունն ապացուցելիս Կոմիտասը մշտապես հիմնվել է ազգային երգի ու լեզվի կապի անխզելիության փաստի վրա, ասելով՝ «եթե ազգը ինքնայատուկ լեզու եւ գրականութիւն ունի, ունի եւ ինքնուրոյն երաժշտութիւն»¹⁰ :

Այսպիսով, մեկ դար առաջ վարդապետը, ջանք չինայելով, եվրոպական ամբիոններում ապացուցեց հայ երաժշտության ինքնուրույնությունը, ինչը չէր հաջողվել հայ և օտար երաժիշտներին: Եվ բոլոր նրանց համար, ովքեր իրենց ելույթներով կպնդեն, որ հայ երաժշտությունն ասորաբյուզանդական, հնդկապարսկական, արաբաթրքական, աղվանավրացական կամ այլ խառնուրդ է, Կոմիտասը «կպատասխանի». «բայց, աշխարհի վրայ ո՞ր երաժշտութիւնն անխառն ու անապական է, մեր գիտցածով, միայն անասուններունը, որոնք նոյն ձայնն ու նոյն ելնէջը կ'երգեն, զի փոխառութեան շնորհք չունին. բայց մենք, Հայե՛րս, իրաւունք չունինք մէկ ու կէս կարծիքով կամ պատմութիւնով, լսուածն ստրկաբար արձանագրել, գրիչ շարժել եւ դատել մի պատմական ազգ, որ դեր է կատարել անցեալում, կատարում է ներկայում եւ դեռ պիտի կատարէ ապագայում, քանի շունչ կայ բերանում»¹¹ :

⁸ Նույն տեղում, էջ 329

⁹ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Բ, Երևան 2007, էջ 88

¹⁰ Նույն տեղում, էջ 87

¹¹ Նույն տեղում, էջ 86

«20-րդ դարի Շնորհալու»¹², «նաիրյան հանճարի հազարամյա սերմնացանի»¹³ վարքը ներշնչանքի աղբյուր դարձավ իր և մեր ժամանակակից արվեստագետների, գիտնականների համար: Վիթխարի է վարդապետի գործը... Նա իսկապես «վերակնքեց» ազգային երգը: Իրեն հատուկ քննախույզ մտքով ուսումնասիրեց ազգային երգի ամեն ելևէջ, պարի յուրաքանչյուր շարժում՝ ոտնաձայրից մինչև իրան ու գլուխ, հիմնավորեց ու մեկնեց բազկի ու դաստակի ամեն ծածան ու շորոր, գատեց օտարն ու ազգայինը: Յուրաքանչյուր ձևավորված մշակութային դրսևորում դիտարկեց յուր ժամանակի և տարածության մեջ, ուսումնասիրեց մշակութաստեղծ հանդիսացող մի շարք գործոններ՝ շոշափելով իր ցեղի ոգին ու բնավորությունը, կենսազգացողությունը, պատմական անցքերը: Իսկ ազգին ճանաչելու համար բացահայտեց հայրենի բնության յուրաքանչյուր հյուլեն... Իր ամբարած գիտելիքով, իմացությամբ կերտեց սկուտեղ՝ ազգայինը բյուրեղացնող մի հսկա «մաղ», ու այդպիսով ազգայինն իբրև նշխար ճաշակեցրեց մեզ և Ձեզ: Որպես ազգապահպանման առաջնային երաշխիք ու միջոց, սերմանեց մշակութային ինքնության բարձրագույն գիտակցում, օտարման հանդեպ զգուշավորություն ու պատգամեց. *«Ճանապարհ կայ, ճանապարհ կայ: Բերնեն ականջ շա՛տ կարճ է. բանեն փաստ շա՛տ երկար»*¹⁴ :

¹² Այսպես է կոչել Կոմիտասին Ա. Չոպանյանն իր «Կոմիտաս վարդապետ» հոդվածում:

¹³ Այսպես է կոչել Կոմիտասին Ե. Չարենցն իր «Կոմիտասի հիշատակին» պոեմում:

¹⁴ Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Բ, Երևան 2007, էջ 88

РЕЗЮМЕ
КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ КОМИТАСА
Д.Г.ПЕТРОСЯН

Работа посвящена не столько раскрытому Комитасом анализу национальной музыки, сколько ее культурологическим исследованиям. В статье представлены интерпретации отрывков из отзывов, статей и выступлений Комитаса, а также цитаты ценных определений народной песни. В работе подчеркивается важность осознания культурной идентичности, предотвращение и осуждение отчуждения национальной музыки.

SUMMARY
THE CULTUROLOGICAL STUDIES OF KOMITAS
D.G. PETROSYAN

Our goal is aimed at presenting not only the analysis of national music disclosed by Komitas, but rather than its culturological studies. The article presents interpretation of excerpts from Komitas reviews, articles and speeches. Valuable formulations of the national song are quoted. The article focuses on emphasizing the acknowledgement of cultural identity, preventing and condemning the estrangement of the national music.

СОДЕРЖАНИЕ

<i>Р.К. МИРЗАХАНЯН</i> ИЗОБРАЗИТЕЛЬНОЕ ИСКУССТВО И МУЗЫКА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1921-1925).....	5
<i>А.Г. САРГСЯН</i> О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ.....	28
<i>С.А. ПОГОСЯН</i> ИТАЛЬЯНСКИЕ ПРЕТЕНЗИИ В КИЛИКИИ ВО ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ.....	35
<i>Н.С. ДАНИЕЛЯН</i> БИБЛИОТЕЧНО-БИБЛИОГРАФИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬ- НОСТЬ В АРМЕНИИ 70-80-Е ГОДЫ XX-ОГО ВЕКА.....	44
<i>А.А. ГАМБАРЯН, Р.А. ПОГОСЯН</i> АНАЛИЗ ПСИХОЛИГИЧЕСКОЙ ХАРАКТЕРИСТИКИ ЛИЧНОСТИ УЧАСТНИКОВ КАРАБАХСКОЙ ВОЙНЫ.....	54
<i>Р.Г. МКРТЧЯН</i> ПРИЧИНЫ ВОЗНИКНОВЕНИЯ КОНФЛИКТОВ В ПРОЦЕССЕ СЛЕДОВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ	64
<i>А.Р. ВАРДАНЯН</i> ОСОБЕННОСТИ РЕТРОСПЕКТИВНОЙ ДИАГНОС- ТИКИ ПСИХИЧЕСКИХ СОСТОЯНИЙ ПОТЕРПЕВШИХ ПО ФАКТАМ СЕКСУАЛЬНОГО НАСИЛИЯ В СПЭ.....	76
<i>Д.Г. МАРКОСЯН</i> СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ ГОТОВНОСТЬ РАБОТАЮЩИХ В СОСТАВЕ ТОЛПЫ ЖУРНАЛИСТОВ КАК ГАРАНТИЯ ИХ БЕЗОПАСНОСТИ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ.....	83
<i>А.Л. ТОНОЯН</i> ДИАГНОСТИКА ФОРМИРОВАНИЯ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ В ДАННОЙ СИТУАЦИИ.....	93
<i>Д.Г. МАРКОСЯН</i> ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ УРОВНЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ГОТОВНОСТИ ЖУРНАЛИСТОВ, РАБОТАЮЩИХ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ.....	103

В.М. МКРТУМЯН ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ НЕРВНОПСИХИЧЕСКОЙ УСТОЙЧИВОСТИ БИЗНЕСМЕНОВ В ТРАНСФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ.	112
Г.С. АЙРАПЕТЯН, С.М. МАРГАРЯН ИНТЕГРАЦИЯ КАК ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЕ ВОСПИТАНИЕ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ НА УРОКАХ МАТЕМАТИКИ.....	122
Н.Э. ГЕВОРГЯН МЕТОДИЧЕСКИЕ РЕКОМЕНДАЦИИ ПО ВОПРОСАМ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ОТКЛОНЯЮЩЕГОСЯ ПОВЕДЕНИЯ ПОДРОСТКОВ ДЛЯ РОДИТЕЛЕЙ И ПЕДАГОГОВ.....	132
Т.З. МАЛУМЯН ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИЗУЧЕНИЕ КОМПОНЕНТОВ „ЭМОЦИОНАЛЬНОЙ КОМПЕТЕНТНОСТИ” ДЕТЕЙ СТАРШЕГО ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА.....	139
Г.Г. ГРИГОРЯН СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЧИСЛЕННЫХ ОКОНЧАНИЙ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ И ПЕРСИДСКОМ.....	147
А.В. СААКЯН, Э.А. КАМАЛЯН ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ РАБОТЫ С ТЕХНИЧЕСКИМИ ТЕКСТАМИ В СПЕЦИАЛИЗИРОВАННОЙ ОБЛАСТИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПЕРЕВОДА.....	155
И.А. ШАХРАМАНОВА ТЕРМИНОЛОГИЯ И ЕЕ МЕСТО В СИСТЕМЕ ОБУЧЕНИЯ РУССКОМУ ЯЗЫКУ.....	161
Г.М. КАРАПЕТЯН, А.А. АДЖАМОГЛЯН ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ СЛАЙДОВ И КОМПЬЮТЕРНЫХ ПРЕЗЕНТАЦИЙ НА УРОКАХ ГЕОГРАФИИ.....	167
Д.Г. ПЕТРОСЯН КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ КОМИТАСА	173

CONTENTS

<i>R.K. MIRZAKHANYAN VISUAL ARTS AND MUSIC IN SOVIET ARMENIA (1921-1925).</i>	5
<i>A.G. SARGSYAN ABOUT SOME PECULIARITIES OF THE POLITICAL SYSTEM OF ARMENIAN SOVIET SOCIALIST REPUBLIC.</i>	28
<i>S.A.POGHOSYAN THE ITALIAN CLAIMS OVER CILICIA DURING FIRST WORLD WAR.</i>	35
<i>N.S.DANIELYAN THE LIBRARY-BIBLIOGRAPHIC ACTIVITY IN ARMENIA IN 70—80-ES OF THE 20-TH CENTURY.</i>	44
<i>A.A.,GHAMBARYAN, R.A.POGOSYAN ANALYSIS OF PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF THE PESONALITY OF KARABAKH WAR PARTICIPANTS.</i>	54
<i>R.G. MKRTCHYAN THE CAUSES OF CONFLICTS IN THE PROCESS OF INTERROGATE ACTIVITIES.</i>	64
<i>A. R. VARDANYAN FEATURES OF RETROSPECTIVE DIAGNOSIS OF MENTAL STATES OF VICTIMS OF SEXUAL VIOLENCE DURING FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE (FPE)</i>	76
<i>D.H.MARKOSYAN SOCIAL-PSYCHOLOGICAL PREPAREDNESS OF JOURNALISTS AS A PLEDGE OF SELF-SECURITY WHEN WORKING IN CROWDS IN EMERGENCY SITUATIONS.</i>	83
<i>A.L.TONROYAN THE CURRENT SITUATION DIAGNOSIS OF THE JUNIOR STUDENTS' VALUE ORIENTATION FORMATION.</i>	93
<i>D.H.MARKOSYAN EXPERIMENTAL STUDY OF PSYCHOLOGICAL PREPAREDNESS OF JOURNALISTS WORKING IN EMERGENCY SITUATIONS.</i>	103
<i>V.M.MKRTUMYAN PSYCHOLOGICAL FEATURES OF FUNCTIONAL FEATURES OF THE BUSINESSMEN, IN THE TRANSFORMATIVE SOCIETY.</i>	112

<i>G.S.HAYRAPETYAN, S.M.MARGARYAN INTEGRATION AS AN INTELLECTUAL EDUCATION IN PRIMARY SCHOOL DURING MATHEMATICS LESSONS.....</i>	<i>122</i>
<i>N.E.GEVORGYAN METHODICAL RECOMMENDATIONS TO PARENTS AND PEDAGOGUES FOR PREVENTING TEENAGERS' BEHAVIORAL DEVIATIONS.....</i>	<i>132</i>
<i>T.Z.MALUMYAN THE EXPERIMENTAL STUDY COMPONENTS OF EMOTIONAL COMPETENCE OF THE PRESCHOOL-AGE CHILDREN.....</i>	<i>139</i>
<i>G.G.GRIGORYAN COMPARATIVE ANALYSES OF NUMBER INFLECTIONS IN MODERN ARMENIAN AND PERSIAN.....</i>	<i>147</i>
<i>A.V.SAHAKYAN, E.H.QAMALYAN WORKING PRINCIPLES WITH TECHNICAL TEXTS IN A SPECIALIZED FIELD FROM THE VIEWPOINT OF TRANSLATION.....</i>	<i>155</i>
<i>I.A.SHAHRAMANOVA THE TERMINOLOGY AND ITS PLACE IN THE EDUCATIONAL SYSTEM ON A RUSSIAN LANGUAGE.....</i>	<i>161</i>
<i>G.M.KARAPETYAN , A.A.AJAMOGHLYAN THE EFFECTIVENESS OF THE USE OF SLIDES AND COMPUTER PRESENTATIONS ON THE GEOGRAPHY LESSONS.....</i>	<i>167</i>
<i>D.G. PETROSYAN THE CULTUROLOGICAL STUDIES OF KOMITAS.....</i>	<i>173</i>